



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՊԵՐՃՈՒՀԻ

ԽԱՄԱԶՈՒՄԸ ՕՐԵՐԸ


**ՆՈՒԵՐ ՀԱՄԱԶՊԱՅԻՆԻ
ԳՐԱՏԱՐԱԾԻ ԿՈՂՄԷ
ԼԻԱՆԱՆ**



**Հրատարակութիւն
ՀԱՄԱԶՊԱՅԻՆԻ «Վ. ՍԷԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՍԱՆ
ՊԷՅՐՈՒԹ, 2016**



Այս գիրքին մեկնասուրբներ
կը պրակնէին Համազգայիկի
գրատէր քարտկամետր:

ԸՍԻՆՔ 100-ԱՄԵԱԿ

**ԱՄԵԱԿՆԵՐԷՆ ԱՌԱՋ ԸՍՈՒԱԾԸ
ԱՄԵԱԿՆԵՐԷՆ ՎԵՐՁԻ ՄԱՍԻՆ
ԵՒ ԻՄ ԸՆԹ-ԵՐՑՈՒՄՍ
ԽԱՆՁՈՒԱԾ ՕՐԵՐՈՒ**

*Եթէ կարենայի գրկել այս մեծ եւ փոքր փղաքր,
որոնք շար անգամ, ոչ իրենց, ոչ ալ իրենց
ծնողացն անունը կը յիշեն եւ որբանոցին մէջ
պատահական անուն մը կը փրոյի իրենց..
Կարենա՛յի գրկել եւ ըսել.
- Սիրելիներ ը.. սիրելիներ ը..
Միայն այսքան. ուրիշ ի՞նչ կարելի է ըսել
այս խոշորանգուած բողբոջներուն:*

Պերճուհի, ԽԱՆՁՈՒԱԾ ՕՐԵՐԸ

*Ինքնութիւն եւ յիշողութիւն: Ոչ մէկ ճանաչում եւ ոչ մէկ սրապա-
փիր հայրուցում պիտի փոխարինեն արեան ճամբով եկած ինքնու-
թիւնը, սիրով ու հաւատարմութեամբ փրուած անունը, որ շարունա-
կութիւն ըլլալու դրոշմ է:*

*Գրականութիւնը ապրուած, ապրուող եւ երագուած կեանքի վկա-
յութիւն է: Կամ գիր-գրականութիւնը յիշողութիւնն իսկ է, որ կը պահէ
ապրուածի ինքնատիպ եւ եզակի հետքը, անհետացման եւ մահուան
դէմ յարդարուած ճակատ: Կամ՝ երեւակայնութիւնը:*

*Ժամանակակից մեծ գրողներ, մանաւանդ Երկրորդ Աշխարհա-
մարտէն ետք, դիպուածային յուշագրութեան անդին անցնելով,*

ISBN 978-9953-0-3801-8

իմաստասիրական-բարոյական եւ համամարդկային որակ փոփոխ յիշողութեան գիր ու խօսքին: Յրանաական գրականութիւնը ճոխացաւ համամարդկային հորիզոն բանալով յիշողութիւն-գրականութեամբ: Հայ գրականութիւնը քիչ պարագաներու յուշագրութենէն անդին անցաւ յիշողութիւն ըլլալու համար: Սփորագնահատում թող չհամարուի. ցաւը նոյնը ըլլալով, յուշագրութիւնները իրարու կը նմանին եւ չեն համայնանար:

Յիշողութեան ժամանակակից մեծ գրողներէն յիշենք Բյուր Միւնընը եւ Փաթրիք Մորիսանոն (երկուքն ալ գրականութեան Նոպէլեան դափնեկիր), Նաթալի Սարոթը եւ Մարկրիթ Տիրասը: Վերջինի երկը՝ ՅԱԼԸ, մենաբարոնի վերածուեցաւ Յրանասայի մէջ, դերասանուհի Տոմինիք Պլանի խաղարկութեամբ եւ շրջեցաւ բազմաթիւ երկիրներ, պահելով ֆրանսերէնը, օգտուելով խօսուածի բարգմանութիւնը գեղեղելով բնի վերը գրելու հնարատրութենէն, որպէսզի փարբեր երկիրներու փարբեր լեզուներ խօսող հանդիսատեսը հեփեփ (surtitrage): ՅԱԻը, Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին կնոջ մը սպասման եւ յոյսի փառապանքի պատումն է (քիչ մը Պերճուհիի ԽԱՆՉՈՒԲԾ ՕՐԵՐԸ-ուն պէս, որուն համար կը գրուին այս փողերը):

Այդ տեսարան սպասումն է, որ կը դաջէ յիշողութիւնը, չսպիացող խոց: ԽԱՆՉՈՒԲԾ ՕՐԵՐԸ-ու Սոնան (որ Պերճուհին է) այդ սպասման ցաւի յիշողութիւնը կը մարմնաւորէ:

Դերասանուհի Տոմինիք Պլան յաջողեցաւ անկի քան մէկուկէս ժամ լարուած պահել հանդիսատեսը եւ փոխանցեց վկայութեան յուզումը:

Ինչո՞ւ չաշակերտել այդ բեմադրութեան դասին:

Ի հարկէ կան յուշագրութիւններ, մասնակի եւ անհրապոյր, որոնք ինքնատրութեան բարենիշ սրանալու համար կը գեղեցկացնեն անցեալը կամ փայտորելու համար զայն կը սեւցնեն, կը հնարեն, առանց խորքի եւ արուեստի դրոշմի, յիշողութեան կշիռը եւ եզակիութիւնը վերածելով այլ բանի, շարախօսութեան:

1915-էն ետք ունեցանք անթիւ եւ անհամար յուշագրութիւններ, անոնք կը շարունակուին, ընդամենական փառասիրութիւններով, կամ Ռճիբի տեսլանութիւնը պատմելու փափակութեամբ: Քիչ պարագաներու անոնք յաջողեցան պատմողականէն անդին նուաճել պահերու եւ կացութիւններու խորքային ճշմարտութիւնը եւ անոնց սերտաճումը մարդուն եւ ճակատագրին հետ: Հայուն համար դժուար էր, եւ

դժուար է, ցաւի անմիջականութենէն անդին այլ բան փեսնել եւ պարագրկել անբողոքութիւն մը, պահը եւ անհատը գերանցելով:

Յամախ կը կարծենք սեւեռել անցեալը, գրականութեան եւ ընդհանրապէս պատմութեան խորթանալով, զայն կը վերածենք կարգախօսի, լոզունգի: Այդ անցեալը համամարդկային պատարտ դառնալու համար, պէտք է որ նուաճէ եւ գեղեցիկը եւ խորքը, որոնք ոչ հոնարորութիւն կը պահանջեն եւ ոչ՝ չնաշխարհիկ բառերու փարափ, ակնբարթային յուզումներու համար:

Պերճուհիի ՅԻՇՈՒԲԾ ՕՐԵՐԸ չսպիացող ցաւը:

Յաղթուած Թուրքիան ալ բացաւ երկրին դռները, բացաւ նոյնիսկ բաները: Բայց հեռուոր ճամբաներէն եկած ռեւէ ճամբորդ, մեր փնակին դուռը չգարկաւ կարօտով: Որովհետեւ բանրի դռները բացուեալ էին տեսարան օր մը դէպի մահ փանելու համար ընդարագոյնները մարդկանց (Պերճուհի, ԽԱՆՉՈՒԲԾ ՕՐԵՐԸ):

Անոնց մէջ՝ իր սիրած մարդը:

Այլ խօսքով, յիշողութիւնը, երբ հարազատութեամբ կ'արտայայտուի, կը պեղէ բառերով եւ անոնցմէ անդին, բառը ինքնին ըլլալով խորհրդանիշ, կը դառնայ սրեղծագործութիւն, առարկայական կացութիւններու եւ փոխալներու վրայ գումարելով ներմասցական փեսողութիւնը, որ փեսնուածով չի բաւարարուիր, այլ ինչպէս կ'ըսենք ժողովրդական ռճով, կ'ուզենք փեսնել հոգիի աչքերով: Յիշողութիւնը գրական նուաճում կը դառնայ եւ կը հարստանայ ներմացումով, կ'ընդարձակուի փեսադաշտը, իրապաշտութենէն անդին: Այս ընթացումով, յուշագրութիւնը գրականութիւն ըլլալու համար հոգեկան-նոզեկան նրբութեան կարիք ունի, որուն մասին կը խօսէր Փաւրայ, զայն հակադրելով երկրաչափական փոխալի, զոր ինք կը կոչէ նրբութիւն (esprit de finesse et esprit de géométrie):

Հայրենաստեղծութեամբ զանգումները (գոհերը չկան, որ յիշողութիւն պահեն) կարօտով եւ ցաւով պատմեցին յուշը,- արքորի ճամբաներ, ջարդի փեսարաններ, որբանոց, հիւանդանոց,- բայց վերապրումի մէջ սեւեռուած յիշողութիւնը բացակայեցաւ յամախ, հաւանօրէն այն պատճառով, որ գոհերը չկային վկայելու համար, կամ անոնք հագազուիւ էին, ինչպէս Երուանդ Օրեան մը, Արամ Հայկազ մը, Համասփեղ մը, Պերճուհի մը: Անդրանիկ Ծառուկեանի Ռուբէն Մեակի կեանքի վիպականացումն է Մէրը Եղեռնին Մէջ գիրքը, հակառակ իր գրականացման, քանիչրացեալ յիշողութեան բազմախորհրդուն փո-

խանցումը չ'ընեն: Մեր գրականության մեջ այս հորիզոնը կը բացա-
կայի: Չարմանալի կրնայ թուիլ, բայց օտար անգլիագիր հեղինակ
մը, Ռիչրդը Քալինովսքի, Գազանը լուսնի վրայ իր քապերախաղով,
հայկական յիշողության կառուցումը յաջողեցաւ փոխանցել: Յիշո-
ղութիւն՝ գլխազրուած:

Պատմութեան ահեղ եւ դառն փորձին դէմքերը, մեծերը եւ փոքրե-
րը, խորացման եւ լայնահորիզոն մտածման շնորհը պէտք է որ ունե-
նային, ոչ թէ բարդացումներով եւ գաղափարաբանական ճառով,
վկայելու համար, հոգեխոցի (traumatisme) մասին, որպէսզի պատ-
մական դէպքը դառնար գրականութիւն եւ ժամանակէն անդին
չգտող իմաստ, զայն փոխադրող: Անով է որ վերապրող եւ ժառանգ
ինքնութիւն պիտի կարենային պահել, երէկ, ի հարկէ, բայց նաեւ այ-
սօր եւ վաղը: Անհատական ողբերգութիւնը հաւաքական յիշողութիւն
դառնալու համար պատումի գեղեցիկով եւ բանի հզօրութեամբ կը
նուաճէ բոլոր ժամանակներու վկայութիւն ըլլալու առաքինութիւնը:
Մտաւորականութեան հաւաքական սպանող անկարելի դարձուցած
է գերհզօր վկայութիւնը, որ պիտի կարենար խորհուրդ եւ խորհրդա-
նիշ փոխանցել, որպէսզի իսկական յիշողութիւնը ազգային յաւեր-
ժութիւն դառնար:

Անկեղծ ըլլանք մենք մեզի հետ, խորք ունեցող յիշողութիւնը այ-
լատեալ է աւուր պատշաճի բազմալեզու շարախօսութիւն եւ կար-
գախօս դառնալով, թութակային կրկնութիւններով: Այս պատճառով
ալ զանգումները կը խզուին անցեալէ եւ ինքնութենէ: Իսկ այս
խզման պատճառները մոռացման զամբիւղը դրած ենք եւ կը բաւա-
րարուինք շօ-պիզնետով, գոր յանախ կը կոչենք լուսինկ, որուն
մանրութ արդիւնքներով կ'երջանկանանք: Միաժամանակ կորսնցը-
նելով յիշողութիւնը: Հայու վերակառուցում չ'ըլլար: Յուշագրութիւն
կը հրատարակենք, կ'արակելու համար չընթերցողներու, սոսկ անչ-
նական բաւարարութեան համար: Վերջին քափախարումները զքո-
սանք դարձած ժապաւէնները եւ տեսաներիզներն (vidéo) են, մակերե-
սային յիշողութեան (յ)վերականգնում, որոնք անվաղորդայն հե-
տաքրքրասիրութիւններ կը բնադրեն այլազան լեզուներով եւ
պատկերներով:

Յիշողութիւնը կ'ապրուի անհատի կամ հաւաքականութեան
մտերմութեան խորքի կամարներուն տակ, Տիզնիլէնը չէ, ոչ ալ ոջի-
լի շուկայ (Ֆիլ մարքէթ, մարշէ օ փիւս, պիթ պազարի): Հազի տեսնը-

ւածը եւ մոռցուածը յիշողութիւն չէ: Ժամանակ մը կը զուարճացնէ
ծագումով հայերը, կամ այդպէս ըլլալու ճամբուն վրայ գտնուողնե-
րը: Անուանացանկերը եւ կրկնուող լուսանկարները բաւարար չեն
խրաքանչիւրին փոխանցելու եւ անոր մէջ վառ պահելու յիշողու-
թիւնը: Անհրաժեշտ է անուան եւ պատկերին ետեւ եղած կեանքի
հետ հաղորդակցութիւնը: Օրինակ, Կոմիտասի արշաւին առջեւ ճառ
խօսիլ կամ փունջ մը ծաղիկ գետեղել բան չի նշանակեր, եթէ հայ եր-
գի քուրմին թրթռացումները փոխարինուած են անհարազատով,
թամ-թամով:

Կրծքանշաններ հրապարակի վրայ են. Յիշում եմ եւ պահանջում
եմ: Արագ տարագ մը, բայց շփոթ սրեղծող եւ անբաւարար:

Յիշել՝ ինչո՞ւ: Ի՞նչ:

Պահանջել՝ ինչո՞ւ: Ի՞նչ:

Եթէ ինչո՞ւներու պատասխան չտրուի, թամ-թամային յանկերգ կը
դառնան գեղեցիկ համարուող խօսքերը, թերթեր, բեմ, չայնասփիւռ
եւ հեռապետիլ խճողող: Նախորդ դարու առաջին կէտը ապրած սե-
րունդի յիշողութիւնը կը պահե՞նք ոչ թէ որպէս գիտութիւն կամ ծա-
նուցում-քարոզչութիւն, այլ հոգեկան-նոգեկան ներաշխարհ, որ մեր
կենսատնը եւ գաղափարները սրեղծէ:

Այսպէս, պիտի յաջողի՞նք ըսել՝ ոչ միայն մեր նախահայրերու հո-
ղը, այլ՝ մեր հողը, ոչ անոնց ջարդը՝ այլ նաեւ մեր տեւող ցարը, ոչ մեծ
հայրիկի լեզուն՝ այլ մեր լեզուն... Այս կ'ըլլայ հայու յիշողութիւն, որ
պատմութենէն աւելի է:

Յիշողութիւնը ընդամենը դուրս պէտք է բերել, ան պէտք է դադրի
անհատական ըլլալէ եւ դառնայ եզակիութիւն՝ բոլորին համար:

Գրիգոր Պրլտեանի Սեմեր գիրքին մէջ կրկնուող եւ կրկնութեամբ
խոցող ցափ արտայայտութիւն թրթրէն Միրկիւն բառը, տեղահա-
նութիւն, արքոր, անջնջելի դրոշմ է յիշողութեան մէջ, ահագնութեան
մթնոլորտ մը: Բայց այդ չայնը չի լսուի հիմա հայախօսներէն եւ
օտարախօսներէն, հետեւաբար յիշողութիւնը չ'ամբողջանար, կ'ըլլայ
ճառ, կ'ըլլայ դատարկ հնչող կարգախօս. Ճանչնալ, ճանչցնել, օրէնք
եւ օրէնքի թի-յօղուած: Սուրիական անժանօթ գիւղի մը մէջ մեռած
առանց տապանաքարի արքորական մեծ-մայրիկի անունն ալ կը
մոռցուի, կը դատարկուի յիշողութիւնը: Յիշողութիւնը կը վերականգ-
նի, երբ անապատի ցեղախումբէն այրած դէմքով արար մը հայ մար-
դը կը կոչէ քեռի, խալօ, քանի որ իր մայրը կամ մեծ մայրը հայ եղած

է: Կարդալ Տէթիյէ Չեթինի գիրքը՝ իր մեծ մօր Հրանուշի մասին: Իսկ ո՞վ պիտի խօսի Կարինեի մասին և իր անցած կյանքը: Ո՞վ է անապատի Արարիկ մայրը կամ մեծ մայրը, անուն, գիւղ, փուն, ընտանիք... Ան հոգեհանգիստի իրաւունք իսկ պիտի չունենայ: Ուրուականներ՝ որոնք հոգեկան երդիք կը փնտրեն: Անոնք ենթադրեալ թիւթուանշան են, առանց ճշտութեան, հազիւ: Ռաս-իւ-այնի կամ Տէր Զօրի անանուն, անապատութիւն եւ անթիւ դապաւարտեալներ, որոնք կը համայնական յիշողութեան մէջ: Այս յիշողութիւնը պոռոտ չէ, խորքային է: Եթէ դառնայ պոռոտ, կ'ըլլայ քարոզչութիւն, հայր իր ինքնութիւնը կը դիպէ դուրսէն, կը սկսի օտարացումը, գոհացում գրկելով օտարի նայածքին եւ խօսքին մէջ:

Կը մոռնանք, որ յիշողութիւնը լեզուով կ'սարտի, որպէսզի չըլլայ սոսկ պատում, ինչպէս հեռաբանի ռճիր-արկածի դրուագները: Հարկ է խորհրդածել ՍԵՄԵՐԻ մէջ կրկնուող սիրկիւնի մասին, որ անի թան կ'ըսէ թան գաղթը, աքսորը, փեղահանութիւնը: Առանց լեզուին զիրութիւն կը պահուի, բայց ոչ իրաւ յիշողութիւն, որ ինքնութիւնն իսկ է: Սիրկիւնը փեղաբար հոգեխոցը ցաւնող ճշտակ է, որ մէ աստիճանաբար կը հեռանան ծագումով հայ դառնայրու ուղին կամ քարոզչութիւնը: Լեզուով է որ կը պահուի յիշողութեան գերիբանակութիւնը:

Յիշողութեան կորուստը պարկանելիութեան հզօր զգացումին կորուստն է, նախապէս եղածի շարունակութեան դադարեցումը, նոր դիմագիծով նորի անանցեալ սկիզբ: Արամ Հայկազ կամ Համասարեղ պահակն են շարունակուող յիշողութեան: Այսինքն քարոյալքում խառնածինն նոր յիշողութեան կերպման դէմ պատուար:

Այս գեր-իբանակութիւնը, ըսինք, կը գրկենք հայ գրականութեան մէջ. Երուանդ Օրեան, Արամ Հայկազ, Համասարեղ, Ծախան Ծախնուր, Վազգէն Ծուշանեան, Պերճուհի: Ասոնք պատմութիւն չեն գրեր, յիշողութեան հայելի են:

Այդ յիշողութեան իրաւութիւնը կը նուանէ Պերճուհիի ԽԱՆՉՈՒԿՈՒԾ ՕՐԵՐԸ պատմութիւնը (ՀԱՅՐԵՆԻԶ ամսագիր, Պոսթոն, 1938-1939), որ ինքնապիտակ պատմութիւն մըն է, ժամանակ կը վերականգնէ եւ կը փոխանցէ: Այդ փոխանցման մասին կը խօսի նաեւ Պերճուհիի թոռնուհին, Անն Բարսեղեանը, իսկապէս հեղափոխական ուսումնասիրու-

թեանք մը, նոյն ցաւին մէջ ներառելով հայ մեծ մայր ունեցող թրքուհին, Տէթիյէ Չեթինը (ինչո՞ւ ոչ հայուհին՝ որ Հրանդ Տինք կը պաշտպանէ), որուն գիրքին մասին խօսեցանք եւ գրեցինք, բայց կարծէք սոսկ քարոզչական միտումով: Եթէ յիշողութեան վերականգնումին չգրած ըլլայինք, Պերճուհիի ԽԱՆՉՈՒԿՈՒԾ ՕՐԵՐԸ յայտնաւ ուշադրութեան արժանացած կ'ըլլար: Կ'ըսեմ յայտնաւ, քանի որ մամուլի էջերէն առնուելով, այդ վկայութիւնը ֆրանսերէնով լոյս տեսաւ, Parenthèses հրատարակչութեան, Մարսիլիա, իսկ ոչ որ չեռնարկեց զայն հայերէն հատորով մը լոյս ընծայելու:

Անն Բարսեղեանի ուսումնասիրութիւնը, որ չեւով մը նաեւ իր յիշողութիւնն է, ոչ ընթացիկ յուշագրութիւն, սեղանիս վրայ է, մեքենագիր: Հեղափոխութիւնը վրայէն ինքզինք ճանչցող եւ արմարներուն հետ խօսող խոստովանութիւն մը, ուր կայ ինք, կայ իր հայրը, որ փոքրիկ հեռուն է, Նորվանը, Պերճուհիի պատմութիւն, վերագրելու եւ սպրեցնելու անհատական կացութիւնը գերանցող մարդիկ, այրեր, կիներ:

Ինչպէս ըսի, ԽԱՆՉՈՒԿՈՒԾ ՕՐԵՐԸ լոյս տեսած է ֆրանսերէնով JOURS DE CENDRES A ISTANBUL անունով, 2004-ին, քարգնանութիւն՝ Արմէն Բարսեղեանի (պատմութիւն ՆՈՐՎԱՆԵՐ), օժանդակութեամբ Անն եւ Միշէլ Բարսեղեաններու:

Յիշողութիւնը գրեթէ առանց իրարու նմանող պարկերներու, բայց նոյն խորքով, նկարահանումն է ժամանակաշրջանի մը, յաջորդական եւ իրարու ազուցում փեսարաններով, ազատագրական շարժում եւ օսմանեան կայսրութիւն, սերը՝ յեղափոխութեան մէջ, փեղահանութիւն եւ ջարդեր՝ որոնք այդ օրերուն որպէս ցեղասպանութիւն չէին ըմբռնուեր, մէկ գիշերուան մէջ չեռնարկութիւնը եւ սպասակողը հարիւրաւոր հայ մշտնդասականներու, սպաս ցաւաբանց սպասումը անօգնական մնացած կիներու, յոյսեր եւ համեմատներու ինքնապաշտպանութիւնը, դիմադրական շարժումը նոյն այդ կիներուն, սրտերի հերոսուհիներ, պատմութեան քաւալումը եւ Հայաստանի անկախացումը, պակուրը գոհ հերոսի կնոջ՝ որ անդրանիկ հանրապետութեան խորհրդարանի անդամ կը դառնայ, հոսկ Փարիզ եւ որբերու եւ անհայրենիքներու ծառայութիւն... Կարելի չէ անփոփել քիչ էջերու մէջ ծաւալած պատմութիւնը ժողովուրդի մը, որ հաւաքը ուներ, ուներ փելելու հզօր ցանկութիւն, հակառակ Միւսանթոյի խօսքով սահմանում անպատմելի պատմութեան, գոր ու-

զած ենք պարմել, մնալով յուշի նեղ շրջանակին մէջ, առանց դարե-
րու դրոշմ փուռոյ յիշողութեան:

Բոլորը համարեղ լայնահորիզոն յիշողութիւն, գոր սրանչնելով
կը մնանք ազգի անդամ, ոչ հիւր եւ ոչ ծառայ օտարի դրան:

Հայաստանի անդրանիկ հանրապետութեան խորհրդայնացումէն
ետք, Փարիզ հասած Պերճուհի կը գրէ քաղմաթի գիրքեր, կը ծառա-
յէ, եւ յիսուն փարեկանին, 1940-ին կը մեռնի: Ծնած էր 1886-ին: Իր
ածինները ամփոփուած են փարիզեան շրջանի Հայ Մտաւորական-
ներու դամբարանը:

ԽԱՆՉՈՒԲԱԾ ՕՐԵՐԸ երեսուրասպէս ինքնակենսագրութիւն է, երի-
տասարդական խանդակաթ սիրոյ պարմութիւն, միաժամանակ հա-
ւաքական կենսագրութիւնը մարդոց, նոյն եւ փարքեր, որոնք դժոխ-
քէն անցնելով կը կառչին կեանքին, կեանք՝ որ անհատական ման-
րուքի դէմ յաղթանակ ըլլալու կը չգտի:

Էջեր՝ որոնք իրաւութիւն կու փան ֆէթիշ դարչող 100-ամեակին:

Ի հարկէ, եթէ այդ էջերը բացուին Յիշողութեան պաստառին
վրայ:

Պարզ, եթէ կարգախօսները եւ ցուցադրականը մոռնալով, կար-
դանք եւ լսենք խորքային յիշողութեան խօսքը:

Այսօր անիլի դիրին դարչած է ըսել քան ընել... Ափսոս:

Նկատի ունենալով, որ Պերճուհիի վկայութիւն-յիշողութիւնը կա-
րելի չէ ամբողջութեամբ վերահրատարակել «ԲԱԳԻՆ»-ի մէջ,
խմբագրութիւնը ընթերցողին կը ներկայացնէ հարուածներ, որոնք
գրուած-ըսուածէն անդին կ'անցնին, քանի որ հայկական saga-ն են,
առասպելներու վէպի պէս, լինելութեան պարկեր եւ նոյն այդ լինե-
լութիւնը այսօր ալ ներշնչող է, եթէ...:

Պերճուհիի պարմումը նախ մթնոլորտ է, հոն բնակող անչերը ար-
եւտական չեն: Անոնք պարբարաւ եղած են կեանքը իրենց ափերով
գրկելու, սէր, զուակ, ուսում, երազ, ներկայ են որպէս բարդ եւ
անկրկնելի կացութեան մը կրողներ, կը մարմնաւորեն քիւրաւոր ու-
րիչներ, որոնք կրկնութեան նմանող նոյն հոգեխոցերով ապրեցան:
Հակառակ փորութիւններու եւ ցափ, մարդիկ չեն կրիր: Պերճուհի կը
քանդակէ զարման առաջին կոկոնին պէս պայթող սէրերը, ազա-
րագրական պայքար մղողի ինքնապիպ կերպարները, չքաղքենիա-
ցած մտաւորականներ, հայ չկնորսներ, հերոսացող համեմարներ,
որոնք չեն վարանիր հալածական յեղափոխականներու պաշտպան

կանգնելու, Սամաթիայի հայ չկնորսները՝ որոնք գիտէին ազգ պա-
հել: Կը քանդակէ նաեւ համեմար հայ կիները, որոնք գաղութնացման
դրութիւն կը սրեղծեն հայ մանուկներ փրկելու համար, կամ թաքցը-
նելու հայ քաղաքական գործիչները:

Դիմադրականներու ընդլայնակայ սիրանքներ:

Օրինակելի փիպար է գիրքի մէջ գրկնուող Սոնան, որ հեղինակն է,
բայց նաեւ Սիրարփին, Չառուն, քաղնիքի մէջ թուրք կիները լոգնող
Հոռուիը, որ որքերը ազապագրելու պայքարին գաղութի սպասար-
կութեան հեղափոխող հերոս է, նաեւ միւսները, որոնց մէջ կան
օտարներ:

ԽԱՆՉՈՒԲԱԾ ՕՐԵՐԸ ոչ փափակ յուշագրութիւն է, ոչ բարոյախօ-
սութիւն, ոչ մարտակոչ, ոչ սեփական եւսի փառաբանանք, որ նորա-
չեութիւն է՝ խմբագրել փալով սեփական, հօր կամ մեծ հօր-մեծ մօր
պարմութիւնը: Ժայթքող յիշողութիւն է, ոչ յուշ, որուն մէջ իւրաքան-
չիւր հայ ինքզինք կը տեսնէ, կրնայ տեսնել, այս շեւով է որ ԽԱՆՉՈՒ-
ԲԱԾ ՕՐԵՐԸ գերանցում կը կատարէ, կը դադիր յուշագրութիւն ըլլա-
լէ, տեսակ մը հեքիաթ ըլլալէ, կը դառնայ բոլորի զգացած եւ նոյնիսկ
չզգացած, ենթագիտակիցի մէջ աքսորուած հոգեխոցը, traumatisme,
որ այսօր յանչնառութիւններու կ'առաջնորդէ, կուշտերը կ'ըսեն՝ ծայ-
րայեղութիւններու:

Ամէն քան եւ էականը կորսնցուցածներ ինչո՞ւ պիտի վախնան
ծայրայեղութիւններէ:

Այնքա՞ն անսեթեթ յուզում կայ անհեղափոխական բովէն անցած եւ
Հայաստան դարչած հայրենիքի բանակին ի տես, աչքերուն մէջ գոհ-
ւած հերոսի այրիին, անոր որքին եւ պայքարի ընկերուիի որք չզած
եւ որդեգրուած որքին:

Զանդակուած փիպարներ կան. սարսափի մթնոլորտի մէջ ծնած
սէրը երիտասարդներու, որոնք կը փրկուին թուրք ոստիկանութեան
հեղափոխումներէն: Ըսինք՝ saga... Որ անպայման մահով չի վերջա-
նար: Նաեւ քաղքենիին սէրը, հարուարին վիրաւորուած ետը, որ
մարմնութեան կ'առաջնորդէ, բայց անոր մէջ հայու խիղճը կը փանի
զայն զոյումի, քաւութեան:

Կրնայ զարմանալի թուիլ, եթէ ըսենք, որ ֆրանսերէն քարգմանու-
թիւնը, իր լեզուական եւ ոճական շնորհով, խիստ փայտորիչ է, քանի
որ գեղագիտական խմբագրութիւն է: ԽԱՆՉՈՒԲԱԾ ՕՐԵՐԸ պարմու-
մի լեզուն վերամշակելով քերես կ'աւելնայ անոր գեղագիտական

արժեքը, բայց կրնայ նուազիլ անմիջականությունը, պարզին մեջ խարտիսը, քանի որ Պերճուհի ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ կը վերծանէ, չի գրեր, չի պարմեր: Կը թափանցէ բջիջներու մեջ: Այս ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆը պարմութիւն կամ պարմագիրութիւն չէ: Անկախութեան առաջին փարոսան փողակցող զինուորներու համբանքը չէ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ բովանդակութիւնը, այլ ՀԱՅ ԶԻՆՈՒՄՈՐԻ ՏՈՂԱՆՑԲԸ՝ որ վերածնունդ է:

Երբ կը խօսուի ցեղասպանութիւնը ճանչնալու, թողութիւն խնդրելու եւ թողութիւն փալու մասին, եղանակ կը փոխուի, նահանջելով կը խորհիւնք որ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ մեջ նախած ՀՈԳԵԽՈՅԸ, հոգեբոյժները կ'ըսեն trauma, կ'անհետանայ շպարով, ինչպէս կ'ըսեն cosmetic հայումներով:

Կրկին պէտք է որ խօսիմ Մարկրիթ Տիրասի ՅԱԻԻն եւ զայն մեղաբարոնի վերածած Տոմիկի Պլակի խաղին մասին: Եթէ ԽԱՆԶԸ-ԻԱԾ ՕՐԵՐԸ Մարկրիթ Տիրասի ՅԱԻԻն պէս միջազգային բնւ բարչրանայ, այն արեւն ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆը, ոչ ցեղասպանութեան ճանաչման քարոզչութիւնը, կը նուաճէ համամարդկային հասկացողութիւն: Թերեւս այն արեւն թուրքերն անգամ կը բաժնեն հայկական trauma-ն:

Եւ կայ տեսարանը: Թուրքին խէնչ սեռային հայաժանքէն փախչող որբեայրի Սոնան եւ իր գիրկի մանուկը, ազատելու իրենց վերջին ճիգի ընթացքին, քարափին կը լքեն անցեալը եւ իրենց ճամբորդուկները, կը մտնեն մարդկային աշխարհ մը՝ իրենց հետ փանելով իրաւագրկուածի անբեռ ծանր ժառանգութիւնը. ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ:

Կրկին կարդանք տեսարար խանչուող ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ, անցեալ եւ ներկայ, որ միայն Սոնա-Պերճուհիին չի պարկանիր:

«Յաղթուած Թուրքիան ալ բացաւ երկրին դռները, բացաւ նոյնիսկ բանտերը: Բայց հեռաւոր ճամբաներէն եկած ռեւէ ճամբորդ, մեր տնակին դուռը չզարկաւ կարօտով: Որովհետեւ բանտի դռները բացուեալ էին ահաւոր օր մը դէպի մահ փանելու համար ընկրելագոյնները «մարդկանց»:

Յաղթական լռութեան դափնապարտուած չթակուած դռները հայաշխարհի:

3. ՊԱԼԵԱՆ

Փետրուար 2015, Լիբանան

(Լոյս տեսած «Բագին»-ի մեջ 2015-ի առաջին համարով)

«ԽԱՆԶՈՒԱԾ ՕՐԵՐԸ»՝ ՊԵՐՃՈՒՀԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ Ֆրանսերէն հրատարակութիւնը՝ JOURS DE CENDRES A ISTANBUL – BERDJOUHI (2004, Մարտիլիա)

Պերճուհի Բարսեղեանի այս պատումը լոյս տեսած էր Պոսթոնի ՀԱՅՐԵՆԻԸ ամսագրին մեջ, 1938-1939-ին, յաջորդական համարներով: Իր որդին, փարիզաբնակ Արմէն Բարսեղեան, իրաւաբան, ֆրանսերէնի քարգմանած է պատումը, որ յուշագրութեան, ինքնակենսագրութեան, եւ գրականութեան սահմաններուն կը գտնուի, եւ ինքնատիպ վկայութիւն մըն է, իր արտակարգ փիլափաներով, որոնք պատմութիւն կը գրեն:

Այս գիրքին ֆրանսերէն քարգմանութիւնը, առանձին հատորով մը լոյս ընծայած է (Editions Parenthèses, 2004, Մարտիլիա): Գեղատիպ հրատարակութիւն մը: Ֆրանսերէն հրատարակութեան ընթերցումը հեզասահ է, քանի որ «ֆրանսականացնելով», օրուան հայերէնի լեզուական անհարթութիւնները ինքնաբերաբար կորսուած են:

Պերճուհի Բարսեղեանի թոռնուհին, Անն Բարսեղեան, իրեն հետ մեր ունեցած քանի մը հանդիպումներու ընթացքին, փափաք յայտնեց որ գիրքը լեզուական հիմնական վերախմբագրման չենթարկուի, եւ բաւարարուի կարգ մը անհրաժեշտ սրբագրութիւններով: Պատումի լեզուն այդ օրերու Պերճուհիի շրջապատին մեջ խօսուող հայերէնն էր, ինչպէս, օրինակ, «ինչ»-ի գործածութիւնը, «գիս»-ի եւ յաճախ նաեւ «ինծի»-ի փոխարէն: Բայց մասամբ սրբագրած ենք բայական շեւերը, որոնք նոյն բային եւ նոյն խոնարհումին համար գրուած են փարբեր ուղղագրութիւններով: Անբողջական վերախմբագրում մը աւելի արդիական կրնար դարձնել գիրքը, ի հարկէ նուազեցնելով անոր իր ժամանակին յարուկ նկարագիրը: Ըսնի մը թրքերէն բառերու ներկայութիւնը պէտք չէ զարմացնէ, որոնք այդ օրերու նաեւ այսօրուան խօսակցական լեզուին մեջ սովորական են:

Այս գիրքը ուզեցինք վերախմբագրուիլ հայոց ցեղասպանութեան եւ հայրենաստանման հարիւրամեակին առիթով, հաղորդուելու համար յուշագրութեան եւ պարմագրութեան փարբեր մթնոլորտ մը փոխանցելու համար մեր ժամանակակիցներուն: Պերճուհի ուշագ

րաւ փիլպարներու (հերոսներու) վերածած է կիները, որոնց մասին ընդհանրապէս չի խօսուիր, որոնք Սերոբ Աղբիւրի «Սօւտ»-ն չեն, բայց աւելի ժամանակակից են, ինչպէս ֆրանսական դիմադրական շարժման մասնակից կիները, կամ Էրնեստ Հեմինկուէյի Սպանիոյ հանրապետականներու կռիւներու մասնակից կիները (յիշել՝ «Որոնց համար կը դողանջեն զանգերը» գիրքը):

Առանց փառասիրութեան գրուած էջեր, ուր կան լուռ եւ լուսւած ցաւեր, այրիացածներ եւ անանուն մնացած որբեր, որոնց ոչ ոք հապուցում պիտի ընէ: Բայց նաեւ հեղափոխական անոր համար, որ առանց միգի, այս յուշագրական էջերը գրականութենէ հեռու չեն, իրատրփին ունին:

Պերճուհին, գեղեցիկ, ուսումնական եւ հարուստի աղջիկ, ազգային յանձնառութեան արտակարգ փիլպար մըն է, որ իր կեանքը գիտակցաբար կապած է յեղափոխականի մը, Վանայ Սարգիսին, Սարգիս Օրապաշեանին, Շամիլ, որուն մասին գրած են Ռուբէն եւ ուրիշներ: Գիրքին մէջ նկարագրուած արտակարգ եւ հզօր կիներ, Չառօն, որ չէր կրած ցաւի ահաւորութեան փակ, կը յիշեցնէ Էրնեստ Հեմինկուէյի վերեւ յիշուած գիրքի հերոսուհին...

Այլապէս հեղափոխական է, պարունի շրջանակներէն մին կազմող հայկական Սամաթիա թաղամասին նկարագրութիւնը, մարդոց մով եւ կեանքով, որ կ'ամփոփէ այդ ժամանակաշրջանի օսմանեան փրկապետութեան փակ ապրող հաւաքականութիւններու լինելութիւնը: Իսկական ընկերային ուսումնասիրութեան պատարտ մը:

Պարմութեան փոթորիկին մէջ ապրած Պերճուհին այսօր ալ օրինակ կրնայ ըլլալ, թերեւս պէտք է աւելցնել՝ մանաւանդ այսօր, ինչպէս կ'ըսուի՝ օրինակի արժէքի ուժով:

Պերճուհի Բարսեղեան ծնած էր 1886-ին: Եղած էր Հայաստանի անդրանիկ հանրապետութեան խորհրդարանի անդամ: Հայաստանի խորհրդայնացումէն ետք հասած է Փարիզ, ուր գրադած է զարթականաց Նանտենեան գրասենեակով: Մեռած է 1940-ին եւ կը հանգչի Փարիզի Հայ Մրատրականներու դամբարանը:

Գիրքի ընթերցման դիրութեան համար, կը հրատարակենք նաեւ «ԲԱԳԻՆ» գրական հանդէսի մէջ լոյս տեսած «ԱՄԵԱԿՆԵՐԷՆ ԱՌԱՋ ԸՍՈՒԱԾԸ ԱՄԵԱԿՆԵՐԷՆ ՎԵՐՋԻ ՄԱՍԻՆ» եւ իմ ընթերցումներու «Խանչուած օրեր»-ու վերլուծական փորձը:

Յ. Պ.

Այցելութենէ մը վերադարձիս կառքին մէջ մոռցեր էի ձեռքի պայուսակ: Բարեկամներու տրուած մեր առաջին այցելութիւնն էր այդ, զոր ամուսինս եւ ես կ'ընէինք մեր 5 ամսական մանչուկին հետ: Իբր մայր իմ տուած առաջին այցելութիւնս էր պատճառը, թէ ես տղաս գրկած ու ամբողջովին կլանուած ինձ համար անսովոր այս քաղցր բեռով ու պարտականութեամբ՝ մոռցեր էի պայուսակ, զոր այնքան կը հաւնէի:

Տխուր էի շատ: Իմ պայուսակ կը գոցուէր գեղեցիկ քանդակուած արծաթե երկու նոյնանման կտորներով: Կաշին ու մնացեալն ալ նոյնքան սիրուն էին ու ներդաշնակ: Պայուսակիս մէջ ունէի ոսկի ժամացոյցս, ամուսնութեանս մատանին, որ նիհարնալուս պատճառաւ մատես հյնալուն՝ հոն դրեր էի, եւ շատ փոքրիկ մանրանկար ոսկիէ տետրակ մը, որուն կափարիչին վրայ փոքրիկ ադամանդներով եզերուած չորս տերեւանի առուոյտ մը կար քանդակուած: Ներսի երեսներէն մէկուն վրայ փորագրուած էր քառեակ մը իմ սիրած մէկ ժողովրդական բանաստեղծէ մը.—

**Պահիր սրտիդ մէջ մի մաքուր անկին
Ցաւի օրերուդ համար ապաստան
Ու երբ լսես մորիկի շաչիւն,
Սրտիդ մէջ մի տեղ գտնես թաքստան:**

Այս ոսկի տետրակիկը անցուած էր ժամացոյցիս ոսկիէ շղթայէն, որ մեծ մօրմէս նուիրուած հնութիւն մըն էր, եւ կ'ընէին, թէ մեծ արժէք կը ներկայացներ: Շղթան քիչ առաջ վիզէս հաներ էի, որովհետեւ այցելութեան ընթացքին տղաս իմ կաթովս կերակրած ժամանակս, փոքրիկը շղթայով զբաղուած՝ կը մոռնար ծծել:

Ունեի նաեւ քիչ մը դրամ: Ես դրամ քիչ ունեի ոչ միայն պա-
յուսակիս մէջ, այլ եւ առհասարակ: Պայուսակս եւ մէջի արժե-
քաւոր իրերը կը պատկանէին անցեալիս, իսկ ներկայիս՝ ես
աղքատ էի: Ամուսնացած էի աղքատ, բայց հոգեպէս հոյակապ
մարդու մը հետ, որուն համար «սիրել» բառը գործածելն իսկ
ինձ նուաստացուցիչ կ'երեւայ, մանաւանդ հիմա, երբ կը տես-
նեմ, թէ ինչ բովանդակութիւն կը տրուի այդ բառին:

Տխուր էի կորսնցուցած իրերուս համար, բայց ես անմխի-
թարելի էի մանաւանդ ամուսնութեան մատանիիս կորուստին
պատճառով: Այդ մատանին, բարակ ոսկիէ կերտուած եւ
անարժէք, ինձ համար կը խորհրդանշէր իմ ներկաս, իմ սքան-
չելի ամուսինս եւ մեր սիրեկան երեխան: Ան կը խորհրդանշէր
իմ պայքարներուս յաղթանակը, կը մարմնացներ իմ կապս ինձ
համար նոր կեանքի մը հետ:

Կորուստիս կը խառնուէր նաեւ խուլ վախ մը: Ես լսած էի, որ
ամուսնութեան մատանին կորսնցնելը շատ վատ նշան էր: Ան
դուռ կը բանար դժբախտութիւններու, իսկ ես կը յուսայի վեր-
ջապէս արժանացած ըլլալ ներկայ երջանկութեանս, որուն հա-
տեր էի այնքա՛ն դժուարութիւններու, այնքա՛ն ճիգերու գնով:

Երբ ամուսինս տեսաւ յուզումս, զիս հանգստացնելու հա-
մար ըսաւ, որ վստահ էի, թէ պայուսակս թողեր էի մեր այցելած
բարեկամներու տունը եւ թէ ինք կ'երթայ ստուգելու: Ժամէ մը
վերադարձաւ պարապ ձեռքերով, բայց կրկին հանգստացուց
զիս՝ ըսելով թէ մեր բարեկամները դուրս ելած էին, դուռը գոց
էր եւ թէ կրկին պիտի երթար հետեւեալ օրը:

Յաջորդ օրը, սակայն, հարկ եղաւ, որ հաշտուիմ կորսնցու-
ցած ըլլալուս գաղափարին հետ: Այդ ժամէն սկսեալ անբա-
ցատրելի վախ մը համակեց զիս մատանիիս կորուստին պատ-
ճառով: Ի գուր ամուսինս կը ջանար հանգստացնել զիս հեզնե-
լով, յանդիմանելով կամ գուրգուրալով: Ի գուր կը ջանայի ես
ալ ինքզինքս համոզել, թէ ամօթ է այսքան նախապաշարեալ
մէկը ըլլալ. սարսափը չէր հեռանար ինձմէ:

Ես նախապաշարեալ կին մը չէի: Եթէ մատանիի մը կորուս-
տը զիս այս աստիճան կ'ալեկոծէր, պատճառը Պոլսոյ մէջ տի-
րող անորոշ, բայց տեւական մտահոգութիւնն էր: Այդ մտահո-
գութիւնը, վերջերս մանաւանդ, խոնաւութեան պէս կը թա-

փանցեր մեր հոգիներէն մեր կամքէն անկախ:

Ինձ համար մասնաւորապէս զգալի էր միջավայրին մէջ տի-
րող խուլ մտահոգութիւնը: Պոլսոյ միջավայրը անսովոր եւ նոր
էր ինձ համար: Ես երբեք Տաճկաստան չէի ապրած:

Մանկութեանս եւ երիտասարդութեանս մէկ մասը ապրած
էի զանազան ազատ երկիրներ: Վերջին հանգրուանս եղած էր
ժընեւը, ուր ուսումս նոր վերջացուցած՝ եկեր էի Պոլիս ամուս-
նանալու:

ժընեւէն վերջ, ուր կեանքը ժամացոյցի մը պէս կանոնաւոր է
եւ հաճելի երագի պէս գրաւիչ, Պոլիսը իմ վրաս թողած էր գե-
ղեցիկ, բայց ջղագրգիռ կնոջ մը տպաւորութիւնը:

Կը հիանայի անշուշտ անոր եզակի բնական գեղեցկութիւն-
ներուն վրայ: Կարելի՞ է չհիանալ աննման Վոսփորով, Մարմա-
րայի մարգարտանման կղզիներով, շքեղ Ոսկեղջիւրով: Բնու-
թիւնը կարծես երկար կանգ է առեր այդ հողամասին վրայ,
կրցեր է ներդաշնակ խառնուրդ մը տալ ամենատաք գոյներէն
սկսեալ մինչեւ ամենամեղմ գոյները: Անոր օդին մէջ դրեր է
օրօրող, պարուրող մեղմ սիւքը եւ ծովի ափերուն տուեր է հնա-
րաւոր, մինչեւ անգամ անհնարին ձեւեր ու չափեր: Ի՞նչպէս
կարելի է առանց սարսուռի դիտել Պոլսոյ վերջալոյսերն ու ար-
շալոյսները, ուր ծովն ու երկինքը իրարու կը միանան յարափո-
փոխ գոյներու երագային գիրկընդխառնումով:

Գեղեցիկ էր Պոլիսը, բայց անոր բնական շքեղութիւններուն
քով կար առօրեայ կեանքը, որ իր անողոք իրականութեամբ
կ'արթնցներ քեզ հիացումէդ: Եւրոպականի եւ ասիականի, քա-
ղաքակրթութեան եւ վայրենիի տարօրինակ խառնուրդը կը
վրդովէր հոգիդ: Վերջին նորածեութեամբ հագուած կնոջ մը
քովէն ամենայն հանդարտութեամբ կ'անցներ ցնցոտիներ հա-
գած, կեղտով ու վերքով պատուած մուրացկանը, հաշմանդա-
մը եւ, որքա՛ն շատ են անոնք, կամ իր իշուն վրայ փիլիսոփա-
յօրէն նստած գնչուն:

Այս վրդովեցուցիչ է, ո՛չ թէ իբր «երեւոյթ» (ես ինքս կը դժուա-
րանամ աւելի արժանիքներ տեսնելու շքեղ հագուստ հագածի
մը քով, քան ցնցոտիներ հագածի), այլ վրդովեցուցիչ է իբր
«եութիւն», որովհետեւ Պոլսոյ մէջ խառնուրդը միայն արտա-
քին չէ, այլ կ'արտացոլայ առօրեայ կեանքի ամենաաննշան

դեպքերու մէջ անգամ: Զեզ կը թուի, որ օդին մէջ հին օրերէն մնացած վայրենի շունչ մը կայ, որ երբեմն-երբեմն ծոծրակեղ կ'անցնի՝ սարսուռ տալով քեզ:

Շատ հաւանական է, որ անցորդի մը, Պոլիսը տեսնելու համար եկած եւրոպացիի մը կամ ամերիկացիի մը համար այս հակադրութիւնները ըլլան հետաքրքրական, մինչեւ անգամ հաճելի, բայց մշտապէս հոն ապրողի հոգին անխուսափելիօրէն կը կրէ այդ հակադրութիւններու դրոշմը. անոր հոգին կը յոգնի այդ ներհակ բարքերու բախումներէն: Իսկ եթէ հոն ապրողը ազատ օտար պետութեան մը քաղաքացին չէ, այլ կը պատկանի ժողովուրդի մը, որ հայրենիք չունի, որովհետեւ այդ հայրենիքը խլուած է նոյնինքն Պոլսոյ տէրերէն, այն ժամանակ անոր սիրտը ոչ միայն կը յոգնի, այլեւ կ'արիւնի...

Պոլիսը գերազանցապէս հակապատկերներու քաղաք է: Սքանչելի ապարանքի մը քով փլած խրճիթ, յղկուած քառուղիի քով աղբանոց, քաղաքակիրթ երկիրներէն եկած ազատ թերթերու քով մտքերու վրայ սեղմուած բիրտ բռունցք, երգի քով լաց եւ աղօթքի քով ոճիր:

Այդպէս էր Պոլիսը խաղաղ օրերուն ալ, իսկ պատերազմի ընթացքին «ջղագրգիռ գեղեցիկ կինը» գէշ հիւանդութեամբ վարակուած գեղուհիի կը նմանէր, մինչեւ անգամ կը նմանէր չար վիուկի մը, որ ճակատը կնճռոտած սեւ դաւեր կը նիւթէ...

* * *

Պատերազմը կը շարունակուէր տարիէ մը ի վեր նոյն սաստկութեամբ: Տաճկաստան գինակիցն էր Գերմանիոյ, որ կատաղի կռիւ կը մղէր Ղաշնակիցներու դէմ: Զաղաքակիրթ երկիրներէն իսկ արիւնի հոտ կու գար: Հոն գիտութեան եւ գեղարուեստի տաճարները կը փլէին կատաղի յարձակումներու տակ, եւ դարերու աշխատանքը, դարերու յառաջդիմութեան բոլոր խորհրդանշանները կ'ոչնչանային...

Մենք՝ հայերս, որ մեր ճակատագրական ծանր վայրկեաններուն մեր աչքերը կը յառէինք դէպի Արեւմուտք, այս պատերազմի ընթացքին մեզ կը զգայինք, անպաշտպան, մեր գլխուն վրայ կուտակուող սեւ ամպերու տակ: Թէեւ Պոլսոյ մէջ դեռ

որեւ «առանձին ուշադրութեան» չէինք արժանացած, սակայն կը զգայինք, որ «աչք» մը կայ մեր վրայ, աչք մը, որուն նայլածքը բարեացակամ ըլլալէ շատ հեռու էր... Մեզի չէին ներեր այն բոլոր բարբարոսութիւններուն, զորս իրենք գործած էին մեր հայրենիքը մեզմէ խլելու համար: Մեզի չէին ներեր, մանաւանդ, որ մեր հոգիներուն խորը, այդ հայրենիքը դեռ մերը նկատել կը համարձակէինք:

Գիշերները մասնաւորապէս ճնշող էին: Կարծես քաղաքակրթութիւնը քուն կը մտնէր գիշերուան հետ, եւ անզուսպ վայրենի ուժ մը կ'արթննար մութին հետ:

Գիշերները լեցուն էին կանչերով, աղաղակներով: Խումբերով մարդիկ թմբուկներով փողոցներէն կ'անցնէին՝ ժողովուրդը արթնցնելու եւ յայտնելու, թէ ո՞ր տարին ծնած գիտուորցուները կը կանչուին՝ պատերազմի դաշտ դրկուելու համար, թէ ո՞ր եւ ե՞րբ պետք էր ներկայանալ: Ուժգին թմբկահարութիւն կար թէ՛ յայտարարութենէն առաջ եւ թէ՛ յայտարարութենէն ետք: Այսպէս, գրեթէ ամէն դրան առաջ: Ասոր կը յաջորդէր զանազան գոռում-գոչում՝ չես գիտեր ի՞նչ նպատակաւ: Թերեւս կ'ուզէին նախօրօք պատերազմի սարսուռը տալ ե՛ւ անոնց, որոնք կ'երթային, ե՛ւ անոնց, որոնք սիրելիներ պիտի դրկէին:

Ամէն գիշեր ինծի կը թուէր, թէ յաջորդ առտուն վայրենի անապատի մէջ պիտի արթնանք, թէ ցերեկուան մեր տեսած գեղեցիկ շէքերէն, պարտեզներէն ու սքանչելի տեսարաններէն ոչ մին մնացած պիտի ըլլայ, թէ վայրենի փոթորիկ մը գիշերուան ընթացքին տարած, սրբած պիտի ըլլայ ամէն, ամէն բան... Բայց ո՛չ, լոյսը կը բացուէր ամէն օրուան պէս, նոյն սիրուն շէքերը, նոյն շքեղ բնութիւնը լուսաւորելու համար:

Այդպէս էր մթնոլորտը: Այդ էր պատճառը, որ ես մատանիի մը կորուստին պատճառով նախապաշարուած՝ մատնուած էի սարսափի: Հոգիս մէջ կուտակուած վախերն էին, որ չնչին պատճառով մը կը պոռթկային: Մութը իյնալուն պէս, ամէն գիշեր աննկարագրելի անհամբերութեամբ կը սպասէի ամուսնոյս վերադարձին, ու երբ ան կու գար իր սովորական ուրախ տրամադրութեամբ, ես զինք կը դիմաւորէի իբր թէ տարիներէ ի վեր բաժնուած ըլլայինք կամ թէ ան մեծ վտանգէ մը ազատած ըլլար...

Ամուսինս երեսուն տարեկանը քիչ անց, առողջ կազմով, գեղեցիկ ճակատով ու աչքերով, հին օրերու մարգարեի դեմքով մեկն էր: Բարձրագոյն ուսում ստացած էր ժընեւ, յետոյ՝ Փարիզ, բայց փոխանակ իրեն համար շահաւետ ասպարեզ մը ընտրելու, ամբողջովին նուիրուած էր իր հայրենիքին ազատագրութեան գործին:

Ես չեմ յիշեր որեւէ չնչին դէպք, որեւէ արարք, զոր ան կատարած ըլլար իր շահին կամ իր հանգստին համար: Իր ամուսնութիւնն ինձ հետ, ինչպէս կ'ըսէր ինք, «երջանիկ թիրիմացութիւն» մըն էր, որուն մեղքը, պէտք է խոստովանիմ, կ'իյնար իմ վրաս:

Պատահած էի իրեն հինգ տարի առաջ Պալքանեան երկիրներէն մեկուն մէջ: Ես այն ժամանակ տասնվեց տարեկան «կրակի կտոր» աղջիկ մըն էի, այդպէս կ'անուանէին զիս: Իմ տարիքիս յատուկ չափազանցուած տենչեր ու երազներ ունէի: Պիտի գոհուէի հայրենիքիս ազատութեան համար: Յեղափոխական խումբերու հետ Տաճկաստան պիտի երթայի Սուլթան Յամիտը սպաննելու համար: Նախօրօք իր երեսին պիտի պռնայի բոլոր այն բարբարոսութիւնները, զորս ան ընել տուած էր հայրենիքիս մէջ, հաշիւ պիտի պահանջէի ամէն անմեղ արիւնի համար, զոր ան թափել տուած էր եւ արժանացած՝ «Կարմիր Սուլթան» համաշխարհային, բայց զազրելի տիտղոսին:

Ես իմացեր էի, թէ ինչպէս Յայաստանի մէջ, որուն Թուրքիա անունը կու տան մինչեւ հիմա ալ, Կարմիր Սուլթանի մարդիկն ու ոստիկանները, բանտարկեալ մը խոստովանեցնելու համար, թէ ո՛ր կը գտնուին իր ընկերները կամ իրենց պահած զէնքերը, չէին վարանած իր տասը տարեկան տղուն ոտքերը պայտելու հօր ներկայութեան: Ես իմացած էի, թէ ինչպէս խօսեցնելու համար համալսարանական երիտասարդ մը, որ նմա-

նապէս կալանաւորուած էր, շէկ երկաթով տաղեր էին ոտքին ներբանները, թելերուն տակը, ամէն օր քիչ-քիչ, ծեծեր էին, ակռաները քաշեր էին մէկիկ-մէկիկ, եւ երբ ան չէր խօսած, զայն կախեր էին հրապարակի վրայ՝ մնացեալներուն դաս տալու համար: Ես կը ճանչնայի այս երիտասարդը, թէւ գիտէի, որ ան մեկն էր միայն հազարներէն, անոր ողբերգական մահը ցնցեր էր իմ թարմ հասակս:

Ես այստեղ կ'ամչնամ գրի առնելու բոլոր այն տարօրինակ ծրագիրներս, զորս ամէն օր ու գիշեր կը յօրինէի կարդացած գրքերուս, լրագիրներու կամ հայրենաշունչ ճառերու ազդեցութեան տակ: Իմ ծրագիրներս մեկը միւսէն արտառոց էին եւ անգործադրելի, բայց անոնց իրագործման ջերմօրէն կը հաւատայի, այն աստիճան, որ երբեմն իմ իսկ երեւակայական ծրագիրներս զիս այնքան կը յուզէին, որ աչքերէս արցունք կը հոսեցնէին...

Մեր ապրած քաղաքը տեսակ մը ճամբայ էր կարգ մը մտաւորական քաղաքական գործիչներու համար, որոնք նախքան Տաճկաստան անցնիլը կանգ կ'առնէին հոն, թէ՛ իրենց մուտքը Տաճկաստան դիւրացնելու, թէ՛ հոն գտնուողներուն հետ կապ պահելու համար:

Իմ կեանքս հարստացաւ բոլոր այն մարդոցմով, որ ես ճանչցայ այդ շրջանին: Շատեր ա՛լ չէին վերադառնար, բայց անոնցմէ ամէն մեկը իր հոգիէն շող մը նետեց իմ կեանքիս ճամբուն վրայ՝ լուսաւորելով զայն հետագային ալ, երբ իրենք շատոնց արդէն նահատակուած էին...

Երբ իմ ապագայ ամուսինս ալ մեր քաղաքը եկաւ նախքան Տաճկաստան անցնիլը, ուրիշներու պէս կարգ մը դասախօսութիւններ տուաւ: Ես այդ հայրենասիրական հաւաքոյթներուն կ'երթայի ծնողքէս գաղտնի: Ծնողացս հայրենասիրութիւնը կը կայանար ազատագրութեան գործին որոշ գումար մը տալուն մէջ: Ինձ խստիւ արգիլուած էր այդ հաւաքոյթներուն ներկայ ըլլալ: Իմ դիրքիս վայել չէր, կ'ըսէին, երթալ-նստիլ արհեստաւորին, խանութպանին կամ ուսուցիչ-ուսուցչուհիներուն քով եւ մասնակցիլ այդ ժողովներուն: Մանաւանդ, որ ես աղջիկ էի, եւ մեր շրջանէն ոեւէ պարոն պիտի չգիջաներ այդ շրջանակներուն հետ շփում ունեցող մեկը կնութեան ուզել:

Ես ոլորապտոյտ ճամբաներով, ոչ բառացի անշուշտ, հնարը կը գտնէի միշտ առաջին հասնողներէն մէկն ըլլալու այդ հաւաքոյթներուն: Միւսներուն չափ հետաքրքրութեամբ կը հետեւէի ըսուածներուն: Ծնողացս դրած արգելքը իմ փախուստներուս կու տար նաեւ արգիլուած պտուղի քաղցրութիւնը, որ նուազ հաճելի չէր:

Ապագայ ամուսնոյս դասախօսութիւնները ճակատագրական (ստիպուած եմ այս շատ գործածուած բառը գործածել) եղան ինծի համար: Անոր խօսքերը այնքա՛ն տաք, այնքա՛ն անկեղծ էին, որ բոլորը քարացած՝ կը լսէին: Ես չէի լսեր, այլ կ'ըմպէի իր խօսքերը, ինչպէս ծարաւ մարդը կը խմէ լեռան վճիտ աղբիւրի ջուրը:

Գեղեցիկ էր ան, գեղեցիկ ոչ այն տափակ իմաստով, որ շատ անգամ տղամարդիկ կ'ունենան եւ որ կանանց յատուկ է: Անոր գեղեցկութիւնը ներքին բարոյական ուժէ մը կու գար եւ անոր եռութիւնը կարծես կը լուսարձակէր: Երբ կը խօսէր զոհողութեան մասին, որ մեզմէ ամէն մէկը պետք է ընէր իր հայրենիքին ազատագրման համար, մենք կը զգայինք, որ ան լոկ խօսքեր չէր որ կ'ըսէր, այլ ինքը՝ առաջինն էր, որ իր գիտութիւնը, իր երիտասարդ հասակը, իր բոլոր ակնկալութիւնները դրած էր այդ զոհողութեան սեղանին վրայ, իբր ողջակէզ:

Մտքովս կը համեմատէի զինք իմ շրջանակիս երիտասարդներուն հետ, որոնք մէկ նպատակ ունէին՝ հարստանալ, եւ մէկ երագ՝ հաճոյք: «Ահա՛,- կ'ըսէի ես ինծի,- այն մարդը, որ պիտի կարենայ իրագործել իմ ծրագիրներս եւ ուղղութիւն տալ ոլորմոլոր մտքերուս: Ան պիտի կրնայ շիտակ եւ օգտակար ճամբան ցոյց տալ ինծի»:

Տատանուիլ չէի գիտեր: Գրեցի իրեն՝ յայտնելու համար, որ պատրաստ էի ամենավտանգաւոր գործերը ստանձնելու իր քարոզած գաղափարներուն իրականացման համար. խնդրեցի, որ հաւատայ ինձ եւ գործ մը յանձնէ՝ աշխարհի ո՛ր կողմը որ ըլլայ, միայն կարենայի օգտակար ըլլալ:

Յուզումով տոմսակիս պատասխանին կը սպասէի: Արդէն մտքովս մնաս բարով կ'ըսէի ծնողացս, մանաւանդ հօրս, զոր շատ կը սիրէի: Ծաշելու ժամանակ յանկարծ արցունքներ կը հոսէին աչքերէս այն մտքէն, որ թերեւս վերջին անգամ նստած

եմ ընտանեկան սեղանի մը շուրջ, եւ որ այլեւս զիրենք պիտի չտեսնեմ, չէ՞ որ կրնայի մեռնիլ վտանգաւոր գործի ժամանակ:

Իմ գրած նամակս լալու աստիճան տխմար ու միամիտ բան մը ըլլալու էր: Անոր մասին չեմ կրնար, այսօր իսկ, առանց կարմրելու մտածել:

Ամուսինս, որ միշտ անելի ծեր ցոյց տուած է քան իր տարիքը, մեր յաջորդ տեսութեան ինձ հասկցուց մեղմութեամբ, առանց հեզնութեան ամենափոքր շեշտի, թէ իմ տեղս ծնողացս քովն էր, եւ թէ շատ երիտասարդ էի որեւէ պատասխանատու գործ կատարելու համար: Խորհուրդ տուաւ, որ շատ կարդամ զարգանալու համար: Ըսաւ, թէ հեռուներ երթալու պետք չկար, որպէսզի օգտակար կեանք մը ունենայի, թէ տեղւոյն վրայ, օրիորդներէ կազմուած խմբակ մը յաջողեցնելով՝ կրնայի աշխատանքի որոշ ծրագիրներ մշակել: Օրինակ, անգրագետներու գրել-կարդալ սորվեցնել, տգետ ընտանիքներ այցելելով առողջապահական տարրական գիտելիքներ տարածել: Եւ այսպէս կարգ մը «անհամ» ու «պաղ» խորհուրդներ:

Բարկացած էի շատ ու հիասթափուած: Ա՛յս էր մեր հայրենասերը, որ պառաւ կնոջ յարմար գործեր կ'առաջարկէր եռանդուն եւ զոհողութեան ընդունակ աղջիկներու: Լացի կարծես բարկութենէս, քիչ մըն ալ ամօթես: Այնքա՛ն անօգուտ արցունքներ ու յուզումներ կուլ էի տուեր երեւակայական բաժանման մը համար: Այնքա՛ն վախով ու դժուարութեամբ ճամբորդական պայուսակս պատրաստէր էի՝ այս արդիւնքին հասնելո՞ւ համար:

«Եթէ ազգային գործիչները չեն գիտեր օգտագործել ինձ պէս ուժերը, անոնք ինձ չեն օժանդակեր Կարմիր Սուլթանը սպաննելու», կը մտածէի, «ուրեմն պիտի աշխատիմ անոր հարեմին համար ընտրուիլ»: Զէ՞ որ ամէն տարի գեղեցիկ աղջիկ մը կ'ընտրեն Սուլթանին համար: Անպատճառ պիտի ընտրուէի, ու գիշերը երբ Կարմիր Սուլթանը, սիրով տոչորուն սենեակս մտնէր, զինք պիտի սպաննէի: Ի՞նչ հոգ, թէ յետոյ սպաննուէի:

Այն ժամանակ պիտի հասկնային, որ անփորձ ու երիտասարդ աղջիկը ինչի ընդունակ էր...

Բարկացած էի, բայց բարկութիւնս շուտով փոխուեցաւ

զարմանքի: Այս երիտասարդը որեւէ գովեստ չէր ըներ ինձ իմ արտաքինիս համար, Նոյնիսկ չէր նկատեր որ ես գեղեցիկ էի, իսկ ես այնքա՛ն վարժուած էի գովեստներ լսելու, որ անոնց պակասը պարոնի մը կողմէ իմ բարեւիս չպատասխանելու պէս բան մըն էր ինձ համար: Շուտով զարմանքս փոխուեցաւ հիացման եւ հիացումս փոխուեցաւ... Ոչ, հիացումս երբեք չփոխուեցաւ. հիացումը միշտ մնաց, հարազատութեան խորը զգացում մը, հետագային եկաւ միանալու այս երիտասարդին հանդէպ ունեցած հիացմանս:

Մենք յաճախ իրարու հանդիպեցանք: Հակառակ բարկութեանս, ես կազմեր էի 6 հոգինոց խմբակ մը ինձի տարեկից աղջիկներով: Հրաւիրեցինք զինք, որ մեզի ցուցմունքներ տայ եւ օգնէ մեզի մեր ապագայ աշխատանքներուն համար ծրագիրներ մշակելու: Շաբաթը երեք անգամ եկաւ մեզի դասախօսելու: Մեզի խօսեցաւ եւրոպացի կնոջ եւ ամերիկուհիներու մասին: Գովեց անոնց բերած օգտակար բաժինը հասարակական բնոյթ կրող գործերու մէջ: Բացատրեց, թէ որքա՛ն մեծ է հայուհիի դերը եւ որքա՛ն ան կրնայ օգտակար ըլլալ, եթէ գիտակից է ու պատրաստուած: Պատրաստեց նաեւ նիւթերու ցանկ մը, որուն մասին, մենք մեր մէջը պէտք է խօսեինք, վիճեինք, որպէսզի վարժուեինք մեր միտքերը ազատ կերպով արտայայտելու:

Ես փոխուեցայ, մտածել սորվեցայ եւ լուրջ կերպով աշխատիլ սկսայ՝ յուսահատութեան մատնելով ծնողքս երեկոյթներու մէջ երեւելու իմ մերժումներովս: Ես արդէն հասած էի ընդունելութիւններու մէջ երեւելու տարիքին, որուն այնքա՛ն անհամբերութեամբ կը սպասէն այդ շրջանին պատկանող օրիորդները:

Մեր դասախօսը մեզ հետ սիրալիք էր, մտերիմ... Բայց եղբոր մը պէս: «Աբեղայ» դրինք իր անունը: Երջանիկ էինք, որ այնպէս էր ան: Ուրիշ վերաբերմունք մը պիտի հիասթափեցնէր մեզ: Պիտի չներեինք իրեն, որ ան ըլլար «աշխարհիկ պարոնի» մը պէս:

Գիտեինք, որ վտանգաւոր գործով կ'երթար Տաճկաստան, թերեւս ա՛լ վերադարձ չկար իրեն համար, եւ ճիշդ այդ պատճառով ան թանկագին էր մեզի համար: Թէեւ ամբողջութեամբ տրուած էր հայ դատին, շատ անգամ ժպտով մը, շարժումով

մը կը մեղմէր մեր չափազանցուած հայրենասիրութիւնը: Պէտք չէր ազգամուլ ըլլալ, պէտք էր սիրել նաեւ միւս ժողովուրդները, որոնք նմանապէս տիեզերական ընտանիքի անդամներ էին:

– Նոյնիսկ թո՛ւրքը,– կը հարցնէինք մենք զարմացած:

– Նոյնիսկ թուրքը,– կ'ըսէր անհաստատ ձայնով, ժողովուրդը չէ յանցաւորը, այլ ռեժիմը: Մեր պայքարը միայն ռեժիմին եւ ռեժիմին կողմնակիցներուն դէմ է: Մենք ուշ կամ կանուխ հասկացողութեան պիտի գանք թուրք ժողովուրդին հետ:

Եթէ ուրիշ մը ըլլար այս խօսքերը ըսողը, մենք պիտի հիասթափեինք, բայց անոր խօսքերուն մէջ այնքա՛ն համոզում կար, անոր ձայնին մէջ այնպիսի մարգարեական շեշտ մը կար, որ մենք կը լռեինք, թէեւ ոչ բոլորովին համոզուած:

Մենք՝ խմբակին անդամներս սիրահարուած էինք իրեն: Ասիկա հաւաքական սիրահարութիւն մըն էր, զոր մենք չէինք ծածկեր իրարմէ: Որեւէ ակնկալութիւն չունէինք, հետեւաբար նախանձ ալ գոյութիւն չունէր մեր մէջ:

– Երանի՛,– կ'ըսէինք շատ անգամ,– երանի ան գոնէ մեզմէ մէկը սիրէր: Միւսներս ալ երջանիկ պիտի ըլլայինք: Անոր սերը տարօրինակ, աննիւթական, մինչեւ հիմա չտեսնուած բան մը ըլլալու էր:

– Գուցէ ուրիշ երկիրներ սիրած աղջիկ մը ունի,– ըսի օր մը,– քսանվեց տարեկան է, անշուշտ հանդիպած է իրեն պէս զարգացած ու գեղեցիկ մէկու մը... բացառիկ կնկայ մը:

Բոլորս ալ հառաչեցինք, բայց եւ առանց նախանձի մտածեցինք այն եկթադրական չնաշխարհիկ էակի մասին, որ կրցեր էր այսպէս մէկու մը սիրոյն արժանանալ: Մենք ոչ միայն չէինք նախանձեր, այլ եւ հիացումով կը դիտէինք մեր երեւակայութեան մէջ, մե՛ր իսկ ստեղծած, ամէն մէկս տարբեր ի հարկէ, հրաշալի կնոջ մը պատկերը:

Օր մը դասախօսութենէն վերջ, մեզմէ տարիքոտը, որ տասնեօթը տարեկան էր ու փորձուած (ըստ իրեն), գրկեց ուրախութեամբ:

– Գիտե՞ս,– ըսաւ,– դասախօսութեան ժամանակ, ամէն անգամ որ կը ծռիս նօթերդ գրելու, արեղայի նայուածքը արեւի երկար կանգ կ'առնէ քու վրադ քան հարկաւոր է, քան թոյլատրելի է, պէտք է ըսէի:

Ըստ «փորձուածին»՝ այդ նայուածքը տաք էր, բայց տխուր...

– Սէր կայ այդ նայուածքին մէջ,– եզրակացուց ան ծափ տալով,– Սէր կայ, Ե՛ս է որ կ'ըսեմ:

Բոլորս ալ երջանիկ էինք: Մենք կրցեր էինք, գոնէ վայրկեան մը, բացառիկ մարդու մը նայուածքը գամել իր մտահոգութենէն դուրս կետի մը վրայ. տխուր այդ երիտասարդը դուրս քաշեր էինք իր ծանր պարտականութիւններու շրջանակէն: Մեզմէ ոչ մէկը պիտի ուզէր, որ ան իր ճամբայէն շեղէր,– այդ պիտի չուզէինք նոյնիսկ մեր երջանկութեան գնով: Սակայն, սփոփանք մը, երիտասարդական կայծ մը արթնցնել ծերունիի պէս ապրող այս աբեղայ երիտասարդին մէջ մեզ կը թուէր ըլլալ մարդկային բարի գործ մը:

Փոքրիկ յիմարներ էինք մենք:

Ճիշդ էր «փորձուածին» ըսածը: Յաջորդ դասախօսութեան ես քանի մը անգամ հանդիպեցայ անոր նայուածքին: Ի՞ գուր յանկարծակիի եկած՝ ան իր երեսը անդին դարձուց. ես բռներ էի մինչեւ անգամ իր նայուածքին տաքութիւնը:

Կը զգայի, որ աքաղաղի կատարին պէս կարմիր էի. լալու եւ խնդալու սաստիկ փափաք մը ունէի: Առանց այլեւայլի մատիտս առջեւ սեղանին վրայ դրի ու գլուխս թելերուս մէջ առած՝ լռիկ արտասուեցի: Եղած չեղածը նայուածք մըն էր, ան ալ փախուստ տուող նայուածք մը, բայց ես գլխապտոյտ ունէի երանութենէս:

Յաջորդ օրը ան չեկաւ դասի: Գրեր էր, թէ մեկնելու պատրաստութիւն կը տեսնէ եւ պիտի գայ հետեւեալ օրը վերջին անգամ դասախօսելու:

Եկաւ, բայց չնայեցաւ ինձ: Դէմքը խիստ էր եւ ձայնը կտրուկ: Աբեղայ՝: Իշխեր էի իր վրայ:

Դասէն վերջ՝ մնաս բարովի խօսքեր: Ան յոյս յայտնեց, որ մենք շատ օգտակար կերպով պիտի աշխատէինք: Կը հաւատար, թէ մեր ծրագիրները պիտի գործադրէինք, եւայլն:

Մենք արձաններու վերածուած էինք: Գիտէինք, որ պէտք էր շնորհակալութիւն յայտնել, բարի ճանապարհ մաղթել, բայց ո՞վ պիտի ըներ այդ:

Անտանելի վիճակ մը ստեղծուած էր, որմէ դուրս հանելու համար մեզ ան սկսաւ կատակել:

– Բարի ճանապարհ մաղթել չէ՞ք ուզեր: Իսկ ես կը կարծէի որ դուք չարածճի, բայց լաւ աղջիկներ էք: Ինչո՞ւ խօսք մը չէք ըսեր ինձ:

Մեր խօսքը եղաւ հաւաքական յիմար լաց մը, ինչպէս հաւաքական եղած էր մեր սերը:

Ինձ կը թուէր, թէ մենք պարոնին չէ որ կը ցաւէինք. եթէ մեկնողը կին ալ ըլլար, մենք նոյնքան պիտի տխրէինք, նոյնքան որբանայինք: Ան կրցեր էր մեզ հանել տափակ կեանքի տաղտուկէն, մեր անգոյն հաճոյքներէն ու ժամանցներէն: Մենք վեց հոգիներս ալ կը պատկանէինք աւելի քան բարեկեցիկ ընտանիքներու, ուր ժամանակը կ'անցներ կերուխումով, երեկոյթներով, եւ ուր միակ գրաւիչ բանը պարն էր: Ան մեր առջեւ բացեր էր հորիզոններ, որոնց գոյութեան մենք անգիտակից էինք: Ան մեզ հասկցուցած էր, որ կային ուրիշ հարստութիւններ քան անոնք, որոնցմով մենք մինչ այդ հպարտ էինք:

Մեկնելուն օրը գացի զինք տեսնելու այն համեստ պանդոկին մէջ, ուր կ'ապրէր ան: Իմ ըրածս աններելի արարք մըն էր ըստ մեր միջավայրի ըմբռնումներուն համար: Գացի ըսի, բայց աւելի ճիշդ պիտի ըլլար, եթէ ըսէի, թէ անքուն գիշերէ մը վերջ, առտուն կանուխ ինքզինքս գտայ անոր դրան առջեւ: Երբ դռնէն ներս մտայ, կեցայ յանցաւորի մը պէս: Ի՞նչ ըսելու եկած էի այս գունատ երիտասարդին, որ իր գծած ճամբայէն շեշտակի կը քալէր դէպի նպատակ մը, եւ որեւէ ուժ կամ այլ բան չէին կրնար իրեն արգիլել քալել: «Դիտի ուզէի՞ որ ան շեղէր իր ճամբայէն: Երբե՞ք: Ուրեմն, ինչո՞ւ եկած էի:

Կ'անիծէի ինքզինքս եկած ըլլալուս համար, բայց եւ յանկարծ անսահման երջանիկ եղայ, երբ իր զարմացած նայուածքը կանգ առաւ վրաս:

Կարճ տեւեց սպասողական դրութիւնը: Ան մօտեցաւ եւ շատ բնական բան մը պատահածի պէս ձեռքերէս բռնելով նստեցուց:

– Լաւ ըրիք եկաք,– ըսաւ,– քանի մը ըսելիքներ ունիմ, որ դուք, հակառակ ձեր երիտասարդ տարիքին, պիտի հասկնաք, վստահ եմ:

Լռեց: Բառեր կը փնտռէր, որոնք կարծես չէին գար: Ես արդէն գտեր էի հանդարտութիւնս, մինչեւ անգամ յանդգնութիւնս:

– Գիտեմ, որ վտանգաւոր գործով կ'երթաք,– ըսի,– չէք կրնար չերթալ, այդ ալ գիտեմ: Արդէն չեմ ուզեր որ չերթաք: Այն ժամանակ դուք չէիք կրնար ըլլալ ինչ որ էք ինձ համար: Սակայն, չէք կրնար զիս այսպէս թողուլ: Ես կը խեղդուիմ այս մթնոլորտին մէջ: Միթէ չէ՞ք հասկնար այդ... Օգնեցէք ինձ, որ հեռանամ, երթամ այլ ճամբայով քան ձերը, բայց նոյն նպատակին համար, այսինքն...

Երբ տեսայ որ ան հետզհետէ աւելի կը գունատեր, լռեցի: «Ի՛նչ յիմար աղջիկ եմ, կը մտածէի, խռովեցի հոգի մը, որ իր ամբողջ հանդարտութեան պէտք ունի»:

– Համոզեցէք ձեր ծնողքը որ ձեզ արտասահման դրկեն ուսանելու,– ըսաւ: Եթէ այս գործը լաւ վերջանայ, կը գրեմ ձեզ: Իմ բացակայութեանս քննեցէք ձեր զգացումները եւ անկեղծօրէն ինձ գրեցէք: Կը խոստանա՞ք: Տեսէ՞ք, այն գործը, որուն նուիրուած եմ, իսկապէ՞ս կը հետաքրքրէ ձեզ այն աստիճան, որ դուք... յանձն առնէք ամէն ինչ զոհելու անոր համար: Ո՛չ մէկ խոստում մի՛ ընէք ինձ հիմա: Յառաջիկային կը թղթակցինք: Ո՛վ գիտէ, կեանքը շատ անակնկալներ ունի, թերեւս եւ պատահինք, միայն անկեղծ եղէք ինձ հետ:

Բաժնուեցանք ձեռքի ուժեղ սեղմումով մը: Այն ժամանակ համբոյրները այսքան առատ եւ այսքան ալ անարժէք չէին...

Ամբողջ հինգ տարուան մեր բաժանման ընթացքին ես իրմէ շատ նամակներ ստացայ: Իրեն յանձնուած գործը Տաճկաստանի մէջ վերջացնելէ ետք, ան անցած էր հայկական գաւառները ժողովուրդին մէջ ազատութեան գաղափարները արթնցնելու համար: Ան եւ իրեն պէս հարիւրաւորներ գաղտնի կ'ապրէին տուններու մէջ պահուած, շատ անգամ ալ լեռները, շարունակ մէկ տեղէն միւսը փոխադրուելով թուրք կառավարութեան ձեռքը չանցնելու համար:

Անոնք զբաղած էին դրացի երկիրներէն ներմուծուած գէնքերը ապահով թաքստոցներու մէջ տեղաւորելու գործով: Ամէն մէկ գէնք շատ անգամ, ոմանց կեանքերու գնով տեղ կը հասներ, սակայն, կարելորդ իրենց համար ժողովուրդը զինելն էր, որպէսզի, ինչպէս շատ անգամներ պատահած էր անցեալին մէջ, ոչխարներու հօտերու պէս չկոտորուէին: Անոնց նպատակն էր մանաւանդ ժողովուրդը պատրաստել այն միտքին, թէ՛ իրենք տէրն էին երկրին, պէտք է զինուէին, որպէսզի օր մը ընդհանուր ապստամբութեամբ մը քշէին այս բռնի կերպով իրենց հայրենիքին մէջ տեղաւորուածները:

Անոր նամակները լեցուն էին յոյսերով: Անոնք լեցուն էին նաեւ խրատներով: Իր ուզածը, կ'ըսէր, իմ երջանկութիւնս էր. եթէ իմանար, որ ամուսնացեր եմ եւ երջանիկ, ինքն ալ երջանիկ պիտի ըլլար:

Այդ տեսակ նամակներուն ես հեզնանքով կը պատասխանէի: Կ'ըսէի, թէ վստահ եմ, որ ինք շատ պիտի տխրէր, եթէ ես ուրիշի հետ ամուսնանայի եւ ճիշդ այդ պատճառով այդպիսի անգուրթ արարքի մէջ պիտի չգտնուէի:

Մեր բաժանումէն երկու տարի վերջ միայն ես յաջողեցայ ծնողքս համոզել, որ Չուիցերիա երթամ հոն ուսումս շարունակելու համար: Կը հետելէի գրականութեան եւ մանկավարժու-

թեան, երբ Տաճկաստանի մէջ տեղի ունեցաւ ռեժիմի փոփոխութիւն: Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը տապալեց համիտեան իշխանութիւնը եւ իր ձեռքն առաւ կառավարութեան դէկը: Բոլոր քաղաքական կուսակցութիւնները հռչակեցան օրինաւոր: Նոր կառավարութիւնը շատ սիրալիք վերաբերում ցոյց կու տար դէպի հայ քաղաքական կուսակցութիւնները եւ մասնաւորապէս դէպի ՀՅ Դաշնակցութիւնը, որուն կը պատկանէր ամուսինս:

Հրապարակային ժողովներու մէջ թուրք պատասխանատու մարդիկ բարձրաձայն կը յայտարարէին, թէ՛ «եղբայրներ ենք հայերու հետ»։ անոնք չէին տատանիր ըսելու, թէ՛ իրենց ստացած ազատութիւնը մեծ մասամբ կը պարտին հայ քաղաքական կուսակցութիւններուն: Ճառերէն վերջ համբոյրներ կը փոխանակուէին ուրախութեան աղաղակներու մէջ:

Ամուսինս, որ միշտ հաւատացող մը եղած էր թուրք ժողովուրդի ապագային, ոգելորուած նամակներ կը գրէր ինձ: Կը հաւատար թուրքերու անկեղծութեան, անոնց եղբայրական խօսքերուն: Թերթերու մէջ կը կարդայի ամուսնոյս ճառերը եւ աչքերուս չէի հաւատար: Ա՛ն, եւ ազա՛տ ճառեր, Տաճկաստանի մէջ, հրաշքի պէս բան էր:

Տենդագին կ'աշխատէի ուսումս վերջացնելու, որովհետեւ որոշած էիք, որ ան Պոլիս պիտի գար ժամանակ մը հանգրստանալու: Ես ալ հոն պիտի երթայի զինք գտնելու համար: Յետոյ միասին պիտի մեկնէինք հայկական գաւառներէն մէկը՝ կրթական կամ այլ գործով զբաղելու համար:

Այդ շրջաններուն էր միայն, որ ես իրմէ սկսայ ստանալ տաք եւ կարօտալի նամակներ: Ի՛նչ լաւ կը գրէր, մանաւանդ ի՛նչ լաւ զգալ գիտէր: «Հիմա,– կ'ըսէր կատակով,– այս բնական պայմաններուն մէջ, կրնամ վերջապէս ըսել, «յամառ, բայց սիրելի աղջիկ, կարօտցեր եմ քեզի»:

Իմ ճամբորդութիւնս ժընեւէն Պոլիս եղաւ յոյսերու տեղատրութիւն եւ մակընթացութիւն: Երջանկութեանս կը խառնուէր տեսակ մը վախ: Պիտի հաւնէ՞ր զիս նորէն: Ես հինգ տարուան մէջ շատ էի տառապէր եւ շատ աշխատէր: Ծնողքս զիս ուղղակի կրակի վրայ տաղէր էին զանազան մարդոց հետ ամուսնացնելու համար: Կարծես անեծք կար վրաս. ով որ

ամուսնանալ որոշէր, նախ աչքը իմ վրայ կը յառէր: Որքա՛ն լաց, որքա՛ն անօգուտ վիշտ:

Չեմ մեղադրէր ծնողքս. մանաւանդ հիմա կը զգամ, որ անոնք իրաւունք ունէին: Կը զգամ նաեւ, որ եթէ ինձի առիթ տրուէր տասն անգամ սկսիլ կեանքս, տասն անգամ ալ այս ձեւով պիտի սկսէի...

Գնացքը կանգ առաւ Պոլիս, եւ դեռ ես ինձ կը հարցնէի՝ պիտի հաւնէ՞ր զիս նորէն, պիտի սիրէ՞ր արդեօք... Պիտի համբուրէ՞ր զիս վերջապէս...

* * *

Պոլիս իջայ ազգականի մը տունը: Հոն պիտի ապրէի մինչեւ ծնողքիս գալը: Իմ ժընեւէն Պոլիս երթալու որոշումէս յանկարծակիի եկած, իրենք ալ որոշէր էին ամառը Պոլիս անցնիլ եւ յետոյ ինձի հետ միասին տուն վերադառնալ: Գոնէ այդպէս կը յուսային:

Դժուար եղաւ ինձ համար հասած օրս իսկ դուրս գալ տունէն: Պատրուակեցի ուսանողուհիի մը կողմէ տրուած ծրար մը ծնողքին յանձնելու հոգը, չլսել ձեւացուցի ազգականներուս զարմացական բացազանչութիւնները, առաջարկեցին քուզիններէս կամ ծառաներէն մէկը հետս առնել անծանօթ քաղաքին մէջ առաջնորդուելու համար: Փողոց ելայ: Ազգականներս, կարծեմ, այդ օրը անգամ մը եւս ուրախացան, որ իրենց աղջիկները արտասահման ուսումի դրկելու անխոհեմութիւնը չէին գործած.– Բարձրագոյն ուսում, ահա թէ ի՛նչ բարքեր կու տար ան:

Կառքը կանգ առաւ, վերջապէս, տրուած հասցէին առջեւ: Ծանապարհի ընթացքին ինձի կը թուէր, որ ձիերը պետք եղած արագութեամբ չէին երթար, երբեմն ալ ընդհակառակը, կարծես անտանելի կերպով շուտ կը վազէին: Ես կ'ուզէի ե՛ւ շատ-շուտ տեղ հասնիլ ե՛ւ կամ բնաւ չհասնիլ: Եթէ չհաւնէր զիս... եթէ յանկարծ տարիներու երազս փշրուէր...

Երբ սպասուհին զիս առաջնորդեց այն սենեակը, ուր ան կը գտնուէր, ես անշարժ կեցայ դրան սեմին: Պատուհանին առջեւ երկու հոգի ոտքի վրայ կը խօսէին: Իրենց կիսադէմը կը տես-

նեի միայն: Մեկը՝ բարձրահասակ էր, բարեձեւ եւ ճաշակով հագուած, երկրորդը փոքրահասակ, մորթը արեւէն խանձուած եւ շատ անփոյթ, գրեթէ աղքատ հագուած:

Սիրտս կը բարբախեր, եւ ես ինձ կը հարցնէի. «Ո՞րն է, Աստ-ւած իմ, այս երկուքէն որն է»...

Հինգ տարի առաջ, գրեթէ աղջնակ եղած ժամանակս տեսած դէմքս, ես երեւակայութեանս մէջ քիչ-քիչ, անզգալաբար փո-խեր էի, նոր ձեւ ու գոյն էի տուեր, տարիներուս լոյսէն նետեր էի այդ պատկերին եւ ահա կանգնած՝ ա՛լ չէի ճանչնար զինք...

Սկսայ յառաջանալ՝ միշտ սրտատրոփ ինքս ինձ հարցնե-լով. «Ո՞րն է... այս երկուքէն ո՞րն է»...

Վերջապէս, լսեցին ոտնաձայնս, եւ երկուքը մէկ դարձան դե-պի ինձի.

– Ա՛, դո՞ւն ես Սոնա,– ըսաւ փոքրահասակը եւ դեպի ինձի վազեց փութով:

Ի՛նքն էր:

Հինգ տարուան ընթացքին ես հասակ էի նետեր, բարձրա-ցեր, իսկ ան, բնական է, մնացեր էր նոյնը: Իր վարած չարքաշ կեանքը իր դրոշմը դրեր էր անոր դէմքին վրայ. անոր արտա-յայտութիւնը աւելի կորովի էր, աւելի առնական...

Չեմ գիտեր, երկվայրկեան մը, ակնթարթ մը հիասթափու-թեան պէս բան մը ծագեցաւ ու մարեցաւ իմ ներաշխարհիս մէջ, երբ երագներուս պատկերը չբացաւ տեղի տալու համար իրականին: Միայն գիտեմ, որ երբ մօտէն տեսայ իր գեղեցիկ ճակատը, իր լոյս սփռող նայուածքը, ես ինձ ըսի. «Ի՛նքն է»... Ի՛նքը, եւ այն աղջիկը, որ իր գլուխը գուրգուրանքով դրաւ անոր ուսին, զգաց, որ ալ միևնակ չէ, զգաց, որ իր հոգին գտած է իր յենարանը եւ ինք երջանիկ է անբացատրելի երջանկու-թեամբ: Չզաց նաեւ, որ իր գլուխը դրած է երջանիկ մարդու մը ուսին:

Այդ օրը կեանքիս ոսկեշրջանը սկսաւ: Միասին էինք գրեթէ ամբողջ օրուան ընթացքին, երբ զբաղած չէր: Պոլսոյ հրաշա-գեղ բնութեան մէջ մեր միասին կատարած պտոյտները լեցուն էին անիրական երեւալու աստիճան երանութեամբ:

Ազգականներս շուտով զիս ի կարգ հրաւիրեցին: Լսեր էին, որ կը պտտէի մեր ընտանիքին անարժան մարդու մը հետ:

Ամէն տեղ կ'երեւէի «ցնցոտիներ հագած» մէկու մը հետ: Վեր-ջապէս, գրեցին ծնողներուս, եւ ասոնք, շնչասպառ, ժամանա-կէն առաջ Պոլիս եկան:

Ա՛խ, երբ կը մտածեմ, թէ ի՛նչպէս մօտիկները զիրար սիրե-լով հանդերձ իրար յօշոտել գիտեն: Ի զուր կ'աշխատէի համո-զել, որ այս խաղաղ պայմաններուն մէջ ամուսինս եւ ես աշ-խատելով պիտի կարենայինք նոյնիսկ բարեկեցիկ կեանք մը ունենալ: Ամօթ էր իրենց համար, որ իրենց աղջիկը աշխատէր: Եթէ այսինչը առնէի, պիտի ունենայի ադամանդներ, սեփական կառք, ամառանոցներ...

Ես կմախքի նման էի, երբ ամուսնացայ, յաջորդ օրն իսկ ծանր հիւանդ պառկեցայ: Ամուսնոյս վիճակուեցաւ սանձել իր կարօտը, տարիներու իր սպասումը եւ խնամող մայր մը ըլլալ իր հիւանդ կնոջ անկողինին քով:

– Մամա՛,– կը կանչէի զինք կատակելու համար:

– Իմ սիրական աղջիկս,– կ'ըսէր ինձ խնդալով:

Ա՛ն, ա՛լ ամէն ինչ էր ինձ համար՝ հայր, մայր, ընկեր եւ ամու-սին... իմ տիեզերքս:

Առողջանալէս ետք ինձ համար սկսաւ ոչ միայն երջանիկ, այլ եւ շատ հետաքրքրական կեանք մը: Ամուսնոյս շրջանակը կազմուած էր մտաւոր բարձր մակարդակ ունեցող անձերէ: Այդ միջավայրը ինձ համար բառին իսկական առումով կենդանի դպրոց մը եղաւ:

Պոլսոյ կեանքը այդ շրջանին շատ բեղուն էր, մշակութային կեանքի տեսակետով: Երիտասարդ Թուրքերու կառավարու-թեան տուած որոշ ազատութիւնները խօսքի եւ գործի՝ մեղ-լաջան աշխատանքի լծած էին հայ մտաւորականութիւնը: 1908-1915-ի տարիները մշակութային տեսակետով շատ բեղմ-նաւոր եղան:

Համիտի կառավարութեան օրով խիստ գրաքննութեան են-թարկուած էր մամուլը, սանձուած էին խօսքը, միտքը: Մարդիկ կը բանտարկուէին, եթէ իրենց գրութիւններուն մէջ աստղ բա-ռը գործածէին: Աստղ կը նշանակէ «եղլտըզ», իսկ այս վերջինը Համիտի ապարանքին անունն էր: Իրաւունք չկար այդ բառը գործածելու: Արգիլուած էին նաեւ կարգ մը այլ բառեր, ինչպէս՝ հայրենիք, Հայաստան, ազատութիւն, գաւառ եւ այլ բառերը:

Հիմա ազատօրէն կը հրատարակուէին գրական թէ գիտական թերթեր, ամսաթերթերը: Անթիւ անհամար երեկոյթներ, մէկը միւսէն հետաքրքրական. մարդ կը շուարեր թէ ո՛ր մէկուն ներկայ գտնուէր:

Կատարուածը մշակութային գործունեութենէ մը աւելի բան մըն էր, մշակութային պոռթկում մը: Տարիներէ, դարերէ ի վեր զսպուած, ամբարուած հայ ստեղծագործական միտքն էր, որ յանկարծ հրաբուխի պէս կը պայթէր:

Ո՛րքէ ելան յանկարծ Վարուժանի եւ Սիամանթոյի պէս երիտասարդ, բայց հսկայ բանաստեղծները: Ո՛ր էին մինչ այն՝ միւս գրագետները, որոնք գրական պատգամներ ունէին ըսելիք, ի՞նչպէս լռեր էին մինչ այդ:

Թերեւս թափած արիւնն էր, որ այսպէս պարարտացուցած էր հայ մշակոյթի հողը. այսպիսով վրեժ կը լուծէին անոնցմէ, որոնք այդ արիւնը թափած էին՝ ըսելու համար անոնց. «Ահա թէ ինչի ընդունակ ենք մենք նոյնիսկ արիւնաքամ, եւ ինչի ընդունակ էք դուք լոկ արիւն թափելու»:

Սակայն ասուպի կեանք ունեցաւ, այդ փայլուն շրջանը: Արդեօք խօսքի եւ գործի ազատութիւն տուողները սարսափեցա՞ն մշակութային այս ուժեղ վերածնունդէն, թէ պարզապէս ուզեցին օգտուիլ համաշխարհային պատերազմի տուած բացառիկ առիթէն՝ միանգամընդմիշտ վերջ տալու համար ոչ միայն ժողովուրդի մը ձգտումներուն, այլեւ ուղղակի ժողովուրդին:

Հետզհետէ ապագայի վրայ սկսան կուտակուիլ շատ մը հարցական սեւ ամպեր...

Սատանիիս կորուստին երրորդ օրն էր: Ես սրտատրոփ ամուսնոյս գալուն կը սպասէի ամեն իրիկուընէ աւելի մեծ անհամբերութեամբ: Ներս մտնելուն պէս նկատեցի, որ ծանր միտք մը տանջեր էր զինք ամբողջ օրը: Հետագային իմացայ, որ արտասահմանէն եկած նամակով մը կրկին անգամ իրեն եւ իր ընկերներուն խորհուրդ կու տային հեռանալ Պոլիսէն իրենց ընտանիքներով, սակայն, իրենք անգամ մը եւս մերժեր էին ժողովուրդը թողնելով հեռանալ: Եթէ վտանգ կար, պէտք էր մնային. իսկ եթէ չկար, ինչո՞ւ պիտի հեռանային:

Ամուսինս այդ օրերուն փորձած էր զիս համոզել, որ փոքրիկին հետ Պուլկարիա անցնէի, կարճ ժամանակով մը: Թերեւս, կ'ըսէր, պարտութեան այս օրերուն որոշ ջղայնութիւն ցոյց տային, լաւ կ'ըլլար, որ հեռու ըլլայի: Իրեն համար վախճալու բան չունէի, ինք հին աղուէս է, կրնայ գլուխը պահել վտանգի պահուն: Ես լսել անգամ չէի ուզեր իր խորհուրդը:

Ամուսինս անմիջապէս իր սովորական ուրախ ժպիտը առաւ ու մօտեցաւ ինձ, երբ փոքրիկս գրկած կը սպասէի.

– Իմ սիրելիներս,– ըսաւ եւ ծռելով մեր վրայ՝ համբուրեց մեզ կարօտով:

Մեր մանչուկը այդ օր նոր-նոր աղաղակներ հանել սկսած էր. «աու», «աու»... Երբ յայտնեցի ամուսնոյս զիս ծիծաղեցնելու համար չափազանց երկիւղածի ձեւ մը առաւ իր տղուն այդ մեծ յառաջդիմութիւնով հիանալու համար, բայց փոքրիկը հօրը ներկայութեամբը զբաղած՝ յամառօրէն կը լռէր:

– Ուշացար, սիրելիս,– ըսի,– ի՞նչ կայ կարելուր:

– Ամեն բան սովորականի պէս է,– ըսաւ, ու յետոյ խօսքը փոխելու համար, ընթրիքի սեղանին մօտենալով աւելցուց.– Պա՛հ, պա՛հ, պա՛հ, աս ի՞նչ սքանչելի սալատ է. գրաւ կը դնեմ, որ դուն ես պատրաստեր: Եթէ ընթրիքը պատրաստ է, ուտենք. այնպէ՛ս անօթի եմ...

Ճիշդ այդ միջոցին սպասուհին ներս մտաւ յայտնելու, որ երկու հոգի վարը իրեն կը սպասեն բան մը հարցնելու համար:

Ես նոյն ձեւով նստած կը սպասեի ամուսնոյս վեր գալուն, որովհետեւ ան ելեր էր թէ չէ սենեակէն, փոքրիկը սկսաւ «աո՛ւ», «աո՛ւ» կրկնել անդադար:

Սպասելէ յոգնած՝ գացի խոհանոց սպասուհիին հարցնելու, թէ ինչո՞ւ պարոնը վեր չ'ելլեր:

– Տարի՛ն, – ըսաւ սպասուհին, յուզուած:

– Ո՞վ տարաւ, որո՞նք էին եկողները:

– Թուրք ծպտեալ ոստիկանները: Անոնք չթողուցին, որ պարոնը վեր ելլէ գլխարկը առնելու: Ըսի իրենց. «Պարոնը չէ ընթրած, թողէք ընթրէ, յետոյ տարէք»: «Զիչ վերջը կ'ընթրէ, – ըսին, – քանի մը վայրկեանի համար կը տանինք, մեր պետը քանի մը բան պիտի հարցնէ միայն»...

Սպասուհին սաստիկ յանդիմանեցի, որ ինձ լուր չէր տուած: Խեղճը հաւատացած էր, որ քանի մը վայրկեանի համար կը տանին...

Ամբողջ գիշեր ամուսնոյս սպասեցի: Լոյսը բացուած էր արդէն, իսկ ես պատուհանին առջեւ, ցուրտէն ու յուզումէն դողալով դեռ կը սպասեի...

Պիտի գար ան, չէր կրնար չգալ: Այդ սքանչելի, այդ հազուագիւտ մարդը, որուն սրտին մէջ ամբողջ տիեզերքը կրնար պարփակուիլ, չէր կրնար հասարակ աւազակի պէս տարուիլ: Պիտի գար, պիտի վերադառնար իր տունը, ուր իր կինն ու տղան իրեն կը սպասէին, կինն ու տղան, որ իրմէ գատ մէկը, մէկը չունէին...

Քովի սենեակէն լսուեցաւ փոքրիկիս ձայնը «աո՛ւ», «աո՛ւ»... Արթնցեր էր ու մաման կը կանչէր: Այդ վայրկեաններուն ամուսինս եւ ես միասին կը վազէինք օրօրոցին քով, զարթնումի իր առաջին ժպիտը միասին տեսնելու համար:

Երբ կաթովս գինք կերակրելու համար կը մօտենայի, փոքրիկը այնպէս ուրախ էր, այնպէ՛ս կը քչքչար: Ծծելով մէկտեղ՝ ձեռքերը կը տանէր դէմքիս, կը շոյէր. իր սիրած ձեւն էր այս, բայց այս անգամ փոքրիկ ձեռքերը կը թրջուէին: Ի՛նչ լաւ էր, որ ան չէր հասկնար:

Պուռը զարնուեցաւ: Եկողը ամուսնոյս ընկերներէն մէկուն կինն էր: Եկած էր ամուսնոյս յայտնելու, որ թուրք ոստիկաննե-

րը գիշերը եկեր՝ ամուսինը տարեր էին. եկեր էր խորհուրդ հարցնելու, քաջալերանք մը, սփոփանք մը լսելու...

Ձեռքովս ցոյց տուի պարպուած տունս, ուր մէկ օրէն միւսը իջած տխրութիւնը գրեթէ թանձր էր ու շօշափելի, եւ մենք լուռ նայեցանք իրարու: Բախտակիցներ էինք:

Այդ երիտասարդ կինը՝ Արաքսին եւ ես գրեթէ նոյն տարիքն ունէինք, սակայն, գաւառի մէջ մեծցած անոր հոգին պարզ էր եւ մանուկ: Չինքը միտթարելու համար՝ ես ճիգ ըրի վհատութեանս յաղթելու ու հանգստացուցի զինք:

– Վախնալու բան չկայ, – ըսի: – Մեր ամուսինները որեւէ յանցանք չեն գործած, իսկ Պոլսոյ մէջ, Եւրոպայի քիթին տակ թուրքերը երբեք պիտի չհամարձակին ընել ինչ որ կ'ընեն գաւառներու մէջ: Մանաւանդ ձեր եւ իմ ամուսինս, որոնք այնպէս ջերմ կուսակից են թուրք եւ հայկական բարեկամութեան...

Առաջարկեցի իրեն միասին երթալ Վարդգեսին, որ պիտի կրնար մեզ իր խորհուրդներով օգտակար ըլլալ:

Վարդգեսը Օսմանեան Խորհրդարանի անդամ էր եւ ամուսնոյս հին եւ գաղափարակից ընկերը: Այս մեծ հայրենասէրը Կարմիր Սուլթանի օրով երկար տարիներ մնացած էր Վանայ բանտերուն մէջ. հոն իր կրած տանջանքներէն վատառողջ եւ կաղ էր մնացած:

Բանտէն ազատած էր Երիտ. Թուրք. կառավարութեան գլուխ անցած ժամանակ: Նոր կառավարութիւնը, սկզբնական շրջանին մանաւանդ, թերեւս ինքզինք բաւական ուժով չզգալով, շատ սիրալիր էր դէպի հայ քաղաքական կուսակցութիւնները: Ան իր ազատամտութիւնը այն աստիճան առաջ տարած էր, որ Օսմանեան Խորհրդարանի մէջ կային հայ պատգամատորներ ալ, որոնցմէ մէկն էր Վարդգեսը:

Յետագային պատահած ողբերգութիւնները եկան հաստատելու թերահաւատներու այն կարծիքը, թէ՛ բարեացակամ վերաբերումները դիտմամբ սարքուած խաղեր էին. քաղաքական կուսակցութիւններուն վստահութիւն կը ներշնչէին, անոնց գործունէութիւնը եւ ղեկավարները լոյսի տակ կը բերէին, որպէսզի հարկ եղած ժամանակ իրենց մահացու թաթը կարենային մէկ անգամէն դնել բոլորին վրայ:

Երբ Արաքսին եւ ես փողոց ելանք Վարդգեսին երթալու հա-

մար, փողոցը ամեն ինչ իր սովորական ձեւով կ'ընթանար: Անհամար ծախողները, ամեն օրուան պէս բարձրաձայն կը կանչէին իրենց ապրանքը գովելով:

Պոլսոյ մէջ ամեն բան կը ծախուի անցորդ վաճառորդներով: Միս ու ձուկ, միրգ, բանջարեղէն, կաթ ու սեր, հաց ու քաղցրահաց: Կ'անցնի նաեւ նպարավաճառը: Ան կ'անցնի՝ առանց ապրանքի «նպարավաճառ՝, նպարավաճառ» պոռալով եւ աչ ու ձախ պատուհաններուն նայելով: Եւ ահա պատուհանները կը բացուին եւ տանտիկիները իրենց ապսպրանքները կ'ընեն: Բրինձ, իւղ, օճառ, պանիր ու շաքար: Զիչ յետոյ նպարավաճառի աշկերտը կը բերէ ապրանքները:

Կեսօրէ ետք կը սկսին թել ու ասեղ, ժապաւեն, ժանեակ կերպասեղէն, եւայլն ծախել: Իսկ իրիկուան՝ ընթրիքի վերաբերեալ ուտելիքներ, մասնաւորապէս մածուն. «Եօղո՛ւրդ, եօղո՛ւրդ, քայմաքլը եօղուրդ...»:

Ես միշտ զարմացած եմ, թէ տանտիկիները ինչպէ՛ս կրնան իրենց ուզած ապրանքին կանչը զանազանել այս աղմուկին մէջ, երբ ամեն վաճառող աւելի կը պոռայ միւս վաճառողներուն ձայնը անլսելի դարձնելու համար:

Պոլսեցի կինը շատ քիչ անգամ շուկայ կ'երթայ գնումներ ընելու, մասնաւորապէս ուտելիքին համար: Ան պատուհանը նստած՝ կը սպասէ եւ իր ուզածը ծախողը անցնելուն պէս, կը պոռայ ու կը կեցնէ, երկար կը սակարկէ եւ յետոյ կ'իջեցնէ չուանով կապուած սակառիկ մը, որուն մէջ դրած կ'ըլլայ գնած ապրանքին գինը: Ծախողը դրամը կ'առնէ եւ փոխարէն ապրանքը կը դնէ սակառիկին մէջ, որ տանտիկինը զգուշութեամբ վեր կը քաշէ:

Գլխաւոր փողոցներուն մէջ այս գործողութիւնը կը կատարուի տան բակին մէջ, իսկ երկրորդական փողոցներուն մէջ՝ ուղղակի փողոցին մէջ:

Չարմանալի է մարդ արարածը. չնչին երեւոյթներու իսկ կը կառչի յուսալու, չբարոյալքուելու համար: Փողոցներու այս առօրեայ երեւոյթը քիչ մը խաղաղեցուց հոգիս: Հաճոյքով կը լսէի, թէ ինչպէս չորրորդ յարկէն գեր կին մը բարձրաձայն կը սակարկէր դղում ծախողին հետ: Տանտիկինը քսան փարայի երեք դղում կ'ուզէր, իսկ վաճառողը կը պնդէր հատը տասը

փարայի վրայ: Ես մասնաւոր հետաքրքրութեամբ կը հետեւէի այս սակարկութեան, կարծես կենսական հարց մը ըլլար ինձ համար:

Կը մտածէի. «Եթէ դեռ կան մարդիկ, ան ալ իմ տունես քանի մը քայլ հեռու, որ նոյնքան դրամով դղում մը աւելի ունենալու մտահոգութեամբ տարուած են, կը նշանակէ թէ կեանքը իր բնական ընթացքով կ'երթայ, ուրեմն, անկարելի է, որ մենք՝ երկու երիտասարդ կիներս, որ ահա կ'անցնինք այս փողոցէն, դժբախտ ըլլալու պատճառներ ունենայինք»:

Փողոցին մէջ տարածուած ձուկի, թարմ հացի, ելակի, պանիրի խառն հոտը ցաւի պէս կծկեց ստամոքսս, եւ ես նոր յիշեցի, որ երեկուընէ ի վեր բան չէի կերած: Իրիկունը սեղանը պատրաստ էր, ընթրիքի պիտի նստէիք, երբ... Արդեօք բան մը կերա՞ւ ան, ո՛ւր կերաւ:

Վարդգէսին տունը ուրիշ կիներ ալ եկած էին: Անոնց ամուսիններն ալ տարուած էին նոյն գիշերը: Յայտնի եղաւ, որ մօտաւորապէս 300 հոգի նոյն գիշերը ձերբակալուած էին, բոլորն ալ մտաւորականներ՝ փաստաբան, բժիշկ, գրագետ, լրագրող, ուսուցիչ:

Ըստ Վարդգէսի՝ եղածը թիրիմացութեան արդիւնք էր, պէտք չէր մտահոգուէինք: Բոլորն ալ շուտով պիտի արձակուէին: Ան խորհուրդ տուաւ հանգիստ մնալու, իրարու երթալ գալէ խուսափելու՝ աւելորդ կասկածի տեղի չտալու համար:

Դժուար չէր նկատել սակայն, թէ որքա՞ն տխուր էր ան եւ որքա՞ն աւելի տխրութիւն կար անոր աչքերուն մէջ, երբ անոնք կանգ կ'առնէին իմ վրաս: Ան գիտէր, որ ես բոլոր կամուրջներս կոտրած էի անցեալիս հետ եւ որքա՞ն մինակ էի հիմա:

Երբ դուրս կ'ելլէիք, Վարդգէսը մօտեցաւ ինձի եւ ձեռքը դնելով ուսիս՝ ըսաւ ձայնով մը, որ սրտէն կու գար.

– Սոնա՛, սիրելիս, դուն իմ քոյրս ես, ամուսինդ աւելի մօտ է ինձի քան եղբայր մը: Մի՛ տատանիր ինձ դիմելու, ինչ բանի համար ալ որ ըլլայ: Անկարելին պիտի ընեմ քեզի օգնելու համար:

Ես չկրցայ օգտուիլ այդ թանկագին բարոյական օժանդակութենէն: Զանի մը օր վերջ գինքն ալ տարին, թէեւ թրքական խորհրդարանի անդամ էր եւ իբր թէ «անձեռնմխելի»:

Տարին Վարդգեսը, որ բոլորը համոզել կը ջանար, ճիշդ ամուսնոյս պէս, թէ անկեղծ է եւ տեւական թուրքի սիրալիր վերաբերմունքը: Տարին նաեւ Գ. Չօիրապը, Պոլսոյ ամենաառաջին փաստաբանն ու հռետորը, ոչ միայն հայ, այլ եւ թրքական շրջանակներու մէջ, նոյնպէս հորհրդարանի անդամ եւ «անձեռնմխելի»...

Այս դէպքերը կու գային մեր յիշողութեան մէջ թարմացնելու քանի մը տարի առաջ կատարուած ոճիր մը:

Ճիշդ այն ժամանակ, երբ դեռ կը ճառէին թուրքերու եւ հայերու բարեկամութեան մասին եւ սրտառուչ համբոյրներ կը փոխանակուէին երկու կողմի ղեկավարներու միջեւ, պատահեցան Ատանայի ջարդերը: Մեծ թիւով հայեր սպաննուեցան թուրքերու կողմէ: Հայերը տակաւին գինովցած եղբայրական գեղեցիկ խօսքերէն, միամտութիւնը ունեցան կարծելու, որ եղածը նոր կառավարութենէն անկախ միջադէպ մըն էր ուղղակի տեղական հանգամանք ունեցող, մանաւանդ որ նոր կառավարութիւնը հորհրդարանի անդամներէ կազմուած յանձնախումբ մըն ալ դրկեց տեղւոյն վրայ քննութիւն կատարելու եւ յանցաւորները պատժելու համար:

Այդ յանձնախումբին մաս կը կազմէր նաեւ հայ մը, նոյնպէս հորհրդարանի անդամ: Այս հայը բնաւ չէր հետաքրքրուեր հայկական հարցերով կամ անոր ազատագրական տենչերով, կատարեալ չէզոք մըն էր, աւելի թրքական շրջանակներու մօտիկ, քան հայկական: Թերեւս այդ էր պատճառը, որ իբր հայ գինքն էին ընտրել Քննիչ յանձնաժողովի անդամ:

Չէզոք, բայց ուղղամիտ այդ հայը, Պապիկեան Յակոբ, վերադարձին, չհամաձայնելով իր թուրք պաշտօնակիցներու պատրաստած տեղեկագրին, ճշգրիտ եւ անաչառ առանձին տեղեկագիր մը ներկայացուց պատկան իշխանութեան: Ան համոզուեր էր, որ հայերը սպաննուած էին որոշ ծրագրի մը համաձայն եւ բոլորովին անգոյ պատճառներով: Այս հայը միամտութիւնը ունեցեր էր կարծելու, թէ նոր կառավարութեան օրով կարելի էր ճշմարտութիւնը ըսել, կամ թերեւս վտանգը զգալով հանդերձ, խղճի տէր մարդ, ան չէր կրցած ճշմարտութիւնը չըսել...

Անոր տեղեկագիրը ընդունեցին քաղաքավարութեամբ, միև

չեւ անգամ սիրալիր, խոստացան քննել գայն անաչառ կերպով եւ պետք եղածը ընել: Սակայն, քանի մը օր վերջ Պապիկեանը մեռաւ «յանկարծամահ», թուրք իշխանաւորի մը տունը տրուած ճաշկերոյթէ ետք տուն վերադարձին:

Դարմանող բժիշկները, հայ թէ օտար, հասկցեր էին, որ այդ բնական մահուան պատճառը պետք էր փնտռել սուրճի փոքրիկ գաւաթին մէջ, զոր Պապիկեան խմած էր տեղի ունեցած ճաշկերոյթէն ետք...

Այն ժամանակուան տիրող բարեկամական մթնոլորտը չպղտորելու համար, ոչ հայ թերթերը, ոչ քաղաքական կուսակցութիւնները եւ ոչ ալ բժիշկները պարզեցին ճշմարտութիւնը, հաւատալ ձեւացուցին բնական մահուան, եւ այսպէս այս ուղղամիտ մարդուն եղբրական մահը անցաւ անշշուկ եւ, աննըմարելի:

Այս բոլոր փափկանկատութիւնները ապարդիւն էին: Ծրագիր մը կար անողոք, վճռական, այն էր՝ խլել հայ ժողովուրդէն իր ղեկավարները, աւելի դիրին եւ անձայն ջնջելու համար ժողովուրդը՝ վերջնականապէս թաղելու համար հայկական հարցը: Հայաստա՞ն, Հայաստանի ինքնավարութի՞ւն, բայց հայ չկար այդ երկրին մէջ...

Այդ բոլորը ես վերջը հասկցայ ու զգացի: Դէպքերը պարզ եղան ինձ համար շատ ուշ: Ես որոշ չափով ազդուած էի ամուսնոյս լաւատեսութենէն դէպի թուրք ժողովուրդը, ինչպէս նաեւ անոր հաւատքէն դէպի թուրք ղեկավարները:

Այո՛, այդ բոլորը շատ ուշ իմացայ, ահա թէ ինչու Վարդգեսի հանգստացուցիչ խօսքերէն ետք ես գրեթէ խաղաղ սրտով տուն վերադարձայ ձագուկիս քով: Այդ տրամադրութեամբ հեռացան նաեւ ինձ բախտակից միւս կիները: «Եղածը թիրիմացութիւն էր, որ շուտով պիտի պարզուէր. վախնալու պատճառ չկար»...

Ամուսնոյս տարուելուն յաջորդ օրն իսկ նամակ մը ստացայ իրմէ: Կը յայտնէր ինձ, թէ Կեդրոնական բանտը կը գտնուէր իր ընկերներուն հետ եւ թէ կրնայի զինք տեսնելու երթալ Կիրակի օրը: Նամակը գրուած էր Ուրբաթ օր:

Ես աւելի՛ հանգստացայ եւ բալիկիս «աու, աու»-ներուն ուրախ պատասխաններ տուի:

– Չարածճի՛,– կ'ըսէի,– պէտք է աւելի գիտուն դառնաս: Պէտք է պապա ըսես, որ հայրիկդ երբ որ գայ, աս ի՞նչ խելօք տղայ ունիմ ըսէ ու հպարտանայ...

Նամակը առած՝ ես ուրախ լուրը տալու գացի նախ Արաքսիին, յետոյ ուրիշ բախտակից կիներու: Անոնք ալ նմանօրինակ նամակներ ստացեր էին. սակայն, իրենց ամուսինները ճերմակեղէն, ուտելիք եւ դրամ ալ ուզեր էին: Իմ ամուսինս այդ մասին չէր գրած զիս չտխրեցնելու համար անշուշտ՝ ենթադրել չտալու համար, որ ժամանակ մը պիտի մնայ բանտը:

Ես ալ պատրաստեցի խոշոր ծրար մը: Ամենալաւ շապիկները, գեղեցիկ փողկապներ (ի՞նչ յիմար էի), շաքարեղէն եւ գանազան այլ ուտելիքներ: Ծրարը կապած ժամանակս մտքիս մէջ կը պատրաստէի ըսելիքներս: Յոյց պիտի չտայի, որ տխուր եմ: Ընդհակառակը, շատ ուրախ պիտի երեւայի, դեռ զինքն ալ պիտի քաջալերէի, վերջապէս, կարելիս պիտի ընէի, իրեն արժանի կին մը երեւելու համար: Չէ՞ որ խոստացեր էի, թէ յանձն կ'առնեմ բաժնել իր կեանքին բոլոր դժուարութիւնները: Պիտի չլայի մանաւանդ... Բայց փաթած ծրարս կը թրջուէր. ես՝ քաջս, ճիշդ չլալու որոշում տուած ժամանակս կու լայի...

Ա՛խ բանտը... մանաւանդ տաճկական բանտը. ըլլայ ան Պոլսոյ պէս մայրաքաղաքի մը մէջ անգամ: Կա՞յ աւելի ահաւոր բան քան թրջական բանտը. կա՞յ աւելի տխուր արարած քան թուրք բանտապետը:

Ես հիմա երկու տասնեակ տարիներէ վերջ ալ կը սոսկամ վերյիշելով:

Սեւ շէնք մըն էր ան անպատուհան, առանց աչքի սեւ գազանի մը նման: Մենք, խումբ մը կիներս, կեցած էինք այդ սեւ շէնքի, սեւ բանտապետի առաջ: Որքա՞ն կարօտ, որքա՞ն սպասում, որքա՞ն կսկիծ կար մեր աչքերուն մէջ:

– Անոնք այլեւս հոս չեն,– կ'ըսէ վերջապէս բանտապետը, մեզմէ բուրող վշտով ու տխրութեամբ բաւական մը յափրանալէ վերջ,– երկու օր առաջ տարին...

Կը զգամ, որ թուք չունիմ բերնիս մէջ, լեզուս փայտի կտորի պէս է: Ի գուր շրթներս կը շարժեմ հարցնելու թէ ո՛րք ես հիմա անոնք: Ձայնս չ'ելլեր:

Ուրիշ մէկը մեզմէ կը հարցնէ այդ:

– Ես գիտե՞մ,– կը պատասխանէ բանտապետը՝ լորձուկով բերանը շարժելով:– Ձհաննեմը տարին: Դէ, շո՛ւտ, դո՛ւրս, դո՛ւրս, դալապալըխ չեմ ուզեր...

Այդ վայրկեանին մարդ մը կը մօտենայ ու բանտապետին ականջին բաներ մը կը փսփսայ մեր ձեռքի ծրարները ցոյց տալով: Անշուշտ շատ խելացի բան մըն էր ըսածը, որովհետեւ բանտապետին բուրք դեմքը հիացումի արտայայտութիւն մը կ'առնէ ու ան մեզի դառնալով՝ կ'ըսէ.

– Սա ծրարները ձգեցէ՛ք: Իրենց կու տանք, հը՛մ, կը դրկենք:

Կը թողունք ծրարները, որ այնքան յուզումով պատրաստած էինք: Ես հաստատ համոզուած որ անոնք երբեք մեր սիրելիներուն ձեռքը պիտի չհասնին, դուրս կ'ելլենք գլխիկոր:

Այսպէ՛ս, խաբեր էին մեր ամուսինները, անոնց նամակներ գրել տուէր էին այցելութեան օրը որոշել տալով, բայց զիրենք փոխադրեր էին նոյն օրն իսկ: Այսպէս ըրեր էին, հաւանական է, մեզ՝ կիներս հանդարտ պահելու համար, որպէսզի մեր մարդիկը տեսնելու ակնկալութեամբ, զանազան դեսպանատուներ կամ այլ պաշտօնատուներ դիմումներ չկատարէինք, մինչեւ որ զիրենք տեղափոխէին բանտարկեալները եւ այսպէս կատարած իրողութեան մը առջեւ գտնուէին բոլորը:

Ինձ ընկերացող կիները վրդովուած կը խօսէին: Անչափ էր իրենց յուզումն ու զայրոյթը: Ես կարծես մոռցեր էին խօսիլը: Ուղեղիս մէջ բառերը ջրացեր էին, անյայտացեր: Ինձ կը թուէր,

որ ես երբեք, երբեք չէի խօսած: Կը զգայի, որ ան, որ կը քալէ, կը լսէ ընկերացող կանանց խօսքերը, ես չեմ, ես պարպուած եմ իմ ետեւ, իմ ետեւնէս: Բան մը միայն որոշ էր, այդ՝ այն հրէշային դէմքերն էին, զորս քիչ առաջ տեսայ բանտի մէջ: Կը զգայի, որ երբ մարդ սիրելի մը ունի այդ մարդոցմէն այն կողմը, եւ այդ սիրելին մաքուր եւ իտալական մարդ է, ալ հնար չէ հանդիպումը: Կը զգայի այդ ակնթարթ մը միայն, բայց պարզ ու յստակ:

Չեմ յիշեր թէ ինչպէս բաժնուեցայ ընկերուհիներէս եւ ինչպէս տուն հասայ: Կը յիշեմ միայն, որ ինքզինքս գտայ տղուս օրօրոցին քով՝ ծունկի եկած ու գլուխս յենած անոր բարձիկին, ուր ան կը քնանար հանդարտ: Չէր գիտեր, թէ գազաններու ձեռքը հայր մը ուներ, որ թերեւս բնաւ պիտի չճանչնար... Չէր գիտեր, որ քովը վշտէն փլած մայր մը ուներ...

* * *

Մէկ օրէն միւսը ես տարբեր մէկը եղայ: Երես առած մէկն էի առաջ. զիս շփացուցած էին տունը, դպրոցը, ընկերուհիներս, ամուսինս, նոյնիսկ անծանօթները: Ես գեղեցիկ էի, անվիճելիօրէն գեղեցիկ: Այդ կրնամ ըսել հիմա, որ իմ ճերմակ մազերս հայելիի մէջէն տեսնելու համար մէկ աչք մը միայն ունիմ: Չիս շփացուցած էր նաեւ Բնութիւնը:

Ես փոխուեցայ: Շրթներս սեղմած՝ կատարեցի մայրական բոլոր պարտականութիւններս: Տղաս պէտք էր առողջ ըլլար. պէտք էր ամէն տեսակետով ուժով ըլլար հօրը պէս, իր անզուգական հօրը պէս: Եթէ հարկ ըլլար, ես պատրաստ էի, այս փոքրիկ կայծը վառ պահելու համար, տալու մինչեւ ամենավերջին կաթիլը ետեւանս: Ժամանակը եկած էր, որ ես կատարէի խոստումներս. տանելու բոլոր դժուարութիւնները, որ իմ ընտրած կեանքս պիտի տար ինձ:

Սպասուիին ճամբեցի: Չայն առած էինք արդէն, որովհետեւ երեխային աշխարհ գալէն վերջ ես սաստիկ տկարացած էի, իսկ լաւանալէս վերջ պիտի պաշտօնավարէի աղջկանց վարժարանի մը մէջ, նորէն պէտք պիտի ունենայինք փոքրիկին քով մնալու համար:

Պէտք է ըսել, որ սպասուիին մեկնեցաւ գրեթէ ուրախութեամբ. մեր տունը հիմա չքաւոր էր եւ տխուր: Ես անխօս էի դարձեր եւ իրեն կ'ըսէի ամենաանհրաժեշտ խօսքերը միայն, իսկ իր մեկնելէն վերջ, ես օրեր ամբողջ բառ մը արտասանած չէի ըլլար: Երբեմն միայն երկա՛ր, երկա՛ր կը խօսէի տղուս, վշտերս կ'ըսէի իրեն, որովհետեւ չէր հասկնար: Ան ալ կը պատասխանէր իր լեզուով, զանազան ճիչերով ու բացազանչութիւններով, որոնց թիւը օրէ օր կ'աւելնար:

Տղուս ամէն բան պատմելու սովորութիւնը մնաց յետոյ ալ: Իմ ահռելիօրէն մինակ կեանքիս մէջ, ես միշտ իրեն ըսի, որքան ատեն որ չէր հասկնար, ինչ որ պիտի ըսէի սրտակիցի մը:

Կը յիշեմ, հետագային, կը տօնէի իր տարեդարձը: Երեք տարեկան էր եւ առաջին անգամ տաբատ կը հագնէր: Ան շատ հպարտ էր, գլուխը բարձր, կուրծքը դուրս ցցած կը քալէր մեծ երեւալու համար, ու կ'ըսէր ինքզինք ցոյց տալով՝ «եշ պարոն է»:

Ես թեյասեղան կը պատրաստէի, որովհետեւ հակառակ իմ նիւթական շատ նեղ վիճակիս, փոթորիկը զիս անծանօթ քաղաք մը քշած էր, ուր մասնաւոր դասեր կու տայի: Մեր բակի տղաքը, տասը հոգի, թէյի հրաւիրած էի: Բանուորական տուն մըն էր, ուր շատ փոքրիկ սենեակ մը ունէի վարձած: Կը մտածէի, որ այդ տղաքը հրաւերէն առաջ եւ հրաւերէն յետոյ ալ, սիրով պիտի ըլլային տղուս հետ: Չէ՞ որ զինք անոնց հետ կը թողնէի, այս կամ այն թաղը մասնաւոր դասի գացած ժամանակս:

Թէյի սեղանի պատրաստութեամբ զբաղած ժամանակս, ծռեցայ դէպի տղաս.— «Ո՛ւր է հայրիկդ, ձագուկս, ըսի, որ մեզ հետ ըլլար հիմա, տեսներ որ մե՛ծ, պարո՛ն տղայ ունի»:

Տղաս, լուրջ՝ կանգ առաւ: «Յայրի՛կ, հայրի՛կ, ըսաւ ինձ ու աթոռը հրելով տարաւ պատին մօտ, վրան ելաւ եւ ամուսնոյս նկարը առնելով՝ բերաւ ձեռքիս վրայ դրաւ: «Ահա՛, հայրիկ»... Ու զարմացած կը նայէր ինձ, թէ ես ինչո՛ւ նորէն տխուր էի. չէ՞ որ հայրիկը բերած ինձ տուած էր:

Ամուսնոյս տարուելէն շաբաթ մը վերջ թուրքերէն գրուած բացիկ մը ստացայ իրմէ: Միայն ստորագրութիւնը իրն էր, որովհետեւ ան թրքերէն գրել չէր գիտեր, իսկ գրաքննութեան համար հաւանաբար թուրքերէնը պարտադիր էր:

Չէի կրնար կարդալ գրուածը, սակայն, իր մէկ ստորագրութիւնը բաւական եղաւ լուսաւորելու տնակս: Բացիկը ձեռքս վագեցի տղուս, որ օրօրոցին մէջ բոպիկ ոտքը բռնած՝ ուշադրութեամբ կը դիտեր:

– Բալիկս, պապայ՛նէն է, պապայնէն նամակ...

– Պա՛պա՛, պա՛,– պատասխանեց տղաս մասնաւոր լրջութեամբ:

Այս իր նոր գիտն էր եւ շատ դժուարութեամբ ըսելուն միշտ լուրջ ձեւ մը կ'առնէր:

Ամուսինս կը գրէր, որ շատ լաւ է, շուտով պիտի վերադառնայ աքսորէն, եւ շատ ուրախ պիտի ըլլայ ինձ ու փոքրիկը առողջ գտնելով:

Աքսոր բառը զիս ոգեւորեց: Կարդացեր էի վէպերու մէջ, որ աքսորականներու կիները կ'երթան իրենց ամուսիններուն քով՝ միասին ապրելու համար աքսորականի կեանքը:

Անմիջապէս նամակ մը գրեցի իրեն եւ խնդրեցի, որ մեզ իր քովը տանի: Տղուն համար օղակոխութիւնը շատ լաւ պիտի գար ըսի, իսկ իմ արեւս ինքն էր: Եթէ աքսոր է, միասին աքսորուած կ'ըլլայինք:

Խեղճ մարդ, որքան տխուր կերպով ժպտած պիտի ըլլայ իմ նամակս կարդացած ժամանակ, որովհետեւ հետագային, երբ պատահեցայ ամուսնոյս ընկերներէն մէկուն, որ իրեն հետ բանտարկուած էր, բայց օտարահպատակ ըլլալուն համար ազատած, ես իմացայ թէ ի՞նչ էր այդ աքսորը:

Պոլսէն տարուած մտաւորականները եւ քաղաքական գոր-

ծիչները բանտարկուած էին Այաշի եւ Չանղորիի բանտերուն մէջ, հիմակուան մայրաքաղաք Անկորային մօտիկ:

Այաշ տարուած էին վտանգաւոր համարուած բանտարկեալները, որոնց մէջ կը գտնուէր նաեւ իմ ամուսինս: Ան թերեւս թուրքերու հանդէպ իր ունեցած հաւատքին պատճառով էր, որ անցած էր վտանգաւորներու շարքը:

Այաշ պաշտօնական բանտ մը չէր, այլ պինդ ու կիսափուլ զօրանոց մը, որուն մէկ սենեակին մէջ արգելափակեր էին 60 հոգի: Ասոնք հազիւ նստելու տեղ ունէին: Գիշեր-ցերեկ այդպէս: Պատերն ու առաստաղը անծեփ, փոշիով ու սարդի ուտայններով լեցուն, յատակը աննկարագրելիօրէն աղտոտ:

Դուռը կը բացուէր ու թուրք ոստիկան մը օրը անգամ մը տոպրակ մը սեւ հաց նետելով կը պոռար:

– Մարդ գլուխ մէկ հատ:

Ան կը դներ նաեւ դոյլ մը ջուր եւ դուռը կը կղպէր աղմուկով:

Ամուսինս էր, որ առաջինը կ'ելլէր նստած տեղէն, կը մօտենար տոպրակին ու սեւ հաց մը առնելով՝ կը սկսէր ուտել, օրինակ տալու համար միւսներուն: Ան այդ կեանքին մէջ ալ միշտ ժպտուն է եղեր եւ հանդարտ:

– Տղաք,– կ'ըսէ եղեր,– պետք է ուտել դիմանալու համար, այս օրերը պիտի անցնին: Եկէք ձեր բաժինը առէք, մանաւանդ որ այսօրուան հացը զարմանալի կերպով լաւ համ մը ունի, խորովածէն ալ համով է: Դէ՛հ, ճաշի հրամեցէք:

Քիչ-քիչ բոլոր բանտարկեալները կը մօտենային իրենց հացը ստանալու:

Ջուր խմելու խնդիրը ակելի դժուար էր: Պետք էր որ խմողը ծունկի գար դոյլին առաջ, բերանը դներ եզերքին ու քիչ մը ծռելով դոյլը՝ խմէր: Գաւաթ չէին տար: Գաւաթը այս վտանգաւոր մարդկանց ձեռքը կրնար զենքի մը պէս վտանգաւոր ըլլալ...

Դուռը անգամ մըն ալ կը բացուէր ու բանտարկեալները երկու կողմը շարքով կեցած ոստիկաններու մէջէն կ'անցնէին բակին մէջ՝ իրենց բնական պէտքերը հոգալու համար...

Ամուսնոյս Գոնիա գտնուող ընկերները յաջողէր էին կաշառել Այաշի բանտապետը զինքը ազատելու համար, բայց ամուսինս կտրուկ մերժէր էր հեռանալ՝ ընկերները բանտին մէջ թողելով:

Այս մարդիկը, որոնք իրենց կեանքին լաւագոյն տարիները անցուցած էին մէկ գաւառէն միւսը երթալու ամենավտանգաւոր պայմաններու մէջ՝ ժողովուրդին մարտական ոգին արթնցընելու եւ գայն գինելու համար կրկնուող ջարդերու դէմ, հիմա թակարդը ինկած առիծներու նման անզօր էին, եւ իրենց հոգիներուն փոթորիկը մեղմել կը ջանային անցեալի մասին խօսելով:

Այաշի բանտարկեալներուն մէջ կը գտնուէր նաեւ Թիրեաքեան անուն նպարավաճառ մը, որ թիրիմացութեամբ տարւած էր նոյն անունը կրող քաղաքական գործիչ եւ խմբագրին տեղ: Երբ այս վերջինը կը գրէ պատկանեալ իշխանութեան՝ յայտնելու համար, թէ ինքն է քաղաքական գործիչը, եւ թէ զինքն է որ պէտք է բանտարկեն, միւսը ազատ արձակելով:

Այդպէս ալ կ'ընեն: Այս ձեւով է որ Հրաչ Թիրեաքեանն ալ գնաց Այաշ եւ միացաւ «վտանգաւոր բանտարկեալ»-ներուն:

Շատ վերջերը տեսայ նպարավաճառ Թիրեաքեանը: Հիացած կը խօսէր այդ արարքի մասին: Ան պաշտամունք ուներ բոլոր այն մարդկանց համար, որոնց հանդիպած էր Այաշի բանտին մէջ:

Այսպէս էր Այաշի կեանքը, որուն ամուսինս աքսորի անուն կու տար՝ միմիայն զիս չտխրեցնելու համար:

Իմ իրեն գրած նամակս մեր երթալու մասին թէեւ մնաց անպատասխան, սակայն, ես չէի կրնար հրաժարիլ ամուսնոյս աքսորին միանալու մտքէս:

Խօսեցայ այդ մասին Վարդգէսին հետ, որ դեռ չէր տարուած: Ըսի որ մինակս, տղաս առած, պիտի երթամ Այաշի աքսորը՝ ամուսնոյս քով:

Վարդգէս սարսափած դէմք մը առաւ:

– Այաշ երթալու համար, – ըսաւ, – պէտք է երկար ճամբորդել, նախ՝ շոգեւաւով, յետոյ՝ շոգեկառքով եւ վերջն ալ՝ պէտք է կառքով անցնիլ ամայի երկար ճամբաներէ: Դուն մինակ կիս, ինքզինքդ պիտի դնես ստոյգ վտանգի մէջ եւ, Արային օգնելու տեղ, նոր հոգեր պիտի տաս անոր...

Ան զիս հանգիստ չձգեց, մինչեւ որ չխոստացայ, թէ կը հրաժարիմ Այաշ երթալու մտքէս: Բայց եւ այնպէս այս միտքը ինձ հետ էր միշտ: Տրուած խօսքը յարգելը, այդ պայմաններուն մէջ,

շռայլութիւն էր: Պէտք էր Այաշ երթալու հնարը գտնել: Եթէ ճամբու վտանգը կ'առարկէին, ուրեմն, պէտք էր աշխատիլ անվտանգ ճամբորդելը հնարաւոր դարձնել:

Երկար տատանումէ վերջ, որոշեցի երթալ տեսնել ծերունի թուրք մը, որ ամուսնոյս թուրքերէնի դասեր տուած էր: Ամուսինս թուրքերէն կը սորվէր եւ ուրիշներու ալ խորհուրդ կու տար այդպէս ընել, որպէսզի աւելի դիրութեամբ կարենային թուրք ժողովուրդին բացատրել, թէ ինչ են հայերու պահանջները եւ որքան օրինաւոր էին անոնք:

Այս ծերունի թուրքը բարի մարդ մըն էր: Անցեալին մէջ բարձր պաշտօն վարած էր Արտաքին Գործոց նախարարութեան մէջ, այսինքն՝ Հայաստան, անձամբ ներկայ եղած էր շատ մը բարբարոսութիւններու եւ մեծ վրդովումով կը խօսէր անոնց մասին:

Արային տարուելէն վերջ չէի տեսած զինք: Սակայն, օր մը ան փողոցը պատահած էր մեր սպասուհիին, իր ողջոյնները դրկած էր ինձ եւ ըսած էր.

– Ըսէք ձեր տիրուհիին, որ չեմ հասկնար, թէ ինչպէս այդ «ազիզ» մարդուն վրայ կրցան ձեռք դնել: Ըսէք նաեւ, որ եթէ կրնամ բանի մը համար օգտակար ըլլալ իրեն, պիտի ընեմ սիրով:

Ծրագիրս այս էր: Թրքուհիի մը պէս ծպտուած կ'ուզէի երթալ Այաշ, ամուսինս տեսնել, լսել իր հրահանգները, մանաւանդ ծանօթանալ իրական կացութեան հետ: Պիտի խնդրէի բարի ծերունիէն, որ ինձ ընկերանար իբրեւ հայրս կամ ամուսինս:

Ծերունին, որուն կիսն ու երկու սիրուն աղջիկներն ալ մօտէն կը ճանչնայի, զիս շատ սիրով ընդունեց: Ցաւ յայտնեց եղածներուն համար: Ըսաւ, որ թուրք կառավարութիւնը իր գերեզմանն իսկ կը փորէ հայերու պէս ընդունակ ժողովուրդ մը ոչնչացնելու լուզելով:

Երբ յայտնեցի իրեն իմ ծրագիրս, փորձուած ծերունին թերահաւատ ժպտեցաւ: «Վտանգաւոր ծրագիր է», ըսաւ եւ «անգործադրելի», սակայն, խոստացաւ անձամբ երթալ Այաշ, քանի որ հայերուն արգիլուած էր տեսնուիլ ամուսնոյս հետ եւ ինձի ճշգրիտ տեղեկութիւններ բերել:

Ռիզա պէյ, այս էր իր անունը, չքանց իր խոստումը. անշուշտ լուրջ պատճառներ ունէր ատոր համար: Երկրորդ անգամ իրենց երթալուս՝ տունը չէին, ընտանիքով օդափոխութեան գացած էին:

Չէի յուսահատած: Ուղեղս զբաղած էր այդ հարցով. այն է՝ ի՞նչպէս ընել ամուսնոյս մասին ճիշդ տեղեկութիւններ ստանալու կամ անոր քով երթալու համար:

* * *

Ամէն օր մինակս կ'իջեցնէի տղուս կառք-օրօրոցը, զինք պտոյտի տանելու համար: Առաջ ամուսինս կ'ընէր այս գործը, յետոյ սպասուհին կամ ես եւ հիմա միայն ես: Տանտիրուհին չէր թողեր որ վարը՝ փողոցի դրան մօտ թողնէր կառքը:

Վեր հանելը անելի դժուար էր: Առաջ տղան կը տանէի չորրորդ յարկի մեր յարկաբաժինը, կը նստեցնէի գետինը փոքրիկ գորգի մը վրայ ու իր քովը բարձեր կը շարէի, որպէսզի չիյնայ:

Կառքը վեր հանելու համար ըրած ճիգէս ուժասպառ, տղուս քով, գորգին վրայ կ'իյնայի ուժով շնչելով: Տղաս այն բանը շատ ծիծաղելի կը գտներ: Կը կարծէր, որ զինքը զուարճացնելու համար այսպէս արագ-արագ կը շնչեմ ու ան իր փափիկ թելերը ինձ երկարած՝ այնպէս բարձր կը խնդար, այնպէս կը քրքջար, կարծես ըսել կ'ուզէր.

– Աս ի՞նչ զուարճալի մամա է...

Երբ պտոյտի ելլէիք, կառքը կը քշէի դէպի ամայի եւ անադմուկ վայրեր: Ընդհանրապէս կ'երթայի Նշան-Թաշի բացօթեայ մասերը, որուն բարձունքէն կ'երեւեր հոյակապ Վոսփորը:

Տղաս կառքին մէջ կը քնանար, իսկ ես աչքերս յառած դէպի Վոսփոր՝ կը նայէի տեսակ մը տենդագին սպասումով: Այդ վայրկեաններուն Վոսփորի բնական գեղեցկութիւնը չէր որ զիս կը գրաւէր, այլ անկէ գալիք հրաշքի մը սպասումը:

Կ'իմանայի որ Ղաշնակիցները կը յաղթէին, որ անոնք մէկ օրէն միւսը պիտի գային իրենց կամքը պարտադրելու եւ ազատելու լուծի տակ հեւացող ժողովուրդները:

Աչքերս յառած Վոսփորէն անդին՝ դէպի բաց ծովը, կը սպասէի... Պիտի գայի՞ն: Պիտի երեւէի՞ն անգլիական, ամերիկեան

եւ ֆրանսական մարտանաւերը: Պիտի լսուէի՞ն անոնց ազատարար սուլոցները...

Ես հազիւ ինձ կը զսպէի թելերս տարածել դէպի այդ կողմը՝ ըսելու համար. «Եկէ՛ք, շտապեցէ՛ք, իր երկրին մէջ, ի՞ր արիւնին մէջ խեղդուող ժողովուրդ մը կայ, եկէ՛ք»...

Սակայն, Վոսփորի վրայ կ'երթելէկէին միայն զբօսանքի շոգենաւակները, որոնց սուր սուլիչները, հեգնանքի մը պէս կ'արթնցնէին զիս սպասումիս եւ երագներուս մէջէն:

Կը դառնայի տուն ամէն օր անելի յոգնած, անելի տժգոյն:

Օր մը պտոյտի գացած ժամանակս պատահեցայ այն երիտասարդին, որ զիս ամուսնութեան ուզած էր: Ան իր սեփական կառքին մէջ էր իր երիտասարդ շքեղ կնոջը հետ:

Պոլսոյ ամենահարուստ ընտանիքներէն մէկուն կը պատկանէր ան: Համակրելի եւ Եւրոպա ուսում ստացած երիտասարդ մըն էր: Իմ մերժումս զարմացուցած էր շատերը՝ սարսափելի տեսարաններու պատճառ դառնալով մեր տանը մէջ:

Պարոնը տեսաւ զիս եւ կնոջը բաներ մը ըսաւ: Երկուքն ալ ուշադրութեամբ նայեցան ինձ, երբ ճիշդ իրենց մօտէն կ'անցնէի: Ինձ թուեցաւ, որ երիտասարդին աչքերուն մէջ ոչ թէ հեգնանք, այլ կարեկցութիւն կար: Գիտէր անշուշտ ինձ պատահածը:

Ճամբաս շարունակելով ես ինձ կը հարցնէի. –

«Պիտի ուզէի՞ արդեօք նստած ըլլալ այդ կառքին մէջ, որ իմ սեփականը պիտի ըլլար, թէ կը նախընտրէի քշել այս փոքրիկ կառքը, քշել յոգնած, մինակ եւ գրեթէ անօթի»...

Առանց տատամսումի ես ինձ կը պատասխանէի.

«Այո՛, կը նախընտրէի, նոյնիսկ մինակ, նոյնիսկ քաղցած քշել այս փոքրիկ կառքը, քան նստիլ այդ շքեղ կառքին մէջ: Այս փոքրիկ կառքին մէջ կայ զաւակը անոր, որ ամէն ինչ զոհեց իր ժողովուրդին համար, իսկ այդ շքեղ կառքին մէջ նստած է մէկը, որ այս ողբերգական օրերուն իսկ կառքով զբօսանքի երթալու մասին կը մտածէ...

Մեծահարուստ պարոնին հանդիպումով մտքիս մէջ մէկիկ-մէկիկ կու գային ամուսնութեան բոլոր առաջարկները, զորս ունեցած էի: Մարդիկ կարծես գրաւի ելած էին զիս նեղելու համար:

Անգամ մը խորամանկութեան դիմեցի: Ուզեցի, որ մերժումը գայ ոչ թէ ինձմէ, այլ ուղղակի երիտասարդի ընտանիքէն:

Այդ անգամուան թեկնածուս իր ծնողացը մէկ հատիկն էր: Կը դողային իր վրայ: Պիտի ուզէին անշուշտ, որ իրենց հարսը իրենց տղուն տար ամողջ եւ հաստատուն ժառանգորդներ, որ-պէսզի հարստութիւնը ապահով անցներ սերունդէ սերունդ: Անոնք մեր քաղաքի բոլոր աղջիկները աչքէ անցուցեր էին, մինչեւ որ կանգնէին իմ վրաս:

Երբ երիտասարդը իր ծնողաց հետ եկաւ նշանդրէքի ընդունելութեան համար՝ վերջին կարգադրութիւններն ընելու հրահրեալներու ցանկին եւ այլն պատրաստութիւններու համար, ես առիթը գտայ մօրը հետ պահ մը միևնաձայն մնալու եւ խօսքը ծովու բաղնիքներու վրայ բերելու:

– Շատ ցաւալի է,– ըսի,– որ բժիշկները թոյլ չեն տար, որ ծովու բաղնիք ամեն, իսկ ես այնքան կը սիրեմ այդ...

Մայրը զարմացած ու քիչ մըն ալ սարսափած հարցուց.

– Ա՛հ... Բժիշկները թոյլ չե՞ն տար... Իսկ ինչո՞ւ...

Խեղճին ձայնը կը դողար յուզումէն:

– Չեմ գիտեր,– ըսի՝ տխուր ձեւ մը ամենելով.– Ամեն իրիկունս թերեւ տաքութիւն մը կ'ունենամ, որուն կը յաջորդէ փոքրիկ քրտինք մը, եւ քիչ մըն ալ այս տեղս կը ցաւի.– Կողս ցոյց տուի.– Թերեւս այդ է պատճառը, որ բժիշկը կ'արգիլէ ծովու լողանքը:

Երիտասարդին մայրը շրթները սեղմեց եւ մտազբաղ ձեւ մը առաւ, որ սիրտս ուրախութեամբ լեցուց:

Վերադառնալով սրահ, ուր բոլորը ուրախ կը խօսէին, մայրը գլխու ցաւ մը պատճառ բռնելով անմիջապէս մեկնելու փափաք յայտնեց: Ի գուր ամուսինն ու տղան կը խնդրէին, որ քիչ մը եւս համբերէ, որ ցանկը լրանայ: Ի գուր մենք կը ստիպէինք, որ ընթրիքի մնան, ինչպէս որ նախատեսուած էր: Տիկինը տեղի չէր տար: Գլուխը անտանելի կերպով կը ցաւեր...

Ուրիշ օրերու պէս ան չհամբուրեց զիս ու «սիրելի աղջիկս» չըսաւ մեկնած ժամանակը, մինչեւ անգամ յանդիմանական կը նայէր տղուն, որ ձեռքս պինդ բռնած՝ չէր կրնար թողուլ, կարծես ձեռքս հետը տանիլ կ'ուզէր:

Ա՛լ չտեսանք զիրենք: Ծնողքս, որ մէկ օրէն միւսը նշանդրէքի օրը ճշդող լուրի կը սպասէին, չէին հասկնար այս լռութեան պատճառը:

Շաբաթ մը վերջը նամակ ստացան: Կը գրէին, որ այս խնդիրը առայժմ առկախ պիտի մնայ իրենց տղուն արտասահման մեկնելու պատճառով, ուր շատ կարեւոր գործ մը զինք կանչած է: Իրաւ ալ, երիտասարդը, որ թունդ սիրահարուած էր, բայց ծնողացը, մանաւանդ մօրը կամքին հակառակ շարժելու չափ ուժ չունէր, երկու տարի բացակայեցաւ քաղաքէն՝ եւրոպական քաղաքները շրջելու համար:

Առաջին անգամս էր, որ ամուսնութիւն մը ջուրը ինկած էր, առանց ընտանեկան փոթորիկներու առիթ տալու:

Մեր տունը կը գտնուէր Նշան-Թաշի դէպի դաշտ տանող սոր շինուած փողոցներէն մէկուն մէջ: Ան դեռ անուն չունէր: Աւելի ճիշդ՝ իր անուն չունենալը եղած էր իր անունը: Անանուն փողոց կ'ըսէին, թէ տասը տարիէ ի վեր գոյութիւն ունէր: Արեւելքի եաւա՛շ, եաւա՛շ ռիթմին համար տասը տարին վայրկեան մըն է:

Հիմա, գիտեմ, Սուրթաֆա Զեմալի օրով կեանքի ռիթմը արագացած է, երբեմն մինչեւ անգամ դէպքերն ու փոփոխութիւնները այնքա՛ն արագ կ'երթան, որ գլխապտոյտ կու տան, բայց եւ այնպէս յեղաշրջումները գովելի են եւ նշանակութեան արժանի:

Երեք փոքրիկ սենեակէ բաղկացած յարկաբաժին մը ունէինք: Կար նաեւ մանրանկար խոհանոց մը, որուն պատուհանը առաստաղէն էր:

Նոր տեղաւորուած էինք այդ յարկաբաժինը եւ նոր առած էինք նաեւ սպասուհին: Փոքրիկին աշխարհ գալէն վերջ եւ շատ յոգնած էի, պէտք է հանգստանայի նախ քան աշխատիլս, որովհետեւ դպրոցական տարեշրջանին եւ ուսուցչութեան պաշտօն պիտի ունենայի: Սպասուհին նորէն պէտք պիտի ըլլար՝ փոքրիկին քով մնալու համար:

Կը գարմանամ, թէ ի՛նչպէս այդ շատ համեստ բնակարանը ինձ եւ ամուսնոյնս շքեղ երեւցած էր: Ծանօթներու միջոցաւ ամուսինս գտած էր զայն, մինչ այդ՝ սենեակի մը մէջ կ'ապրէինք:

Օր մը ան եկաւ հսկայ ժպիտով մը:

– Պալատ մը գտայ մեզ համար,– ըսաւ,– իրական պալատ մը, պիտի սքանչանաս...

Իրաւ ալ սքանչացայ, երբ տեսնելու եկանք միասին: Ես, որ իրապէս պալատի պէս տունէ մը ելած էի, այս փոքրիկ յարկա-

բաժինը անխուսափելիօրէն գեղեցիկ գտայ: Արդեօք անո՞ր համար, որ ան մերն էր, թէ սկսեր էի ամուսնոյս աչքերով տեսնել:

Յարկաբաժինը պատշգամ ալ ունէր, ուր մեր սպասած երախան պիտի կրնար քնանալ: Այդքանը մեր սպասածէն շատ էր, եւ մենք մեր ուրախութեան գեղման մէջ պինդ մը համբուրուեցանք, կարծես համբոյրով մը կը կնքէինք այդ տունը ապրելիք մեր երջանիկ օրերը:

Փոքրիկին գալէն ի վեր, ես ավելի գործնական եղած էի: Մտքիս մէջ կը հաշուէի, որ ամուսնոյս իբր խմբագիր ստացածին միացնելով իմ իբր ուսուցչուհի ստանալիքս, մենք պիտի կրնայինք լաւ կեանք մը ունենալ նիւթական տեսակետով ալ ու պիտի կրնայինք փոքրիկը մեծցնել առանց զրկանքի:

Այս յարկաբաժինը, ուր հիմա տղուս հետ մինակ մնացեր էի, «խօսող» յարկաբաժին մըն էր: Այսինքն՝ հոն գտնուող կարասիներն էին, որոնք կը խօսէին: Ամէն մէկը իր պատմութիւնն ունէր:

Սեղանն ու աթոռները գներ էինք հնավաճառէն եւ հականեխելէ վերջ տուն բերեր էինք շատ հանդիսաւոր կերպով: Մեր առաջին կարասիներն էին: Նստարանը գնած օրերնիս մասնաւոր կերպով հպարտ էինք. երբեք ավելի սիրունը չէինք տեսած: Մեր անկողինը վաճառատան մէջ ամենէն աժանն էր եւ ամենէն քիչ հետաքրքրականը, բայց բաւական եղաւ, որ մտնէ մեր տունը, որ ան մեզ երեւի շատ սիրուն ու ճաշակաւոր: Բոլորովին մոռցանք մնացեալ մեր տեսածները:

Ամուսնոյս գրասեղանը եւ վրայի կարգ ու սարքը ես գներ էի՝ ամուսինէս գաղտնի զարդասեղս ծախելով: Կը յիշեմ, իրիկունը, վերադարձին, երբ ամուսինս տեսաւ գրասեղանը, աչքերուն չէր հաւատար՝ ի՞րն էր այդ, ինչպէ՞ս կրցեր էի գնել այդ գոհարը: Անմիջապէս նստաւ ու սկսաւ գրել:

– Պահ, պա՛հ, պա՛հ,– կ'ըսեր,– այս աշխատանքի սեղանը հրաշքատուր բան մըն է. բաւական է նստիս առջեւը, գրիչը ձեռք առնես ու յօդուածները ինքնին կը գրուին, առանց որ մտածելու հոգն ունենաս: Տե՛ս, տե՛ս...

Այո՛, կարասիները կը խօսէին հիմա ինձ: Մասնաւորապէս գրասեղանը կարծես ինձ կ'ըսեր, ամէն անգամ որ քովէն կ'անցնէի.

– Ե՞րբ պիտի գայ... Ե՞րբ պիտի գայ...

«Շո՛ւտով, շո՛ւ-տո՛ւվ,– կը պատասխանէր պատեն կախուած ժամացոյցը, երբ ես յոյսեր ունէի ապագայի մասին կամ «ե՛ր-բե՛ք, եր-բե՛ք», երբ կը վերապրէի այն վայրկեանները, զորս ապրեցայ բանտէն վերադարձիս:

Սենեակին ինձ հետ խօսիլը այնպիսի որոշ զգացում մըն էր ինձ համար, որ օր մը հետեւեալ բանաստեղծութիւնը գրեցի ամուսնոյս գրասեղանին վրայ, ես, որ երբեք բանաստեղծու-թիւն չէի գրած.–

Սենեակս այսօր խօսեցաւ ինձ իր կեանքէն.

Ա՛լ աչքերովդ ճառագայթներ չես բերեր,

Ուրախ երգերդ ա՛լ պատերս չեն շոյեր.

Ո՞ւր են, ո՞ւր, փնջերն սիրուն սեղանիս,

Ո՞ւր զգլխիչ բոյրերն ճերմակ անկողնիս.

Ո՞ւր զոյգ մ՛արթուն քով քովի

Եւ մրմունջներն համբոյրի...

Ո՞ւր կատակներ ու գեղգեղանք

Ու քրքիչներ ու արծազանգ...

Մէկ մնացած քու աթոռէդ՝ լացի ձայներ կը հասնին,

Երկու ձեռքերդ գալարուելով զուր զոյգ ձեռքեր կը փնտռեն.

Փակ պատուհանիս ա՛լ շողեր չկան,

Սեւ վարագոյրներ մեղմիկ կը ծփան:

Ես Սիրոյ տաք բոյն տաճար խնդութեան,

Փակուեցայ իմ մէջ, ինչպէս լուռ դամբան,–

Սենեակս այսօր զանգատեցաւ իր կեանքէն:

Ամուսնոյս յօդուածին պէս ոտանաւորն ալ ինքնիրեն գրուեցաւ շնորհիւ հրաշքատուր գրասեղանին: Այս պիտի ըսէի իրեն, իր վերադարձին:

Իր մեկնելէն վերջ ձեռքս չէի տուած գրասեղանի վրայի իր թուղթերուն: Սկսուած յօդուած մը կար, թէեւ թերթն ալ, ուր ան պիտի տպուէր, բռնագրաւուած էր շատոնց:

Կարասիները կը խօսէին, բացի դրան զանգակէն, որ լռած էր ամիսէ մը ի վեր: Դուռս զարնող չկար: Ամէն մէկը իր պատեանին մէջ, ամէն մէկը իր եղովը տապկուող:

Մեր տանտիրուհին յոյն կին մըն էր, որ վարի յարկը կ'ապրէր իր երիտասարդ աղջկան հետ: Ասոնք մեզ հետ շատ սիրալիր էին, քանի ամուսինս չէր հեռացած: Ես յունարէն կը խօսէի, եւ այդ շատ հաճելի էր իրենց համար:

Այս երկու կիները, Պոլսոյ կանանց մեծ մասին պէս, իրենց տան գործը վերջացնելէ յետոյ, ա՛լ ուրիշ ընելիք չունէին: Իրենց ժամանակը կ'անցընէին փողոցէն անցնող-դարձողները դիտելով, մասնաւորապէս դրացիներուն եկող-գացողները, ըրածը-դրածը լրտեսելով: Ասոնք մանրամասն կերպով գիտէին, թէ ի՞նչ գնուեցաւ ուտելիքի համար այս կամ այն դրացիին տունը, թէ ո՞ր օրը այնինչ տունը մարդ ու կին կուուեցան եւ ի՞նչ պատճառաւ. թէ ո՞ր աղջիկը պիտի նշանուի շուտով եւ որո՞ւ հետ, կամ թէ ո՞ր ամուսիններն են, որոնք շուտով պիտի ապահովեն ապահարզան ստանալ:

Տանտիրուհիներուս մասնաւոր հետաքրքրութեան առարկան էր ճիշդ մեր տան դիմացը գտնուող գեղեցիկ յոյն կին մը, որ ծեր ամուսինը կը խաբէր թուրք սպայի մը հետ:

Այն օրերուն, երբ թուրք սպան կ'այցելէր յոյն գեղեցկուհիին, տանտիրուհիներս վեր՝ մեզի կու գային՝ վերէն աւելի լաւ դիտելու համար: Աղջիկը մասնաւորաբար տարօրինակ արտայայտութիւն մը կ'առնէր, կարծես ելեկտրական հոսանքներ իրեն աւելորդ եւ անիմաստ շարժումներ ընել կու տային: Վարագոյրին ետեւէն նայելու շատ վարպետ ձեւ մը ունէր: Շունչը բռնած՝ աչքը կը դնէր վարագոյրին մէկ բացուածքին ու կը նայէր անթարթ: Երբեմն-երբեմն ինձ կը դառնար շշնջալով.

«Եկա՛ւ», «մտա՛ւ», «ձեռքը փունջ մը ունէր», կամ «տուփ մը շաքարեղէն»...

Քիչ մը վերջը կրկին կը տեղեկացներ.– «Վարագոյրները վար առին, բայց տեսայ էլենան (յոյն կինը) գրեթէ կիսամերկ»...

Ես բնաւ չէի հետաքրքրուէր մեր դրացիներով կամ ուրիշներու ըրածներով, սակայն, քաղաքավարութեան համար զարմացական կամ վրդովումի ձեւեր կ'առնէի, այսինքն՝ դէմքս կը յարմարցնէի հիւրերուս դէմքի արտայայտութեան:

Տանտիրուհիներս կը մնային մինչեւ թուրք սպային մեկնիլը: Այն ժամանակ աղջիկը կը հանդարտէր.

«Խեղճ մարդը շատ յոգնած երեւոյթ մը ունի», կ'ըսէր հեզ-

նանքով, յետոյ դէմքին զգուանքի արտայայտութիւն մը կու տար եւ ձեռքովը շատ աղտոտ բան մը նետելու ձեւ կ'ընէր ու մօրը հետ վար կ'իջնէր:

Սակայն, քանի ամուսինս տարին, տանտիրուհիներս ա'լ վեր չէին գար: Սկիզբները վշտովս համակուած՝ չնկատեցի անոնց վերաբերումին փոփոխութիւնը: Սանդուխներուն վրայ երբ պատահէինք, կը հարցնէին տղուս եւ ամուսնոյս մասին: Զիչ քիչ ա'լ չպատահեցանք իրարու, հանդիպած ժամանակ ալ, միայն բարեւեցիւնք ու անցանք:

Որքան պաղ ըլլար հիմա իրենց վերաբերումը իմ հանդէպ, անոնց վարի յարկը ապրիլը ինձ որոշ հանգստութիւն կու տար: Իրենց դռներուն բացուելու, գոցուելու ձայնը, խօսակցութեան արձագանգը մինակութեանս առթած վախը կը փարատէին մասամբ:

Ես սիրով կը լսէի մինչեւ անգամ անոնց կռիւի ձայները, որ տեղի կ'ունենային մասնաւորապէս ճաշերու ժամանակ: Մայրը լեարդի հիւանդութիւն ունէր, իրեն համար մասնաւոր կերակուր կ'եփուէր: Սակայն, ճաշի ընթացքին, ան իր մասնաւորը ուտելէ վերջ արագ-արագ կ'ուտէր նաեւ ինչ որ արգիլուած էր եւ ահա կռիւը կը սկսէր:

– Ի՞նչ է, շուտ-շուտ կ'լլեցիր իւղոտ պատառները, կը կարծես որ հիւանդութիւնդ ժամանակ չունեցա՞ւ արձանագրելու, ի՞նչ է: Գերեզմանդ ակռաներո՞վդ կը փորես,– կը պոռար աղջիկը:

– Զու հոգդ իմ հիւանդանալս չէ,– կը պատասխանէր մայրը,– այլ կը ցաւիս, որ պատահ մը պակաս պիտի ուտես համով կերակուրէն: Կը ճանչնամ քեզ...

Կռիւը կը շարունակուէր, մինչեւ որ փողոցը կամ դրացիներուն տունը հետաքրքիր դէպք մը պատահէր: Այն ժամանակ երկու կիները աչք ու ականջ կտրած՝ կը լռէին: Անշուշտ թանկագին առիթ մը պիտի չփախցնէին իւղոտ պատահի մը համար:

Եթէ կռիւի ձայներն իսկ ինձ հաճելի են, կը մտածէի ամօթով, պէտք է խոստովանիմ որ կը վախնամ: Սակայն, այդ զգացումը բոլորովին վախ չէր: Դժուար է բացատրելը: Կը վախնայի տղուս համար: Ամէն վայրկեան զինք վտանգի մը դէմ պաշտպանելու համար դիրք բռնած էի կարծես:

Գիշերները ընդոստ կ'արթննայի փողոցի պահապաններու գաւազաններուն ձայնէն,– տա՛կ, տա՛կ, տա՛կ: Պոլսոյ մէջ ամէն փողոց իր պահապանն ունի, որ փողոցէն կ'անցնի, վեր, վար, գիշերուան ամբողջ ընթացքին, այն ինչ՝ ոչ մէկ քաղաք այնքան գէշ պաշտպանուած է որքան Պոլիսը: Շատ անգամ պահապանները իրենք էին որ կողոպուտը կը կազմակերպէին...

Հրդեհ պատահած գիշերները մասնաւորապէս ահարկու էին: Ամէն մէկ պահապան պէտք էր յաջորդ փողոցի պահապանին պոռալով յայտնէր հրդեհ պատահած փողոցը, թիւը, «եանդըն վա՛ր»... ո՛ւ, Իւսկիւտար, այսինչ փողոց, ո՛ւ...

Մինչեւ անգամ արուարձաններու մէջ պատահած հրդեհները պոռալով կը ծանուցուէին ի լուր Պոլսոյ բնակչութեան եւ, որովհետեւ արուարձաններու տուներէն մեծ մասը փայտաշէն էին, գրեթէ ամէն գիշեր հրդեհ կար: Շատ անգամ հրդեհ պատահած արուարձանը երթալ ալ ուզուէր, անկարելի էր, Վոսփորին մէկ ափը Եւրոպա, միւսը՝ Ասիա, գիշերը շոգեանալին երթելեկութիւնը արգիլուած էր, այնպէս որ նոյնիսկ տանտէրը, իմանալով հանդերձ, որ իր սեփականութիւնը կ'այրի, չէր կրնար որեւէ կերպով օգնել, պիտի սպասէր լուսնալուն:

Հրդեհ ազդարարող ձայներու ժամանակ, ես գիշերանցով, դողալով, տղուս օրօրոցին քով կը վազէի՝ զինք պաշտպանելու համար աներեւոյթ վտանգէ մը: Հազիւ հրդեհի առթած աղմուկը կը վերջանար, ահա կը սկսէր զինուորացուներ կանչող թմբուկի ձայնը ու գոռում-գոչումը:

Ձայներուն վերջանալէն ետք ալ բան մը մնացած կ'ըլլար սենեակին մէջ: Վախը շօշափելի առարկայի մը պէս կը տարածուէր սենեակիս մէջ եւ կը մնար:

Վարի յարկէն տանտիրուհիներս ալ կ'արթննային: Կը լսէի, որ մայր ու աղջիկ կը խօսին եւ որոշ չափով կը հանգստանային: Այդ վայրկեաններուն այնպէ՛ս կը սիրէի իմ բամբասող տանտիրուհիներս:

Կը մտածէի, թէ ի՞նչ ձեւով պիտի կարենայի կրկին այդ երկու կիներու բարի ուշադրութեան արժանանալ: Թո՛ղ գային, թո՛ղ գային նոյնիսկ յոյն գեղեցկուհին լրտեսելու, բայց գային:

Օր մը սանդուխներուն վրայ տանտիրուհիս ինձ կը սպասէր: Անմիջապէս հասկցայ, որ լաւ բան չէ ըսելիքը:

– Գիտե՞ք,– ըսաւ կեղծ բարի ժպիտով մը,– ձեզ աղջկանս պէս կը սիրեմ, անոր համար կ'ուզեմ լաւ խորհուրդ մը տալ ձեզ: Աւելի լաւ չ'ըլլա՞ր ձեզի համար, որ աւելի աժան բնակարան մը վարձէք: Ձեր այս յարկաբաժնին գինը պիտի աւելցունենք: Անցեալ օր աւելի տուող մը եղաւ: Թէ՛ ձեզ համար լաւ կ'ըլլայ, թէ՛ մեզ համար, եթէ ուրիշ տեղ մը տեղափոխուիք:

– Վարժուած եմ այստեղ,– ըսի,– շատ պիտի ցաւիմ, եթէ ստիպուած ըլլամ հեռանալու: Մանաւանդ որ ամուսինս շուտով պիտի գայ...

Աղջիկը, որ երեւի մտիկ կ'ըներ մեր խօսակցութիւնը, դուռը բացաւ ու մեր քովը եկաւ.

– Մամա,– ըսաւ,– ինչո՞ւ ճիշդը չես ըսեր,– եւ յետոյ ինձ դառնալով ըսաւ.– Կը վախնանք, որ ձեր պատճառաւ նեղութիւններ ունենանք կառավարութեան հետ: Անցեալ օր ոստիկան մը եկաւ ու ձեր մասին կարգ մը տեղեկութիւններ հարցուց: Ո՞վ կու գայ, ինչպէ՞ս կ'ապրիք, ուրկէ՞ դրամ կը ստանաք: Մենք ալ այդ չունինք, կը վախնանք, ի՞նչ ընենք...

Լռութենէս օգտուելով՝ աղջիկը շարունակեց.

– Չէ՞ք նկատած, ամէն անգամ որ դուրս կ'ելլէք, դիմացի փողոցին անկիւնը գաղտնի ոստիկան մը կանգնած է: Ես միշտ ձեր ելլելէն վերջ կը նայիմ ձեր ետեւէն: Կը տեսնեմ, որ այդ մարդը անմիջապէս կը հետեւի ձեզի, քայլ առ քայլ: Ձեզ կը հետապնդեն ոստիկանութեան կողմէ եւ այդ շատ անհաճոյ է մեզի համար: Չարմանալի է, որ չէք նկատած այդ մարդը մինչեւ հիմա:

Կը հասկնամ գիրենք: Երկու օտար կիներ իրենք գիրենք վտանգի տակ դնելու որեւէ պատճառ չունին անշուշտ վարձակալի մը համար:

– Բայց տան վարձքը վճարուած է երեք ամսուան համար,– կ'ըսեմ կարմրելով:

Երկու կիները իրարու կը նային: Մոռցե՞ր էին այդ, թէ զիս աւելի միամիտ կը կարծէին, քան ինչ որ եմ: Զիչ մը տատամսումէ վերջ որոշեցին, որ եթէ յարկաբաժնը վարձուի, ինձ պիտի վերադարձնեն իմ վճարածիս մէկ մասը:

Դրամի սերը գերազանցեց իրենց վախը, եւ ես պիտի կարենայի նոր անկիւն մը գտնելու հոգը չունենալ գոնէ ժամանակ մը եւս:

Ճիշդ էր: Մարդ մը կեցած կը ծխէր եւ անտաքեր ձեւ մը առած իմ կողմս կը նայէր:

Ես շարունակեցի ճամբաս իբր թէ չէի նկատած, բայց սիրտս արագ-արագ կը բաբախէր: Պիտի ձերբակալէի՞ն նաեւ զիս: Ի՞նչ պիտի ըլլար տղաս:

Ամուսնոյս պատկանող երկու հաստ տետրեր, ուր ժողովներու արձանագրութիւններ եւ այլ փաստաթղթեր կային, ես պահէր էի տղուս կառքին անկողնակին մէջ: Հիմա քալած ժամանակս ինձ կը թուէր, որ ոստիկանը աչքերը յառած էր անկողնակին ու կը տեսնէր մէջը կարուած տետրակները, թէեւ անոնք բամպակներու մէջ էին եւ վրան ալ տղաս նստած էր:

Թելիս վրայ կը զգամ մինչեւ անգամ ձեռքի մը ճնշումը. «Տուէք տետրակները եւ դուք ալ ինձ հետ եկէք»...

Բայց ոչ, մարդը շատ հեռուէն կը քալէ. ան միայն կ'ուզէ իմանալ թէ ո՞ր կ'երթամ, թէ կրնա՞յ իմ միջոցովս նոր որսի մը վրայ ձեռք դնել:

Գացի ամէն օրուան տեղը, Նշան-Թաշի քարերը: Մարդը մօտակայ սրճարանի մը առջեւը նստաւ ու սկսաւ «ներկիլէ» ծխել:

Քարին վրայ նստած՝ ես ալ աւելի անձկութեամբ կը նայէի դէպի հեռուն, ծովը: Գուցէ պիտի երեւէին վերջապէս ազատարար նաւերու ծուխերը, յոյս մը բերելու համար ինձ եւ ինձ պէս հազարաւորներուն: Նաւատորմի ծխնելոյզներէն ելած սեւ ծուխը ինձ պիտի երեւէր լուսաւոր կամարի մը նման: Բայց ոչի՞նչ, միշտ ոչի՞նչ Վոսփորի վրայ, եւ Վոսփորին այն կողմը:

Շուրջս կը նայիմ: Մօտաւորապէս կան քսան փոքրիկ կառքեր, որոնց մէջ երեխաներ կամ կը քնանան, կամ կեանքին նոր բացուած աչքերով կը դիտեն նստողները, անցնողները: Ուրիշներ, աւելի մեծ, կը խաղան իրենց մօր կամ դայեակներուն հսկողութեան տակ: Մեծ թուով թրքուհիներ, երեսին բացած, որովհետեւ հոն գտնուողները բոլորը կիներ են, կը ծխեն ուրախ խօսելով: Թրքուհին շատ կը սիրէ բնութեան գեղեցկութիւնները, ան շատ կը սիրէ խօսիլ սիրոյ մասին:

Կը դիտեմ այդ կիներու ուրախ արտայայտութիւնները, անոնց լեցուն դէմքերը, եւ խղճի խայթի պէս բան մը կ'արթննայ մէջս: Չէ՞ որ քիչ առաջ օտար նաւատորմիդը տեսնելու հա-

մար աչքերս անձկութեամբ յառեր էի դէպի ծովը: Եթէ այդ նաւերը գան, պիտի դադրին այս ծիծաղները, պիտի դալկանան այդ վարդ երեսները: Իրաւունք ունի՞մ այդպիսի անգութ բան մը բաղձալու:

Վիրաւոր սիրտս է, որ կը պատասխանէ ինքս ինձ տուած հարցումներուս:— «Այդպիսի փափաք մը պիտի ունենայի՞ր, եթէ երբեք այնքան գուրգուրանքով կազմած բոյնդ չքանդէին, եթէ դուն քու վրադ չզգայիր ոստիկանի մը նայուածքը եւ յարատեւ վտանգը սիրելիներուդ կեանքի մասին: Երբե՞ք»:

Կը դառնամ դէպի թրքուհիները ու մտքիս մէջէն կ'ըսեմ անոնց.

«Նոյնիսկ եթէ գան անոնք, ազատարարները, որոնց անձկութեամբ կը սպասեմ, անոնք պիտի չվարուին ձեզ հետ այնպէս, ինչպէս դուք վարուեցաք մեզ հետ: Անոնք պիտի չմտնեն ձեր տունները եւ խաբէբայութեամբ պիտի չտանին ձեր սիրելիները: Շարունակեցէք ձեր սիրոյ պատմութիւնները եւ ծիծաղեցէք: Բայց ես իրաւունք ունիմ ձեզ պէս ուրախ եւ առողջ ըլլալ ուզելու. իրաւունք ունիմ, վերադարձիս սիրելիս գտնելու անյաղթելի փափաքն ունենալու ձեզի պէս, ձեզի պէս»:

Կը նայիմ քնացող փոքրիկիս: Բաց օդին մէջ աւելի որոշ է, որ անոր փոքրիկ սիրուն դէմքը աւելի փոքրացեր է: Ան գունատ է եւ այնպէս պաշտպանութեան կարօտ երեւոյթ մը ունի, որ ոտքի կ'ելլեմ՝ կարծես աներեւոյթ թշնամի ուժերու ըսելու — «Ես հոս եմ»:

Վերադարձս եղաւ աւելի տխուր քան ուրիշ օրեր: Կ'երթայի քշելով կառքը, վրաս կը զգայի ինձ հետեւող ոստիկանի նայուածքը: Կ'երթայի պարապ տունս, ուր ոչ ոք ինձ կը սպասեր, ընդհակառակը, հոն չէին ուզեր, իսկ որ ես վերադառնայի...

Յաջորդ օրը քաջութիւն չունեցայ դուրս ելլելու: Նախորդ օրուան մղձաւանջը կրկին ապրելու ուժը չունէի: Այդ օրը անկիւնի ոստիկանը տեղէն չշարժեցաւ:

Ես ինձ կը մեղադրեի վախկոտութեանս համար: Տղաս օդ է արել կը գրկեմ, իմ հանգիստիս համար, կ'ըսեի, իսկ ամէն բանէ առաջ իր առողջութիւնն էր կարելորդ:

Պետք է կրկին դուրս գալ, պէտք էր մանաւանդ ինձ բախտակից միւս կիները տեսնելու ճար մը գտնել, ծանօթանալ անոնց

կեանքին, անոնց մտահոգութիւններուն հետ եւ միասին որոշում մը վերցնել այս կրակէ օղակէն դուրս գալու համար:

Պատշգամէն կը նայիմ դէպի փողոցի անկիւնը: Մարդ չկայ: Ուրեմն, պիտի կրնամ այսօր ծրագիրներս գործադրել: Չէի կրնար ուղղակի մէկու մը տունը երթալ՝ չվտանգելու համար զինք, բայց կրնայի, չէզոք տեղ մը, օրինակ, եկեղեցի երթալ, ծառային միջոցաւ տիկ. Արաքսին կամ տիկ. Մարիամը կանչել եւ ծանօթանալ իրենց կացութեան եւ առհասարակ Պոլսոյ մէջ անցած-դարձածին հետ:

Դեռ անկիւնը չէի դարձած՝ գաղտնի ոստիկանը մէջտեղ ելաւ, կարծես գետնին տակէն: Զիչ վերջը ուրիշ մը միացաւ իրեն:

Ուղղակի քովես կը քալէին:

— Ի՞նչ սիրուն տղայ է,— ըսաւ մէկը՝ տղաս ցոյց տալով:

— Մայրը աւելի սիրուն է,— պատասխանեց միւսը լկտիօրէն ինձ նայելով:

Կը շարունակեմ ճամբաս, բայց կը զգամ, որ կրկնակ պատճառներով կը հետապնդուիմ: Նախ՝ իբր քաղաքական գործիչի կին եւ յետոյ՝ պարզապէս իբր կին:

Մտքիս մէջ հազար ու մի ծրագիրներ կ'անցնէին, որոնցմէ ոչ մէկը կրնայի գործադրել: Ո՞ր կրնայի երթալ այս «շքախըմբով»: Այս մարդիկը պիտի մտնէին նոյնիսկ եկեղեցի, տեսնելու համար, թէ որո՞ւ հետ կը խօսիմ:

Վարսայարդարի մը խանութէն կ'անցնէի: Յանկարծ կանգ առի, տղաս գրկեցի ու ներս մտայ:

Մարդը շփոթուած վիճակս տեսնելով չէր գիտեր թէ ի՞նչ կ'ուզեմ. մազե՞րս յարդարել, անուշահոտութի՞ւն, օճա՞ռ գնել:

— Ի՞նչ կ'ուզէ տիկինը:

Ես գնեցի առաջին պատահած իրը, զոր տեսայ, վճարեցի եւ դուռը բանալով փողոց նայեցայ:

Ոստիկանը եւ իր ընկերը խօսելով կը շարունակէին իրենց ճամբան: Չիրենք կը տեսնէի կռնակէն: Երեւի կը կարծէին, որ ժամանակ մը պիտի մնամ մազերս յարդարել տալու կամ գնումներ ընելու համար:

Ես անմիջապէս տղաս դրի կառքին մէջ եւ հակառակ ուղղութեամբ, այսինքն՝ դէպի տուն սկսայ քալել, սակայն, առաջին

պատահած փողոցը մտայ, արագ անցայ այդ փողոցէն եւ կրկին անկիւն մը դարձայ եւ այսպէս շարունակ:

Մինչեւ երկու մարդիկը վերադառնային վարսայարդարին խանութը եւ նկատէին, որ չկամ, ես կրնայի շատ հեռանալ: Մաւաւանդ որ անոնց առաջին միտքը պիտի ըլլար երթալ դէպի տունս: Կամ մէկը այդ ուղղութեամբ պիտի երթար, իսկ միւսը ուրիշ, բայց անկարելի է, որ անցնէին ճիշդ այն փողոցներէն, ուրկէ ես կ'անցնէի:

Տղաս, որ սկիզբը շատ ուրախ էր այս ճեպընթաց ճամբորդութեան համար, սկսաւ վախնալ ու լալ ու յետոյ, ա՛լ յոգնած, քնացաւ:

Ո՛ր կ'երթայի այս անծանօթ փողոցներէն, ո՛ր կանգ պիտի առնէր այս հեւ ի հեւ փախուստը: Չէի գիտեր: Բայց կասկածի տեղի չտալու համար կը շարունակէի քալել մէկու մը պէս, որ գիտէ իր երթալիք տեղը եւ միայն ուշացած ըլլալուն համար կ'աճապարէ:

Յետքս կորսնցնելու մտահոգութեամբ տարուած եւ անդադար փողոց փոխելով՝ ես ինկած էի ինձ բոլորովին անծանօթ վայրեր: Թէեւ գիտէի, որ ոստիկանները գոնէ անմիջապէս զիս չէին կրնար բռնել, սակայն, ամէն փողոցի անկիւն դարձած ժամանակս ինձ այնպէս կու գար, որ ձայն մը պիտի ըսէր. «Կեցի՛ր»:

Կը շարունակէի ճամբաս անդադար ինձ հարցնելով, ո՛ր երթամ, ո՛ր դուռը գարնեմ. ո՛վ պիտի ուզէր զիս ներս առնել:

Կեց-եօթը տարեկան մանչուկ մը կ'անցնէր փողոցէն: Որքա՛ն Սուրէնին նման է, մտածեցի: Սուրէնը Չառօ մայրիկին թոռնիկն էր: Այս նմանութիւնը լոյսի պէս միտք մը տուաւ ինձ: Պիտի երթայի Չառօ մայրիկին:

Չառօն, որուն բոլորը «մայրիկ» կ'ըսէին, յիսունը անց կին մըն էր: Խստադէմ, սակաւախօս եւ անժպիտ: Կ'ըսէին, որ զակին սպաննուելէն վերջ էր, որ ան այսպէս եղած էր: Ան իր թոռնիկին հետ հրաշքով միայն ազատած եւ Պոլիս եկած էր:

Ամուսինս եւ ես շատ անգամ կ'երթայինք զինք տեսնելու: Չառօն մասնաւոր գուրգուրանք ցոյց կու տար Արային, որ իրեն իր սպաննուած զաւակը կը յիշեցնէր: Ինձ հետ շատ սառն էր եւ չեմ յիշեր, որ ան երբեւիցէ խօսք ուղղած ըլլայ ինձ: Այդ պատճառաւ ան ինձի քիչ մը վախ կ'ազդէր:

Արան կ'ըսէր, թէ Չառօյին դէմքը չոր է, բայց սիրտը բարի, թէ ան անցեալին մէջ, զիւղերու մէջ վարժուիի եղած ժամանակ, ամենամեծ զոհողութեամբ նուիրուած էր ազատագրական գործին: Այդպէս դաստիարակած էր նաեւ իր տղան, որ գեղեցիկ ու յաղթանդամ երիտասարդ, իր գաղափարներուն համար զոհուած էր:

Չառօյին հարսը կրկին ամուսնացած էր, եւ Չառօն այս չէր ներեր իրեն: Յարսին պատճառով կ'ատէր բոլոր երիտասարդ կիները, որոնց կարգին նաեւ զիս: Բայց եւ այնպէս ես հաւատացած էի, որ Չառօյին դուռը անոնցմէ էր, որ ես կրնայի գարնել:

Չառօն իր թոռնիկին հետ կ'ապրէր Պոլսոյ աղքատ արուարձաններէն Թաթաւլա կոչուած թաղամասը, մէկ սենեակէ բաղկացած փայտէ տնակի մը մէջ: Ան ուրիշներուն տունը լաթ լուալու կ'երթար, կարկտաններ կ'ըներ ու իր ապրուստը կը հոգար: Օր մը տրտունջ մը, գանգատ մը չէինք լսած իրմէ, իր ծանր կեանքի մասին:

Թաթաւլա հանրակառքով գացած էի միշտ: Պատրաստ էի կառքը թողուլ փողոց ու հանրակառք նստիլ տղաս գրկած, բայց զի՞ժէն հեռացեր էի, վտանգաւոր էր հանրակառք նստելու համար հրապարակ ելլել: Պէտք էր ոտքով երթալ, բայց ո՛ր ուղղութեամբ:

Պառաւ կնոջ մը կը հարցնեմ, թէ ինչպէ՛ս կրնամ Թաթաւլա երթալ: Չարմացած երեսս կը նայի:

– Շատ հեռու էք, կ'ըսէ, առնուազն մէկ ու կէս ժամուան ճամբայ ունիք:

– Գիտեմ,– կ'ըսեմ,– միայն ուղղութիւնը ցոյց տուէք:

Սկսայ քալել ցոյց տրուած ուղղութեամբ: Մէջս այնքան ուժ կը զգամ, որ կրնամ քալել ոչ թէ թաղէ-թաղ, այլ քաղաքէ-քաղաք: Միայն սիրտս է, որ կարծես պալոնի պէս ուռած է ու պայթելու պատրաստ:

Սուրբ կոխած էր արդէն, երբ հասայ Չառօյին փայտէ տնակին առջեւ:

Երբ բացաւ դուռը, Չառօյին առաջին հարցումը եղաւ.

– Յետեւող կա՞յ:

Գլուխս բացասական շարժեցի, խօսելու ուժ չունէի ու ինկայ փայտէ աթոռի մը վրայ:

– Աս ալ քեզ՝ քաջ մարդու կին,– սկսաւ յանդիմանել Չառօն.– Ի՞նչ է այս վիճակը, ամօթ չէ՞...

Չեմ վշտանար շատ, գիտեմ, որ իր յուզումը ծածկելու համար է, որ ան այսպես խիստ կը խօսի: Բայց այնպէս պիտի ուզէի այդ վայրկեանին տաք խօսք մը լսել...

Չառօն սրբիչ մը կը թրջէ, պաղ ջուրով կը սրբէ ճակատս, քունքերս, բազկերակներս եւ, աթոռս հրելով դէպի փայտէ սեղանը, կ'ըսէ հրամայական.

– Դիմա կէ՛ր:

Սեղանին վրայ երկու պնակ կայ ապուրով լեցուն: Մէկուն ամօքէ ստած է Սուրենը, բայց չ'ուտեր: Չարմացած կը նայի մէկ ինձ, մէկ կամքին մէջ քնացող փոքրիկիս: Աչքերը ուրախութեամբ կը փայլէին:

Ապուրէն այնպիսի լաւ հոտ մը կու գայ, եւ ես այնպէս անօթի եմ, որ անյագաբար, ինքնասիրաբար կ'ուտեմ: Ես ինձ կ'ըսեմ. «Այս Չառօնի բաժինն է, հաւանական է ամբողջ օրը լուացք ըրած է, հիմա յոգնած պիտի ուտեր, ուժ ամէն եւ ահա ես կ'ուտեմ»: Կ'ըսեմ, ինքս ինձ, բայց կը շարունակեմ ուտել անամօթաբար: Զանի՛ ժամանակ է, որ ես տաք կերակուր չեմ կերած:

Ապուրէն վերջ Չառօն ինձ տուաւ դղումով կերակուր ալ, զոր ես նմանապէս... լափեցի: Երբ աչքերս վերցուցի քիչ մը ամօթով, Չառօնին վրաս յառած աչքերուն մէջ այնպիսի տխուր արտայայտութիւն մը կար, որ քաջալերուած, ըսի.

– Ա՛լ ձեր տունէն չեմ հեռանար:

– Այո՛, մեծ մայրիկ, ա՛յ թող չերթան,– ըսաւ փոքրիկ Սուրենը՝ մեծ մօրը քով վազելով.– Ես վաղը դպրոց չեմ երթար ու պէպէքը կ'օրօրեմ:

Սուրենը ամէն առիթէն կ'օգտուէր դպրոց չերթալու համար:

– Անոր մասին վաղը կը խօսինք,– ըսաւ, Չառօն.– Ան աջ ու ձախ կը նայեր, անշուշտ զիս պառկեցնելու տեղ կը փնտռէր:

Սենեակին մէջ կար մեծ նստարան մը, ուր Չառօն կը պառկէր, եւ փոքրիկ մահճակալ մը՝ Սուրենին համար: Կար նաեւ երկու փայտէ աթոռ, մէկ սեղան եւ մէկ սնտուկ: Դագուստները պատէն կախուած էին:

Սենեակին մէկ անկիւնը դրուած էր քարիւղի մեքենան, որուն վրայ Չառօն կ'եփէր իր կերակուրները: Զովը փոքրիկ պահարան մը՝ ամաններուն համար: Ամէն ինչ խեղճ էր, բայց մաքուր եւ այնպէս հաճելի:

Վերջապէս յոգնած ձագուկս արթնցաւ: Ես շարժում մը ըրի իրեն մօտենալու եւ կաթով կերակրելու համար գինքը: Ուտելու ժամանակը շատոնց անցած էր, երբ նորէն հնչեց յանդիմանական ձայնը.

– Այսչա՞փ է քու գարգացումդ: Այդ վիճակիդ մէջ կաթ տալով տղան թունաւորե՞լ կ'ուզես, ի՞նչ է: Ես անոր ուտելիքը պատրաստեր եմ:

Իրաւ ալ կաթով ու բրինձի ալիւրով հիւս մըն էր եփած: Ան տղաս կամքին մէջ նստեցուց ու դգալ-դգալ կերցուց Սուրենի հիացական նայուածքներուն տակ:

– Դօրը շատ կը նմանի,– ըսաւ Չառօն՝ կարծես ինքնիրեն խօսելով:

Այս խօսքերը երջանկութեամբ լեցուցին սիրտս:

Գիշերը ես քնացայ Սուրենի անկողնոյն մէջ, զոր աթոռով մը եւ բարձով մը երկնցուցած էր Չառօն: Մեծ մայրն ու թոռնիկը քնացան մեր նստարանին վրայ:

Զունէ մը աւելի բան էր այդ գիշերուան իմ ինքնամոռաց վիճակս: Ոչ թմբուկի ձայն, ոչ պահապանի աղմուկ կամ հրդեհի աղաղակ արթնցուցին զիս:

Առաւօտուն կը լսեմ տղուս ուրախ կանչերը: Կը զգամ, որ անկէ գատ ուրիշ մարդ կայ սենեակին մէջ, բայց կիսաքուն վիճակիս մէջ ինձ կը թուի, որ Արան է: Կ'ուզեմ բան մը ըսել իրեն, բայց այնպէս քուն ունիմ, այնպէս յոգնած եմ, որ կրկին կը քնանամ:

Երբ, վերջապէս, աչքերս բացի, տղաս կ'ուտէր Չառօնին պատրաստած երկրորդ ճաշը ու կը ժպտէր իրեն, մանաւանդ, Սուրենին, որ ըսածին պէս դպրոց չէր գացած:

Երբ ամուսինս կը հարցնէր Սուրենին, թէ ինչո՞ւ չէր ուզէր դպրոց երթալ, ան կը պատասխանէր վստահ ձայնով. «Ես գօրավար պիտի ըլլամ, կարդալ ինչո՞ւ տորվիմ»:

– Շուտ ըրէ,– կ'ըսէ ինձ Չառօն,– սուրճով կաթո՞ւ պիտի պաղի:

Կը նստիմ սեղանին ամօքէ ու կը խմեմ անուշաբոյր կաթով սուրճը, ու կ'ըսեմ հաստատ ձայնով մը.

– Ա՛լ չեմ երթար ձեր տունէն:

Երէկ գիշերուընէ ի վեր միայն այս երկու խօսքերը ըսած էի: Չառօն անխօս՝ շերտ մը հաց կը դնէ քովս եւ ես առիթէն օգտուելով կը բռնեմ անոր աշխատանքէ կարծրացած ձեռքը ու

պինդ մը կը համբուրեմ: Ո՛վ զարմանք, ճակատիս վրայ կը զգամ մայրական տաք համբոյր մը, որ կը ջերմացնէ ամբողջ էութիւնս:

Թերեւս պիտի ուզէ զիս իր քովը պահել, կը մտածեմ, իր համբոյրէն քաջալերուած, եւ ցոյց տալու համար, որ իր վրայ բեռ պիտի չըլլամ, կը մօտենամ իրեն, որ արդէն նստած է ճերմակեղէններու կոյտի մը քով ու կը կարկտէ: Կ'ուզեմ կտոր մըն ալ ես վերցնել կարելու համար:

– Աւելի լաւ կ'ընես, եթէ հանգստանաս,– կ'ըսէ Չառօն.– բայց նախ կրակին վրայի կերակուրը խառնէ եւ ատ կտրուած սոխը մէջը դիր:

Երբ կերակուրով զբաղած եմ, կը լսեմ Չառօնի միօրինակ ձայնը.

– Այս առաւօտ կանուխ օր. Սիրանը տեսնելու գացի: Խնդրեցի որ քու մասիդ խօսի Աշոտին հետ եւ անոր կարծիքը հարցնէ, թէ ինչ պէտք է ընել:

– Աշոտը հոս՝ Պոլիս է,– կը հարցնեմ զարմացած.– չե՞ն տարած զինքը:

– Ո՛չ, պահուած է:

Պատասխանը այնպէս կտրուկ է, որ չեմ համարձակիր հարցեր տալու: Հասարակական գործերու մէջ եփուած կին է Չառօն. կ'ըսէ միայն ինչ որ չի կրնար չըսել:

Աչքերս կիսախուփ կը մտածեմ: Աշոտին Պոլիս ըլլալը միսթարութիւն մըն է ինձ համար: Ան տաքարիւն, քիչ մը շատ տաքարիւն անձնագոհ երիտասարդ մըն է: Պիտի ուզէի տեսնել զինք: Եթէ ան Պոլիս է, նոյնիսկ պահուած, անշուշտ բանտարկեալներուն հետ հաղորդակցութեան մէջ մտնելու հնարը գտած է:

Պէտք է տեսնեմ զինք, նոյնիսկ Չառօնին կամքին հակառակ: Մտքերես կ'արթննամ թուր ծախողի մը բարձր ձայնէն.

– Թո՛ւթ- թո՛ւթ, քաղցր թո՛ւթ...

Չառօն ընդոստ տեղէն կ'ելլէ: Շարժումները ջղային են: Թուր գնելու համար ալ այսպիսի իրարանցում, կը մտածեմ զարմացած:

– Թո՛ւթ, քաղցր թուրթ,– կը պոռայ ծախողն ալ տեսակ մը յամառութեամբ:

Վերջապէս, Չառօն սակառը ձեռքը փողոց կ'ելլէ թուր գնելու: Հետաքրքրութիւնս զիս ոտքի կը հանէ, եւ ճիշդ տանտիրուհիս աղջկան պէս վարագոյրին բացուածքէն կը նայիմ փողոց:

Չառօն ծռած կը նայի թուրթերուն եւ կը խօսի. կը խօսի, կարծես, չի հաւնիր, կը քննադատէ: Ծախողն ալ կը պատասխանէ բարկացած ձեւով մը թէ՛ «ասանկ ապրանք չհաւնիլ կ'ըլլա՞յ»:

Վերջապէս, ծախողը խոշոր թուրթ մը կը դնէ սակառին մէջ, կը կշռէ թուրթը, կը պարպէ սակառին մէջ ու կ'երթայ:

Ես կը նստիմ տեղս նախ քան Չառօնին ներս մտնելը: Կը նայիմ իրեն ուշադրութեամբ: Մտազբաղ ձեւ մը ունի: Ինքնիրեն կը խօսի եւ թուրթով սակառը, թանկագին ապրանքի մը պէս, չգիտէր ուր դնէ, որ ապահով ըլլայ:

Երեւի կը վախնայ, որ Սուրէնը շատ ուտէ, կը մտածեմ:

– Սուրէ՛ն,– կ'ըսէ Չառօն,– տղա՛ս, գնա՛ այս դրամով կէս քաշ մը բրինձ առ:

Սուրէն դուրս ելլելուն պէս, Չառօն վարագոյրը վար կ'առնէ, յետոյ սնտուկը կը քաշէ ու տախտակամածին մէկ մեծ քառակուսի մասը կը վերցնէ, ձեռքովը հողը կը հրէ կը բանայ ու թուրթին սակառին մէջէն ծրար մը առնելով կը դնէ փոսին մէջ, կը ծածկէ հողով ու կրկին տախտակամածին քառակուսին տեղը կը տեղաւորէ ու կը քաշէ սնտուկը իր նախկին տեղը:

– Ահա թէ ինչու չեկայ քեզի,– կ'ըսէ Չառօն ինձ դառնալով:– Այս փոքրիկ տնակը թէ՛ պահեստ է, թէ՛ հաղորդակցութեան կէտրոն: Տեսակ մը Տեղեկատու Բիւրօ:

Հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ նախորդ իրիկունը Չառօն ինձ տեսնելուն պէս առաջին հարցումը եղած էր. «Հետեւո՞ղ կայ»: Ինձ դիմաւորելու այդ խօսքերը, իմ այդ վիճակիս մէջ, վշտացուցեր էին զիս: Հիմա կը հասկնայի ու տեսակ մը ամօթ կը զգայի... Իմ անձնական վշտովս տարուած՝ ես բոլորովին մոռցեր էի գործը, որուն համար հազարաւորներ գոհուեր էին եւ որուն համար այն էակը, որ կը մարմնաւորէր իմ ամբողջ տիեզերքս, գացած էր թերեւս անվերադարձ:

Բանտարկուած եւ գաւառները տարուած մօտաւորապէս երեք հարիւր մտաւորականներէն եւ քաղաքական գործիչներէն զատ կային Պոլսոյ մէջ պահուածները: Ասոնք պատահմամբ իրենց տները չէին գտնուած «որսի» գիշերը եւ բնականաբար ա՛լ չէին վերադարձած՝ իմացած ըլլալով պատահածը:

Պահուածներու տեղափոխութեան գործը անձնուիրաբար ստանձնած էին խումբ մը երիտասարդ հայուհիներ: Ասոնք նախօրօք կը դիմէին իրենց վստահելի ծանօթներուն, մասնաւորապէս օտար, եւ հաւանութիւն ստանալէ վերջ կը տեղափոխէին «պահուած»-ը: Այս վերջինը մէկ շաբաթէն աւելի չէր կրնար նոյն տունը մնալ առանց վտանգուելու եւ վտանգելու:

Տեղափոխուող մտաւորականը կը հագուէր թրքուհիի մը պէս, եթէ իր կազմուածքը կը ներեր, կամ կը ծպտուէր ճերմակ մագերով ու մօրուքով կորաքամակ ծերունիի մը պէս ու կը հետեւէր զոյգ մը օրիորդներուն, որոնք շքեղօրէն հագուած ու ֆրանսերէն կամ անգլերէն բարձր խօսելով ու խնդալով կ'անցնէին փողոցներէն: Ասոնք ֆրանսական կամ ամերիկեան վարժարաններ ուսած՝ այդ լեզուները կը խօսէին իրենց մայրենի լեզուին պէս:

Այս օրիորդները չէին կասկածուէր փողոցներու ոստիկաններէն: Այս վերջինները նոյնիսկ տեսակ մը յարգանքով կը պատասխանէին անոնց հարցումներուն, երբ օրիորդները իրենց յանդգնութիւնը այնքան առաջ կը տանէին, որ բոլորովին անվտանգ երեւելու համար, կանգ կ'առնէին ու ոստիկաններու իբր թէ իրենց երթալիք փողոցին ուղղութիւնը կը հարցնէին:

Երբեմն փողոցներէն կ'անցնէին թէնիսի ճերմակ հագուստներով օրիորդներ՝ իրենց ձեռքին ճամբորդական սիրուն փոքրիկ պայուսակներով եւ թէնիսի ռաքթներով:

Տեսնողը պիտի ըսեր.- «Ահա հարուստ եւրոպացի օրիորդ մը, որ թէնիս խաղալու կ'երթայ ու պայուսակին մէջ դրած է ճերմակ կօշիկները եւ գնդակները»: Ոչ ոքի մտքէն պիտի անցնէր, որ այդ սիրուն աղջիկները, արհեստական կերպով խարտեաշ, իրենց կեանքը վտանգի դրած էին, բռնուելու պարագային, որովհետեւ իրենց սիրուն պայուսակներուն մէջ, ճերմակ կօշիկներուն եւ գնդակներուն տակ, պահուած էին ատրճանակներ, զորս պէտք է հասցնէին պահուած քաղաքական գործիչներուն: Ասոնք բոլորն ալ վճռած էին իրենց կեանքին վերջ դնել բռնուելու ժամանակ: Այս մահը նախընտրելի էր քան միւսը, որ իրենց կը սպասէր եւ որ պիտի գար բարոյական եւ ֆիզիքական անլուր տառապանքներէ վերջ:

Երիտասարդ հայուհիներու յանձնուած էր նաեւ ուրիշ գործ մը:

Արտասահմանէն գեղեցիկ կազմուած գրքեր կու գային օտար հիւանդանոցներու, հիւպատոսարաններու կամ բարձրագոյն վարժարաններու անունով: «Յանձնելի օր. Ֆլորային», կամ «օրիորդ Ալիսին» եւ կամ «օրիորդ Ռեթինային»: Այս անունին տակ պահուած հայ օրիորդը, որ պաշտօնեաներ կը ճանար այդ հաստատութիւններու մէջ, կ'երթար գիրքը կը ստանար:

Եկած գրքերը նոր լոյս տեսած վեպեր են անգլերէն կամ ֆրանսերէն, սիրային սովորական վեպեր, որ ստացող օրիորդը թելին տակ նետած՝ անհոգ կ'անցնէր փողոցներէն, կիսաձայն երգ մը մրմռալով:

Երկու պահուած մտաւորականներու կամ քաղաքական գործիչներու կեանքը դրուած էր այդ գրքին մէջ, որովհետեւ ամէն մէկ կողքի կազմին մէջ օտար անցագիր մը կար գետեղուած:

Օտար պետութեան պատկանող երկու անցագիր, երկու ազատ երիտասարդ կեանք:

Որոշուած էր նախ երիտասարդները, ուսանողները հեռացընել: Միւսները՝ տարիքոտները, փորձուածները որոշած էին ամէն գնով մնալ՝ ժողովուրդը աւելի վիատութեան չմատնելու եւ մանաւանդ դուրսի հետ կապ պահելու համար:

Խումբ մը ուրիշ օրիորդներ կապ կը պահէին պահուածներուն հետ, մէկէն միւսը լուրեր եւ հրահանգներ տանելով:

Տարիքոտ եւ հասարակ դասակարգի պատկանող կիներն ալ անգործ նստած չէին: Անոնք իրենց մառաններուն կամ պարտեզներուն հողին տակ կը պահէին իրենց բերուած ծրարները, քաղաքական խոշոր կուսակցութեան մը արխիւները, տարիներէ ի վեր կատարուած թղթակցութիւնները: Կը պահէին մինչեւ անգամ օտար հեղինակներու գրքերը, եթէ անոնք կը խօսէին ընկերային հարցերու կամ ազատատենչ գաղափարներու մասին:

Մէկ այդպիսի գրքի սեփականութիւն կրնար կեանքի մը կորստեան պատճառ դառնալ:

Պէտք է սողա՛լ, տափակնա՛լ, թաղել ամէն երագ, կոտրել ամէն թռիչք եւ ըլլալ հողին հաւասար: Ըլլալ կենդանի մեռեալ:

Ծրարներու տեղափոխութեան գործը դիւրացնելու համար, տարիքոտ այրեր սիրով կը կատարէին փողոցի վաճառորդի գործը: Անոնք պտուղ, բանջարեղէն եւայլն կը ծախէին եւ մէկ տեղէն միւսը ծրարներ կը տեղափոխէին կամ լուրեր կը տանէին, կը բերէին շատ դիւրութեամբ:

Արտասահմանէն եկած նամակները մեծ մասամբ կու գային օտար բարձրագոյն վարժարանի մէջ գիշերօթիկ աշակերտուհիի մը հասցեով: Այդ նամակները առհասարակ շատ անմեղ բովանդակութիւններ կ'ունենային:

Ազգական մըն էր, որ գիշերօթիկ աշակերտուհիին լուրեր կու տար ընտանիքին անդամներուն մասին: Կինը հիւանդացած էր, գաւակը քննութիւնները յաջող անցուցած էր: Բայց բաւական էր, որ այդ նամակը անցնէր պահուած Աշոտի ձեռքը, որ նամակը փոխուէր, կարծես հրաշքով, երկար նամակի մը, ուր լուրեր կը տրուէին առհասարակ քաղաքական կացութեան մասին, բանտարկուածներու համար կատարուած դիմումներու հետեւանքի մասին օտար պետութիւններու քով:

Արտասահմանէն եկող նամակներն ալ տեղ կը հասնէին շրջիկ օրհորդներու միջոցով:

Լուր տանող-բերողներու, «պահեստ» ունեցողներու մէջ ամենէն ուշագրաւ տեղը կը բռնէր Չառօ Մայրիկը: Անոր հա-

մար վախ բառը գոյութիւն չունէր, երբ խնդիրը կը վերաբերէր ազատագրական շարժման, որուն զոհ գացեր էր իր մէկ հատիկ գաւակը:

Չառօն ուրիշ կերպով ալ օգտակար էր: Ան թրքուհիներու քով կար կարելու կ'երթար եւ շատ լուրեր կ'իմանար, լուրեր, որոնց մասին թերթերը լուռ կը մնային:

Չառօյի վստահութիւն ներշնչող լուրջ դէմքը կը քակէր լեզուները: Այն թրքուհիները, որոնց քով կ'աշխատէր, զինք իբրեւ իրենցը կը նկատէին եւ ամէն բան կը պատմէին: «Բնաւ կեալուրի նման չես» կ'ըսէին: Շատ անգամ իրեն խորհուրդ կու տային, որ փոքրիկը թլփատել տայ, մահմետականացնէ, որպէսզի ապագայ ունենայ...

Այսպէս, Չառօ Մայրիկը առաջինը տեղեկացած էր Շապին Գարահիսարի հերոսական դիմադրութեան մասին:

Սապիհա հանըմը, թուրք սպայի մը կինը, որուն քով կարի գացած էր, ըսած էր իրեն, կարծես թաղային սովորական դէպքի մը մասին ըլլար խօսքը:

– Պէյիս գարմանըը դեռ չէ անցած: Չի հասկնար, թէ ինչպէ՛ս Գարահիսարի կեալուրները կրցած են քաղաքապետարանը եւ ուրիշ կարելոր դիրքեր գրաւել, մինչեւ որ կիները, երեխաներն ու ծերունիները բերդ բարձրանան ուտելիքի պաշարներով: Ամբողջ ժողովուրդին բերդ քաշուելէն վերջ միայն, զինուած տղամարդիկը իրենք ալ քաղաքը թողելով՝ գացած միացած են անոնց: Օրերով դիմադրած են, տղամարդիկը զէնքերով, կիներն ու երեխաները քարերով: Երբ պէյս եւ ուրիշ սպաներ իրենց զինուորներով վերջապէս յաջողած են բերդը գրաւել ու ներս մտնել, հոն գտած են միայն քանի մը ցնդած պառաւներ, երեխաներ եւ խելագար կիներ: Մնացեալը «լէշ»երու ցուցահանդէս:

Չառօն շրթները սեղմած կը լսէ, երբեմն-երբեմն գլխով հաւանութեան նշաններ ընելով:

– Գիտե՛ս, – կը շարունակէ թրքուհին, – քիչ է մնացեր, որ պէյս կեալուր կին մը բերէր իր հետը: Տասնվեց տասնեօթը տարեկան մէլէքի պէս գեղեցիկ աղջիկ է եղեր: Աղջիկը մօրը փակած բաժնուիլ չ'ուզեր եղեր. «Մայրիկ, մի՛ թողուր, – կ'ըսէ եղեր, – ձեռքովդ սպաննէ, բայց մի՛ թողուր զիս այս գագանին»: Երբ պէյս տեսեր է, որ ճար չկայ, մէկ հարուածով երկուքին ալ գոր-

ծը տեսեր է: Լաւ է ըրեր: Մուխս պիտի մարեր: Պէյս յիսունը անց, ես քառասուննոց, առ ջահել կինը եթէ բերեր, ա՛լ իմ երեսս նայող կ'ըլլա՞ր... Թէն ճարը գիտէի: Աղբարս, Ահմէտն ալ երիտասարդ կին մը բերաւ. «Աս երկրորդ կինս պիտի ըլլայ», ըսաւ: Վարդենիի պէս աղջիկ մըն էր, հազիւ տասնվեց տարեկան, մէկ նայէիր, հազար նայիլդ կու գար: Հարսս խորամանկութեամբ շարժեցաւ. սիրով ընդունեց: «Երկու հոգի պիտի ըլլանք մեր պէյը երջանկացնելու համար», ըսաւ: Բայց յաջորդ օրը կեաւոր աղջիկը ա՛լ չարթնցաւ: Է՛հ, այնպիսի բոյսեր կան, որ երկար քուն մը կը բերեն: Աղբարս իր նոր կնկան համը չտեսած, հարսս ամէն բան վերջացուց: Լա՛ւ ալ ըրաւ: Հարսս կ'ըսէ, թէ աղջիկը հասկցեր է, որ խմածը թունաւոր է, նորէն խմեր է: «Շնորհակալ եմ», ըսեր է. – «Այսպէս ե՛ւ քեզի համար լաւ պիտի ըլլայ եւ թէ ինձ համար», ու խմեր է, իր կրօնքին աղօթքը ընելէ վերջ: Աղբարս հասկցաւ թէ չհասկցաւ եղածը, չեմ գիտեր: «Աս մեռաւ» ըսեր է, «ուրիշ մը պիտի բերեմ»: Բայց ա՛լ Անատոլու չգնաց որ բերէ:

Չառօն, ցոյց չտալու համար իր յուզումը, կարին վրայ ծռած, սկսեր է արագ-արագ քանդել, իբր թէ սխալ կարած է եւ թէ ըրած սխալը զինք անելի կը հետաքրքրէ քան Սապիհա հանըմին պատմածները:

– Պէյիս ըսի որ, գաւառ կրկին երթալուն, եթէ տեսնէ գեղեցիկ պզտիկ մը, մանչ ըլլայ թէ աղջիկ, թո՛ղ հետը բերէ, միայն թէ շատ գեղեցիկ պէտք է ըլլայ, ըսի: Կեաւորի տղան գեղեցիկ կ'ըլլայ եւ խելացի: Թուրքի պէս կը մեծցնեմ: Պզտիկները շուտ կը մոռնան, շուտ ալ կը սորվին: Այն ժամանակ, ապլա, աղուոր հագուստներ պիտի կարես, հա՛քեզ տեսնեմ:

– Գլխուս վրայ, հանըմ, պուպրիկի պէս պիտի հագուեցնեմ ձեր պէյին բերելիք տղան կամ աղջիկը:

Յետոյ Սապիհա հանըմը ցոյց էր տուեր ամուսնոյն բերած գոհարեղենները Շապին Գարահիսարէն: Մատանիներ, ապարանջան, մանեակներ...

– Տե՛ս, ըսեր է, մէյ մը ձեռքդ ա՛ռ սա ոսկիէ շղթան, քաշ մը կայ, գուցէ եւ անելի, այնքա՛ն ծանր է: Բռնէ՛, բռնէ՛, մի՛ քաշուիր: Այդ ինչպէ՛ս կը դողաս. այսչափ գոհարեղէն մէկ անգամէն տեսնելու վարժուած չես, ապլա, ատկից է: Բռնէ՛, շօշափէ, կարօտդ

ա՛ռ: Կին ես վերջապէս, սիրտդ կ'ուզէ: Պէյս կ'ըսէ, թէ կեաւորը փոխուեցաւ, առաջուանը չէ: Այս բոլորին պատճառը «Ֆետա-յի»ներն են: Պէտք է անոնց արմատը չորցնել: Պէյս իրաւունք ունի. կեաւորը ո՞վ է, որ ազիզ թուրքին դէմը կենայ: Առաջ «տուր» կ'ըսէիր, հայը ունեցածը կու տար: Հիմա, մինչեւ չսատկեցնես, բան չես ստանար: Ահա՛ այս բոլոր ոսկեղենները արիւնով թաթախուած էին: Հոգիս ելաւ, մինչեւ լուացի, մաքրեցի...

– Հելպէթ տէ,– կ'ըսէ Չառօն,– թուրքին դէմ գացողին իր պատիժը պէտք է տալ... Ուրեմն, բերդ քաշուողները բոլորն ալ կոտորուե՞ր են, հէջ չէ՞ մնացեր...

– Անանկ ըլլար, ի՛նչ աղէկ: Երբ զինուած կեաւորներ տեսեր են, որ ալ շատ փամփուշտ չէ մնացեր՝ կրակելով, կրակելով ճեղքեր են պաշարման շղթան ու քաշուեր են լեռը, շատ մը սատկածներ թողելով... Բերդին մէջ մնացող կիներէն շատեր, գաւակներնին գրկած, ինքզինքնին ժայռերէն վար են նետեր: Մէկ մասն ալ թոյն է առեր... Պէյս կ'ըսէ թէ՛ տեսեր է, ինչպէս երկու կիներ կը կռուէին թոյնէն մեծ բաժին մը ունենալու համար: Կեանքը քաղցր է, երեւի շատեր մինչեւ վերջին վայրկեանը կը յուսային, որ մերիկները պիտի չկրնան բերդ մտնել:

Սապիհա հանըմը կը խնդայ: Ըլլալի՞ք բան է, որ թուրքը նահանջէ կեաւորի առաջ:

– Ինչ որ ամէնէն զարմանալին է,– կ'անելցնէ Սապիհա հանըմը,– ա՛տ՝ կեաւորներուն զինուիլն է: Պէյս կ'ըսէ թէ՛ թռչող թռչունը կը խուզարկենք, աս կեաւորները նորէն կը զինուին...

– Չեմ հասկնար,– կ'ըսէ Չառօն իր ամենամիամիտ ձեւը առնելով,– ինչո՞ւ համար այդ մարդիկը կիներով, երեխաներով, ծերունիներով բերդ կ'ելլեն կամ լեռ կը քաշուին, փոխանակ տուներուն մէջ հանգիստ ապրելու... Խելագարնե՞ր են, ի՞նչ են... Իրաւ որ խելքս չի հասնիր...

Թրքուիին շփոթեր է: Չէր կրնար ըսել անշուշտ, որ Շապին Գարահիսարի ժողովուրդը սիրով ձգած է տունն ու տեղը, իր արտն ու այգին եւ լեռներն ելած հաճոյքի համար: Չէր կրնար խոստովանիլ, որ եթէ այդպէս ըրած է, անոր համար է, որ կանոավարութիւնը զիրենք տեղահանել ու անապատները քշել կ'ուզէր, ճամբան կոտորելու համար, ինչպէս եղած էին միւս գաւառները:

Սապիհա հանըմը, պատասխանի փոխարեն ուսերը թօթ-
ւեր էր մէկու մը պէս, որ ինքն ալ չի հասկնար, թէ ինչպէս այդ-
պիսի յիմար բաներ ընողներ կան աշխարհի վրայ ու խօսակ-
ցութեան սիւթը փոխեր էր:

Չառոյի իմացած լուրը Շապին Գարահիսարի մասին, յետոյ
հաստատուեցաւ ուրիշ աղբիւրներէ ալ ու շուկով տարածուե-
ցաւ Պոլսոյ հայերու մէջ, հայարտութեամբ բայց եւ թախիծով
լեցնելով անոնց հոգիները:

Չառօն ուրիշ թրքուհիի մը տունը, ուր նմանապէս կարի
կ'երթար երկար տարիներէ ի վեր, երեք-չորս տարեկան փոք-
րիկ աղջնակ մը տեսեր էր: Այդ թրքուհին, Այիշէ հանըմը, ան-
զաւակ էր: Ամուսինը, գոհարեղէններու շարքին, Թամարգայէն
բերած էր այդ սիրուն փոքրիկ հայուհին, ծնողները կոտորել
տալէ վերջ: Փոքրիկին անունը Ֆաթիմէ դրած էին: Ան տան մէջ
շարժող պուրիկի մը պէս սիրուած էր: Սեւ առատ խոպոպնե-
րը կ'եզերէին գունատ, բայց իրապէս քանդակի արժանի դէմք
մը: Երբ որ ան վար նայէր, թարթիչները այնքա՛ն երկար եւ
խիտ կ'երեւէին, որ մարդ կը կարծէր, թէ ան պիտի չկրնայ եր-
բեք իր աչքերը բանալ անոնց ծանրութեան տակ, իսկ երբ ան
աչքերը վեր բարձրացներ ու քեզի նայէր, նայուածքը գուրգու-
րանքի մը պէս մեղմ էր ու հաճելի:

Առաջին օրերը փոքրիկը շատ էր լացեր՝ «մայրի՛կ, մայրի՛կ»
պոռալով: Մերժեր էր ուտել ու գիշերները քունէն արթննալով
փորձեր էր փախչիլ: Սակայն, քիչ-քիչ մանկական յիշողութեա-
նը մէջ անցեալը աղօտեր էր ու փոքրիկը հետզհետէ ընտելա-
ցեր էր իր նոր միջավայրին: Սկսեր էր խաղալ իրեն տրուած
պէս-պէս խաղալիքներով, վազվզել տանը մէջ, ուր բոլորն ալ
իրեն հետ լաւ կը վարուէին: Սկսեր էր թուրքերէն հասկնալ ու
թոթովելով խօսիլ:

Փոքրիկը Չառոյին շատ կապուած էր, որովհետեւ Չառօն մի-
նակ մնալուն պէս, անոր հետ հայերէն կը խօսէր:

– Անունդ ի՞նչ է, – հարցուցեր էր, երբ առաջին անգամ միսակ
մնացեր էին:

– Ազնիւ, – ըսեր էր փոքրիկը ու մտածկոտ՝ աչքերը յառեր էր
կէտի մը, մէկու մը պէս, որ փախչող պատկերի մը ետեւէն կը
վազէ:

Կարծես այդ լեզուն իր առջեւ կը բանար տխուր, բայց եւ սի-
րելի յիշատակներ: Յետոյ երկար նայեր էր Չառոյին ու իրեն
մօտենալով հարցուցեր էր.

– Դուն իմ մեծ մայրիկս ես: Ըսէ՛, մեծ մայրի՞կս ես դուն: Ո՞ր
է Մուկուչը:

– Մուկուչը ո՞վ է, ձագո՛ւկս:

– Մուկուչը իմ աղբարիկս է: Մուկուչը մայրիկիս հետ հօ՛ւփ
ինկաւ մե՛ծ քարին վրայ: Խոշոր, շա՛տ խոշոր դանակ մը կար:
Մամաս գիս գրկեց, պոռաց, պոռաց, բայց մարդը գիս նորէն
քաշեց, տարաւ: Ես մարդուն մազերը քաշեցի, որ ձգէ գիս, քա-
շե՛ցի, քաշե՛ցի...

– Մամայիդ անունը ի՞նչ էր, աղջիկս, – հարցուցեր է Չառօն:

Փոքրիկը լռեր էր, չէր գիտեր, կամ հարցումը իրեն զարմա-
նալի կը թուէր: Մամային անունը՝ մամա է, ալ ուրիշ ի՞նչ...

– Հապա մեծ մայրիկդ մամայիդ ի՞նչ կ'ըսեր, երբ կանչէր:
Լա՛ւ մտածէ:

– Մեծ մայրիկս կ'ըսեր. «Ա՛ղջի, ա՛ղջի»... «Ա՛ղջի, պգտիկին
ծիծ տուր, կու լայ նէ»:

Այսպէս հատ ու կտոր խօսակցութիւններ մնացեր էին
Ազնիւի մանկական յիշողութեան մէջ:

Ազնիւին տուած այս սակաւաթիւ տեղեկութիւններն ալ թան-
կագին էին Չառոյի համար, որովհետեւ ան մտադրած էր Ազնիւը
հեռացնել այդ տունէն, պահել ապահով ընտանիքի մը քով, մին-
չեւ որ յառաջիկային, խաղաղ օրերուն, թերթերու մէջ յայտարա-
րութիւններ տալով կարենար գտնել ընտանիքի անդամներէն
ոեւէ մէկը: Չառօն յոյս ուներ, որ փոքրիկը քիչ-քիչ ուրիշ անուն-
ներ ալ պիտի յիշէր: Հակառակ պարագային, եղած տեղեկու-
թիւններն ալ կը բաւէին: Իր անունը, եղբօր անունը, ուր տեղա-
ցի ըլլալը որոշ էր, որպէսզի Թամարայի պէս փոքրիկ քաղաքի
մը ազատած բնակիչները իմանային թէ Ազնիւ ո՛ր ընտանիքի կը
պատկանէր, թէ այդ ընտանիքէն ազատածներ կային:

Փոքրիկին մայրը հաւանաբար սպաննուած էր, քանի որ խո-
շոր դանակի մը խօսքը կ'ըներ Ազնիւը, բայց եղբայրը՝ Մուկու-
չը, թերեւս ազատած ըլլար: Եղած էին բազմաթիւ դէպքեր, երբ
սպաննուած մօրը գրկին մէջ փոքրիկները կամ թեթեւ վիրա-
ւորուած եւ կամ ողջ մնացած էին, յետոյ մանուկ հոգիներու հա-

մար գարմանալի զգուշութեամբ դուրս սողացեր էին մահուան գրկէն, իրենց մօր գրկէն եւ, միակ թափառելէ, ամէն ժայռի տակ կամ փոսի մէջ պահուելէ վերջ, յաջողեր էին միանալ հրաշքով ազատած փախստական խումբերու, որոնք ցերեկները լեռներու եւ քարայրներու մէջ պահուելով, գիշերները քալելով, իբրեւ սնունդ խոտ կամ վայրի պտուղներ ուտելով, յաջողեր էին անցնիլ սահմանը, այլակերպուած, անմարդկային դէմքով ու կերպարանքով, բայց ազատ...

Փոքրիկ Ազնիւը փախցնելը դիւրին գործ չէր Պոլսոյ պէս տեղ մը: Ան միշտ Այիշէ հանրմի կամ սպասուհիին ընկերակցութեամբ դուրս կ'ելլէր, իսկ ուղղակի տունէն հեռացնելը անհնար էր առանց վտանգելու Չառօն եւ Չառոյին հետ իր տնակը, պահուած իրերն ու թանկագին փաստաթուղթերը: Պիտի վտանգուէր մանաւանդ այնքան դժուարութեամբ կազմակերպուած հաղորդակցութեան եւ պահեստի գործը:

Մինչեւ փախուստը յաջողցնելը, Չառօն կ'աշխատէր, հնար եղածին չափ, Ազնիւին մէջ վառ պահել իր ընտանիքին մէկ քանի անդամներուն մասին իր ունեցած յուշերը՝ այդ մասին խօսելով ամէն անգամ, երբ միակ մտալու առիթ ներկայանար: Առիթները բազմաթիւ էին: Երբ Չառոյին կարի գացած օրերը Այիշէ հանրմը հիւր ունենար, փոքրիկը կը մնար Չառոյին հետ, որ կատարեալ վստահութիւն կը վայելէր տան մէջ: Միակ կը մնային նաեւ, երբ Այիշէ հանրմ կարուած հագուստին համար անհրաժեշտ որեւէ գնումի համար շուկայ երթար:

Այիշէ հանրմը շատ հպարտ էր գեղեցիկ Ֆաթիմէով: Բոլոր իրեն այցելող հիւրերուն ցոյց կու տար զայն պուարիկի պէս զարդարուած:

– Անունդ ի՞նչ է,– կը հարցներ թուրքերէն Այիշէ հանրմը Ազնիւին, հիւրերու ներկայութեան:

– Ֆաթիմէ,– կը պատասխանէր Ազնիւ չարածծի ժպիտով, մէկու մը պէս, որ խաղ մը կը խաղայ:

Ան քանի մը անգամ խիստ յանդիմանուէր էր, երբ պատասխանէր էր, որ իր անունը Ազնիւ է:

– Թո՛ւրք ես թէ կեաւոր,– կը հարցներ նորէն Այիշէ հանրմ:

– Թուրք եմ,– կ'ըսէր Ազնիւ, ինքնապաշտպանութեան բնագոյնով, նախօրօք իրեն տրուած դասին համաձայն:

Ու Այիշէ հանրմը հպարտ էր ու երջանիկ:

Բայց երբ Չառօն կը հարցներ.

– Անունդ ի՞նչ է, աղջիկս:

– Ազնի՛ւ,– կ'ըսէր, աղջիկը հաստատ ձայնով:

– Դուն թուրք ես, Ազնի՛ւ,– կը հարցներ Չառօն նորէն:

– Ո՛չ,– կ'ըսէր Ազնիւ աւելի վճռական ու իր գեղեցիկ խոշոր աչքերը կը յառէր Չառոյին:

– Դապա ի՞նչ ես:

Փոքրիկը կը շփոթէր: Ազգութեան մասին դեռ գաղափար չուներ կամ գիտցածը արդէն մոռցած էր: Կը լռէր, որովհետեւ բնագոյնը կը զգար, որ Չառոյին՝ իր «մեծ մայրիկին» թուրք եմ պէտք չէր որ ըսէր:

– Դապա ի՞նչ ես,– կը կրկնէր Չառօն:

– Ես մամայիս պէս եմ,– կը պատասխանէր վերջապէս Ազնիւ.– Մամայիս պէս, Մուկուչին պէս, Արաքսին պէս,– եւ ըսածներուն վախէն կու գար կը պահուրտէր Չառոյին զոգնոցին տակ:

– Արաքսի՞ն պէս ալ,– ըսէր էր Չառօն՝ ուրախ, որ նոր անուն մըն ալ կը լսէ.– Արաքսը ո՞վ է, սիրելիս:

– Արաքսը պըտըտիկ-պըտըտիկ աղջիկ մըն է, օրօրոցին մէջ կը քնանայ ու մամայէս ծիծ կ'ուտէ: Միշտ կը քնանայ ու փիսփիս անկողինը կը թրջէ:

– Ազնիւ, աչքերը յառած կէտի մը, կ'երագէ ու կը ժպտի: Իր փոքրիկ քոյրը որոշ կերպով աչքին առջեւ կը պատկերանայ: Կը յիշէ, որ շատ անգամ ինք ալ կ'ուզէր օրօրոցին մէջ պառկիլ, որպէսզի մայրիկը զինք ալ այսպէս գրկէր ու օրօրէր...

Չառօն երբեք փոքրիկին չէր տորվեցներ ըսել, որ հայ է՝ վախնալով, որ օր մը անզգուշութեամբ բերնէն կը փախցնէ ու կը պատժուի:

Օր մը Ազնիւ մօտեցեր էր Չառոյին ու ըսէր էր կամաց ձայնով.

– Ա՛յ տուն երթանք, մեծ մայրիկ:

– Տո՛ւն, աս տունը քուկդ չէ՞ հապա:

– Զէ՛, ես մամայիս տունը կ'ուզեմ երթալ: Ասոնք Մուկուչին պիտի տամ,– խաղալիքները ցոյց տալով.– ասոնք Արաքսին, ասոնք ալ ինծի... Ա՛յ տուն երթանք:

Չառօն պիտի գրկեր էր փոքրիկը ու ըսեր էր.

– Օր մը պիտի երթանք, օր մը... անպատճառ:

– Շո՛ւտ, շո՛ւտ երթանք մեծ մայրիկ: Մամաս կու լայ քարին վրայ: Մեծ դանակը առնենք ու փիս մարդուն փորը ճեղքենք:

Ազնիւ մոռցեր էր արդէն, որ փիս մարդը հիմա իր «հայրիկ»ը եղած էր, որուն անունն ու կրօնքը պիտի ունենար, եթէ հոն մնար: Փիս մարդը, որ զինք կը գրկեր, կը համբուրէր, իբր թէ իրապէս իր հայրը եղած ըլլար եւ, ո՛վ գիտէ, թերեւս օր մը պիտի ուզէր իրեն համար ըլլալ նաեւ այլ բան, երբ աղջկան հասուննալէն առաջ իսկ, սուտ հայրը պղծած ըլլար զայն՝ իր կրքերուն զոհ ընելով:

Չառօն գիտէր այդ: Իր մտահոգութիւններէն մին Ազնիւը եւ անոր պէս ուրիշները, որոնց թիւը հետզհետէ կ'աւելնար Պոլսոյ մէջ, ազատելն էր, յարմար առիթով եւ միաժամանակ, որպէսզի հայ փոքրիկներ պահողները զգուշութիւններ ձեռք չառնէին:

IX

Չառոյէն զատ կար նաեւ ուրիշ կին մը, որ թրքական ակելի լայն շրջանակներու հետ շփման մէջ էր իր բաւական տարօրինակ պաշտօնին հետեւանքով:

Ան արեւելեան բաղնիքներու մէջ «թելլաք» էր, այսինքն՝ բաղնիք եկող կիները լուալու պաշտօն ունէր որոշ գումարի մը փոխարէն:

Անունը Յոփսիսիմէ էր, բայց Յոռոփ կ'ըսէին: Ան կարծիկ, կարմրուկ ու կլորիկ կին մըն էր, որ առաջին նայուածքով մարդու խնդուքը կը բերէր իր խոշոր կարմիր այտերով, փոքրիկ, փայլող չարածճի աչքերով ու մտտ շրթներուն վրայ յարատեւ թառած բարի ժպիտով: Սակայն, այդ բոլորի տակ անսպառ կամքի ուժ մը եւ հազուագիւտ բարի սիրտ մը կար պահուած:

Յոռոփ այս ծանր եւ հակառողջական գործը ստանձնած էր միմիայն բաղնիք եկող թրքուհիներու խօսակցութիւնները լսելու եւ անցած-դարձածն ու մանաւանդ գալիքը իմանալու համար:

Բաղնիքի մէջ լուացողի պաշտօն ունենալով՝ ան ոչ միայն թրքուհիներու խօսակցութիւնները կը լսէր գաւառներու մէջ կատարուածներու եւ կատարուելիքներու մասին, այլ եւ կրնար մտերմանալ այդ կանանց հետ ու անոնց տները մտնել-ելլել:

Արեւելքի մէջ սովորութիւն կայ ամէն ցաւի համար արիւն քաշել տալ, մասնաւորապէս կոնակէն: Յօդացաւի, գլխացաւի, մտելու դեմ «հաճամաթ» ընել կու տան: Այս գործողութիւնը գլխաւորաբար թելլաքները կ'ընեն բաղնիքի մէջ: Սակայն, շատ անգամ պէտք կը զգացուի նաեւ դարմանումը կրկնել տալու: Այդ պարագային թելլաքը կ'երթայ խնամուող կնոջ տունը:

Արիւն առնելու գործողութիւնը կը կատարուի շատ նախնական ձեւով: Գլխաւոր գործիքը կովի կտտոջ մըն է, որուն սուր

ծայրեն ծակ մը բացուած է: Թելլաքը շատ բարակ գործիքով մը, շատ անգամ ածելիով, քանի մը խազ կը քաշէ հիւանդին կռակին վրայ: Երբ քիչ մը արիւն երեւի, գծուած խազերուն վրայ կը դնէ կոտորչը ու բերանը վերի բացուածքին դնելով կը սկսի մէջի օդը դուրս քաշել, մինչեւ որ բաւական քանակութեամբ արիւն սկսի կաթիլ կռնակէն վար: Հիւանդը կը կարծէ թեթեւութիւն զգալ ու կը խնդրէ թելլաքէն իրենց տունը երթալ անգամ մը եւս արիւն քաշելու համար:

Այդ դարմանումներու ընթացքին որոշ մտերմութիւն կը ստեղծուի անշուշտ եւ կը խօսուի ամէն նիւթի մասին, մանաւանդ Հռոմփին հետ, որ թրքուհիի տեղ կ'անցներ բաղնիքի շրջանակին մէջ:

Հռոմփ երբեմն կը հանդիպէր թրքուհիներու, որոնք զայրոյթով կը խօսէին հայերու դէմ կատարուած անլուր բարբարոսութիւններու մասին: Անոնք կ'ըսէին, որ իրենց ամուսիններն ալ վրդովուած են եղածներէն եւ ուրախ էին, որ գոնէ կարգ մը քաղաքներու կուսակալները, որոնց կարգին էնկիւրիի, Եոզղատի, Երզնկայի, Քասթմունիի կուսակալները կամ կառավարիչները մերժած էին հնազանդիլ տրուած հրամանին: Ասոնք հրաժարեցուած էին իրենց պաշտօնէն եւ փոխարինուած մուլեռանդ ու հայատեաց պաշտօնեաներով:

Թուրք կառավարութենէն տրուած պաշտօնական հրամանը, ուղղուած բոլոր կուսակալներուն, տեղակալներուն ու կառավարիչներուն հետեւեալն էր.—

«Առանց խնայելու ու առանց ողորմելու, մէկ ամսականէն մինչեւ իննսուն տարեկանը սպաննել, բայց ուշադիր ըլլալ, որ այս սպանող քաղաքներու մէջ կամ ժողովուրդի ներկայութեան չկատարուի»:

Այս պաշտօնական հրամանագիրը, որ յառաջիկային երեւցաւ հայկական ողբերգութիւններու նուիրուած կարգ մը ուսումնասիրութիւններու մէջ, վաւերական է:

Ոչ միայն կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներէն ոմանք կը բողոքէին ու կը մերժէին իրագործել հրամանը, այլ եւ տեղ-տեղ ժողովուրդն ալ իր նողկանքը կը յայտնէր ջարդարարներուն:

Դժբախտաբար, շատ փոքր թիւ մը կը կազմէին բողոքողնե-

որ: Կառավարութիւնը յաջողած էր մահմետական հոգեւոր պետերու միջոցով թուրք ժողովուրդին կրօնական մուլեռանդութիւնը գրգռել քրիստոնէայ հայերու դէմ, որոնց ջարդելը ոչ միայն մեղք չէ, ոճիր չէ, այլ եւ սպաննողը իր կատարած սպանութիւններու թիւին համեմատութեամբ շնորհներու կ'արժանանայ իր մահէն վերջ, անդիի աշխարհին մէջ:

Երզրումի մէջ հոճան մզկիթին մէջ քարոզած էր, որ «կեաւուր սպաննելը մեղք չէ, նոյնիսկ քաւութիւն է մեղքի, բաւական է միայն, որ ամէն մի սպաննուած հայու համար ծառ մը տնկուի»:

Երզրումի մէջ հիմա կայ խիտ անտառ մը, ուր ամէն մէկ ծառ մարդու կեանք մը կը ներկայացնէ...

Պոլսոյ թուրք շրջանակներէն ոմանց զայրոյթը, գործուած վայրագութիւններու դէմ սփոփարար էր որոշ չափով, սակայն, իր դրական օգուտը չունէր, որովհետեւ բողոքողները գործնական որեւէ արարքի չէին դիմեր, անշուշտ պայմաններուն բերումով:

Ծանր էր Հռոմփի աշխատանքը բաղնիքին մէջ: Այդ պաշտօնը կատարելու համար երկաթե առողջութիւն պետք էր ունենալ: Ծանչնալու է արեւելեան բաղնիքը, գաղափար կազմելու համար, թէ ի՞նչ է հոն յաճախորդ լուացողի գործ ունենալը:

Լուացողները, այսինքն՝ թելլաքները, բոլորովին մերկ (միայն քառակուսի լաթով մը կը ծածկեն իրենց մարմնոյն որոշ մասերը) ամբողջ օրը կ'անցընեն բաղնիքի խեղդող օդին մէջ: Լուացելու մարմարէ սրահին չորս պատերուն մէջ ամրացուած բազմաթիւ ծորակներէն դէպի իրենց առջեւը գտնուող աւազանիկները վազող տաք ջուրէն, կանանց թաց մարմիններէն ու մազերէն այնպիսի շոգի մը կը բարձրանայ, որ շատ անգամ մէկ ծորակէն միւսը տեսնել հնարաւոր չէ: Լուացուելու յատկացուած մարմարէ բաժանմունքները օդ չեն առնէր որեւէ տեղէ: Լոյսը կու գայ բարձր գմբէթածէ առաստաղէն, ուր կլոր կամ հաւկրթածէ փոքրիկ ապակիներ անցուած են: Ստնող-ելլողի համար բացուած դուռէն միայն քիչ մը օդ կու գայ ներս: Տիրող գոլորշին առաստաղին վրայ պաղելով կաթիլ-կաթիլ կ'իյնայ լուացող կանանց վրայ՝ թեթեւ սարսուռ մը առաջացնելով:

Բոլոր ծորակներուն առջեւ գտնուող աւազանիկներու շուրջ

ծունկի վրայ կամ ծալապատիկ շարուած են լուացուող կիները՝ ձեռքերնին ձերմակ ու դեղին մետաղէ փայլուն թասեր, ծորակէն կամ աւազանիկէն ջուր առնելու եւ լուացուելու համար: Շատ անգամ թասերը իրար կը զարնուին, որովհետեւ ձեռքերը միեւնոյն ժամանակ կ'երկնան տաք կամ պաղ ջուր առնելու համար: Թասերու հպումէն առաջ եկած աղմուկը գմբէթին զարնուելով, հազար արծազանգով կը կրկնուի ու կու գայ միանալ կանանց խօսակցութիւններուն կամ կռիւի աղմուկներուն:

Կռիւը անպակաս է: Ծորակին շուրջ խոնուած կիներէն ամէն մէկը կ'ուզէ նախ ինքը լեցնել ձեռքի թասը եւ ահա կը սկսի թասով մենամարտը... հայիոյանքներով, սուր բացազանչութիւններով համեմուած:

Երբեմն միջադէպը չի վերջանար միայն թասի մենամարտով: Յանկարծ թասերը վար կը նետուին ու մերկ կիները ոտքի կանգնած՝ աչքերնին կատաղի կայծերով լեցուն, կը յարձակին իրարու վրայ, հարուածելով իրար կամ իրարու մազ քաշելով, մինչեւ որ բաղնիքի մէջ ոստիկանի դեր կատարող թելլաքները գան միջամտելու: Անոնք կը գատեն կռուողները քանի մը յանդիմանական խօսքերով կամ գովեստներով, ըստ կանանց դիրքին կամ տարիքին, ու վերջ կը դնեն կռիւին:

Եթէ կռուող կիներէն մին քրիստոնէայ է, մոռցած է պահ մը այդ պարագան եւ համարձակած է պնդել ջուր առնելու համար, երբեմն այնքան կը ծեծուի (այդ կախում ունի այդ օրը բաղնիք եկողներու տրամադրութենէն եւ մտայնութենէն), որ թելլաքները կը միջամտեն, ծեծուած կիներ կը հեռացնեն լուացուելու սրահէն, կ'օգնեն որ հազնի ու ճամբու կը դնեն... առանց լուացուած ըլլալու:

Արեւելեան բաղնիքները, սակայն, նկատի առնելով առողջապահութեան կամ կենցաղագիտութեան բացակայութիւնը, ունին իրենց հետաքրքրական, մինչեւ անգամ գրաւիչ կողմերը դիտել սիրող մէկու մը համար: Հոն չեն պակսիր գեղեցիկ պատկերներ:

Արեւելքցի կիներ բաղնիք կ'երթայ ամբողջ օրուան համար, կերուխումը հետը բերած: Ան ուշ-ուշ բաղնիք կ'երթայ, բայց գացած պարագային ամբողջ օրը կը լուացուի, այսպիսով կը

կարծէ մաքրուիլ այնքան, որ կարենայ առնուազն ամիս մը ա՛լ լուացուելու պէտք չունենալ...

Արդէն այս ձեւով բաղնիք եկող եւ լուացուող կին մը, եթէ յաճախ գայ, կրնար իր կեանքը կրճատել ապահովաբար: Օդի պակասէն, տաքէն մարողները ուշադրութիւն իսկ չեն գրաւեր, այնքան յաճախադէպ են... լուացուելու արարողութեան բնական մէկ մասը կը կազմեն: Այդ է պատճառը թերեւս, որ լուացուելէ վերջ կիները զիրար կը շնորհաւորեն, լուրջ գործ մը կատարած եւ կամ ծանր վտանգէ մը ազատուածի պէս:

Բաղնիք կու գան ամբողջ ընտանիքի մը կին անդամները, երբեմն դրացիներով, ազգականներով, կարծես հանդիսաւոր արարողութեան մը ներկայ գտնուելու համար:

Եթէ աղջիկտեսի բաղնիք է, միայն մօտիկ ազգականներ կը հրաւիրուին աղջիկը իր ամբողջութեան մէջ տեսնելու, գաղափար կազմելու եւ իրենց կարծիքը յայտնելու համար: Ասիկա տեսակ մը քննութիւն է, որ հարսնցուն անտրտունջ կը տանի: Փեսային ազգականները մօտէն կը քննեն աղջկան մարմնին բոլոր գծերը, մինչեւ որ սկսին գովեստները կամ տիրէ պերճախօս լռութիւն մը...

Իսկ եթէ նորահարսի մը առաջին բաղնիքն է, կամ հարսը լուայու արարողութիւն է ամուսնութեան նախօրեակին, հարս ու փեսայի ազգականները, մօտիկ բարեկամներ ու դրացիներ, մասնաւոր հրաւեր կը ստանան բաղնիք երթալու համար: Երբեմն այդ նպատակով ամբողջ բաղնիքը կամ միայն մէկ բաժանմունքը կը վարձուի, վարձողներու աստիճանին կամ քսակին համեմատ:

Հրաւիրեալ կիներու համար մասնաւոր ճաշ կը բերուի կէսօրին եւ փառաւոր սեղան մը կը սարքուի բաղնիքի փորին վրայ (մարմարիոն լայն շերտ մը, որ քիչ մը աւելի բարձր է քան թրջուած քարէ յատակը եւ որ կը գտնուի գրեթէ բոլոր արեւելեան բաղնիքներու մէջ): Բոլորը ծալապատիկ կը նստին մարմարիոնի վրայ փռուած սփռոցին քով եւ անյազաբար կ'ուտեն զանազան համադամ կերակուրներ, որոնց կարգին անխուսափելի փիլաւն ու բաքլաւան:

Հարսնետրոնները եւ առհասարակ բոլոր բաղնիք եկող կիները կու գան իրենց կապոցներով, որոնք պատկառելի քանակ եւ

ծաւալ ունին: Ճերմակեղէններէ, ծանր ու հաստ սրբիչներէ զատ, որոնք շատ անգամ ոսկեթելով նաշխուած են, զանազան թասերէ, ուտելիք-խմելիքէ զատ, անհրաժեշտ է գորգը, զոր կը փռեն հանուելու եւ հագնելու յատկացուած մասնաւոր տեղերու վրայ, բաղնիքի նախասրահին մէջ:

Ունեւորներուն ծրարները սպասուհիները կը բերեն, գորգը կը փռեն, ծրարները կը տեղաւորեն, այնպէս որ հանրմները քիչ վերջ օրօրալով-շորորալով երբ որ գան, ամէն ինչ պատրաստ գտնեն:

Հանուելէ վերջ, աղտոտ լաթերը, որոնց մօտենալը շատ յանձնարարելի չէ, կը դրուին մասնաւոր կապոցներու մէջ եւ կիները կը փաթթուին քառանկիւնի, գոյնզգոյն մետաքսէ լաթերու մէջ: Այս մետաքսեայ քառանկիւնի լաթերը, որոնց «փէշտիմալ» անունը կու տան, կը ծածկեն կանանց կուրծքը, փորը եւ հակափորը եւ երկու երիզներով կը կապուին մէկ ուսին վրայ: Փէշտիմալին մէջ փաթթուելէ վերջ, կիները ոտքերնին կ'անցընեն սատաքներով զարդարուած փայտէ բարձր սանտալներ (նալըն) եւ կը մտնեն լուացուելու յատկացուած բաժանմունքները:

Եթէ լուացուող կինը երիտասարդ է եւ գեղեցիկ, ան շատ գրաւիչ է այսպէս փէշտիմալին մէջ փաթթուած, մազերը արծակ ու ոտքերը նաշխուն նալըններու մէջ: Խումբ մը անոնցմէ, քով-քովի, լուացուելու սրահը մտած ժամանակ հաճելի է տեսնել եւ կրնայ լաւ նկարչի մը վրձինին տակ գլուխ գործոց նկար մը տալ:

Անգամ մը, որ կինը ներս մտնէ լուացուելու բաժանմունքը, նախ քան ծորակի մը առջեւ նստիլը, կը հանէ փէշտիմալը, կը ծալէ ու կը դնէ չոր տեղ մը: Սա լաթին ան պէտք պիտի ունենայ օրուան ընթացքին դուրսի սրահը ելլելու քիչ մը օդ առնելու կամ զովացուցիչ մը խմելու համար: Յետոյ ծալապատիկ կը նստի ծորակին առջեւ գտնուած ազատ տեղը ու կը սկսի լուացուիլ մինակը, կամ կը դիմէ թելլաքի մը օգնութեան:

Թելլաքը պատրաստի գովեստներ ունի բոլորին համար: Մէկը կը գովէ քանդակի արժանի իր մարմարէ կուրծքին համար, որուն վրայի ջուրի կաթիլները ադամանդներու պէս լոյս կու տան ու կը դողդղան: Միւսին առատ սեւ մազերը, որ խենթեց-

նող գեղեցկութիւններ կը ծածկեն ազահաբար. մէկ ուրիշին ալիք-ալիք միսերը (գէր կիները շատ յարգի են Արեւելքի մէջ), որոնց մէջ լողալ ուզէին մէկէ աւելի մարդիկ, բայց որոնց վայելողը մէկ է: Երջանիկ ամուսինը:

Հարսի մը առաջին անգամ բաղնիք գալու պարագային բոլոր հրաւիրեալները գովեստ մը կ'ըսեն կազմին, հասակին, փորին, աչքերուն, կուրծքին մասին.—

«Երանի այն մարդուն, որ ձեռք է տուեր այս գոհարին»:

«Աչքեր չեն, լոյսի ջահեր են»:

«Հասակը մատաղ տուսկի մը պէս ճկուն է»:

Գովեստներ նաեւ հարսին մօրը, որուն արգանդը կրցեր է կերտել այս հրաշալիքը:

Այս բոլորը բարձր ձայնով ըսուածներն են: Փսփսուքով, գաղտնի, ականջէ-ականջ խօսուածները բոլորովին այլ իմաստ ունին:

«Մէկ սրունքներուն նայէ, կարծես տաշուած փայտէ երկու կտոր ըլլան»:

«Փոր ըսուած բանը չունի, մայրը իրմէ հազար անգամ աւելի գեղեցիկ է»:

«Վա՛յ ջահիլ փեսային. փայտէ կտոր մը գրկէր աւելի լաւ կ'ըլլար»...

«Դրամ ունի: Դրամը ամէն տգեղութիւն կը ծածկէ», կը փսփսայ հրաւիրեալ կին մը, առանց դադրելու, սակայն, հիացող նայուածքով մը հարսը կը դիտէ:

Դիտողութիւնները, փսփսուքները կը տեսն մինչեւ ճաշը, որ ինչպէս ըսինք, փառաւոր է եւ լեզուներն ու տրամադրութիւնները կը քաղցրացնէ:

«Հարսը թեւ նիհար է, բայց շատ ալ երիտասարդ է, կը գիրնայ անշուշտ ու շատ սիրուն կին մը կ'ըլլայ»:

«Երբ որ գիրնայ, բերանն ալ այսպէս խոշոր չ'երելիր»...

«Լաւ մտածես, փեսան գէշ գործ մը չըրաւ այս կինը առնելով: Շնորհալի է եւ ժպտերես»...

Ճաշը երկար կը տեւէ: Ոգելից ըմպելի չկայ շատ անգամ այս սեղաններու ընթացքին, բայց ուտելիքները բազմատեսակ են, առատ իւղով, օդը ծանր: Կիները կը կարմրին, կ'ոգեւորուին ու խօսակցութիւնները ազատ ընթացք կը ստանան: Նախ կը

խօսուի ամեն նիւթի շուրջ, բայց քիչ-քիչ սիրային բնոյթ կրող նիւթերն են, որոնք ոգեւորութիւն կը ստեղծեն: Կը խօսին ծաւօթներու սիրային արկածներու, տեղի ունեցած նոր ամուսնալուծումներու եւ պատճառ տուող մանրամասնութիւններու մասին: Կը պատմեն սիրային անեքթոտներ շատ համեմատուած արտայայտութիւններով:

Յանկարծ երգի ձայն մը կը լսուի: Սիրային երգ մըն է, որ կիներէն մէկը կը սկսի երգել լացակումած ձայնով, ամեն խօսքի վերջի վանկը երկնցնելով, այրող սրտին օգնութեան կանչողի մը նման:

«Ամա՛ն, կ'այրիմ, սիրատոչոր կ'այրիմ, ամա՛ն, ամա՛ն»...

«Սիրածս զիս մոռցաւ, ես կ'այրիմ, եամա՛ն, եամա՛ն»...

Ոմանք կը ձայնակցին երգին, ուրիշներ ամպոտած աչքերով առաստաղ կը նային, կարծես հոն գտնուող պատուհանիկէ մը «եար»-ը զիրենք կը դիտէ հմայուած:

Երգը կը դադրի վերջին ցաւագին կանչով մը: Պահ մը լուռ մնալէ վերջ, կիները կը սկսին պոռալ. «Քօչէք»... «քօչէք»... Պզտիկ հանըմը պէտք է քօչէք պարտ:

Զանի մը պայմանադրական նազանքներէ վերջ, երիտասարդ կին մը ոտքի կ'ելլէ, կը փաթթուի իր փէշտիմալին ու կը սկսի պարել ներկաներու ծափերուն ու երգին ընկերակցութեամբ:

«Քօչէք»-ը փորի արեւելեան պար մըն է, որ հիմա տարածւած է նաեւ Արեւմուտքի մէջ, բայց հոն պարուած փորի պարերը երբեք չեն կրնար հաւասարիլ Արեւելքի պարերուն: Պարող կնոջ փորը կը դողդոջայ, կ'ալիքոտի, կը ծփայ, պարողի վրայ պար կը պարտ: Կարծես մարմնոյն ամբողջ զգայնութիւնը հոն է կեդրոնացեր, կարծես, հիմա, չկրնալով դիմանալ այդքան յուզման, ան պիտի բաժնուի ամբողջութենէն, վար պիտի իյնայ ու պիտի փշրուի մարմարիոնիս վրայ, հասած պտուղի մը պէս, սակայն, փորը կը հանդարտի մէկէն ի մէկ: Հիմա կուրծքն է որ կը յուզուի, կը սարսռայ, կը փոթորկի: Պարի շարժումներէն փէշտիմալը քիչ մը վար կը սահի, եւ ահա երկու գեղեցիկ կլորութիւններ կ'երեւին իրենց գեղեցիկ մերկութեանը մէջ: Նայողին կը թուի, որ կարմիր պտուկները յանկարծ ծորակներու պէս պիտի բացուին ու զգլխիչ հեղուկներ պիտի հոսին, կամ

թելեր առած պիտի թռչին նմանը չտեսնուած թռչուններու նման...

«Փորդ սիրոյ գահ է»,– կը պոռան կիները:

«Ծիծերդ սիրոյ աղբիւրներ են»,– կ'ըսեն ոմանք երագուն: Խնդուք, կատակներ, հառաչանքներ:

Պէտք է ըսել, որ այս պարը քիչ անգամ կը պարուի զուսպ կամ գրաւիչ ձեւով: Աւելորդ շարժում մը, գռեհիկ կեցուածք մը շատ անգամ վաւաշտ ու անվայել շէշտ մը կու տան պարին, մասնաւորաբար Արեւելքի մէջ:

Պարերն ու երգերը կը վերջանան, ինչպէս նաեւ ճաշը: Կիները փէշտիմալնուն մէջ կը փաթթուին եւ դուրսի սրահը կ'ելլեն քիչ մը օդ առնելու ու հանգստանալու, յետոյ կրկին կը վերադառնան ծորակներուն առջեւ, լուացուելու արարողութիւնը շարունակելու համար:

Իրիկունը, երբ իրենց կաշին քերթելու չափ լուացուած են, կիները հագնելու սրահը կու գան խեցգետնի նման կարմիր ու շնչակտուր:

Անոնցմէ շատեր, տուն վերադարձին անկողին պիտի մտնեն ուժասպառ: Դիւրին բան չէ: Լուացուեցա՛ն...

* * *

Լուալու պաշտօն ունեցող թելաքներն ալ, որոնց կարգին եւ Հոռոփը, ներկայ են այս կերուխումին եւ ուրախութեան: Անոնց ալ բաժին կը հանուի առատ ու ճոխ սեղանէն: Թելաքները յաճախ իրենց սրամիտ եւ այրող կատակներով կը մասնակցին խօսակցութեան եւ քրքիչներ կը յարուցանեն:

Հոռոփ իր դերին մէջ է իբրեւ լուացող, բայց բաւական անճարակ է իբրեւ խօսակից կամ կատակող այս շրջանակին մէջ: Սակայն, անոր դէմքը բնականօրէն այնքան զուարճալի է, անոր ամբողջ էութենէն այնքան բարութիւն կը ժայթքէ, որ հոն գտնուողներուն ոչ մէկուն մտքէն պիտի անցնէր, որ այս կլորիկ կինը, որ այսպէ՛ս բարձր կը խնդայ իրենց կատակներով, որ միջավայրին այսպէ՛ս վարժուած ու յարմար կ'երեւի, վիրաւոր դատի մը համար եկեր նստեր է իրենց մէջ, դատ մը, որուն համար կը վատնէ ոչ միայն իր վաստակը, իր առողջութիւնը, այլ եւ իր կեանքը ամեն վայրկեան վտանգի տակ է...

Երբեմն-երբեմն, լուացուելու կամ կերուխումի ժամանակ կիները կը խօսեին գաւառներու մէջ տեղահանութիւններու ընթացքին կատարուածներու մասին: Անոնք իրենց ամուսիններու կամ ազգականներու միջոցով կ'իմանային, թէ ինչպէս կը ջարդուէին եւ կը թալանուէին կեաւորները: Չիրենք հետաքրքրողը ամենէն աւելի թալանն էր, ամբողջ ժողովուրդէ մը խլուած անհատնում աւարը: Մաս մը կանանց ալ հետաքրքրողը, երեւի, իրենց ամուսիններուն ազդեցութեան տակ, ամբողջ ժողովուրդին բնաջնջումն էր: Այդ արարքին մէջ կը տեսնէին թուրք ժողովուրդի մեծութիւնը:

Տեղահանութիւն բառը քաղաքակրթուած արտայայտութիւնն էր ամբողջ երկրին մէջ գրեթէ միաժամանակ կատարուած ողբերգութիւնները բնորոշելու համար: Թուրքերը, իրենք իրենց մէջ խօսած ժամանակ անշուշտ, աւելի անկեղծ, աւելի ճիշդ կերպով բնորոշող բառեր կը գործածէին: Անոնք պարզապէս կ'ըսէին «արմատի չորացում» կամ «կեաւորին վերջին օրերը»:

Եթէ չյաջողեցան իրենց ծրագիրները իրագործելուն մէջ, յանցանքը իրապէս իրենցը չէր: Յանցանքը հայ ժողովուրդին ամէն գնով ապրելու, յարատեւելու, պայքարելու կամքին մէջն էր:

Յանցանքը հայ ժողովուրդին հոգեկան հարստութեան մէջ էր:

Երբ բարձրաստիճան օտար անձնաւորութիւններ, ըլլայ գաւառները, ըլլայ Պոլիս, դիմեր էին թուրք պատկան իշխանութիւններուն իրենց վրդովմունքը յայտնելու համար, իրենց պատասխանած էին, թէ «եղածները լոկ պատերազմի ժամանակ անհրաժեշտ զգուշական միջոցներ են, թէ յետոյ ամէն ինչ բնական իր ընթացքը պիտի ստանայ եւ բոլորը պիտի վերադառնան իրենց տները»:

Այդպէս կը պատասխանէին այն ժամանակ կառավարութեան գլուխ գտնուողները, սակայն, քաղաքներէն եւ գիւղերէն տեղահանուած դէպի անապատները քշուած անթիւ անհամար ժողովուրդէն ժամանակ մը վերջ կը մնային միայն ծերունիները կամ իրենց տեսածներէն, կրածներէն խելագարուած կանանց ահաւոր խմբեր... Իսկ պարպուած տները կը լեցուէին

թուրք գաղթականներով կամ նոյնիսկ այդ բնակիչները սպանողներով:

Առաջին տեղահանութիւնները կատարուած էին յանկարծակի, առանց նախօրօք տրուած որեւէ ազդարարութեան:

Թմբուկներով, կանչերով, ժողովուրդը, կին թէ տղամարդ, հրաւիրած էին քաղաքին կամ գիւղին հրապարակը կարելոր հրահանգի մը համար: Հոն իրենց յայտարարուած էր, որ ճամբայ պիտի ելլէին անմիջապէս... Քանի մը օրով միայն: Կերակուրները կրակին վրայ, երեխաները օրօրոցին մէջ թողած էին, հրահանգը լսելէ վերջ տուն վերադառնալու յոյսով: Լաց, աղաչանք ապարդիւն եղած էին, տուն վերադառնալու եւ փոքրիկները վերցնելու համար: Երբ մայրերը մերժած էին մեկնիլ առանց իրենց գաւակներուն, տեղն ու տեղը կոտորուած էին:

Տղամարդիկ, յանկարծակիի եկած, ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ ոչինչ առեր էին իրենց հետ եւ քաղաքներէն կամ գիւղերէն ելլելէն վերջ անխնայ սպաննուեր էին, նախօրօք իրենց կանանց եւ աղջիկներուն անպատուութիւնը տեսնելէ վերջ: Կիները բռնաբարուեր էին ընկերացող ոստիկաններէն իսկ:

Աքսորի ճամբաներուն եզերքները ապրող քրտերն ու թուրքերը կու գային եւ իրենց հաւնած երեխաները կը խլէին մօր գրկէն:

Յառաջիկային, ժողովուրդը, տեսնելով որ ամէն գնով ստոյգ մահուան կ'երթայ, իր միջոցներով, իր սակաւաթիւ զէնքերով ինքնապաշտպանութեան դիմեր էր, գոնէ իր կեանքը սուղ ծախելու եւ պատուով մեռնելու համար:

Շապին Գարահիսարի, Ուրֆայի, Մուսա Տաղի, Վանայ եւ այլ տեղերու մէջ տեղի ունեցած հերոսական դիմադրութիւնները, թէեւ հապճեպով եւ անբաւարար միջոցներով կազմակերպուած, հիացուցեր էին նոյնիսկ հակառակորդները, իրենց հերոսական դրուագներով: Շատ մը տեղեր, դիմադրողները տեսնելով որ ա'լ ռազմամթերք չէ մնացեր, վերջին փամփուշտը դարձուցեր էին իրենց դէմ, մինչ կիները զանազան միջոցներով վերջ տուած էին իրենց կեանքին:

Էրզրումցի կին մը, կամուրջէն անցած ժամանակ, իր ձեռքով վար կը նետէ իր երկու տղաքը եւ, երբ կը պատրաստուի՝ երրորդը գրկած ինքն ալ վար նետուիլ, կ'արգիլուի կարաւանին

մէջ գտնուող միւս կիներէն: Բայց իրենց բռնած կիներ խելագար մըն էր այլեւս եւ այդպէս ալ մնաց: Ան բոլոր վազող գետերուն ու առուակներուն մէջ իր տղաքը փնտռեց մինչեւ իր կեանքին վերջին օրերը:

Կարելի է անթիւ անհամար հատորներ գրել այս մասին, բայց եւ այնպէս անկարելի է տալ մօտաւոր պատկերն իսկ այդ զանգուածային ողբերգութեան: Սակայն, անկատար կերպով գրուած այդ հատորներն անգամ բաւական են՝ թունաւորելու մարդկութեան խիղճը, դարե՛ր, դարե՛ր շարունակ...

Պէտք է կանգ առնեմ, մտքովս լրացնելու համար ահաւոր պատկերներու ամբողջութիւնը: Մարդկային բառապաշարը անզօր է արտայայտելու մարդէն մարդուն տրուած անանուն գարհուրանքը...

Գաւառներուն մէջ կատարուած ողբերգութիւններու համեմատութեամբ, Պոլսոյ մէջ անցածները աննշան դէպքեր կարելի է համարել: Հայաստանի հրկիզեալ ճամբաներէն եկող կայծերէն Պոլսոյ ժողովուրդը խանձուեցաւ, այրուածքներ ու վերքեր ստացաւ, բայց չայրեցաւ ամբողջովին: Պոլսոյ ողբերգութիւնը անով է գարհուրելի, որ ան հնձեց հայ դեկավարները, հայ մտաւորականները, որոշ ժամանակ թե՛ բարեկամներու, թե՛ թշնամիներու այն տպաւորութիւնը թողելով, որ հայ ժողովուրդը վերջնականապէս մահացաւ:

Գաւառներու մէջ կատարուածները անկարելի էր, որ իրենց արծազանգը չունենային Պոլսոյ թուրք ընտանիքներու մէջ, ուր գրեթէ ամէն ընտանիք գաւառի մէջ ունի պաշտօնեայ ազգական մը, որուն միջոցով կ'իմանայ ոչ միայն արդէն կատարուածները, այլ եւ կատարուելիքները:

Ուրիշ կերպով լուր ստանալ անկարելի էր: Հայերու համար երթելէն չկար: Օտար միսիոնարներ երբեմն Պոլսոյ իրենց ազգականներուն կամ ներկայացուցիչներուն լուրեր կը հասցընէին, բայց այդ լուրերը սահմանափակ շրջաններու կը վերաբերէին: Այդ պատճառով Չառօներու, Հոռոփներու գործունէութիւնը իբրեւ լրաբեր, անգնահատելի էր:

Հոռոփ թրքուհիները խօսեցնելու վարպետ ձեւ մը ունէր: Երբ օճառոտ լաթը կ'անցընէր լուացուող կնոջ թելերն ի վար, կ'ըսէր գովելու ձեւով:

– Այս գեղեցիկ թելերը ապարանջաններու տակ կորսուելու են: Բոլոր պէյերը Անատոլուէն ինչե՛ր բերին իրենց կիներուն: Ձեր պէյը ինչո՞ւ անզարդ կը թողու ձեզ...

Թրքուհին, եթէ բաժին ստացած էր աւարէն, կը պատմէր, մանրամասնութիւններ կու տար, թէ ո՛ր եւ ինչպէս ամուսինը կամ եղբայրը տիրացեր էր գոհարներուն: Թէ ինչ էր ստացած: Իսկ եթէ դժգոհ էր իր ստացածէն, կը պատմէր, թէ իր ամուսինը ի՞նչ անճարակ մարդ է, թէ այնինչ հանըմին ամուսինը այնինչ գաւառէն որքա՛ն արժէքաւոր բաներ էր բերած:

Կային թրքուհիներ ալ, որոնք կը պատասխանէին.

– Հարամ ապրանք չեմ ուզեր: Տեղը մնան ախով ու լացով խլուած գոհարները...

Երբեմն Հոռոփ անզաւակ թրքուհիի մը կ'ըսէր անտարբեր ձեւով մը.

– Եթէ Սուհամմետը չօրհնեց ձեր արգանդը եւ զաւակ չտուաւ, ինչո՞ւ պէյը կեաւուրի սիրուն տղայ մը կամ աղջիկ մը չի բերեր ձեզի, զոնէ այսպէս աղջիկ կ'ուզէք թէ տղայ, կրնաք ընտրել: Ուրիշներ թօսունի պէս տղաներ բերին կամ բերել տուին ազգականներու միջոցով... թրքական անուններ դրին ու պահեցին:

Թրքուհին իր կողմէն կը պատմէր, թէ ո՛ր ծանօթներու քով կեաւուրի տղայ կար: Զանի հատը, հակառակ ծեծին, չէին ուզեր ըսել, թէ թուրք են, թէ իրենց անունը Ահմետ է կամ Մեհմետ:

Հոռոփ հազար ուրրապտոյտ ճամբաներով կ'իմանար, թէ ո՛ր կը բնակէին այդ փոքրիկները պահող ընտանիքները, անոնց անունները, որովհետեւ Հոռոփին յանձնուած գլխաւոր պարտականութիւններէն մին՝ գաւառներէն Պոլիս բերուած փոքրիկներուն տեղերը իմանալն էր: Ասոնց թիւը հետզհետէ կը մեծնար:

Գաւառներու մէջ հազարաւորներ ոչնչացուած էին, հիմա ամէն մէկ կեանք հարիւրապատիկ, հազարապատիկ արժէք կը ներկայացներ: Երբեմն փոքրիկ մը ամբողջ գիւղի մը, աւանի մը ներկայացուցիչն էր: Պէտք էր հաւաքել, ազատել ամէն գնով:

Թուրքերը իրենց տունները բերելու համար կը զատէին միայն ամենագեղեցիկ տղաքն ու աղջիկները:

Տարիներ յետոյ, երբ խաղաղ օրերը եկան եւ ողջ մնացած

մայրեր սկսան փնտռել եւ երբեմն գտնել իրենց զաւակները, շատ անգամ անոնք գիտէին, թէ ո՞ր գիւղը կամ քաղաքը եւ որո՞ւ կողմէ առեւանգուած էր փոքրիկը: Պատահեցան դէպքեր, երբ քիւրտին կամ թուրքին քով երկար տարիներէ ի վեր ապրած եւ կեաւորի ատելութեամբ եւ արհամարհանքով մեծցած տղան կամ աղջիկը մերժեց իր մօրը հետ երթալ, անկեղծօրէն համոզուած, որ անոր զաւակը չէր: Անոնք, արդէն հասած երիտասարդներ կամ օրիորդներ, չէին յիշեր իրենց անցեալը ու իրենց առջեւը կանգնած, գունատ ու մաշած կնոջ, որ տարիներու կարօտն ունէր սրտին, կը պոռային արհամարհանքով.

«Սուտ կը խօսիս, կեաւորի կին, ես քու զաւակդ չեմ»...

Օր մը, Յոռոփ, երբ բաղնիքին մէջ ծռած՝ կնոջ մը մազերը կը լուար, յանկարծ լսեր էր փոքրիկի ձայն մը, որ հայերէն կը պոռար.

– Մայրի՛կ... մայրի՛կ...

Չորս-հինգ տարեկան փոքրիկ ու վտիտ տղայ մըն էր ան, որ կարծահասակ ու թուխ կնոջ մը հարուածներուն տակ կը ճչար, յուսահատ.

– Մայրի՛կ... մայրի՛կ..

Քանի փոքրիկը հայերէն կը պոռար, հարուածները այնքան կատաղութեամբ կ'իջնէին:

Շուրջը հաւաքուած թրքուհիները յանդիմաներ էին ծեծող կինը ու տղան ազատեր էին ձեռքէն:

– Ըսի իրեն, որ չխօսի այդ կեաւորի լեզուն, Նորէն, շան լակոտը, երբ որ կու լայ, այդ լեզուով կը կանչէ,– բացատրեր էր կինը շուրջը հաւաքուածներուն, ինքզինք արդարացնելու համար.– Աչքը օճառ մտաւ, ա՛լ չէր թողուր, որ լուամ. քանի մը հատ զարկի եւ ահա սկսաւ այդ լեզուով ոռնալ... ծեծեցի լաւ մը:

Ներկաներէն տարիքոտ կին մը սկսեր էր շոյել, փոքրիկը հանգստացնելու համար.

– Պատառ մը տղայ է, ըսեր էր ծեծող կնկան, ի՞նչ կը հասկընայ: Եթէ այսպէս վարուիս, կը սպաննես. արդէն հոգի չկայ վրան:

Յոռոփ առիթէն օգտուելով մօտեցեր էր.

– Հանըմ, ինձի թողուցէք, ես կը լուամ փոքրիկը,– ըսեր էր կնկան:

– Ի՛նչ. այս հարամ տղուն համար մէկ ալ լուալու դրա՞մ պիտի տամ: Կը կարծե՞ս: Հարուստ չեմ, ամուսինս պարզ զինուոր է: Անատուլուն ինձի այս պատուհասը բերեր է, վրան կը խենթենայ: «Ինձի զաւակ չտուիր,– կ'ըսէ,– աս պիտի ըլլայ մեր զաւակը»: «Թէ չէ՛ պօշ* կ'ընես: Ի՛նչ ընես, նախընտրեցի այս փորձանքը պահել, քան ամուսինս կորսնցնել: Այնպէ՛ս յամառ է, այնպէ՛ս յամառ, էշէ մը աւելի: Անունը Ռիզա դրինք, հէլէ մէյ մը հարցուր: «Հայկօ եմ,– կ'ըսէ,– Ռիզա չեմ», ու յամառօրէն պիշպիշ կը նայի աչքերուդ մէջ: Սպաննելիս կու գայ... Միայն մարդուս հետ լաւ է, անոր պապա կ'ըսէ: Ինչ ըրի, ինձի «անա» չըսաւ: Երբ կը պնդեմ, որ ինձի «անա» ըսէ, հայերէն բաներ մը կ'ըսէ բարկացած, չեմ հասկնար: Կը ծեծեմ «մայրիկ» կը պոռայ: Համբերութիւնս հատաւ: Այս տղան ինձի գերեզման պիտի իջեցնէ...

Յոռոփ դուրս էր տարեր փոքրիկը, գրկեր, համբուրեր ու զովացուցիչ էր խմցուցեր, բայց չէր յաջողեր ժպիտ բերել պզտիկին գունատ դէմքին:

Իրիկունը երբ տեսեր էր, որ կինը լուացուելէ վերջ, հագուելու սրահը կը մտնէ փոքրիկին հետ, ինքն ալ հագուեր էր, ու անոնց փողոց ելլելէն վերջ հետեւեր էր անոնց՝ բնակած տեղը իմանալու համար:

Աս չորրորդ տղան էր, որ Յոռոփը, բաղնիքի շնորհիւ, կը ճանչնար: Հասցէները կու տար Ձառոյին, որ իր տրամադրութեան տակ գտնուող օրիորդներով հսկել կու տար փոքրիկներ ունեցող ընտանիքներու ապրելակերպը, տղոց փողոց ելլելու ձեւերը: Շատ անգամ փոքրիկները տան դրան առջեւ ուրիշ տղոց հետ կը խաղային: Այդ էր փոքրիկ Հայկոյին պարագան:

Փողոցը խաղացող տղաքն ալ փախցնելը դիւրին չէր: Խեղճ տղաքը արդէն կեանքէն վախցած, պիտի չհետեւէին անձանօթ մէկու մը, առանց աղմուկ հանելու: Իսկ աղմուկը, փախցնողին համար, կեանքի ու մահու խնդիր էր: Պետք էր շատ զգուշութիւն:

Ձառօն այդ պարագաներուն կը հրահանգեր իրեն օժանդակող օրիորդներուն, փոքրիկներու բնակած փողոցէն անցնիլ,

*) Ապահարգան:

երկվայրկեան մը կենալ փոքրիկին քով, քանի մը բառ հայերէն խօսքեր ըսել անոր, վստահութիւնը շահելու համար, եւ հեռա- նալ, յաջորդ օրը նորէն անցնելու համար, մինչեւ որ որոշ մտեր- մութիւն ստեղծուէր:

Չառօն ամբողջ ծրագիր մը ուներ այս մասին: Իսկ երբ ան բան մը որոշէր, անպատճառ կը յաջողէր:

Թութ ծախողին անցնելէն վերջ, աթոռիս վրայ երկնցած, աչ- քերս կիսախուփ, կը դիտէի Չառօն, որ կը շարունակէր կա- րել: Այսպէս հանդարտ նստած՝ ան բնաւ պառաւի երեւոյթ չունէր, եւ զարմացած կը նկատէի, որ ան գեղեցիկ կին է: Լայն ճակատը եւ գեղեցիկ նշածեւ աչքերը բաժնուած են կանոնաւոր, կարծես գծուած յօնքերով: Տարիներէն արեւի վիշտն էր, որ ծալքեր էր դրեր կամակոր ու խիստ բերնին անկիւններուն: Գունատ էր շատ եւ գրեթէ հիւանդագին մաշած շեշտ մը կար ամբողջ դէմքին վրայ:

Կը մտածէի: Ահա կին մը, որ յիսուն տարեկանէն դեռ շատ հեռու է: Ազատ երկրի մը բնական պայմաններուն մէջ այս տա- րիքը ունեցող կիներ, մանաւանդ այս արտաքինն ունեցող կի- ներ դեռ սիրելու, սիրուելու մասին կը մտածեն: Ուրախանալ ու գրաւել կ'երագեն: Իսկ այս կինը քսան տարիներէ ի վեր սեւ է կապեր, որովհետեւ իր եւ իրեններուն ճակատագիրը կապեր է իր ժողովուրդի ճակատագրին հետ:

Խնդացե՞ր է երբեւիցէ այս խիստ կինը, կը հարցնէի ես ինձ, անոր բարեձեւ, բայց խիստ բերանը դիտելով: Լացե՞ր է ար- դեօք, թէ արցունքներն իսկ ցամքեր են իրենց ակունքներուն մէջ, իր կամքի ուժէն, հայրենիքին լաւ ապագայի մասին ունե- ցած իր վառ հաւատքէն:

Կը սիրէի Չառօն: Կ'ուզէի, որ գիտնար այդ: Կ'ուզէի դժուար գործ մը կատարել իրեն համար: Կ'ուզէի, որ սիրէր զիս գնա- հատելով եւ ոչ թէ անպաշտպան փոքր աղջկայ նման: Թերեւս կարենայի օգնել իրեն փոքրիկ Ազնիւը թուրքին տունէն ազա- տելու: Գիտէի, որ Պոլիս պահուած բոլոր փոքրիկներուն մէջէն ան Ազնիւը կը սիրէր բոլորէն արեւի: Չէր խոստովաներ, բայց ակներեւ էր, որ այդպէս էր: Հաւանական է, որ այս վայրկեանիս այդ մասին կը մտածէր: Լաւ կ'ըլլար թերեւս լռութիւնը խզել ու խօսիլ այդ մասին:

Կը հազամ քաջութիւնս գտնելու եւ անոր ուշադրութիւնը վրաս հրաւիրելու համար:

– Չառօ մայրիկ, կ'ըսեմ կամաց ձայնով.– եթէ ըսես ինձ, թէ Ազնիւը ո՞ր ժամերուն դուրս կը հանեն, կարելի է կարենամ սպասուհին կաշառել ու փոքրիկը փախցնել: Դեռ քանի մը գոհարեղէն ունիմ, օրինակ, այս մետալիոնը.– ու կը ցուցնեմ վզես կախուած բաւական արժէքաւոր ոսկեղէն մը, որ մանկութենէս ի վեր կը կրեմ վրաս.– ուրախութեամբ կը ծախեմ այդ փոքրիկին համար:

Ճպիտի պէս բան մը կ'անցնի Չարոյի յոգնած դէմքին վրայէն:

– Մտածեր եմ կաշառելու մասին, պահելու տեղ ալ գրեթէ գտած եմ: Սամաթիացի ձկնորսներ, կը ճանչնամ, վստահելի մարդիկ են, բայց...

– Բայց ի՞նչ, Չառօ մայրիկ:

– Բայց ան, որ ասկէ-անկէ հաւաքուած նուիրատուութիւնները կամ արտասահմանէն գաղտնի եկածները հազիւ կը բաւեն մինակ մնացած ու կարօտ ընտանիքներուն կամ այլ ծախսերուն: Հոռոփը չարչարանքով վաստկածը կու տայ, հիմա ալ որոշեր է իր սեփական տունը ծախել՝ փոքրիկները ազատելու գործին համար: Պէտք է բոլոր տղաքը գրեթէ միաժամանակ ազատել... Աճապարելու չէ... Կը տեսնենք:

Կերակուրէն այրած սոխի հոտ կու գայ: Կը տեսնեմ, որ Չառօն կը նայի այդ կողմը ու կ'ուզէ ոտքի ելլել: Ես իրմէ արագ կը կանգնիմ, կը վազեմ կերակուրը խառնելու, ու կը նայիմ Չառօյին: Այնքա՞ն բարի են անոր աչքերը այդ վայրկեանին, որ կը համարձակիմ ժպտիլ:

Ա՛խ, ի՞նչ լաւ պիտի ըլլայ, եթէ Չառօն պահէ մեզ իր քովը:

Տղադ արթնցաւ,– կ'ըսէ Չառօն,– լաւ կ'ըլլայ, որ լողացնենք եւ յետոյ քու կաթովդ կերակրես զինքը: Զիչ մը հանգստացար: Պէտք չէ մէկ անգամէն իր սովորութիւնները փոխել:

Փոքրիկս լողացուցինք, պառկեցուցինք: Հագիւ կը պատրաստուէի կաթ տալ իրեն, երբ դուռը աղմուկով բացուեցաւ ու թրքուհի մը ներս մտաւ:

Ես ճչացի ու տղաս գրկած ոտքի ելայ: Տեղս գտան, մտածեցի, ահա կին մը դրկեր են ստուգելու համար, թէ հո՛ւ եմ: Դուր-

սը հաւանաբար խումբ մը ոստիկաններ կը սպասեն: Ակնթարթի մը մէջ հազար որոշումներ տուի: Փոքրիկը պիտի թողում Չառօյին: Ունեցածս-չունեցածս Չառօյին: Արային պիտի...

Յուզուած կը դառնամ Չառօյին, իրմէ քաջութիւն, օգնութիւն ուզելու համար, բայց ան հանդարտ է եւ ինձ ալ նշան կ'ընէ հանգիստ մնալու:

Թրքուհին քօղին տակէն բարձր կը խնդայ ու միեւնոյն ժամանակ քօղը վար կ'առնէ:

– Սիրարփին է,– կը պոռամ ուրախ եւ զարմացած:

– Սո՛ւս,– կ'ըսէ ինձ Չառօն յանդիմանական ու կը մօտենայ Սիրարփին.– Ի՞նչ լուր...

– Աշոտը տեսայ,– կը պատասխանէ Սիրարփին, որ ինձ մօտեցած էր ու կը համբուրէր: Յետոյ կը ծռի դէպի ինձի.– Սոնա, սիրելիս, Աշոտը խորհուրդ կու տայ, որ կրկին տունդ վերադառնաս: Անոր կարծիքով վտանգաւոր է, որ պահուըտիս: Կրնաս Արային վնասել՝ կարծել տալով որ կը վախնաս: Պէտք է հանդարտ երեւիլ, սիրելիս: Պէտք է այնպէս ապրիլ որպէս թէ որեւէ կասկած չկայ թէ անոնք պիտի վերադառնան: Զեզ համար մի՛ վախնար, վտանգ չկայ: Եթէ այդպէս կը հետեւին, պատճառն այն է, որ միշտ արտասահման ապրած, ժընելի մէջ ուսած եւ յեղափոխական շրջանակներու մէջ եղած ես: Կը վախնան, որ այստեղ բան մը կազմակերպես: Կամ կ'ուզեն քու միջոցովդ կազմակերպիչները գտնել՝ կարծելով որ կապ ունիս անոնց հետ:

Սիրարփի կը խնդայ ու կ'աւելցնէ.

– Ասիկա մեծ պատիւ է, գիտե՛ս, պէտք է գնահատես:

Չառօն եւ Սիրարփին պատասխանիս կը սպասեն:

– Պիտի վերադառնա՛մ,– ըսի կտրուկ:

Չոյզ մը թելեր նորէն գորովով կը գրկեն զիս: Յետոյ Սիրարփին կը մօտենայ օրօրոցին ու երկար կը նայի տղուս:

– Որքա՞ն մեծցեր է: Բախտաւոր ես, որ աս ունիս,– կ'ըսէ ինձ դառնալով:

Սիրարփին նշանածն ալ, Լեւոնը, Այաշ բանտարկուած է Արային հետ:

– Բոյնդ չքանդուեցաւ,– կ'ըսեմ Սիրարփին՝ զինքը մխիթարել կարծելով:

– Իսկ երազներուս փշրուի՞լը,– կ'ըսէ ինձ յանդիմանական ձայնով.– Իսկ այս պարա՞պը, որմէ կը սոսկամ մինչեւ ոսկորներուս ծուծը:

Չառօն կը հազայ՝ մեզ կարգի հրաւիրելու համար: Երկուքս ալ ամօթահար կը ժպտինք, երբ կը դառնանք Չառոյին: Մեր երիտասարդութիւնը միայն ունինք մեզ արդարացնող:

Սիրարփին միջահասակ, նրբակազմ աղջիկ մըն էր: Առաջին նայուածքով՝ միայն իր աչքերն ու առատ սեւ մազերը աչքի կը զարնէին: Մնացեալը քիչ-քիչ կը տեսնէր մարդ ու այն ժամանակ միայն կը մտածէր. «Կարծես թէ գեղեցիկ է»: Ան քսան տարեկան էր, մանկապարտեզի վարժուհի:

– Երկու անգամ քեզի եկայ,– կ'ըսէ Սիրարփին,– չհամարձակեցայ մտնել: Գաղտնի ոստիկան մը կը հսկէր թանկագին անձիդ վրայ:

– Լուր ունի՞ս մնացեալ բանտարկեալներու կիներու մասին,– կը հարցնեմ:

– Բոլորը մօտաւորապէս քու վիճակիդ պէս են: Միայն շարժելու ազատութիւն ունին: Ոմանք իրենց ծնողաց մօտ գացին ու պակաս կը տանջուին միևնույնիս: Զու վիճակդ անով է անտանելի, որ ստիպուած ենք քեզ միևնույն թողուլ, եւ հետդ ալ մէկը չունիս:

– Իսկ Լեւոնը ի՞նչ կը գրէ:

– Թրքերէն երկու բացիկներ ստացայ: Այդ է ամբողջը: Յայտնի է, որ ազատ չեն գրելու... բան չի հասկցուիր:

– Պէտք է Աշոտը տեսնեմ,– կ'ըսեմ Սիրարփին,– չէ՞նք կրնար այսպէս անորոշ ապրիլ: Պէտք է լուր ստանալ, կապ պահել, դիմումներ ընել: Վերջապէս, բա՛ն մը ընել:

Սիրարփին տխուր գլուխը կը շարժէ:

– Անթիւ անհամար դիմումներ կատարուեցան,– կ'ըսէ,– բայց անօգուտ: Թալէաթը, որ այս հրէշային ծրագիրը մշակեց, գիտես, չէ՞, որ իր կեանքը կը պարտի Ակնունիին, որ զինք իր տունը պահեց կառավարութեան փոխանցման խառնակ շրջանին: Թալէաթ երախտագիտութեան փոխարէն, Ակնունին բանտարկել տուաւ եւ հիմա Այաշէն անոր գրած նամակներուն ու հեռագիրներուն պատասխան անգամ չի տար: Այս գիտենք շատ հաստատ աղբիւրէ: Պոլսոյ մէջ ալ ձերբակալութիւնները

դեռ կը շարունակուին եւ բանտարկեալները խօսեցնելու համար ամենավայրագ միջոցներու կը դիմեն...

Սիրարփին իմացայ, որ իր ազգականներէն երիտասարդ մը սաստիկ չարչարէր էին, որպէսզի ըսէ պահուած մտաւորականներուն եւ հասարակական գործիչներուն տեղը: Բայց այդ երիտասարդը, կրկին անգամ նոյն չարչարանքներուն չենթարկուելու համար եւ մանաւանդ վախնալով, որ ցաւի ազդեցութեան տակ, իրմէ անկախ, կրնայ որոշ յայտնութիւններ ընել, ինքզինք սպաններ էր իր ձեռքին տակ գտնուող միակ միջոցով, այն է՝ գիշերը պետքարանին մէջ վառուած լամբարին քարիւղը թափեր էր փորին վրայ ու վերջ էր դրէր իր կեանքին...

Ուրիշ մը, Արշամը, կը բռնուի տեղափոխուած ժամանակ ու ոստիկանատուն կը տարուի: Ոստիկանապետին ներկայութեան ան կ'օգտուի իր քով կեցած պահակի գրպանին մէջ թուղթ մը փնտռելու զբաղուած ըլլալէն, արագ կը մօտենայ պատուհանին ու ինքզինք չորրորդ յարկէն վար կը նետէ...

Սիրարփին դեռ պիտի շարունակէր, եթէ Չառոյի արտայայտիչ հազը վերջ չդնէր այս խօսակցութեան: Նկատեցի, որ ան մատուցող փոքրիկս ցոյց կու տար Սիրարփին, կարծես ըսել ուզելով.

«Այս փոքրիկին համար պէտք է խնայել Սոնային: Մի՛ շարունակէր»...

– Ուրեմն, տուն կը վերադառնամ,– ըսի ոտքի ելլելով.– միայն, Սիրարփի, խօսք տուր, որ նորութիւն մը եղած պարագային ինձ պիտի իմացնես, ինչ ալ որ ըլլայ պատահածը: Կը հասկնա՞ս, ինչ ալ որ ըլլայ:

Չառօն ժամանակ չտուաւ, որ Սիրարփին խօսք տայ:

– Եթէ բան մը պատահի, բոլորս ալ պիտի իմանանք: Մէկը միւսէն աւելի խնայելու պատճառ մը չունինք,– ըսաւ իր խիստ ձայնով. յետոյ Սիրարփին դառնալով ըսաւ.– հիմա, Սիրարփի՛, պէտք է տուն վերադառնաս, նոյն ձեւով եւ նոյն ճանապարհներով ինչպէս միշտ: Սոնան հոս պիտի ճաշէ ու յետոյ պիտի երթայ:

Որոշուեցաւ, որ երբ Չառօն կամ Սիրարփին ինձ որեւէ լուր տալ ուզեն, Սիրարփին թրքուհիի պէս հազած պիտի գար իմ փոքրիկս պտոյտի տարած տեղս – Նշան Թաշի բարձունքի քարերը, քովս պիտի նստի, իբր թէ Վոսփորը դիտելու համար, ու քանի մը խօսքով պիտի յայտնէ պէտք եղածը:

Նշան թաշ, քարերու վրայ, մեծ թուով թրքուհիներ օդ առնելու կու գային: Այնպես որ Սիրարփիին ներկայութիւնը ուշադրութիւն պիտի չգրաւեր:

Սիրարփին մեզ բոլորս համբուրեց, փաթթուեցաւ իր եաշմաքին մէջ ու դուռը բացաւ: Սեմէն թրքերէն բարձր ձայնով ըսաւ Չառոյին.

– Ապլա, չմոռնաս հա՛, վաղը չէ միւս օր Այիշէ հանըմին երթալու առաւօտուն կանուխ...

– Անհոգ եղի՛ր, Այիշէ հանըմին ըսէ, որ ժամանակին հոն պիտի ըլլամ, – պատասխանեց Չառօն նոյնպէս թրքերէն եւ բարձրաձայն, ու դուռը գոցեց:

Համով էր Չառոյի ճաշը: Սեղանը լեցուն էր նաեւ ախորժաբեր աղանդերներով: Յայտնի էր, որ Չառօն մասնաւոր ճիգ թափած էր, որ ես շատ ուտեմ նախ քան մեկնիլս, բայց հակառակ ուտելու ճիգերուս, պնակս դժուար կը պարպուէր: Կը զգայի, որ Չառօն աչքին ծայրովը զիս կը դիտէր եւ կը յուսահատէր չուտելուս համար:

Չէինք ալ խօսիր: Փոքրիկս էր, որ բարձրու մէջ, նստարանի վրայ նստած իր գիտութիւնը կը թափէր, կարծես կը զգար, որ այդ վայրկեանին իր ներկայութիւնը զգալու պէտք ունէինք:

Փոքրիկ Սուրէնն ալ տխուր էր: Ան բոլորովին համոզուած էր, որ մենք պիտի մնայինք իրենց քով: Հիմա քէն կ'ըներ մեծ մօրը, անոր տուածը չէր ուտեր, կարծելով, որ մեծ մայրիկը չարութեան համար մեզ չէր պահէր:

Փոքրիկ Սուրէնին վշտին մէջ կար տղայէս, կենդանի խաղալիքէ մը բաժնուելու ցաւը, կար նաեւ դպրոց վերադառնալու վախը: Թէեւ ամառուան արձակուրդն էր, բայց մասնաւոր մանկապարտէզ մը կար, աշխատելու գացող կանանց փոքրիկները պահելու համար: Չառօն յաճախ բացակայ էր տունէն ու ստիպուած՝ այդ դպրոցը կը դրկէր Սուրիկը:

– Ինչո՞ւ դպրոց երթալ չես ուզեր, – հարցուցի Սուրիկին՝ տխուր լռութիւնը խզելու համար ամուսնոյս տուած հարցումն ընելով:

Սուրիկը, ինչպէս միշտ, պատասխանեց.

– Ես զօրավար պիտի ըլլամ, կարողալը ի՞նչ պիտի ընեմ:

– Իսկ ինչո՞ւ կ'ուզես զօրավար ըլլալ, – հարցուցի կրկին:

Սուրիկը տեղէն ելաւ, մօտեցաւ ինձ ու ճիշդ մեծ մօրը պէս նախ դէպի պատուհան, յետոյ դէպի դուռ նայելէ վերջ ականջիս փսփսաց.

– Ես Հայաստանի զօրավար պիտի ըլլամ: Մէջքես մեծ սուր մը պիտի կախեմ ու մեծ մայրիկս թագուհի պիտի ընեմ...

Յետոյ, քիչ մը մտածելէ վերջ, աւելցուց.

– Զու տղադ կարելի է զինուոր կ'ընեմ... Բայց չեմ կարծեր: Լաթերը կը թրջէ, ասիկա մեծ ամօթ է զինուորի համար... Ատոր համար Պետօն զինուոր պիտի ընեմ:

Պետօն իր ընկերն էր:

Սուրիկ, կարծելով որ զիս վշտացուց, տղաս զինուոր իսկ առնել չուզելով, ուզեց դարմանել յանցանքը՝ ինծի պաշտօն մը խոստովանելով.

– Սոնա, իմ Հայաստանիս մէջ քեզի... պիտի ընեմ, պի՛տի...

Բայց խեղճ փոքրիկը ինծի ինչ պաշտօն տալը չէր գիտեր ու կը թոթովէր: Իր գիտցած պաշտօնները՝ թագուհի, զօրավար, զինուոր բաժնած էր... Եւ յետոյ ինծի չէր կրնար անշուշտ զինուորի պաշտօն տալ: Իսկ թագուհին մեծ մայրը պիտի ըլլար: Վերջապէս, դարձաւ մեծ մօրը.

– Մեծ մայրիկ, Սոնան ի՞նչ պիտի ընենք մեր Հայաստանին մէջ...

– Սոնան Հայաստանի մէջ Խորհրդարանի անդամ պիտի ըլլայ, տղաս: Այս բոլոր արցունքներէն ու արիւններէն ծնող Հայաստանի մէջ, Սոնան պիտի աշխատի, սորվածը պիտի տայ ու իր տեղը պիտի ունենայ:

Չառոյի ձայնին, դէմքի արտայայտութեան մէջ կար այնպիսի մարգարեական շեշտ մը, որ խռովեց հոգիս:

«Հապա Արա՞ն»... Արան ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի մէջ», կ'ուզէի հարցնել Չառոյին: Արդեօք այդ վայրկեանին ան իրապէ՞ս մարգարեացաւ ապագան ու դատարկութիւն տեսաւ Արայի տեղը: Կը զգայի, որ գունատած էի ու պատառաքաղը կը դողար ձեռքիս մէջ: Չառօն հասկցաւ, թէ ի՞նչ փոթորիկ կ'անցներ հոգիիս մէջ ու ինձ դառնալով ըսաւ.

– Արան եւ իր նմանները, ողջ թէ նահատակուած, ապագայ Հայաստանի սիւներն են, Սոնա՛... Անոնց տեղը, երբեք, երբեք դատարկ պիտի չմնայ դարերու ընթացքին... Բայց ես գիտեմ, որ Արան ողջ եղած ժամանակ ալ այդ սիւներէն մին պիտի ըլլ

լայ: Ախ, Սոնա, դուն զիս շատախօս մեկը ըրիր, — ըսաւ Չառօն ժպտելով:

Սուրիկը խորապէս ազդուած էր մեծ մօրը այս երկար խօսքերէն: Կ'աշխատէր հասկնալ ու մանաւանդ միտքը պահել ապագայ պաշտօններու բաշխման համար — Խորհրդարանի անդամ», «սին» բառերը: Այս վերջին պաշտօնը աւելի դիրքին պիտի յիշէր ու իբրեւ այդպիսին աւելի առատութեամբ բաժնէր...

— Սի՛ն... սի՛ն,— կը կրկնէր Սուրիկ շշուկով, չմոռնալու համար:

Ճաշէն անմիջապէս վերջ, Չառօն կրկին կերակուրի պատրաստութեան սկսաւ: Ան քաշած միտք ադեց, համեմեց ու կլոր ու տափակ ձեւ տալով անոր, իւղին մէջ տապկեց, ծերմակ լուբիա լեցուց, ծրար մը ըրաւ ու տղուս կառքին մէջ դրաւ ըսելով.

— Ասիկա այս իրիկուան եւ վաղը կեսօրուան կերակուրդ է: Տապկած միտք երկար կը դիմանայ: Գացած ժամանակդ հաց եւ պտուղներ կը գնես անպատճառ: Կը լսե՞ս... անպատճառ: Այս փոքրիկին համար, եթէ հարկ է, քար իսկ պետք է կլլես,— ըսաւ աչքերուս մէջ շեշտակի նայելով:

Խոստացայ ինքզինքիս լաւ նայիլ: Ուշադրութիւն դարձնել ու տելիքիս եւ հանդարտութեամբ սպասել դէպքերու վախճանին:

Հանեցի փոքրիկիս անկողնակին մէջ Արայի երթալէն ի վեր պահուած երկու տետրակները ու յանձնեցի Չառօնին:

Կը տեսնէի, որ Չառօն, թղթ շատ փոքրիկ ծրար մը ձեռքին՝ բաւական կը տատանէր: Այսպէս շփոթած չէի տեսած զինք երբեք: Վերջապէս, բացաւ ձեռքի պայուսակս ու թղթ ծրարիկը մէջը դրաւ:

— Զիչ մը դրամ է,— ըսաւ, իմ հարցական նայուածքիս պատասխանելով.— ինձմէ չէ, որ աշխատանքիս դրամն է ըսես ու քաշուիս առնելու: Ինձի ծանօթ բարեկեցիկ մեկը տուաւ ինձ, որ օգտակար կերպով գործածեմ: Մեկ մասը միայն քեզի կու տամ: Օր մը կը վերադարձնես՝ ուրիշի մը օգնելով: Հարցը փակեցք:

Հարցը փակեցի լուռ շնորհակալութեամբ: Դրամ չունէի երկար ատենէ ի վեր: Միտքս դրած էի, անմիջապէս տուն վերադարձիս, ճամբան, մետալիոնս ծախել, թէեւ կը նախընտրէի, որ ան փոքրիկիս մար: Ուրիշ մեկէ, նոյնպէս ծնողքես, պիտի մերժէի դրամ ստանալ, եթէ նոյնիսկ անօթի մնայի... Բայց Չառօնէ՛ն: Արժանապատուութեան խնդիր չէր կրնար ըլլալ այստեղ:

Նախ քան փողոց ելլելս փոքրիկին հետ, Չառօն փողոց ելաւ, աջ-ձախ նայեցաւ: Մարդ չկար: Տան դիմացը տուն չկար, ծախու հող էր, բայց տան երկու կողմերը տուններու երկար շարք մը կար:

Տան աջ կողմը, փողոցը կերպաս ծախող յոյն մը կը բնակէր կնոջը հետ: Այս մարդը ամբողջ օրը տունը չէր, կինն ալ լաթ լուացող էր եւ յաճախ տունէն բացակայ: Չախ կողմը անդամալոյծ ծեր կին մը կ'ապրէր աղջկանը հետ, որ մօտերը գտնուող գարեջրատան մէջ կ'աշխատէր: Կես իտալացի, կես յոյն էին:

Չառօն, վստահ ըլլալու համար գարկաւ երկու կողմի տուններու դռներն ալ որեւէ պատրուակով: Միայն անդամալոյծ կինն էր, որ ձայն տուաւ իր պառկած տեղէն: Այն ժամանակ միայն Չառօն ներս մտաւ ու ինձ ըսաւ, որ կրնամ մեկնիլ: Բացատրեց տուն վերադառնալու կարճ ճամբան, պահ մը կանգ առաւ, կարծես բան մը ըսել կ'ուզէր, բայց լռեց:

— Երթաս բարով,— ըսաւ դուռը բանալով, կարճ կապելու համար բաժանման տխրութիւնը:

Ժամանակները այնպէս էին, որ բաժնուողները չէին գիտեր, թէ երբեւիցէ կրկին պիտի տեսնուէի՞ն...

— Չառօնի սիրտը չտարաւ, գոցեց դուռը եւ, ձեռքը դնելով ուսիս, աւելցուց.

— Մտքովս քեզ հետ եմ: Եթէ կը կարծես, որ այլեւս անկարելի է մինակ մնալդ կամ վտանգ մը կը սպառնայ քեզ, փոքրիկը առ ու գնա՛ տիկին Ռիչըրտսընին, Նշան Թաշ, թիւ 82: Գնա՛, նոյնիսկ եթէ հետեւող կայ: Անոր տունը երկու դուռ ունի, իսկ ինքը ամերիկուհի է, անոր վտանգ չկայ: Սքանչելի կին է: Ուրեմն, լաւ յիշէ: Մի՛ գրէր որեւէ տեղ այդ հասցէն: Միտքդ պահէ: Միայն պետք չէ օգտուիլ այս հասցէն անկարելորդ պատճառներու համար: Դէ՛, երթաս բարով, աղջի՛կս...

Դուռը գոցուեցաւ բարի ձեռքերով, բայց վճռական:

Ականջիս հասան Սուրիկի լացին ճիչերը, կարծես կ'ուզէր դուռը բանալ եւ մեր ետեւէն հասնիլ: Ծուռով այդ փոքրիկ, չքաւոր, բայց այնքա՛ն սիրելի տեսակէն որեւէ ձայն չհասաւ ինձ: Ա՛լ բոլորովին մինակ էի:

Որքան արագ եւ «ճեպընթաց» եղած էր գալս, այնքան դանդաղ եղաւ տուն վերադարձս:

Չառոյին տունը եղած ժամանակս վերադարձը ինձ աւելի դիրին երեւցած էր քան հիմա իրականին մէջ: Բայց եւ այնպէս այն ժամերը, զորս անցուցած էի այդ գարմանալի կնոջ հետ, զիս որոշ չափով սթափեցուցած էին դէպքերու ազդեցութեան տակ վրաս իջած թմրութենէն: Կը զգայի, որ խոշոր ողբերգութեան մը միայն մէկ չնչին մասնիկը կը կազմէի եւ որ շրթներս սեղմած պէտք է տանէի ինձ ինկած բաժինը:

Քանի որ Արայի համար օգուտ մը կրնար ունենալ վերադարձս... Բայց իրապէ՞ս. վստահութեան այս չնչին այցը կրնա՞ր օգուտ մը տալ: Քաղաքական գործիչները, որոնց կարգին ե՛ւ ամուսինս, իրենց անվերապահ վստահութիւնը ցոյց չէի՞ն տուած միթէ Պոլիս եւ Տաճկաստան մնալով պատերազմի ընթացքին, երբ կրնային հեռանալ... Վերջերս մերժած էին բանտէն փախչիլ, երբ հնարաւոր եղած էր այդ, սպասած էին օրինաւոր ազատման: Միթէ վստահութեան զօրաւոր ապացոյց մը չէ՞ր այդ:

Առաջին անգամն ըլլալով յեղափոխական ղեկավարներու դէպի թուրք իշխանութիւնը ցոյց տուած վստահութեան եւ հաւատքի քաղաքականութիւնը ինձ երեւաց խարխուլ, այնպէ՛ս խարխուլ:

Արայի համար, ա՛յսպէս քալելով կրնամ առանց ընկրկելու մտնել բոցերու մէջ, ինքզինքս յանձնել կատաղի ալիքներուն. իսկ այս վերադարձը ինձ կ'երեւի ծա՛նր... այնպէս ծա՛նր, որովհետեւ չեմ հաւատար այլեւս անոր կարելիութեան...

Ա՛խ, մէկը ըլլար, որուն կարենայի ըսել. «Կը վախնա՛մ, կը վախնա՛մ տուն մտնել գաղտնի ոստիկանին լկտի նայուածք-

ներուն տակ: Կը վախնամ փողոցին գիշերային աղմուկներէն, որոնք կրկին պիտի լեցուին տունս ու պիտի փակչին կահկարասիներուս... Կը վախնամ անբացատրելի, անշօշափելի, անանուն արհաւիրքներէն, որոնք կը ծանրանան վրաս: Կը վախնա՛մ սպասումէն»... Բայց որո՞ւ ըսել այդ:

Արային միայն պիտի խոստովանիմ: Անոր միայն կրնամ ըսել այդ ամէնը, առանց կարմրելու: Պիտի հասկնա՛յ: Պիտի ըսե՛մ, պիտի ըսե՛մ...

Այս միտքը քիչ մը մխիթարեց զիս:

Յիշեցի, որ Արային տարուած օրը, երբ կէսօրին ան ճաշելէ վերջ իր աշխատանքին կ'երթար, ես ինչպէս միշտ, պատշգամը ելայ՝ իր ետեւէն նայելու եւ փողոցէն իր տուած բարեւին պատասխանելու համար: Ծիշո՞ այդ միջոցին փողոցէն յուղարկաւորութիւն մը կ'անցներ: Պոլսոյ մէջ քրիստոնեաները դազադին կափարիչը չէին դներ այն ժամանակ. հիմա ինչպէս կ'ընեն, չեմ գիտեր: Մեռելը ամբողջութեամբ կ'երեւեր փողոցներէն եկեղեցի եւ եկեղեցիէն գերեզմանատուն տարուած ժամանակ: Դազաղը կը գոցէին միայն փոսը իջեցուցած ժամանակ: Մեռելը, եթէ երիտասարդ աղջիկ էր, կը հագցնէին հարսի մը պէս, պսակով, քօղով: Եթէ երիտասարդ տղայ էր, փեսայի պէս: Մնացեալները կը հագուեցնէին իրենց ամենալաւ զգեստը ու չորս մարդ դազաղը ուսերնուն դրած՝ քահանաներով, տիրացուներով եւ յուղարկաւորներով շրջապատուած կը տանէին եկեղեցի եւ յետոյ գերեզմանատուն:

Այդ օրը մեռելը երիտասարդ յոյն աղջիկ մը ըլլալու էր, քահանաներու հագուստէն ու աղօթքներէն դատելով: Հարսի ճերմակ քօղն ու պսակը խորը ինկած փակ աչքերուն, տանջուած ու սեղմուած բերանին եւ հիւծած դէմքին հետ այնպիսի հակապատկեր մը կը կազմէին, յուղարկաւոր ազգականներուն լացը եւ աղօթքի ձայներու խառնուրդը այնքան յուզիչ էին, որ ես սարսափած՝ պատշգամէն պոռացի Արային.

– Արա՛... տո՛ւն վերադարձիր, կը վախնա՛մ...

Փողոցին աղմուկէն Արան չլսեց ձայնս, դարձաւ անկիւնը ու անյայտացաւ:

«Իրիկունը կը պատմեմ», – մտածեցի ու մխիթարեցի ինքզինքս, թէեւ վստահ էի, որ իրիկունը, վերադարձին երբ պատ-

մէի, ան պիտի խնդար իր բարձր, զիլ ծիծաղով ու պիտի ըսեր.

«Այ քե՛զ յեղափոխականի կին... Փողոցէն անցնող յուղարկաւորութենէն իսկ վախցող պզտիկ աղջիկ, եկեր ես ու յեղափոխականի կի՛ն ես եղեր... Վայ քեզ»:

Այդպէս պիտի ըսեր, բայց այդպէս խօսած ժամանակ իսկ, ծիշդ պզտիկ աղջկան մը պէս զիս իր գիրկը պիտի նստեցնէր ու գուրգուրար...

Ես յուղարկաւորութենէն վախնալուս մասին չկրցայ խօսիլ իրեն, որովհետեւ իրիկունը, հազիւ վերադարձած, առին, տարին զինք...

Չեմ գիտեր, ինչո՞ւ կը յիշեմ այս աննշան դէպքը հիմա տուն վերադարձիս: Մէկիկ-մէկիկ միտքս կու գան կեանքիս ընթացքին ունեցած բոլոր վախերս... Անգամ մըն ալ վախցայ, երբ...

– Հանըմ, ի՞նչ կ'ընես...

Մէկը կը քաշէ թելս ու կը պոռայ: Ոստիկա՞նն է արդեօք: Ի՞նչ փոյթ, թող ոստիկանը ըլլայ, ես այնքա՛ն յոգնած եմ, այնքա՛ն: Կը դառնամ:

Ո՛չ, ոստիկանը չէ, պարզ անցորդ մըն է, որ կը կեցնէ զիս, որովհետեւ պզտիկիս հետ ուղղակի դիմացէն եկող, փայտով լեցուն խոշոր կառքին դէմ կ'երթամ... Կը տեսնեմ կառապանին բարկութիւն արտայայտող դէմքը, անցորդին վախէն ու զարմանքէն խոշոր բացուած աչքերը, եւ քունէն արթնցածի մը նման չորս կողմս կը նայիմ: Չեմ հասկնար թէ ինչպէ՛ս եղաւ: Ոտքի վրայ քո՞ւն էր աս, ինքնամոռացո՞ւմ, յոգնածութի՞ւն, թէ մէջս եղող ուրիշ «ես» մը վճռած էր, որ երկուքս ալ այսպէս...

– Այլեւս երբե՛ք... երբե՛ք... ծագուկս, երբե՛ք...

Կ'ուզեմ մեզ ազատող մարդուն շնորհակալութիւն յայտնել, բայց ան արդէն հեռացեր է: Թէեւ հեռուէն ալ շուտ-շուտ կը դառնայ մեզի նայելու համար: Չարմացած է անշուշտ: Չեռքովս իրեն շնորհակալութեան նշան մը կ'ընեմ ու վճռականապէս կ'ուղղուիմ դէպի տունս:

Նախ քան տուն երթալս, ճամբաս կը շեղեմ՝ բժ. Տոնիկեանը տեսնելու եւ տղուս սննդառութեան մասին խորհուրդներ հարցնելու համար: Ծուտով եօթը ամսական պիտի ըլլար, պէտք էր այլազանութիւն դնել սնունդին մէջ: Ան շատ սիրով կերաւ Չառոյի պատրաստած հիւսերը, բայց անոնք պատա-

հական եւ ժամանակաւոր բաներ էին: Պէտք էր բժիշկին կարծիքն ունենալ:

Դիւրութեամբ գտայ բժիշկին տունը. հոն գացած էի քանի մը անգամ ամուսնոյս հետ իմ տկարութեանս պատճառաւ: Ան կը բնակէր երրորդ յարկը, գիտէի այդ, բայց իմ բազմաթիւ զանգերուս պատասխան տուող չէղաւ:

Վարը՝ դռնապանուհիէն իմացայ, որ բժ. Տոնիկեանն ալ տարեր են միւս մտաւորականներուն հետ, կնոջ բացակայութեան: Կինը իր վեց տարեկան տղուն հետ Ֆրանսա գացած էր՝ ծնողները տեսնելու եւ ամառուան ամիսները անցընելու համար:

Ուրեմն, կինը եղածէն լուր չունէր դեռ: Դռնապանուհին ցոյց տուաւ կնոջմէն եկած նամակները, որոնք իրարու վրայ դիզուած պատասխանի կը սպասէին: Նոյն առաւօտ հասած հեռագիր մը նամակներուն վրայ թառած էր հարցական նշանի մը նման...

Տխուր էր տեսնել այդ նամակներու կոյտը, ուր կինը կարօտն ու հոգերը դրած էր: Եւ դեռ քանի՛ նամակներու կոյտեր դռնապաններու մօտ կամ նամակատուները մնացած՝ այսպէս պատասխանի կը սպասէին:

Քիչ մը տատանուելէ վերջ, առի եւ բացի հեռագիրը: Մեր կեանքը մեզ դուրս նետած էր քաղաքավարութեան պայմանադրական շրջանակէն...

Կինը կը հեռագրէր. «Եթէ անպատասխան մնանք քսանը չորս ժամ, կու գանք»...

Պէտք էր առանց ուշանալու արգիլել այդ կնոջ անօգուտ կերպով այս դժոխքը գալը: Անմիջապէս հեռագիր մը շարադրեցի, դրամը աւելիով տուի դռնապանուհիին եւ խնդրեցի, որ անմիջապէս նամակատուն տանի:

Գրած էի. «Մնացէ՛ք: Սպասեցէք նամակի: Սոնա»:

Բժիշկին կինը թէեւ կը ճանչնար զիս, բայց անշուշտ պիտի զարմանար, որ ամուսնոյն տեղ, ինձմէ պատասխան կը ստանար:

Նոյն օրն իսկ նամակ պիտի գրէի իրեն՝ քօղարկուած ձեռով անհրաժեշտ տեղեկութիւնները միայն տալով:

Մտադրեցի Նշան Թաշի քարերուն վրայ Սիրարփիին պատահած ժամանակիս խնդրել իրմէ, որ Աշոտին յայտնէ այս մա-

սին: Ան կրնար իր գիտցած միջոցներով Փարիզ նամակ գրել ընկերոջ մը, որ պետք եղած տեղեկութիւնները հասցնէ բժիշկին կնոջ: Այլապէս անհամբեր կինը կրնար վերադառնալ եւ երկու թիւեր, ինքն ու զաւակը, աւելցնել արդէն եղածներուն վրայ:

Կ'ուզէի օգտուիլ այսօրուան ազատութենէս, հետեւող չունէի, անպատճառ բժիշկ մը տեսնել տղուս համար:

Չուիցերիացի ծեր բժիշկ մը կը ճանչնայի, որուն կնոջը Լոզան հանդիպեր էի ուսանողութեանս ընթացքին: Երկուքն ալ երկար ժամանակ ապրած ըլլալով հայկական գաւառներու մէջ, ուր բժիշկը հիւանդանոցի մը մէջ կը պաշտօնավարէր, շատ կը հետաքրքրուէին Պոլսոյ հայկական կեանքով: Ներկայ կ'ըլլային համերգներու կամ այլ երաժշտական երեկոյթներու: Մեծ համարում ունէին հայերու ընդունակութիւններու մասին, կը հիանային մասնաւորապէս ձեռարուեստի մէջ հայուն ցոյց տուած նրբութեան եւ ճաշակին:

Իրենց տունը, որ Բանկալթիի գլխաւոր ճամբուն վրայ կը գտնուէր, զարդարուած էր հայկական գորգերով, վանեցի ոսկերիչներէ փորագրուած արծաթ աշտանակներով, մոխրամաններով ու հայուհիներէ ասեղնագործուած նուրբ ժանեակներով: Ունէին հայ անուանի ծովանկարիչ Այվազովսկիի մէկ փոքրիկ ինքնատիպ նկարը եւ անոր հռչակաւոր «Փոթորիկ» նկարին մէկ ընդօրինակութիւնը:

Նախ քան ամուսնանալս կը սիրէի իրենց տունը երթալ: «Յայաստան եկայ» կ'ըսէի իրենց խնդալով: Ինձ համար նոր եղած Պոլսոյ աղմկալից միջավայրին մէջ այս խաղաղ, բարեկիրթ եւ սիրալիր անկիւնը կը հանգստացնէր զիս:

Դժբախտաբար, ամուսնանալէս վերջ, լքեր էի քիչ մը իմ ծեր բարեկամներս: Այս լքումին մէջ մեծ բաժին ունէր առողջական վիճակս եւ փոքրիկին աշխարհ գալը, բայց եւ այնպէս յանցաւոր կը զգայի եւ կը վարանէի երթալ իրենց այսպէս պետք ունեցած ժամանակս միայն: Կը վարանէի, բայց նկատեցի, որ բռներ եմ արդէն իրենց տան ճամբան: Տղուս առողջութեան համար աւելի լաւ խորհրդատու մը չէի կրնար գտնել: Նկատած էի, որ Չուիցերիոյ մէջ երախան «իշխան» է, անգիտակից բռնակալ: Կարծես ամբողջ պետութիւնը մէկ նպատակ ունի՝ երեխային երջանկութիւնը, անոր առողջութիւնը...

Ընդունեցին զիս հարազատի մը պէս: Բազկաթոռ մը ինձի, ուրիշ մը տղուս, բարձերով շրջապատուած: Պահ մը անխօս կը նայէինք իրարու, կարծես երեքս ալ յանկարծ համրացեր էին:

Բժիշկը եւ իր կինը չէին կրնար իրենց զարմանքը զսպել ինձ նայելով: Երեւի փոխուած էի շատ: Չարմանքը կը փոխուէր խորունկ գութի արտայայտութեան:

Ճնշուեցայ եւ լռութիւնը խզելու համար՝ ըսի՝ ժպտիլ փորձելով:

– Նորէն Յայաստան եկայ... Այս անգամ իշխանի՛ս հետ:

Թեւ ֆրանսերէն կը խօսէի, բայց «Յայաստան» բառը հայերէն ըսի: Կը ճանչնային այդ բառը եւ շատ մը ուրիշներ ալ:

– Այո՛, Յայաստան եկար... Երանի այս անգամ ալ ան տար քեզ այն խաղաղութիւնը, որ ամէն անգամ կը գտնէիր... Կը յիշէ՞ս:

– Օ՛, անշուշտ կը յիշեմ,– կը պատասխանեմ,– այսօր աւելի քան երբեք պետք ունիմ այդ խաղաղութեան, այնպէ՛ս պետք ունիմ:

– Ինչո՞ւ մինչեւ հիմա չեկաք,– կ'ըսէ բժիշկին կինը,– գիտէք որ տան անդամի պէս կ'ընդունինք ձեզ... Այս վիճակին հասեր էք...

Կը պատմեմ, թէ կը հետեւէին ինձ եւ թէ ինչ ձեւով այսօր ազատ եմ եւ կ'օգտուիմ իմ ազատութենէս: Յետոյ կ'ըսեմ մտահոգութիւնս տղուս առողջութեան մասին եւ խորհուրդ կը հարցնեմ իրեն տրուելիք սնունդին մասին:

Ծերունի բժիշկը, մանրակրկիտ քննութենէ մը վերջ, որ անհամբերութեան ծիչեր արծակել տուաւ տղուս, ըսաւ ինձ.

– Votre enfant est solide comme un roc: Դուք էք որ խնամքի պէտք ունիք: Աններելի է ձեր վարմունքը, կը հասկնա՞ք: Երբ որ բնութիւնը ձեզ տուեր է այսպիսի շքեղ կառուցուածք, դուք իրաւունք չունիք այս վիճակին հասնելու: Կը հասկնա՞ք... Յանցաւոր էք... Կը հասկնա՞ք... Պետք է ձեզ խնամէք... Կը հասկնա՞ք... Զեզի ուժի դեղեր պիտի տամ, պիտի առնէ՞ք... Կը հասկնա՞ք... Յիմա պիտի քննեմ ձեզ... Յանեցէք աս:

Կը քննէ զիս ուշի ուշով:

– Բան չկայ,– կ'ըսէ մտահոգ սպասող կնոջը.– սաստիկ սակաւառութիւն, ուժասպառութիւն: Ի՞նչ պիտի ըլլայ, յուզում,

սնունդի պակաս, այնպես չէ՞,– կը դառնայ ինձ ծերունի ու բարի բժիշկը.– պիտի խոստանաք, որ լաւ պիտի ուտեք ու քնանաք, այո՞: Այլապէս լուրջ կը հիւանդանաք, կը հասկնա՞ք...

Կը հասկնամ: Շատ լաւ կը հասկնամ ու կը զգամ ալ, որ քիչ առաջ փողոցը պատահածը հոգեկան եւ ֆիզիքական ուժասպառութեան հետեւանք էր անշուշտ: Բայց ի՞նչ կրնամ ընել:

– Mais la petite est toute seule,– կ'ըսէ կինը ամուսնոյն, միս միսակ,– կը հասկնա՞ս այս բանը...

Իրարու կը նային նշանակալից: Կը զգամ, որ պիտի ուզէին զիս իրենց քովը պահել: Պայքար կայ սրտերուն մէջ: Պահե՞ն, չպահե՞ն: Ծեր ես, զգոյշ, կրնան լուրջ անախորժութիւններու հանդիպիլ:

Իրաւունք ունին:

Իբր թէ չեմ նկատած փոխանակուած նայուածքները, կ'ըսեմ իրենց.

– Պետք է տուն վերադառնամ: Իմ տանս մէջ խաղաղ ապրիլս անհրաժեշտ է ամուսնոյս ազատման համար: Ա՛լ վարժուեցայ արդէն, չե՛մ նեղուիր:

Թէյ եւ խմորեղէն կը բերէ սպասուհին, որ հայուհի մըն է եւ երկար տարիներէ ի վեր իրենց քով կ'աշխատի:

– Պոլսոյ ժողովուրդը համեմատաբար բախտաւոր է,– կ'ըսէ բժիշկին կինը.– Սվագի մէջ միսիոնար եղող եղբայրս անկարելի բաներ կը գրէ: Եթէ եղբօրս վրայ հաւատք չունենայի, կամ ուրիշը գրէր ինձ այդ բոլորը, պիտի չհաւատայի... Մարդ չի հասկնար, թէ ինչպէս մարդկային էակ մը, որ մտածել կրնայ, զգալ կրնայ, իրեն թոյլ կու տայ այդ տեսակի արարքներ:

– Ի՞նչ կը գրէ ձեր եղբայրը,– կը հարցնեմ հետաքրքրութեամբ:

Կ'ուզեմ իմանալ, որպէսզի Սիրարփիի միջոցով յայտնեմ Աշոտին եւ միւսներուն:

Բժիշկին կինը տքալով տեղէն կ'ելլէ – յօդացաւ ունի եւ վաթսունը անց – նամակը կ'առնէ ու կու տայ ինձ, որ կարդամ:

«Կիսախելագար վիճակի մը մատնուած եմ, սիրելի քոյր,– կը գրէր քարոզիչը իր քրոջ.– «Չեմ գիտեր թէ մե՞նք ենք խելագարները, որ չեղած բաները կը տեսնենք, թէ ոճրագործներն են որ հաւաքական խելագարութեամբ կը տառապին: Աչքովս տեսայ

թէ ինչպէս ոստիկանները յղի կիներու առջեւ պաղարիւնութեամբ գրաւի կու գային, թէ կնոջ փորին մէջ եղած մանուկը մա՞նչ էր թէ աղջիկ: Յետոյ, կնոջ սոսկումէն խոշոր բացուած աչքերուն եւ ցաւի աղաղակներուն ուշադրութիւն իսկ չդարձնելով՝ սուրով կը ճեղքէին փորը եւ... կը կորսնցնէին կամ կը շահէին գրաւը: Կարծես մարդկային կեանքերու հետ չէր իրենց գործը, կարծես կարելորդ ա՛յն քանի մը դահեկանն էր, որ պիտի կորսնցնէին կամ շահէին... Երեք օր առաջ ամերիկացի միսիոնար Միստըր Ֆաուլի հետ որոշեցինք, աքսորի կարաւանին անցնելէն վերջ, հապճեպով մեր պատրաստած որբանոցը երթալ: Կարաւանին անցնելէն վերջ ամայի են ճամբաները, այսինքն՝ ճամբաները դիակներով միայն լեցուն են: Շատ անգամ հրաշքով ազատուած մանուկներ կը շարունակեն ծծել արիւնլուայ եւ շատոնց սառած մօր ծիծերը... Ու կու լան, որովհետեւ քարացեր է, չորցեր ու պաղեր է մօրը ծիծը... Ուրիշներ երեք-չորս տարեկան, բնագոյրէն կը մօտենան իրարու եւ ձեռք ձեռքի տալով կը հեռանան, իրենք ալ չեն գիտեր ո՛ւր: Կարծես մարդկային ահաւոր հունձք մըն է կատարուած, եւ ասոնք տակը մնացած հատիկներն են»...

Ձեռքերս կը դողան, բայց կ'ուզեմ շարունակել, երբ բժիշկը, որ հիւանդի մը համար դուրս ելած էր, ներս կը մտնէ ու նամակը ձեռքէս խլելով կը յանդիմանէ կինը.

– Այս խեղճ փոքրիկին դառնութեան բաժակը լեցուն է արդէն,– կ'ըսէ,– կը հասկնա՞ս... Այսպիսի վիճակի մէջ գտնուողները մենք Չուիցերիա բուժարան կը դնենք, կը հասկնա՞ս... Կատարեալ հանգիստ, կատարեալ հանգիստ...

– Բայց, սիրելի՛ս, շատ անգամ, աւելի մեծ դժբախտութեան մը նկարագրութիւնը մոռցնել կու տայ մարդուն իր անձնական վիշտը: Վերջապէս, Սոնան իր երեխան բարեկամ բժիշկի մը բերելու հնարաւորութիւն ունի եւ հաւանական է, որ շուտով իր սիրելի ամուսինն ալ կը վերադառնայ... Նամակին մէջ նկարագրուածին եւ իր վիճակին միջեւ տարբերութիւնը մեծ է, այնպէս չէ՞, սիրելի՛ Սոնա...

Գլխովս հաւանութեան նշան կու տամ սիրալիրութեան համար, այլապէս քիչի շատի, ամէն չափի զգացում կորսնցուցեր եմ: Ծիշո՞ւ է, որ նամակին մէջ նկարագրուածը կարծես չի կրնար

տեղաւորուիլ ուղեղիս մէջ... տեղը քիչ է, ու հարուածներ կու տայ գանկիս... Այնպէ՛ս գլուխս կը ցաւի: Կը զգամ, որ եթէ մնամ այդ հանգստաւետ թիկնաթոռին մէջ, գլուխս պիտի յենի բարձին ու աչքերս փակեմ... Հաւանական է որ քնանամ:

Ճիգ մը կ'ընեմ ու ոտքի կ'ելլեմ:

– Ոստիկանը զիս կարօտցած է,– կ'ըսեմ կատակելով.– անհանգիստ ըլլալու է, լաւ է որ վերադառնամ տուն: Երբ Արան վերադառնայ, մեր առաջին այցելութիւնը պիտի ըլլայ ձեր մօտ:

Շատ հաւատքով կ'ըսեմ այս խօսքերը ու իրենց կը նայիմ հաստատող, յուսադրող խօսք մը լսելու համար, բայց երկու ծերունիները կը լռեն, թերեւս յոգնած են արդէն: Ես իրենց խաղաղ ու ժամացոյցի պէս կանոնաւոր կեանքը ալեկոծեցի յաջորդ օրերուն համար ալ:

Խղճի խայթ ունիմ, կ'ուզեմ անփոյթ երեւիլ, կ'ուզեմ, որ չխռովուի իրենց քունը ինձ համար ու կ'ըսեմ ուրախ ձայնով.

– Ի՛նչ լաւ պիտի ըլլայ այսպէս միասին ծերանալը, առանց խօսելու ալ իրար հասկնալը: Ես ու Արան ալ այսպէ՛ս պիտի ծերանանք...

Նախ քան բաժնուիլը սիրով կը նայիմ ծերունիներուն... Որքա՛ն նման են իրարու: Աւելի քան քառասուն տարիներ միասին ապրուած կեանքը նոյն ծալքերը դրեր է իրենց ճակատին, բերնի անկիւններուն, անոնց տուեր է նոյն շարժումները, նոյն ժպիտը ու հարցական նայելու նոյն ձեւը... Չեմ կարծեր, որ այս ամուսինները երբեւիցէ գեղեցիկ եղած ըլլան, բայց հոգեպէս եւ ֆիզիքապէս մաքուր ապրուած կեանք մը անգնահատելի լոյս մը դրեր է իրենց դէմքին:

Գուրգուրանքով կը համբուրեմ երկուքն ալ ու կը մեկնիմք:

Ճամբան դեղարանէն կը գնեմ ծեր բժիշկին յանձնարարած ալիւրները փոքրիկիս համար, քիչ յետոյ ալ Չառոյին ապսպրածները ինձ համար, հաց եւ պտուղներ: Հնազանդութեան օր է այսօր: Չառոյի խօսքերը դեռ ականջիս կը հնչեն. «Եթէ հարկ ըլլայ քար ալ պէտք է կլլես այս տղուն համար»...

Քիչ առաջ բժիշկին տունը սկսած սուր գլխացաւը ինձ հետ է նորէն: Կը քալեմ արագ, կարծես այդ անտանելի ցաւէն հեռանալու համար: Բայց կը զգամ որոշ, որ ցաւը միտք մըն է, միայն, որ փուշի պէս մտեր է ուղեղիս մէջ եւ հետզհետէ աւելի

կը խրի: Եթէ նամակին մէջ գրուածին պէս վայրագութիւններ կը կատարուին, կը նշանակէ թէ Արան ու իր ընկերներն ա՛լ վտանգաւոր չեն... Իրապէս ալ վտանգաւոր չեն: Ի՛նչ կրնան ընել, այդպէս չեզոքացուած, այդպէս անկարող վիճակի մատնուած:

Արդեօք Արան կ'իմանա՞յ այս ողբերգութիւնը: Կը զգամ, որ մահը նախընտրելի է անոր համար, քան իր սիրած ժողովուրդին այս տառապանքը տեսնել կամ լսել, տեսնել առանց օգնել կարենալու:

Պահ մը այդ համոզումը այնքան որոշ է մէջս, որ ինձ պատրաստ կը զգամ որ այս միևնակ կեանքը տղուս հետ, ոստիկանի հսկողութեամբ իսկ եւ իր բոլոր սոսկումներով մինչեւ կեանքիս վերջը տանիլ, միևնակ տանիլ, միայն թէ ան չզգայ այդ տառապանքը, անոր հոգին չփշրուի իր ժողովուրդին կրած զարհուրանքով: Թո՛ղ չզգայ անյատակ, անսահման որեւէ բառով չբացատրուող արհաւիրքը իր այս անգօր վիճակին մէջ:

Լաւ է չմտածեմ... Այս բոլորը չարչրկուած ուղեղիս ստեղծած մտքերն են... Կը յիշեմ, Չառոյին տունէն ելլելէս վերջ, փողոցը ինձ պատահած տարօրինակ դէպքը, այդ կիսաքնած կիսանգիտակից վիճակը ու կը վախնամ, որ կրկին այդ վիճակին մէջ իյնամ: Բժիշկը իրաւունք ունի, ես ուժասպառ եմ... Արդէն տկար վիճակիս մէջ պատահած դէպքերը, անքուն գիշերները, անսնդառութիւնը եւ օրուան ընթացքին լսածներս հիւանդագին վիճակի մը հասցուցեր են զիս:

Պէտք չէ՛, որ մտածեմ, պէտք չէ՛, որ մտածեմ...

Բայց կարելի՞ բան է պատկանիլ ժողովուրդի մը, որուն յոյ կանանց փորերը կը ճեղքեն գրաւի համար, եւ շարունակել սպասել վերադարձի՝ կրկին երջանիկ ըլլալու համար... Կարելի՞ բան է... Կարելի՞ բան է...

Արագ կը քալեմ ու ես ինձ կը կրկնեմ. «Պէտք չէ որ մտածեմ, պէտք չէ՛ որ մտածեմ»: Բայց ուղեղիս մէջ մտած միտքը կը շարունակէ գանկիս գարնել, կարծես ըսել կ'ուզէ. «Միթէ չե՞ս հասկնար, միթէ չե՞ս հասկնար»:

Այս ճամբան անվերջանալի է, հիմա շո՛ւտ կ'ուզեմ հասնիլ տուն, համոզուած որ բոլոր միտքերը եւ այս միտքերը ծնող լուրերը պիտի մնան դուրսը, փողոցը, պիտի չհամարձակին մտնել Արայի տունը...

Բայց Արան բանտարկուած է, թերեւս շղթայուած, կ'ըսէ ինձ

ուղեղիս մէջ փուշի պէս խրուած միտքը, ի՞նչ կրնայ ընել քեզ համար:

– Արան աքսորուած է միայն,– կ'ըսեմ գրեթէ բարձր ձայնով.– Արան միմիայն աքսորուած է կարճ ժամանակով, շատ կարճ ժամանակով... պիտի գա՛յ...

Վերջապէս, ե՛ս կը յաղթեմ ժամերէ ի վեր ծակող միտքին եւ յաղթական կը կրկնեմ.– «Աքսորուա՛ծ է միայն... պիտի գա՛յ»...

Ա՛յ հանդարտ կը քալեմ դէպի տուն:

Մեր փողոցի գաղտնի ոստիկանը անհամբերութեամբ կը քալէ վեր-վար: Չիս տեսնելուն պէս ուրախութեան շարժում մը կ'ընէ, կարծես անհամբերութեամբ սպասուած սիրելի մը կը տեսնէ: Միայն մօտենալն ու ինձ բարի գալուստ մաղթելը պակաս է...

Որքան ուրախութեան շարժումով ընդունուեցայ գաղտնի ոստիկանէն, այնքան դժգոհութեամբ կ'ընդունուիմ տանտիրուհիներէս: Ոտնաձայնս առնելուն պէս, մայր ու աղջիկ դուռը բացին ու զարմացած ինձ կը նայէին, կարծես ուրուական մը ըլլայի: Յաւանական է, որ զիս ալ բանտարկուած կը կարծէին եւ արդէն իրենց մտքին մէջ ունեցած խեղճ ու կրակ կարասիներս գնահատած, ծախած էին ու իմ դէռ մէկ ամիս կանխիկ վճարած տան վարձքիս միացնելով դրամատուն դրեր էին... միշտ միտքով...

Հագիւ կը պատասխանեն բարեւիս ու դուռը կը փակեն ադմուկով:

Ուրիշ անգամ շատ պիտի ազդուէի: Ամենափոքրիկ կոպիտ վերաբերումն իսկ խորապէս յուզած է միշտ զիս, փոքրիկ տարիքէս ալ, բայց հիմա կը շարունակեմ բարձրանալ անվրդով:

Իրական կեանքին եւ իմ միջեւ հիմա փոքրիկ, բայց ահաւոր ճեղք մը կայ, որ ոչ մէկ վերադարձ չի կրնար լեցնել այլեւս...

Յարկաբաժնիս դրան առաջ կանգնած՝ կը նայիմ երկար, օտարի մը պէս, կարծես երկար տարիներէ ի վեր հեռացած ըլլամ: Ինչո՞ւ եկեր էի այս գերեզմանի պէս լուռ տունը: Ե՞ս էի, որ այս տան մէջ խնդացած, երազած ու երջանիկ եղած էի: Ինձ կը թուէր, որ այս տան մէջ խնդալը անհնար էր: Չարհուրելի բան մը պիտի ըլլար որեւէ ձայն հանելը այս չորս պատերուն մէջ: Ուստի ադմուկ չհանելու համար, տղաս գրկած՝ ոտքի մատնե-

րուս վրայ կը կոխեմ, զգոյշ, զգոյշ, մինչեւ կը հասնիմ մեր նստելու սենեակը:

Ինձ զարմանալի կը թուի, որ տունն սպաննուած մարդկանցով լեցուն չէ, որ կիսամեռ երեխաներ չեն շարժիր իր յատակին վրայ: Կը ծռիմ ու կը փնտռեմ մահճակալին, սեղանին տակ: Թերեւս միւս սենեակին մէջն են կամ խոհանոցին մէջ: Կռնակս կը դարձնեմ ամուսնոյս գրասեղանին: Զաջութիւն չունիմ անոր պարապ աթոռին նայելու: Ո՛րվ գիտէ, թերեւս...

Գուցէ ե՞ս եմ վիրաւորը: Կը նայիմ ձեռքերուս, դիակի մը ձեռքերուն պէս չոր են ու գունատ... Գուցէ անոր համար է, որ գլուխս այսպէս ծանր է, այսպէս անտանելիօրէն լեցուն մէկ սոսկալի կարելիութեամբ...

Ծունկերս կը ծալուին ու կը նստիմ եղած տեղս, յատակին վրայ: Աւելորդ է այլեւս որեւէ շարժում, որեւէ փափաք: Նստիլ այսպէս ու սպասել... Սպասել ինչի՞... Աւելի լաւ է ըսեմ. «Նստիլ այսպէս ու թողուլ որ»...

Տղաս կը ճչայ: Անհամբերութեան շեշտ մը կայ իր կանչին մէջ, երկա՛ր եմ մինակ թողեր: Կրկին կը ճչա՛յ, մա՛մա՛...

Ախ, այդ փրկարար ձայնը, իմ պապական հոգիիս հրաշք-վտակը...

Ինձ կը թուէր, որ այլեւս պիտի չկարենայի ոտքի ելլել: Ոտքի եմ արդէն ու կը վազեմ քովի սենեակը, տղուս քով: Գլուխս այլեւս ծանր չէ ու բազուկներս անուժ չեն: Կը գրկեմ տղաս ու կուրծքիս պինդ սեղմած՝ անոր հետ կը սկսիմ պտտիլ տնակիս մէջ...

Տունս ոչինչ ունի անբնական, գերեզմանային: Մեր տունն է ան: Քիչ մը փոշոտ, քիչ մը անխնամ, բայց մեր տո՛ւնը, մեր բո՛յնը... **Ձագուկի՛ս տունը...**

Կը վերադառնամ կրկին նստելու սենեակը: Տղաս կը դնեմ բազմոցին անկիւնը տան մեծաւորին պէս ու կը սկսիմ տունը մաքրել, աւլել, փայլեցնել... Ուժով կը զգամ ինքզինքս: Երբեմն-երբեմն կու գամ տղուս կանչերուն, իր լեզուով կը պատասխանեմ ու կը շարունակեմ մաքրել, թօթուել... Աններելի վիճակ է աս: Ամուսնոյս գրասեղանը մասնաւոր հոգածութեամբ կը մաքրեմ, կիսատ յօդուածը եւ գրիչը իրենց նախկին տեղերը կը դնեմ ու սիրով կը նայիմ չորս կողմս, հաճելի է մաքուր, տղո՛ւս տունը...

Տունը կարգ ու կանոնի դնելու վերջ, բժիշկին պատուիրած ալիւրով տղուս համար խիւս կ'եփեմ եւ սեղանը կը պատրաստեմ ընթրիքի համար: Այդ սեղանին վրայ Արային երթալէն ի վեր չէի ճաշած: Չառոյին տուած կերակուրները, իմ գնած հացս ու պտուղներս կը շարեմ ու տղաս իր աթոռակին վրայ կը տեղաւորեմ, սեղանին մօտ:

Նախ՝ զինք կը կերակրեմ, յետոյ ես կ'ուտեմ: «Այս տղուն համար, եթէ պէտք է, քար ալ պէտք է կլլես»:

Երանութեամբ կը յիշեմ զուհիցերիացի բարի բժիշկին խօսքերը. «Ձեր տղան ժայռի մը պէս ամուր է»...

Այո՛, Արա՛, տղադ պիտի ըլլայ առո՛ղջ եւ ուժո՛ւվ... ուժո՛ւվ... եթէ հարկ է, արեանս վերջին կաթիլին գնով... Երբ որ վերադառնաս, այս խորշակէն վերջ, ես ու դուն մատաղ տունկի մը շուքը պիտի ունենանք մեր խանձուած հոգին զովացնելու, թարմացնելու, ըլլալու համար...

Սամաթիան Պոլսոյ արուարձաններէն ամենէն ինքնատիպներէն մին է: Դոն մտնողը կը կարծէ տարբեր աշխարհ մը մտած ըլլալ: Անոր կը թուի, որ հոն այլ է ապրելակերպը, հագուստ-կապուստը, այլ է ե՛ւ լեզուն:

Իրականին մէջ, սակայն, սամաթիացին կը հագուի եւ կը խօսի ու կ'ապրի ամենուն պէս: Հագուստը սամաթիացիին հագելէն վերջն է միայն, որ կը փոխուի՝ յարմարելով անոր ամբողջութեան, ներքին եւ արտաքին: Լեզուն անկէ խօսուելէն վերջն է, որ կ'առնէ այլ շեշտ ու երանգ եւ կը հարստանայ համեմուած հայիոյանքներու պատկառելի բառապաշարով:

Բնակչութիւնը գրեթէ բացառապէս ձկնորսներէ կազմուած է: Բաց ծովուն վրայ, փոթորիկին, քամիին եւ ալիքներուն դէմ իրենց մղած յարատեւ պայքարը շեշտած ու կարծրացուցած է մարդկանց դիմագծերը, առանց սակայն եղծելու անոնց հոգին, որ հակառակ արտաքինին թողած տպաւորութեան, մանուկ է, միամիտ եւ խորապէս բարի:

Փոքրիկ, փայտաշէն տուները, իրարու կռթնած, այն տպաւորութիւնը կը թողուն, որ կանգուն կը մնան միայն՝ որովհետեւ իրարու կը կռթնին:

Այդպէս է նաեւ բնակչութիւնը: Դոն բնակողներէն ամեն մէկը կը յենուի միւսին վրայ՝ ինքն ալ իբր յենարան ծառայելով ուրիշի մը:

Մէկ խօսքով՝ սամաթիացի ձկնորսները մէկ մեծ ընտանիք մը կը կազմեն: Ընտանեկան այդ միութիւնը արտաքնապէս աչքի չի գարներ: Անոնք կը խորշին իրենց զգացումները դրսեւորելէ կամ իրենց հոգեկան քնքշութիւնները ցուցադրելէ: Բայց բաւական է որ դժբախտութիւն մը պատահի իրենց համայնքին մաս կազմող ընտանիքի մը մէջ, եւ այդ վիշտը իր արձագանգը կ'ունենայ բոլոր սրտերուն մէջ: Բաւական է, որ վտանգ մը սպառ-

նայ մեկու մը, եւ միւսները, նոյնիսկ եթէ երեկ կռուած են հետը, կ'երթան իրենց կեանքը վտանգի տակ դնելու՝ զայն ազատելու համար:

Սամաթիացին կը խօսի շատ բարձր ձայնով: Թերեւս ծովն է որ այդպէս ըրած է զիրենք: Ան գրեթէ կը պոռայ, եթէ նոյնիսկ քովիսին հետ խօսի, եւ բարձրաձայն կը գործածէ նաեւ հայհոյանքներու իր ճոխ մթերքը...

Կնոջը անունը երբեք չի տար, «կնիկ» կ'ըսէ, կամ «քա»: «Կնիկ, սա ձուկը կասկարայի վրայ խորովէ». «Քա՛, խելքդ ո՞ր է, կերակուրը կ'այրի նէ»...

Կնոջը անունը տալը սիրոյ խոստովանութեան պէս բան մըն է, տկարութեան նշան մը, որ սամաթիացին երբեք թոյլ չի տար ինքնիրեն: Արդէն կնոջը հետ ան շատ քիչ կը խօսի, տան մեծ երեխան է ան՝ «մազը երկար, խելքը կարճ»: Եւ երեխայի պէս ալ կինը շատ անգամ ծեծ կ'ուտէ ամուսինէն իր գործած սխալներուն համար: Երբ տունը մաքուր չէ, երբ երեխան ժամանակին դպրոց չէ դրկած, երբ բամբասել կը փորձէ, մանաւանդ, երբ իրենց վստահուած գաղտնիք մը կինը ուրիշին կը յայտնէ: Այս վերջին կետին նկատմամբ մասնաւորապէս անողոք է սամաթիացին:

Պոլսոյ եւ արուարձաններուն ձուկն ու խեցեղէնը գրեթէ ամբողջութեամբ սամաթիացիները կը հայթայթեն: Անոնց որսացած ձուկը մինչեւ անգամ կը դրկուի Թուրքիոյ զանազան քաղաքները, մասնաւոր սակառներու կամ սնտուկներու մէջ դրուելով: Ընդհանրապէս սամաթիացի ձկնորսը չի զբաղիր առաքման գործով կամ մեծ վաստակ մը չունի ատկէ: Միջնորդներն են որ կու գան տեղւոյն վրայ, չնչին գներով եւ մեծաքանակ կը գնեն ամբողջ գիշերուան ընթացքին տաժանակիր աշխատանքով բռնուած ձուկին մէկ կարելոր մասը՝ ուրիշ քաղաքներ դրկելու կամ Պոլսոյ հարուստ թաղերուն մէջ սուղ գներով ծախելու համար: Մնացեալ ձուկը սամաթիացին կը ծախէ տեղւոյն վրայ, մօտակայ արուարձաններէն եկողներուն կամ կը տանի Ղալաթիա, ձուկերու շուկան, եւ անձամբ կը ծախէ:

Սեւ ծովը, Մարմարան եւ Վոսփորը ձուկերու զարմանազան տեսակներ կը հայթայթեն: Ամէն ձուկ բռնուելու իր մասնաւոր ձեւն ունի. ան չի մօտենար, մինչեւ որ իրեն հաճելի թակարդ մը չդնեն իր տրամադրութեան տակ:

Կայ ձուկ մը՝ «կրակի ձուկը», զայն որսալու համար ձկնորսները ստիպուած են լոյս վառել գիշերուան մթութեան մէջ: Ձկնորսը երկաթէ ձողի մը ծայրը դիւրավառ փայտէ խուրձ մը կամ քարիւղով թրջուած լաթ մը կը կապէ եւ ծովուն բացերը, յարմար տեղ մը, կը վառէ: Երբեմն կը գործածեն նաեւ այդ նպատակին համար պատրաստուած քարիւղէ լամբարներ: «Կրակի ձուկ»-երը, ածապարանքով, կարծես խրախճանքի կ'երթան, կու գան հաւաքուիլ լոյսի շրջանակին մէջ, եւ ահա ձկնորսը կը նետէ իր ուռկանը ու կը բարձրացնէ առատ աւարով...

Սամաթիոյ ծովափը երկու անգամ աննկարագրելի աղմուկ եւ իրարանցում տեղի կ'ունենայ: Ձկնորսներուն մեկնած ժամանակ, գիշեր ժամանակ, եւ անոնց վերադարձին, առաւօտուն:

Երբ ձկնորսներուն վերադարձը քիչ մը կ'ուշանայ, անոնց կիներն ու մայրերը մէկիկ-մէկիկ դուրս կ'ելլեն իրենց տնակներէն եւ կ'ուղղուին դէպի ծովափ՝ նայելու համար, թէ կու գա՞ն գացողները, պահ մը կը կենան մազերնին հովուն, աչքերնին քթած աւելի հեռուն տեսնել կարենալու համար: Յետոյ կու գան տուն, կը վերսկսին տնային գործերը՝ քիչ ատենէն կրկին դուրս ելլելու եւ անձկագին նայուածք մը նետելու համար դէպի ալեկոծ ծովը:

Վերադարձը կ'ուշանայ երբեմն ձկնորս ընկերոջ մը օգնութեան հասած ըլլալուն, երբեմն ալ այդ օրը որսացուած ձուկերու սակաւութեան պատճառով, որով սպասող կանանց թիւը կը շատնայ: Եթէ ծովուն բացը որեւէ առագաստի մը սուր ծայրը չի շարժիր բարեւի մը պէս, կիները այլեւս սիրտ չունին իրենց առօրեայ տնային գործերուն դառնալու: Անոնք քով-քովի եկած՝ իրենց մտահոգութիւնները կ'ըսեն իրարու:

– Զուրիկ, ինչո՞ւ ըսանկ ուշացան,– կ'ըսէ երիտասարդ կին մը, որ նոր ամուսնացած է,– իր քովը կանգնած դրացուհիին...

– Գիշերը այագ ալ չկար, որ ըսեմ թէ...

– Ե՞րբ պիտի գան, ամբողջ պիտի գան...

Զանի՛-քանի անգամներ վերադարձողներուն մէջ բացականեր եղած են եւ եկողներն ալ ցամաք ելած են յուղարկաւորութեան գացողի մը պէս լուռ, կարծես յանցաւորներ ըլլային, որ իրենք եկած էին, մինչդեռ միւսները...

Երբ, վերջապես, հեռուէն կ'երեւին վերադարձող նաւակներու առագաստները, կիները անմիջապէս կը մտնեն տնակները իրենց կէս թողած աշխատանքները վերջացնելու համար: Միեւնոյն ժամանակ իրենք իրենց հարց կու տան թէ՛ եկողներուն մէջ կա՞յ իրենը, պիտի ուտե՞ իր պատրաստած կերակուրը առատ համեմով՝ սառած ստամոքսը տաքցնելու համար:

Հետզհետէ կը մօտենան նաւակները, առագաստները վար կ'առնուին: Կիները գաղտագողի կը մօտենան նաւամատոյցին, իրենց ամուսիններէն չտեսնուելու համար: Ձկնորսը թոյլ չի տար, որ կինը այսպէս հրապարակաւ իրեն սպասէ: Բայց մէկ նայուածքը բաւական է, որ կիները տեսնեն, թէ եկած է «իրենց»-ը: Այն ժամանակ բոլորը շտապով կը մտնեն իրենց տունները՝ այս անգամ սեղանը դնելու համար:

Կինը միեւնոյն ժամանակ փայտէ ածուխը կը լեցնէ օճախին կամ կրակարանին մէջ: Ան գիտէ, որ ամուսինը իր որսացած ամէնէն յարգի ձուկերէն մէկ երկուքը հետը պիտի բերէ՝ կասկարային վրայ խորովելու համար:

Ձկնորսը ձուկը կ'ուտէ հասկացողի ջերմեռանդութեամբ:

Փայտէ ածուխը փոքրիկ կայծեր արծակելով կը վառի եւ բարկ հոտը կը միանայ միւս օճախին մէջ եռացող կերակուրի հոտին, սենեակին օդը դարձնելով անշնչելի: Բայց ծովու օդը ներս մտնելու համար հազար ծակ ու ծուկ ունի իր տրամադրութեան տակ. հոս ապակին կոտրած է, հոն փայտը լաւ կցուած չէ, դռնն ալ լաւ չի գոցուիր:

Արդէն տղաքը, դրան սեմին նստած, յանկարծ գառնուկի պէս խելօք, հայրիկնին կը սպասեն: Երբ որ մտնէ, պիտի երթան ձեռքը պագնեն. յետոյ մէկը ջուր պիտի թափէ ձեռքերուն որ լուացուի. միւսը անձեռոցը պատրաստ պիտի պահէ, որ լուացուելուն պէս, անմիջապէս տայ: Այս արարողութեան ժամանակ որեւէ թերութիւն աններելի է:

Տղաքը երկար պիտի սպասեն: Կինն ալ, տղաքն ալ գիտեն, թէ եկողը անմիջապէս տուն պիտի չգայ: Ան նախ իր ցուրտէն ընդարմացած ձեռքերովը ձուկերը պիտի գատէ ըստ տեսակի, ըստ մեծութեան: Յետոյ ձկնավաճառներու շուկային մէջ ծախելիքը պիտի դնէ առանձին տեղ, իսկ միջնորդներու միջոցով ուրիշ քաղաքներ դրկուելիքը պիտի շարէ մասնաւոր զամբիւղ-

ներու մէջ, աղալէն կամ սառոյցներու մէջ ծածկելէն վերջ: Այս բոլորէն յետոյ, ուռկանները պիտի փռէ չորցնելու համար, նորոգուելու պէտք ունեցող ուռկանը, առանձին տեղ պիտի դնէ, որպէսզի կինը գայ, տանի նորոգելու համար:

Եթէ ձկնորսը տասը տարեկան կամ ավելի վեր տղայ ունի, ան կ'օգնէ իրեն այս բոլոր գործերուն:

Նաւամատոյցը իր գործը վերջացնելէ վերջ միայն, ձկնորսը դանդաղ քայլերով, իր ձեռքը բռնած տան համար պահած ձուկը, կ'ուղղուի ոչ թէ դէպի տուն, այլ դէպի Կարպիսի սրճարանը՝ քանի մը գաւաթ օղիով շարժման մէջ դնելու համար ամբողջ գիշերուան ընթացքին քամիէն, ցուրտէն ու անքնութենէն իր փայտացած անդամները:

Ձկնորսները Կարպիսի սրճարանէն ներս մտնելուն պէս միայն կարծես իրար կը տեսնեն: Խօսակցութիւնները կը սկսին միաժամանակ ու բարձրաձայն: Ամէն մէկը իր յաջող կամ անյաջող որսի մասին կը խօսի, բռնած ձուկերուն անունները կու տայ ու անոնցմէ գալիք հաւանական շահուն մասին կը խօսի:

– Ծօ,– կ'ըսէ յանկարծ Թորոս, տարիքոտ ձկնորս մը, որ պէտի մը չափ հեղինակութիւն ունի,– Մարիամին ու չօճուխներուն ձուկը տանելու կարգը որո՞ւնն է այսօր:

– Իմն է,– կը պոռայ չոր ու բարձրահասակ մէկը:

– Տէ՛, լակոտ, շարժուէ՛ տեսնեմ: Սկումբուն քիչ մը եւելօք դիր, թո՛ղ ձմեռուան համար աղը դնէ... Դէ՛հ, այս «երկնքին կրակէն» հատ մըն ալ ճկենք ու երթանք տուն դգալ մը տաք բան թխմելու: Տեսնենք մեր կնիկները ի՞նչ են եփեր մեզ համար... Անոնց հերն անիծա՛ծ...

Կարպիսին սրճարանը մտած ժամանակ գունատ էին: Հիմա անբնական կերպով կարմրած են, եւ աչքերը հիւանդագին փայլ մը ունին: Բայց քանի մը ժամ քունը, տաք ապուրը ու խորոված ձուկը պիտի կազդուրեն գիրենք: Յետոյ իրենց ձուկերը, հայհոյանքի պաշարը, բայց եւ իրենց բարի սրտերը իրենց հետ առած՝ պիտի երթան Պոլսոյ շուկան՝ իրենց ձուկերը ծախելու եւ վերադարձին տան համար պէտք եղածը գնելու:

Փոքրիկը կօշիկի պէտք ունի դպրոց երթալու համար. կինը քանի ժամանակ է գոյգ մը գուլպայ կ'ուզէ,– կը մտածէ ձկնորսը, եթէ այսօր առելտուրը լաւ ըլլայ, ձուկերը լաւ գինով ծախ-

լին, պիտի գնէ անպատճառ այս երկու բաները: Թեւ ինչպէս միշտ, նախ պիտի ըսէ կնոջ.— «Կնիկ, աս քանի՞ հեղ գուլպայ պիտի գնենք քեզի համար մէկ տարուան մէջ»...

Կիներն ալ պարապ չեն նստիր: Իրենց տան գործերը, լուացքը, կարկտանը վերջացնելէ յետոյ, ուռկան կը հիւսեն կամ կը կարկտեն՝ օգնելով իրենց ամուսիններուն:

Սամաթիա մուրացող կամ հացի կարօտ աղքատ չկայ: Ծովու վրայ անհետացած ձկնորսներուն այրիներն ու որբերը իրենց բաժինն ունին ձուկերէն: Ամուրի ձկնորսներ, որոնք ծերունի մայր ունին, իրենց ուռկանները հիւսել կամ կարկտել կու տան այրիներուն եւ այսպէս առիթ կու տան, որ այրին որոշ գումար մը ունենայ իր որբերը պահելու համար:

Երբ որբը տասը-տասներկու տարեկան կ'ըլլայ, տարիքոտ եւ փորձառու ձկնորս մը, իր հովանաւորութեան տակ կ'առնէ զայն՝ ձկնորսութեան գաղտնիքները սորվեցնելու եւ ապագայ ձկնորս մը պատրաստելու համար:

Սամաթիացին գէշ աչքով չի նայիր իր ընկերոջ կնոջը կամ աղջկանը: Եթէ բացառապէս որեւէ անախորժ դէպք մը պատահի, խնդիրը երբեք պաշտօնական դատարան չի տարուիր, այլ կը կարգադրուի իրենց մէջ, ամէնէն տարիքոտին կամ յարգուածին տալով վերջին խօսքը: Այդ վճիռին կ'ենթարկուին նոյնիսկ ամէնէն ըմբոստ համարուածները, այլապէս պետք է հեռանան գիւղէն, տուն ու տեղէն, այնքա՛ն անկարելի կ'ըլլայ իրենց կեանքը:

Այս գիւղին բնակիչները առհասարակ քաղաքականութեամբ չեն զբաղիր, աւելի ճիշդ, իրենց քաղաքականութիւնը լոկ տեղական է: Թաղական Խորհրդի կամ Զոգաբարձութեան ընտրութիւնները կ'ալեկոծեն տեղական կեանքը: Այդ օրերուն տեղի ունեցած աղմուկը հարեւան գիւղերէն ալ կը լսուի:

Սամաթիացին կը մոռնայ ծովը, ձկնորսութիւնը, տունն ու տեղը: Կը մոռնայ սովորական կեանքին մէջ գործածուած բաները ու միայն հայիոյանքներով կ'արտայայտուի: Միայն այդ բառերն են, որ ընտրութիւններու առթիւ առաջ եկած կիրքերը կրնան հովացնել, խաղաղեցնել: Ան կը մոռնայ նաեւ սեղան նստիլը եւ մարդավարի հաց ուտելը: Քայլերը զինք սրճարան կը տանին. ան արդէն շատ չի յոգնիր հոն երթալու համար,

որովհետեւ միշտ հոն է, իր հակառակորդին հետ վեճի բռնուած:

Ամէն մէկը կ'ուզէ, որ իր թեկնածուն Թաղական ընտրուի կամ Զոգաբարձու:

– Էֆէնտի Զոգաբարձու չենք ուզեր. մենք ձկնորս մարդիկ ենք, մեր Զոգաբարձուն ալ մեզմէ պետք է ըլլայ,— կ'ըսէ ան, որ ժողովրդական գաղափարներ ունի:

Դիմացինը կը պնդէ բարձր դասակարգի պատկանող անձերէ կազմուած հոգաբարձական մարմնի մը առաւելութիւններու մասին, եւ վեճը շատ անգամ կը վերջանայ կապուած թելերով կամ գլուխներով:

Ընտրութիւններէն վերջ, ամէն ինչ կը խաղաղի: Բոլորը, հակառակորդ կամ կողմակից, կ'ենթարկուին ընտրուածներուն, եւ կեանքը կը սկսի բնական ընթացքով շարունակուիլ:

Սամաթիացին երբեմն իր տեղական նեղ շրջանակէն դուրս կ'ելլէ ու կը մասնակցի ազգային մեծ ցոյցերու: Չկայ ժողովրդական խոշոր դէպք Պոլսոյ մը, ուր ան իր բաժինը բերած չըլլայ իր աղմուկով, բայց եւ իր համարձակութեամբ եւ իր կարծիքը ըսելու քաղաքացիական քաջութեամբ: Առանց անոր չկար խոշոր ցոյց, չկար շարժում: Սամաթիացին աղն էր Պոլսոյ հայկական կեանքին:

Այսպէս ըլլալով հանդերձ՝ «Յայաստան» բառը քիչ մը անորոշ, քիչ մը աղօտ բառ մըն էր անոր համար: «Յայաստան» բառը լաւ էր երգերու մէջ, դպրոցական հանդեսներու ժամանակ արտասանուած ոտանաւորներու մէջ, բայց ան գեղեցիկ երագի մը պէս անմատչելի ու հեռաւոր բան մըն էր իրեն համար:

«Յայաստան երկիր դրախտավայր» երգի ժամանակ ան կ'ոգեւորուէր, կը հառաչէր, բայց այսչափ: Ան սերունդէ սերունդ այնպէս կպած էր իր ծովու ափին, այնտեղ ամէն օր, իր կեանքը այնպէս դժուարութեամբ խլած էր այդ ծովէն, որ անոր համար ուրիշ տեղ ապրիլը անհնարին կ'երեւար: Ան նոյնիսկ չէր մտածեր այդ մասին:

Ազգ բառը աւելի մատչելի էր իրեն համար: Ան այդ բառը տեղի անտեղի կը գործածէր: Ազգ էր Պոլսոյ Երեսփոխանական ժողովը, Ազգ էր Պատրիարքարանը, քաղաքական ժողովը: Ազգի մարդ էին յեղափոխականները, քաղաքական գործիչները:

րը: Ան մասնաւոր յարգանք ունէր ասոնց մասին, մասնաւորապէս հայկական հարցերով զբաղող մարդկանց մասին, պատրաստ էր ամէն զոհողութեան, առանց խորացնելու թէ ի՞նչ էր այդ բոլոր աշխատանքներու վերջնական նպատակը:

«Ազգի մարդ է», երբ ըստին, իրենց մտքին մէջ կը պատկերասար առնուազն տասնեակ մը մարդոց տեսակներ, Պատրիարքէն սկսեալ մինչեւ ուսուցիչը:

Իրենց հետ անմիջական շփման մէջ եղող «ազգի մարդ»ը ուսուցիչն էր, որուն հանդէպ ե՛լ յարգանք ե՛լ գուգուրանք ունէին: Ինչ ալ ըլլար տարիքն ու անունը՝ ան ազգի մարդ էր, իրենց զաւակներուն ուսում տուողը, չարն ու բարին զանազանել սորվեցնողը:

Սամաթիացին շատ բծախնդիր էր տղուն ուսման նկատմամբ: Դպրոցին մէջ, դասի մը համար ստացուած գէշ թիւ մը, տղուն ծնողացը համար վիրաւորանք էր, ամբողջ ընտանիքի վրայ ինկած ամօթ մը...

– Ծօ տղա՛յ, ի՞նչ թիւ առիր այսօր, – աս էր առաջին հարցումը, որ ան կու տար իր տղուն ամէն իրիկուն ու անձկութեամբ պատասխանի կը սպասէր:

Լաւ թիւ մը հպարտութեամբ կ'ուռեցներ հօր սիրտը, նոր ճամբաներ կը բանար, նոր յոյսեր կը ներշնչէր: «Էհ, չի գիտցուիր, թերեւս տղան ալ օր մը ազգի մարդ կը դառնայ»...

Ուսուցչի հանդէպ ունեցած իրենց սերն ու յարգանքը անտեղի չէր բնաւ: Հայ կեանքին մէջ ուսուցիչը առհասարակ գաղափարական մարդ է: Իր ժողովուրդին ծառայել ուզող կամ իտեալ ունեցող մարդիկ միայն այդ ասպարէզը կ'ընտրեն եւ քիչ անգամ այդ գործին կը նային իբրեւ լոկ ապրուստի միջոց: Այդ է պատճառը, որ հայերու համակրանքը դէպի ուսուցիչները աւելի շեշտուած է քան ուրիշ ժողովուրդներու մէջ:

Սարդ չի գիտեր, թէ ինչո՞ւ Պոլսոյ եւ իր շրջակայ գիւղերուն մէջ «միւսիւ» կ'ըսեն ուսուցիչներուն թէ՛ դպրոցականները եւ թէ՛ անոնց ծնողները: Ֆրանսերէն բառին այդ աղաւաղուած ձեւին տուած են ուսուցիչ բառին բովանդակութիւնը: Երբ որ դպրոցականը կ'ըսէ՝ «Ան իմ միւսիւս է», պետք է հասկնալ որ ան իր ուսուցիչն է:

Միւսիւն ամբողջ գիւղին քարտուղարն է, անոր խորհրդակա-

նը: Ան կը գրէ բոլորին նամակները, կ'օգնէ անոնց հաշիւներուն, կը վճռէ մինչեւ անգամ ընտանեկան կամ այլ կարգի խնդիրներ: Բայց միեւնոյն ժամանակ ան գիւղին մշտական հիւրն է, սիրելին: Փոքրիկ տնակներուն դռները բաց են իր առաջ, եւ միւսիւն սեղանակից ունենալը պատիւ է գիւղացիին համար: Այս վերջինը կ'աշխատի ուսուցչին ներկայութեան չգործածել իր հայիոյանքներուն ամենախոշորները եւ շատ չխմել «երկնքի կրակ»էն:

Վարժուիկները գուրգուրանքի եւ ուշադրութեան պակաս բաժին ունին: Տեսակ մը վերապահութիւն կայ անոնց հանդէպ, մանաւանդ եթէ երիտասարդ են: Մինակ ապրող երիտասարդ աղջիկ կամ կին մը շատ վստահութիւն չի ներշնչէր իրենց: Այդ պատճառաւ կ'աշխատին ամուսնացած զոյգեր ունենալ վարժարանին համար, ամուսինը մանչերու կողմը, իսկ կինը աղջկանց բաժնին համար:

Այդ տարին, սակայն, ուսուցչական խումբը բացառապես երիտասարդներն էլ երիտասարդուհիներն էլ կազմում էր:

Գլխավոր ուսուցիչն էր Պետիկեան անուն երիտասարդ մը, որ 3 տարիէ ի վեր հոն էր ել իրենց վստահութեան արժանացած, այն աստիճան, որ գիւղացիները համարձակէր էին այդ տարեշրջանին համար երիտասարդ օրհորդ մը հրաւիրել աղջրկանց վարժարանին համար, երբ իրենց յոյսը կտրէր էին տարիքոտ վարժուհի մը ունենալէն:

Պետիկեան Վարդանը, Էրզրումի Սանասարեան վարժարանէն շրջանաւարտ, քսանտօթը տարեկան կենսունակ երիտասարդ մըն էր համակրելի արտաքինով: Ան անկեղծօրէն կը հետաքրքրուէր իր աշակերտներուն նիստ ու կացով, անոնց առողջական պայմաններով, դէպի ուսումը անոնց ցոյց տուած ծարաւով:

Երեք տարուան մէջ ան բոլորին հետ մտերմացած էր, եւ ծնողները զարմանքով կը տեսնէին, որ տղաքը ուրախութեամբ դպրոց կ'երթային, լաւ կ'աշխատէին ու հանդարտ էին՝ առանց ծեծ ուտելու իրենց «միւսիւնէն»: Սկիզբները բաւական հիասթափուած էին Պետիկեանէն: Ուսուցիչ մը, որ չի ծեծեր, ալ ի՞նչ ուսուցիչ է: Ան պետք է անխնայ ըլլայ, խոժոռ, անմատչելի, այնպէս որ աշակերտը զայն տեսած ժամանակը մուկերու պէս ծակերը մտնէ:

Պետիկեան ժպտուն էր, մեղմ: «Պարապ տարի մը պիտի ըլլայ այս տարի», ըսեր էին գիւղացիները, երբ համոզուէր էին, որ ծեծը գոյութիւն չունէր դպրոցական ծրագրին մէջ: Տարին եղած էր, ընդհակառակը, շատ լեցուն եւ գիւղացիները խնդրէր էին, որ Պետիկեան տարի մը եւս մնայ: Այս վերջինը, հակառակ

աւելի նպաստաւոր պայմաններով պաշտօն մը գտած ըլլալուն, մնացած էր, կապուած ըլլալով իր սկսած գործին հետ:

Պետիկեանէն զատ կար Աւագեանը, խոշոր պէխերով, բայց պզտիկ զարգացումով մարդ մը, որ երգի եւ մարզանքի դասեր կու տար եւ միեւնոյն ժամանակ եկեղեցիին մէջ տիրացուութիւն կ'ըներ: Քառասունի մօտ մարդ մըն էր, նոր այրիացած, որ կը փորձէր իր վիշտը գինիի մէջ խեղդել: Ծեծի մասին մասնաւոր յարգանք ուներ: Իր մանկավարժական մեթոտին մէջ ծեծը պատուաւոր տեղ մը կը բռներ, բայց չէր համարձակէր այս միջոցին դիմելու, անգամ մը խիստ նկատողութիւն լսած ըլլալով Պետիկեանէն, որ դպրոցին գլխավոր ուսուցիչն էր:

Տղաքը չէին սիրեր Աւագեանը եւ երգի դասերու ժամանակ բաւական նեղութիւն կու տային իրեն՝ զանազան կենդանիներու ձայներ հանելով: Բաւական էր, սակայն, որ Պետիկեան դուռը բանար եւ դասարանէն ներս նայուածք մը նետէր, որ տղաքը կարգի գային եւ իրենց բնական ձայնը վերստին գտնէին:

Տիրացու Աւագեան չար մարդ մը չէր, ոչ ալ վատ արարքի ընդունակ մէկը: Ան ժապաւէն, ժանեակ եւ կանացի այդ զարդեղէններ ծախող նախկին խանութպան մըն էր: Կնոջ երկարատեւ հիւանդութեան առթած ծախսերը առաջին հարուածը տուէր էին իր առեւտուրին. երկրորդ եւ վերջին հարուածը տուէր էր ինքը՝ օդի շիշերով: Ան սկսէր էր շատ խմել կնոջ մահուրնէ վերջ միայն: Կինը կորսնցուցած ըլլալու վիշտէն աւելի, միևնույնութիւնը մղած էր զինք այս մոլութեան: Զիչ-քիչ, ճաշերու ընթացքին պարպուած գինիի շիշերուն քանակը այնքան աւելցած էր, որ ան գործերը երեսի վրայ թողած՝ ստիպուած էր խանութը փակել, եղած-չեղածը ծախել, պարտատէրերու պահանջին գոհացում տալու համար:

Հիմա իր ունեցած ամբողջ դրամագլուխը իր հաճելի եւ եկեղեցական երգեցողութեան յարմար ձայնն էր: Անոր «Սուրբ Սուրբը» եւ «Տէր Ողորմեա»-ն հազար ու մի ելեւէջներով կը տարածուէին եկեղեցիին մէջ ու զգուանքի մը, մխիթարութեան մը պէս կը մտնէին աղօթողներու ականջներէն ներս՝ անոնց սրտին խորերէն «ախ»-եր եւ «մեղայ»-ներ քաշել տալով ու անկեղծ զղջման զգացումներ արթնցնելով:

Գիւղին բնակիչները հպարտ էին իրենց տիրացուով Եւ չէին մեղքնար անոր տրուած դրամին: Խմելը պակասութիւն մը չէր, մանաւանդ, որ տիրացուն, եթէ կը սիրէր օղին Եւ գինին, չէր սիրէր գինետունը: Ան ամէն իրիկուն դպրոցի աշխատանքի ժամերէն վերջ, գլխարկը Եւ վերարկուն կը հագներ ու կ'առնէր պատին քով դրած խորհրդաւոր պայուսակը, մէջի երկու խոշոր պարապ շիշերով ու կ'ուղղուէր դէպի գինետուն: Հոն անխօս՝ շիշերը կը դնէր սեղանին վրայ ու կը սպասէր, որ շիշերը վերադարձուին իրեն, ու միշտ անխօս կը վճարէր ու դուրս կ'ելլէր: Նախաճնկումի այդ վայրկեաններուն տիրացուին երեսը տեսակ մը տանջալից երեւոյթ կ'առնէր, իր սիրելիին անձկութեամբ սպասող սիրահարի մը պէս:

Տուն չհասած՝ ան գանազան աղանդերներ կը գներ, եղանակին համեմատ, բայց ձիթապտուղն ու «չիրօզը» (աղած Եւ չորցած ձուկ) անպակաս էին սեղանէն: Տուն օրերուն ան ինքն իրեն կը նուիրէր քիչ մը սեւ խաւիար կամ աղած թանկագին ձուկ մը: Սենեակը մտնելուն պէս, դուրսի իր հանդարտ ձեւերուն կը յաջորդէր ջղային արագութիւն մը: Ան գնումները աճապարանքով պնակներու մէջ դնելով սեղանին վրայ կը շարէր ու նստելով կը սկսէր խմելու արարողութեան, այնպիսի լուրջ արտայայտութեամբ մը, որ կարծես աշխարհի ամէնէն խրթին հարցերու լուծումը իրեն տուած էին այդ վայրկեանին:

Օղիի խոշոր շիշը Եւ աղանդերները կը վերջանային ընթրիքէն առաջ, որ կը կայանար խորոված ձուկէ մը կամ ապուխտով ձուածեղէ մը: Մինչեւ ընթրիքին վերջանալը, գիշերը արդէն բաւական յառաջացած կ'ըլլար: Տիրացուն այդ ժամանակ շատ պերճախօս էր: Զանի գինին կ'իջներ շիշին մէջ, այնքան կը բարձրանար իր պերճախօսութեան աստիճանը: Ան կը խօսէր այնպէս, որ կարծես թէ մէկը նստած ըլլար ճիշդ դիմացը: Կը լուծէր ազգային խնդիրներ, կը քննադատէր ժամանակուան քաղաքականութիւնը, կը բարկանար օրուան ընթացքին իրեն ըստած անիրաւ խօսքի մը, կամ իրեն ծախուած գէշ ապրանքի մը համար, երբեմն պոչաւոր հայիոյանք մըն ալ սահեցնելով ասոր կամ անոր հասցէին: Այդպիսով սիրտը կը թեթեւնար, Եւ ան յաջորդ օրը իր բարի Եւ քիչ մը բուրձ ժպիտը կը բաժնէր բոլորին:

Աւագեան շատ ճնշուած երեւոյթ մը ուներ տեսուչ Պետիկեանի ներկայութեան: Այս երիտասարդին հանդէպ, յարգանքի, վախի Եւ քիչ մըն ալ նախանձի խառնուրդ զգացում մը ուներ: Իրեն համար վարկաբեկիչ էր իրմէ երիտասարդ մէկու մը հրամանին տակ գտնուիլ, թէն ներքնապէս կը խոստովանէր, որ ինք իր գիտութեամբ ոչինչ մըն էր Պետիկեանի համեմատութեամբ, որ համալսարանաւարտ էր, բայց նորէն բոլոր իր ազատ ժամերը կարդալու Եւ բան մը սորվելու յատկացուցած էր: Ահա թէ ինչո՞ւ, իր հետզհետէ պարպուող շիշերուն առջեւ, Աւագեան երկար վիճաբանութիւններ կ'ունենար աներեւոյթ Պետիկեանին հետ:

– Հէր օրինած,– կ'ըսէր անոր,– դեռ կաթի հոտ կու գայ բերնդ, ելեր Ես գլխուս տնօրէն Ես կանգներ: Դուն ո՛ւր, Ես ո՛ւր... Հէլէ մէյ մը հայերէնը շիտակ խօսիլ սորվէ՛, տեսնենք...

Ճիշդ էր, որ Պետիկեան պոլսեցիներու շեշտէն տարբեր կ'արտասանէր բառերը: Ան թէն Էրզրում ծնած Եւ Սանասարեանի շրջանաւարտ, կովկասցի հայ ընտանիքի մը զաւակ էր: Անոր ծնողքը երկար տարիներ առաջ, գործերու բերումով եկեր հաստատուէր Էրզրում Եւ մասամբ պահած իրենց կովկասեան հայերէնը: Արդէն Էրզրումի ժողովուրդը, Պոլսականէն աւելի, Կովկասեան հայութեան մշակոյթի Եւ գրականութեան ազդեցութեան տակ կը գտնուի: Հոն առհասարակ դպրոցներու Եւ մասնաւորապէս Սանասարեան վարժարանի ուսուցիչներու մէկ մասը կովկասահայեր կամ ինչպէս կ'ըսեն, արեւելահայեր էին, լեզուական շատ որոշ տարբերութիւններով:

Էրզրումցիին չի խօսիր արեւելահայու մը պէս, բայց տառերուն հնչիւնները կ'արտասանէ անոնց պէս Եւ կը գործածէ անոնց ասացուածքներէն շատերը: Էրզրումցիին տեսակ մը միջին ճամբան է Արեւելահայ Եւ Արեւմտահայ հատուածներուն միջեւ: Անշուշտ այս գետնի վրայ պակաս դեր չէ կատարած արեւելահայ քաղաքական գործիչներու երթելեկը այդ քաղաքին մէջ:

Տաճկաստանցի հայուն համար, մանաւանդ որոշ հատուածին համար, արեւելահայը միշտ մտաւորական մը կամ քաղաքական գործիչ մըն է: Թերեւս անոր համար, որ միշտ այդպիսիները, հազար ճամբաներով Եւ իրենց կեանքը վտանգի տակ

դնելով, եկած են Տաճկահայաստանի ազատագրման գործին աջակցելու: Այդ է պատճառը, որ արեւմտահայը տրամադրուած է այդ լեզուով ըստւածներուն անպայման հաւատալ, կարծես այդ լեզուով, այդ շեշտով սխալ կամ սուտ չեն կրնար ըսուիլ:

– Ի՞նչ ճիշդ գաղափարներ ունի... Որքա՞ն հմուտ է հասարակական հարցերու մէջ,– կ'ըսէ արեւմտահայը արեւելահայ մը լսելով:

– Որքա՞ն սիրուն է խօսում, ինչքա՞ն գեղեցիկ ոճ ունի,– կ'ըսէ արեւելահայը միւսին համար:

Այս քանի մը պարզ արտայայտութիւնները կը խտացնեն, կը բնորոշեն երկու հատուածներու իրարու մասին ունեցած գնահատման աստիճանը, որ որոշ չափով ճշմարտութեան մօտիկ է:

Երբեմն, անշուշտ, չափազանցութիւններ տեղի կ'ունենան: Միայն միտք կը տեսնեն հոն, ուր գեղեցիկ ու մշակուած լեզու ալ կայ, եւ միայն սիրուն ու գարդարուն ոճ կը տեսնեն, երբ ճոխ լեզուին քով լուրջ մտքեր ու գաղափարներ ալ կան:

Երկու հատուածներուն լեզուական հարցին շուրջ ծագած վեճերը թերթերու էջերը լեցուցած եւ առատ մելան սպառած են: Աւագեանին համար այդ հարցերը գինի սպառելու պատճառներ էին:

Աւագեան, գլխաւոր ուսուցչէն, կամ ինչպէս կ'ըսէին, տնօրէնէն զանգատելու մասնաւոր պատճառ մը չունէր: Այս երիտասարդը սիրալի էր բոլորին, ինչպէս նաեւ երգի ուսուցչին հետ: Թերեւս այսպէս մեղմ ըլլալն էր, որ կը վիրաւորէր այս վերջինը: Տնօրէն ըսածդ պէտք է խիստ ըլլայ, յոխորտայ, հրամայէ: Եթէ չ'ընէր այս բոլորը, կը նշանակէ՝ կ'արհամարհէ, մարդու տեղ չի դնէր: Վիրաւորական է աս: «Ա՛յ թող մէյ մը գիս տնօրէն նշանակեն, ես ցոյց կու տամ, թէ ի՞նչպէս կ'ըլլայ տնօրէնը, ինչպէս դիրք կը պահեմ, ինչպէս բարձրեն կը բարեւեմ մարդկանց, ա՛յ, ա՛յսպէս»...

Ու Աւագեան նստած տեղը գլուխը կը բարձրացնէր, երկար պէխերուն քանի մը հարուած կու տար եւ կուրծքը ցցած ամբարտաւան ձեւ մը կ'առնէր...

Բացի այս երկու ուսուցիչներէն կար նաեւ Արսէնեանը, որ գիտութեանց եւ թուաբանութեան դասեր կու տար: Ան շատ

հմուտ, ճշդապահ եւ սակաւախօս մարդ մըն էր եւ իր ժամանակը կ'անցընէր դպրոցին ու իր ընտանիքին մէջ: Ամուսնացած էր եւ երկու փոքրիկներու հայր:

Աղջկանց բաժնին մէջ աւագ ուսուցչուհիի պաշտօնը յանձնուած էր օր. Չապէլ Սիսակեանին, քսանութ տարեկան օրիորդ մը, որ արդէն եօթը տարիէ ի վեր ուսուցչութիւն կ'ընէր եւ որոշ փորձառութիւն ունէր:

Օրիորդ Չապէլ գեղեցիկ չէր: Բարձրահասակ, նուրբ կազմուածքով, լայն ճակատով եւ խոհուն աչքերով աղջիկ մըն էր: Ան իր առատ շագանակագոյն մազերը պարզ մը կ'ուլորէր իր ծոծրակին վրայ, առանց ճակտին վրայ, կամ ականջներու շուրջ խոպոպիկներու խաղերու: Նուրբ, բայց քիչ մը գունատ դէմքին ոչ բրնձափոշի կը դնէր, ոչ ալ կարմիր կը քսէր, կարծես ըսել կ'ուզէր. «Ահա այսպէս եմ ես, ոչ աւելի, ոչ պակաս»...

Գաղափարական վարժուհիի տիպար մըն էր ան: Եթէ ներկուէր, թերեւս քիչ մը աւելի սիրուն ըլլար, բայց անպայման պակաս համակրելի պիտի ըլլար, այնքա՞ն ներդաշնակութիւն կար իր պարզ արտաքինին եւ իր անսթեւեթ ու շիտակ նկարագրին մէջ:

* * *

Երբ դպրոցական շրջանին առաջին օրը հոգաբարձուներէն մին տնօրէն Պետիկեանը եւ աւագ ուսուցչուհի օրիորդ Չապէլը իրարու ներկայացուցեր էր, երկուքն ալ զարմացած՝ ուրախ շարժում մը ըրեր էին: Իրարու հանդիպած էին ժողովներու մէջ: Երկուքն ալ Նոյն գրական եւ մշակութային խմբակցութեան կը պատկանէին:

Օր. Չապէլ, որուն ծնողքը Ատա Բագար կը բնակէին, քիչ մը վախով եկած էր այդ գիւղը: Կը կարծէր, թէ պիտի նեղուէր միսմիսակ, առանց ընկերոջ կամ ծանօթի, եւ ապա կը հանդիպէր լաւ ընկերոջ մը, որուն մասին շատ լաւ կարծիք ունէր, ներկայ եղած ըլլալով անոր կարգ մը դասախօսութիւններուն գրական կամ քաղաքական խնդիրներու շուրջ:

Հիմա, դասերէն վերջ երկուքը միասին երկար պտոյտներ կ'ընէին ծովեզերքը կամ հակառակ ուղղութեամբ, դէպի դաշտերը:

Երբ գիւղացիները առաջին անգամ երկուքը միասին տեսեր էին ազատ, համարձակ, պտոյտի գացած ժամանակ, իրար էին

անցեր, մասնաւորապէս ձկնորսական կամ արհեստաւորներու թաղերուն մէջ:

Տեսնուած բան չէր, որ վարժուիի մը, այսպէս համարձակ օրը ցերեկով պտոյտի ելլէր տղամարդու մը հետ, ան ալ ուսուցչի մը հետ, մանաւանդ տեսուչին հետ:

Առաջին տեսնող կինը, լուացքը տաշտին մէջ թողած, օճառոտ ձեռքերը գոգնոցին սրբելով քովի դրացուիիին վազած էր շնչասպառ.

– Օրիորդը եւ միւսին միասին գիւղէն դուրս կ'ելլէն...

– Ի՞նչ կ'ըսես, քա՛, անկարելի բան է: Անանկ նամուսով, միւռնով աղջիկ կ'երեւեր, ի՞նչ կ'ըսես...

– Զա՛, եթէ չես հաւատար, եկո՛ւր հեղ մը նայէ. վազէ՛, քանի փողոցը չեն դարձած...

Դրացուիին զարմանքէն՝ գրկած ծծկեր տղան օրօրոցը պառկեցուցած էր, առանց անոր լացերուն ուշադրութիւն դարձնելու եւ դուռ վազած:

Երկու կիները փողոց կանգնած երկար կը նայէին զոյգին ետեւէն, որ կը հեռանար ծովու ափին երկայնքին:

Փողոցէն անցնող ուրիշ կին մը, որ բանջարեղէններով լեցուն սակառով տուն կը վերադառնար, տեսնելով երկու կանանց վրդովուած դէմքերը, մօտեցաւ եւ անձկութեամբ հարցուց.

– Խէ՛ր է, ի՞նչ կայ... ի՞նչ է պատահեր...

– Օրիորդը եւ միւսին միասին տեղ կ'երթան, ալ ի՞նչ պիտի պատահի...

– Վո՛ւյ, մեռնի՛մ, մեր աղջիկները ասանկներուն ձեռքը տուինք, որ այս տեսակ օրինակներ տեսնեն: Այս իրիկուն իսկ մարդուս պիտի ըսեմ. երկինք կը բարձրացնէ միւսին ալ, օրիորդն ալ, թո՛ղ իմանայ...

Իրիկունը, ամուսիններուն տուն վերադարձին, փոքրիկ, փայտէ տնակներուն մէջ հաւանաբար առաջին արտասանւած խօսքը եղած էր.

– Միւսին եւ օրիորդը միասին պտոյտի գացին, սատանան գիտէ ո՛ւր...

Ամուսինները հազիւ յաջողած էին հանդարտեցնել իրենց վրդովուած կիները.

– Եղածը ի՞նչ է քի. պտոյտի գացեր են: Երկուքն ալ լուրջ եւ

ուսումնական մարդիկ են, շատ-շատ պսակ մը պիտի ունենանք: Միւսին երեք տարի կ'ընէ գիւղս է. է՛, մէկ կնկայ ծուռ աչքով նայած ունի՞: Դէլպէթ թէ՛ օր մը օրանց պիտի ամուսնանայ. լաւ է քի իրար առնեն, երկար կը մնան գիւղը:

Դազիւ քիչ մը հանգստացած՝ գիւղի կանայք կրկին վրդովւեցան: Նկատեր էին, որ միւսին օրիորդին տունը կ'երթար, մութը կոխելէն վերջն ալ:

Յաջորդ օրն իսկ, կիները իրենց մէջէն ընտրեցին ամենաճարպիկը, Սուրբիկ տուտուն, որ հանրածանօթ էր ուրիշներու տունը անցած-դարձածը իմանալու իր հմտութեամբ:

– Չնա՛,– ըսեր էին,– մէյ մը խօսեցուր օրիորդին տանտիրուհին, տիկին Ագապին. տեսնենք եղածն ի՞նչ է:

Սուրբիկ տուտուն, հպարտ իրեն տրուած առաքելութեամբ եւ հետաքրքրութենէն դողալով, գացեր զարկեր էր տիկ. Ագապիի դուռը:

Սուրբիկ տուտույի անժամանակ այցելութիւնը չէր զարմացուցած տիկ. Ագապին: Ան անմիջապէս կռահեր էր անոր այցելութեան նպատակը, բայց չհասկնալ ձեւացուցած էր:

– Բարով եկար, Սուրբիկ տուտու,– ըսեր էր սիրալիր,– աս ի՞նչ հովը բերաւ քեզ:

– Դի՛չ, սանկ կ'անցնէի,– ըսի,– մէյ մը տեսնամ թէ՛ ի՞նչ կ'ընէ տիկ. Ագապին: Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, նայինք:

– Դիչ, ի՞նչ պիտի ըլլայ քի. օրը գիշեր կ'ընենք աշխատելով, չարչարուելով: Ամէն մէկ օրը միւսին նման:

Սուրբիկ տուտուն չէր գիտեր թէ՛ ի՞նչ ընէ տանտիրուհին խօսեցնելու համար:

– Նորութիւն մը, բան մը չկա՞յ: Ի՞նչ կ'ընէ օրիորդը, քեզի նեղութիւն չի՞ տար...

– Կը հասկնամ մտքէդ անցածը, Սուրբիկ տուտու,– պատասխաներ էր տիկ. Ագապին, համբերութիւնը հատած.– Առաջինը չես, որ կու գաս: Այսօր հինգերորդն ես: Սա միւսին օրիորդին գալուն համար չէ՞ս... հա՞: Անոր համար չէ՞ քի գործ բան թողած իրար էք անցեր: Էհ, կրնաք հանգիստ քնանալ: Զոյր ու եղբօր պէս են: Դրպա, ի՞նչ կ'ուզէիք. միս-միսակ տղայ, միս-միսակ աղջիկ, ոչ ընտանիք, ոչ ծանօթ, հըպա ի՞նչ ընեն, իրարու քով կու գան, կը խօսին, ժամանակը կ'անցնի..

Սուրբիկ տուտուն թերահաւատ կը ժպտի՝ դեղին ակռաները ցոյց տալով:

– Ի՞նչ գիտնամ, ըսի քի կրակը վառողին քով չեն դներ. ըսի, որ դպրոցին պատիւը մեր...

– Է՛, բաւական է,– պոռաց տիկ. Ագապի,– հոս ոչ վառող կայ, ոչ կրակ: Կրնաք հանգիստ քնանալ: Սկիզբները, ի՞նչ մեղքս պահեմ, ես ալ անհանգստացայ, ելայ դրան ծակէն նայեցայ: Է՛, քուրիկ, մէկը սեղանին սա կողմն է նստեր, միւսը թէք՝ ան կողմը. մէկը կը կարդայ, միւսը կը լսէ: Դիմա չէ, մտածեցի, քիչ վերջը գամ նայիմ: Է, աղէկ, քիչ վերջը տեսածս նոյնն էր, միայն կարդացողը փոխուեր էր: Յետոյ թէյ խմեցին, յետոյ ալ օրիորդը քեման չալեց: Ահա եղածը: Իմ տունիս մէջ անպատիւ բան չի պատահիր... Նամուսի մասին ես ալ գաղափար ունիմ: Ձեզմէ դա՞ս պիտի առնեմ:

Սուրբիկ տուտուն, որ կը ճանչնար տիկ. Ագապիին բարկութեան աստիճանը, թուրք կլլեց՝ յուզումը ծածկելու համար: Բարեւեց ու հեռացաւ: Լսածին պէս պատմեց անհամբերութեամբ իրեն սպասող կանանց: Եթէ տիկ. Ագապին, տանտիրուհին, այդպէս կ'ըսեր ու կը դատեր, իրենց չէր մնար, անշուշտ, հակառակ կարծիք ունենալ, մանաւանդ այդ կարծիքը բարձրաձայն ըսել: Չէին կրնար չափուիլ տիկ. Ագապիին հետ, որ հեղինակութիւն մըն էր ինքն իրմով եւ մանաւանդ «թուլումպաճի»-ներուն պետի մայրը ըլլալուն տիտղոսով: Ո՞վ կրնար առարկել:

Կիները ա՛լ չխօսեցան այդ մասին, բայց ամէն անգամ որ կը հանդիպէին օր. Չապէլին, իրենց նայուածքը որոշ հետաքրքրութեամբ մը կ'իյնար, անոր մէջքին. «Արդեօք դեռ չէի՞ն հաստացած բարակ կողերը»...

Աղջկանց վարժարանին մէջ, բացի օր. Չապէլէն եւ ձեռագործի ու նկարչութեան վարժուհի տիկին Սիմայէն, որ քաղաքէն կու գար շաբաթը երեք անգամ, կար նաեւ օր. Մելինէն, որ մանկապարտեզի վարժուհի էր եւ կը զբաղէր չորսէն ութ տարեկան մանչ ու աղջիկ փոքրիկներով:

Մելինէն տեղացի էր: Աւելի ճիշդ ան ծնած էր գիւղը, բայց ծնողքը այդ գիւղէն չէին, ժամանակին իբր ուսուցիչ-ուսուցչուհի եկեր եւ երկար տարիներ պաշտօնավարեր էին հոն: Դիւանդութեան մը հետեւանքով ձայնը խզուած ըլլալուն, հայրը թողեր էր ուսուցչական պաշտօնը եւ դպրոցական պիտոյքներու, նամակի թուղթի եւ լրագրի փոքրիկ կրպակ մը բացեր էր՝ կնոջ եւ աղջկան ապրուստը հոգալու համար:

Մելինէին հայրը, ուսումնասէր մարդ, իր աղջիկը դրկած էր Պոլսոյ Եսայեան վարժարանը՝ ուսումը շարունակելու, երբ ան վերջացուցած էր տեղական վարժարանը, ան միշտ լաւերէն մին եղած է արուարձաններու վարժարաններու մէջ:

Ուրախութիւնը մտեր էր տուն Մելինէի Եսայեան վարժարանէն ստացած շրջանաւարտի վկայականով, բայց մօտաւորապէս ամիս մը վերջը հայրը սրտի կաթուածով յանկարծամահ եղեր էր, կարծես նպատակին հասնելէ վերջ հանգստանալու համար:

Այդ տարուան դպրոցական շրջանին համար գիւղի հոգաբարձութիւնը Մելինէն հրաւիրած էր իբր մանկապարտեզի վարժուհի:

Չարմանալի աղջիկ մըն էր Մելինէն: Իր տասնինը տարիները իրեն կը քաշէին շրջապատին լոյսերն ու բոյրերը: Բոլոր այն արեւու շողերը, որոնք չէին կրնար թափանցել խղճուկ փայտէ տնակներէն ներս, կը կայծկլտային իր աչքերուն մէջ: Երբ իր

նուրբ գծուած կարմիր շրթները բանալով կը խնդար՝ ցոյց տալով իր անթերի ակռաները, մարդ կ'ուզէր ըսել. «Բաւական է, պէտք չէ չափազանցել»...

Չէ՞ր գիտեր իր գեղեցիկ ըլլալը թէ այդպէս ցոյց կու տար: Ան պարզ էր, բնական: Ձկնորսական թաղին մէջ, ուր կ'ապրէր իր հիւանդ մօրը հետ, ամէնուն սիրելին էր:

Արդէն չորս ձկնորսներու մայրեր, քանի մը ամսուան ընթացքին, իրենց տօնական զգեստները հագած, այցելէր էին Մելինէին մօրը՝ Ծովինարին, իր աղջիկը իրենց տղուն կնութեան ուզելու համար: Ծովինար ամէն մէկուն պատասխանած էր.

– Աղջիկս դեռ պզտիկ է ամուսնանալու համար:

Մելինէի մայրը, նախկին վարժուհի, իր աղջկան համար տարբեր ամուսին մը կ'երագէր, քան ձկնորս մը, որքան ալ իր համակրանքը մեծ ըլլար դէպի երիտասարդ ձկնորսները, որոնք թէւ կտրիճ, հայրենասէր եւ լուրջ, բայց զարգացում գուրկ էին:

Ճիշդ է, Սամաթիոյ մէջ կար թաղամաս մը, ուր կ'ապրէին շատ բարեկեցիկ ընտանիքներ, մտաւորականներ, բժիշկներ, փաստաբաններ, առետրականներ, բայց անոնք մասամբ հեռու կը մնային արհեստաւորներու եւ ձկնորսներու թաղամասին կեանքէն:

Ծովինար շատ անգամ Չառոյին, որուն մանկութեան ընկերուհին էր, կը պատմէր իր վախը Մելինէի ապագային մասին: Ի՞նչ պիտի ըլլար ան, եթէ ինք մեռնէր: Դեռու չէր այդ օրը, կ'ըսէր, քանի որ յօդացաւը հետզհետէ կը տիրէր իր ամբողջ մարմնին, երբեմն զինք ամբողջ շաբաթներ անկողնին գամելով:

– Եթէ այդպէս թուլամորթ մնաս, հարկաւ մահը կու գայ քեզ կը տանի,– կ'ըսէր Չառօն իր հին ընկերուհիին.– այնպէս մը բռնէ քեզ, որ մահը վախնայ մօտենալու: Ամէն պարագային Մելինէին համար մի՛ վախնար, անոր հոգը՝ իմ վրաս:

Մելինէն «մօրաքոյր» կ'ըսէ Չառոյին, շատ անգամ ալ կատակելով «հոգեկան մայրս»: Դօրը մահէն ի վեր անոր խորհուրդներուն կը դիմէր՝ իր կարդալիք գրքերը ընտրելու կամ լուրջ որոշում մը տալու համար:

Իսկ երբ Ծովինար գանգատէր Չառոյին, թէ Մելինէն կը մեր-

ժէ ամուսնութեան առաջարկները, թէ գիւղին մէջ հպարտ աղջկայ անուն պիտի հանէ եւ ա՛լ դուռը զարնող պիտի չըլլայ, այնինչ «իւր մէկ ոտքը գերեզմանին մէջ է արդէն»: Չառօն կը պատասխանէր կէս յանդիմանութեամբ, կէս կատակով.

– Լաւ կ'ընես, եթէ մէկ ոտքդ գերեզմանէն քաշես, փոխանակ միւսն ալ անոր քովը դնել աշխատելու: Այն ժամանակ առանց աճապարելու կը սպասես, որ աղջկանդ սիրտը խօսի, որպէսզի ամուսնանայ:

Չառոյի եւ Ծովինարի վեճերը կը վերջանային միշտ վերջինին պարտութեամբ:

Օր մը Ծովինարին դուռը զարկաւ գիւղին հարուստ երիտասարդներէն մէկուն մայրը՝ Մելինէն իր տղուն համար կնութեան ուզելու:

Այդ երիտասարդը, Մարտիկ Գալուստեան, գիւղին մէջ ունէր ամենամեծ նպարավաճառատունը, ուր ոչ միայն ապրանքները իրն էին, այլ եւ շէնքը: Ան ունէր նաեւ երեք քարուկիր խոշոր տներ, որոնք քով-քովի մասնաւոր հպարտութեամբ եւ բարձրէն դէպի ծով կը նայէին՝ ծովեզերքը գտնուող փայտէ տնակներուն վրայէն արհամարհանքով սահելով: Ասոնք Սամաթիոյ մէջ ունեցածներն էին: Գալուստեան նոյնքան խոշոր խանութ մը ունէր նաեւ քովի գիւղը, Գում Գաբու, եւ պատկառելի գումար մը «Քրտի Լիոնէ» դրամատան մէջ:

Մարտիկ, որուն գիւղին մէջ «Տիար Գալուստեան» կ'ըսէին, շատոնց մտադրած էր ամուսնանալ: Մայրն ալ խօսակցութեան ուրիշ սիւթ չունէր: Պէտք էր, որ տղան ամուսնանար, գաւակներու տէր դառնար, որպէսզի անոնք օր մը կարենային վախելել իրենց հօր արդար աշխատանքի պտուղը:

– Առանց գաւակի տունը, առանց թռչունի վանդակ,– կ'ըսէր մայրը հառաչելով:

Ան չէր հասկնար տղուն տատանումները: Ո՞ր գեղեցիկ աղջիկը պիտի չուզէր Տիար Գալուստեանի կինը դառնալ:

Մարտիկ ինքն ալ այդ հարցերը կու տար ինքնիրեն օրը քանի մը անգամ: «Օր. Ալիսի հայրը հարուստ է, լաւ դրամօժիտ կու տայ, բայց այդ կարճ հասակով ինչպէ՞ս պիտի ընէ զայն համբուրելու համար. պէտք պիտի ըլլայ որ պուպրիկի մը պէս բարձրացնէ, մինչեւ իր բերանը բերելու համար»: Չէ՛, օր. Ալի-

սը յարմար չէ: Կայ Սալբին, բայց անոր ալ քիթը, Աստուած հե-
ռու ընէ, շուք պիտի տայ սեղանին: Ո՛չ, Սալբին ալ յարմար չէ:
Անդին կայ Արտեմիսը, որը գեղեցիկ է, խօսք չկայ, դրամ ալ ու-
նի, ուսում ալ, դաշնակի վրայ իսկ նուագել գիտէ, բայց այնպէս
հպարտ, այնպէս «ազտիկ լեռները ես ստեղծեցի»ի ձեւով մը
կը խօսի, որ քաղցր խօսքի մը արժանանալու համար, ծունկի
գալ պէտք պիտի ըլլայ առջեւը: Չէ՛, չէ, այդ ալ չեղաւ, իր պոյով,
պոսով, դիրքով չէր կրնար ծունկի գալ, ստրկանալ:

Ճիշդ էր, որ նպարավաճառ Մարտիկ յաղթանդամ մէկն էր:
Իր խանութին ցուցափեղկին վրայ գրած էր՝ «թէ մեծաքանակ,
թէ՛ փոքրաքանակ», բայց ինքը միմիայն մեծաքանակ էր:
Բարձրահասակ, լայնաթիկունք եւ, հակառակ իր երեսունե-
վեց տարիներուն, պատկառելի փոքրով, խոշոր ականջներով ու
քիթով մարդ մըն էր: Բայց այս բոլոր խոշորութիւններու քով,
մնացեալ դիմագծերը աննշմարելի էին գրեթէ:

Ան իր ջանքերով էր հարստացած եւ երբե՛ք չէր մոռնար, որ
երեք տուններու եւ երկու վաճառատուներու տէր էր: Երբ մէկու
մը հետ խօսէր, ինչ ալ ըլլար խօսակցութեան նիւթը՝ ազգային,
քաղաքական թէ առեւտրական, իր դէմքի արտայայտութիւնը
կ'ըսէր անընդհատ. «Ե՛ս երեք տուն եւ երկու խանութ ունիմ»...
Այդ պատճառաւ, այդ խօսքերէն ախորժող բարեկամներ միայն
ունէր, որոնց քանակը, եթէ շատ էր, որակին մասին կարելի էր
վիճիլ:

Տիար Գալուստեան գիւղին ջոջերէն էր: Երեք անգամ Զոգա-
բարձու եւ երկու անգամ Թաղական Խորհրդի անդամ ընտրու-
ուած էր: Դպրոցական հանդէսներուն, տեղացի սիրողներու
կողմէ տրուած երեկոյթներուն, կամ դուրսէն եկած թատերա-
կան խումբերու ներկայացումներուն միշտ առաջին տեղը կը
նստէր: Մեռելոցին, հօրը հոգւոյն երկու ոչխար մատաղ կ'ընէր
ու աղքատներուն բաժնել կու տար: Չատկին, Ճուռնդին, քա-
հանային աջահամբոյրը դեղին ոսկի մըն էր: Իսկ երբ քաղաքէն
եպիսկոպոս մը գար պատարագի, եկեղեցական արարողութե-
նէն վերջ, անպատճառ իր տունը կը տանէր ճաշի: Այսպիսով
գիւղին ջոջն ըլլալու բոլոր արժանիքները կը ներկայացնէր:

Գալուստեան դպրոցական հանդէսի մը ընթացքին տեսաւ
Մելիսէն, երբ այս վերջինը իր փոքր աշակերտ-աշակերտուհի-

ներով բեմն եկած՝ անոնց զանազան խաղեր ընել կու տար:

Մելիսէն, այսքան բազմութեան մէջ գտնուելուն համար թէեւ
շիկնած, հանդարտութեամբ կը հսկէր իր փոքրիկներուն:
Ամօթխած աշակերտ մը կը քաջալերէր գգուանքով մը եւ դէպի
բեմի առջեւը կը բերէր: Ուրիշ մը, որ յաջողած էր իր արտասա-
նութեան կամ երգին մէջ, կը վարձատր ժպիտով մը: Անոր
շարժումները ներդաշնակ էին երաժշտութեան մը պէս: Երբ որ
ան ծռեր դէպի փոքրիկ մը, մարդ ըսել կ'ուզէր. «Այսպէս կեցի՛ր,
շա՛տ լաւ է այսպէս»: Բայց երբ ան յուզուէր ու լուսափայլ աչ-
քերը յառէր կէտի մը, մարդ կը մտածէր. «Ո՛չ, այսպէս անելի լաւ
է, այսպէս շատ անելի գեղեցիկ է»:

Գալուստեան նստած տեղը քանի մը անգամ ձեւ փոխեց: Աչ-
քերուն չէր հաւատար: Այս գեղեցկուհին Մելիսէ՛ն էր, մեռած
տիրացուին աղջիկը, որ մօրը ձեռքէն բռնած կու գար իր խա-
նութը գնումներու եւ կամ գրքերու պայուսակը ձեռքը, վազելով
խանութին առջեւէն կ'անցնէր, քաղաք գացող շոգեկառքին
հասնելու համար: Ան այն ժամանակ ալ սիրուն էր, բայց վտիտ,
նորաբողբօջ ծիլի մը պէս, այնինչ՝ այս «շարժուող ծաղիկը»,
«այս աննման պտուղը»... Ան հազաց, նստելու տարբեր ձեւ մը
առաւ՝ օրիորդին ուշադրութիւնը իր վրայ հրաւիրելու համար:
Բայց անօգուտ: Մելիսէն զբաղած էր իր փոքրիկներով:

Հանդէսին ամբողջ ընթացքին Գալուստեանի միտքը զբա-
ղած էր Մելիսէնով: Չայն կը տեսնէր բեմին վրայ, երբ ան շա-
տոնց հեռացած էր իր փոքրիկներով:

«Պտուղը հասած է եւ քաղուելուն կը սպասէ», մտածեց Գա-
լուստեան այս իր գտած համեմատութենէն հպարտ:

Չարտուղի ճամբաներով չէր կրնար հասնիլ Մելիսէին, գի-
տէր. կը մնար ամուսնանալ: Բայց մա՛յրը. Տիար Գալուստեա-
նի մայրը, մեծաքանակ-փոքրաքանակ խանութ ունեցողի մայ-
րը, պիտի ուզէ՞ր աղքատիկ թաղէն հարս բերել տուն եւ հետն
ապրիլ: Ինքն ալ, պիտի կրնա՞ր այդ քայլն առնել: Ի՞նչ պիտի
մտածէին իր ծանօթները: Բայց ինչպէս թողուլ, որ այդ հասած
պտուղը ուրիշը քաղէր, վայելէր: Մի՞թէ բաւական դրամ չունի՛
աղքատ աղջկան մը հետ ամուսնանալ կարենալու համար:

Պէտք է մտածէր, պէտք է խնդիրը քննէր իր բոլոր կողմերով:
Իսկ եթէ Մելիսէն արդէն թեկնածու մը ունի՞: Յանկարծ իր աչ-

քին պատկերացաւ Պետիկեանը՝ իր նուրբ հասակով, իր համակրելի եւ խելացի արտայայտութեամբ: Այս երիտասարդը կրցա՞ծ էր անտարբեր մնալ այսքան գրաւորութեան դիմաց: «Սուրբերը խենթեցնելու չափ գեղեցիկ է, մտածեց Գալուստեան, երիտասարդ մը ինչպէ՞ս դիմանայ»:

Յոգ չէ թէ Պետիկեան գրաւուած ըլլալ, եթէ ինք ամուսնանայ Մելիսէին հետ, Պետիկեանին կը մնայ միայն պաղ ջուր մը խմել: Իսկ եթէ օրհորդն ալ կը համակրի իր տեսուչին, այն ատեն խնդիրը կը փոխուի:

Գալուստեան զգաց, որ այս միտքը շա՛տ, շատ անախորժ էր իրեն համար, ուզեց չմտածել այս ուղղութեամբ, բայց Պետիկեան կը տեսներ ամէն կողմ:

«Եթէ դեռ ուշ չէ, ճամբել կու տամ դպրոցէն», մտածեց:

Յոգաբարձունքը բոլորն ալ իր մօտ ծանօթներն էին, խօսքը կրնար առաջ տանիլ: Պէտք է նախ՝ տեղեկութիւններ հաւաքել, հարցուփորձեր:

Յաջորդ օրերուն խօսեցնել տուաւ իր խանութը եկող կիները, մասնաւորապէս ձկնորսական թաղէն եկողները: Իր շքեղ խանութը քիչ անգամ կու գային ձկնորսներու կիները: Իրենց համեստ պահանջներուն գոհացում տուող նպարավաճառներ ունէին իրենց թաղին մէջ: Կարելոր դէպքերու առիթով միայն կու գային այդ խանութը՝ կնուսքի, նշանտուքի, հարսանիքի կամ անուանակոչութեան համար խմորեղէններ կամ աղանդերներ գնելու:

Երբ վարի թաղը ապրող կին մը վերջապէս մտաւ իր խանութը, Մարտիկ ուզեց ինքը զգաղիլ այդ յաճախորդով: Աւելի աժան տուաւ քան նշանակուած գինը եւ հազար հարցեր տուաւ իրենց կեանքի մասին:

– Ի՞նչ է, շատոնց է ձեր թաղէն գնումի չեն գար: Նշանտուք, ամուսնութիւն չկա՞յ, ի՞նչ է: Հասած աղջիկներ, երիտասարդներ ունիք. ի՞նչ կը սպասեն ամուսնանալու համար: Տիրացուին աղջիկը, օրինակ, ամուսնանալու տարիքին մէջ է, ուրիշներ ալ կան...

– Աման, Տիար Գալուստեան, Տիրացուին աղջիկը քիթը շատ բարձր կը բռնէ, մարդու չի հաւնիր: Գեղացիներէն չորս կտրիճներ իր ձեռքը խնդրեցին, մերժեց: Չեմ ըսեր, գեղեցիկ է, նամու-

սով է, ուսեալ է, բայց ո՞վ պիտ առնէ քի, դարձեալ մեր գեղէն մէկը... Հարուստը կու գա՞յ, մեր թաղէն աղջիկ կ'առնէ՞...

– Էհ, ի՞նչ գիտէք,– կարելի է Միւսիւի՞ն հետը խօսք կապած է, անո՞ր համար միւսները կը մերժէ,– հարցուց Գալուստեան:

– Ա՛հ, չէ, Միւսիւն օր. Չապելին հետ է, բաժնուած չունին. կ'ըսեն թէ՛ պիտի ամուսնանան:

Այս խօսքերը երաժշտութեան պէս քաղցր եկան Գալուստեանի ականջներուն: Ըսել է, նախ, աղջիկը իր արժէքը գիտէ եւ կը մերժէ հասարակ ձկնորսի կին ըլլալ. յետոյ, ավելի կարելորը, «Միւսիւ»ին եւ իր միջեւ սեր, բան գոյութիւն չունի:

Գալուստեան իր ուրախութեանը մէջ քանի մը կտոր խմորեղէն ավելի տուաւ: «Աս ալ պզտիկներուդ համար», ըսաւ շուրած կնկան, որ աչքերուն չէր հաւատար: Տիար Գալուստեան ժլատ մարդու համբաւ ուներ գիւղին մէջ:

Բոլոր կիները գրեթէ նոյն պատասխանները տուին իր հարցումներուն: Կը մնար հիմա խօսիլ մօրը հետ, որ նոր հարստացած՝ ավելի ամբարտաւան, ավելի անզիջող էր աղքատ ընտանիքներու նկատմամբ քան ի ծնէ հարուստ մը: Ան եկեղեցիին ավարտումէն վերջ, Կիրակի օրերը, գլխի թեթեւ շարժումով մը եւ հազիւ շրթները շարժելով կը բարեւեր աջ ու ձախ: Պիտի չուզէր երբեք աղքատիկ թաղը իջնել ու Մելիսէին մօր դուռը գարնել, այն ալ ինչո՞ւ համար՝ աղջիկը իր տղուն համար ուզելու:

Գալուստեան ամբողջ օրուան ընթացքին կը վճռէր գիշերն իսկ խօսիլ իր մօրը հետ: Իրիկունը, երբ խանութին երկայթէ փեղկերը աղմուկով վար կ'առնուէին, այդ տիրական աղմուկը, իր խանութին աղմուկը, կու գար իր վճռականութեան նոր թափ մը տալու... Պիտի խօսէր այդ իրիկունն իսկ: Պիտի ըսեր, որ կա՛մ կ'ամուսնանայ Մելիսէին հետ, կա՛մ կեանքին մէջ բնաւ չ'ամուսնանար, եւ այսպէս խանութներ, տուներ եւ ինչուն դրամ կ'անցնին հեռաւոր ազգականներու ձեռքը, որոնք արդէն այդ կը սպասեն: Այո՛, պիտի խօսէր անպատճառ...

Բայց բաւական էր, որ տուն հասնէր ու դուռը բանալով ներս մտնէր, որ պապանձուէր: Հայելիի պէս փայլող տախտակամածը, ընթրիքի սեղանին ճերմակ, ձիւնափայլ սփռոցը, մօրը պատրաստած կերակուրին հոտն անգամ կը հալեցնէր իր վճռականութիւնը, եւ ան, Տիար Գալուստեան, գիւղին ջոջը,

երեսունվեց տարեկան նախկին Թաղականն ու Հոգաբարձուն պզտիկ տղու մը պէս կը հանէր իր կօշիկները ու կը հագներ դրան քով դրուած իր հողաթափերը, մօրը ձեռքը կը համբուրէր եւ, լուացուելէ վերջ, սեղան կը նստէր ու կը խօսէր օրուան առեւտուրի մասին:

Հեղեղի նման անձրեւոտ օր մը, երբ մարդ չէր գիտեր թէ՛ փրփրալից ծո՞վն էր, որ բարձրացեր էր երկինք հասնելու ճիգով, թէ երկինքն էր վար իջած ու ծովուն խառնուած, մինակութեան զգացումը այնպէս ուժով արթնցեր էր իր մէջ, Մելինէին գեղեցիկ դէմքը, մարմնոյն դուրս կլորութիւնները այնպէս որոշ երեւցեր էին իրեն, որ ան երդուեր էր նոյն իրիկունն իսկ խօսիլ մօրը հետ:

Ամէն իրիկուան պէս, հողաթափերը հագնելէն եւ մօրը ձեռքը համբուրելէ վերջ, ան նստէր էր մօրը դէմ, ընթրիքի: Լուռ էր մէկու մը պէս, որ մեծ յարձակման կը պատրաստուի եւ ուժ հաւաքելու պէտք ունի: Վերջապէս, երբ սպասուհին սուրճը բերած էր, Մարտիկ հառաչ մը արձակած էր, մտքովը «խաչ օգնեա՞ր ինձ» մը ըսած էր եւ, մօրը դառնալով, Մելինէին հետ ամուսնանալու իր փափաքը յայտնած էր:

Հակառակ իր սպասածին, մայրը ոչ վրդովում, ոչ ալ բարկութիւն էր ցոյց տուած: Ան մինչեւ անգամ զարմացած ալ չէր, կարծես եղածը սովորական բան մըն էր, այնքա՛ն սովորական, որուն համար չէր արժեր, որ ան իր սուրճ խմելը դադրեցներ:

Խելացի կին էր Մարտիկի մայրը: Անմիջապէս կռահէր էր, որ եթէ իր տղան այսպէս ազատօրէն իր կամքը կը յայտնէր, կը նշանակէ թէ՛ իր որոշումը անդրդուելի է: Մինչեւ հիմա, տղան իր հազուստները, իր փողկապները, խանութի գործերն ալ կատարած էր միշտ մօրը ցուցմունքներով, եւ ահա ամուսնութեան պէս լուրջ խնդրի մը համար որոշում տուած էր՝ առանց իսկ իր կարծիքը հարցնելու: Պէտք է ընդառաջ երթար տղուն փափաքին, զիջած ըլլալու երեւոյթ չունենալու համար: Աս էր իր մայրատիրութեան ռազմագիտութիւնը՝ զգալ, կռահել զաւակին փափաքները, ընդառաջել ձգտումներուն, այն տպաւորութիւնը թողելու համար, որ իբր թէ ինք կը թելադրէ, եւ տղան միայն կը համակերպի: Մելինէին խնդրին մէջ պէտք եղած աջալրջութիւնը չէր ունեցած, պէտք է հաւանէր, նոյնիսկ պէտք է ցոյց տար, որ իբր թէ իր ուզածն ալ այդ էր:

Մօրը գլխաւոր մտահոգութիւնը ծանօթներու «ինչ պիտի ըսեն»ն էր: Տղուն խօսած ժամանակ ան մտքով սկսէր էր արդէն բարեկամներու ըսելիքները պատրաստել, իրենց ըրած ընտրութեան պատճառները բացատրելու համար: «Ուզեցինք աղքատ աղջիկ մը երջանկացնել»: Կամ՝ «Տղաս դրամէն աւելի զարգացում կը փնտռէ»: Կրնար նաեւ ըսել. «Աղբի մէջ ալ ծաղիկ կը բուսնի, պէտք է միայն քաղել գիտնալ»...

Ներքնապէս ալ շատ դժգոհ չէր Մարտիկի մայրը: Աղքատ հարսը, հլու հնազանդ կ'ըլլայ, կը հետեւի տան կարգ ու կանոնին: Ո՛վ գիտէ, հարուստ հարս մը ինչէր պիտի փոխէր, ոչ միայն կահկարասիներէն, այլ եւ սովորութիւններէն. խոհարար պիտի ուզէր, սուղ-սուղ հագուստներ պիտի ապսպրէր, գիշերները քաղաքի թատրոնները, պարահանդեսները երթալ պիտի ուզէր:

Իրաւունք ունիս,— ըսած էր, երբ տղան վերջացուցած էր իր խօսքը.— շատ գեղեցիկ աղջիկ է եւ պատուաւոր: Մօրը թռչակ մը կը կապէս որ առանձին ապրի: Վաղն իսկ կ'երթամ, Ծովինարէն իր աղջիկը կ'ուզեմ քեզի համար: Խեղճ կնկան խելքին պիտի գայ ուրախութենէն:

Ոչ մայրը, ոչ ալ տղան, վայրկեան մը իսկ չմտածեցին, որ տիրացուի մը աղջիկը կրնար մերժել իրենց առաջարկը...

Ծնունդի տօներու նախօրեակին Մելինէն մօր հաւանութեամբ խթման ընթրիքին հրաւիրած էր տեսուչ Պետիկեանը եւ օր. Չապէլը: Ասոնք գրեթէ միշտ միասին տեսակ մը անպաշտօն նշանածներ կը նկատուէին գեղացիներէն, եւ այդ պատճառաւ չէին կրնար հրաւիրել մին առանց միւսը հրաւիրելու: Անկախ այդ պարագայէն ալ, Մելինէն երկուքն ալ պիտի հրաւիրէր, մինակ էին այդպիսի սուրբ օր մը: Կար Աւագեանը, տիրացու ուսուցիչը: Բայց տեղացիք շատոնց վարժուած էին զինք մինակ չնկատել. զոյգ մը լեցուն շիշեր շատ դիւրութեամբ ընտանիք մը կը փոխարինէին անոր համար:

– Զուրթակս ալ հետս պիտի բերեմ,– ըսած էր օր. Չապէլ. ուրախ, հաճելի տօնական երեկոյ մը անցընելու հեռանկարով:

Մելինէ, որ մտածած էր առաջարկել ջութակը հետը բերել եւ չէր համարձակած ըսել, փոքրիկ աղջկան մը նման կը ցատկոտեր այս ինքնակամ յանձնառութեան համար: Ան ճշմարիտ համակրանք ուներ դէպի իր աւագ պաշտօնակիցները եւ անոնց պատուին տրուած տօնական սեղանը կը պատրաստէր գուրգուրանքով: Իրենց փոքրիկ տան մէջ քիչ անգամ ուրախութեան ձայներ կը լսուէին: Յօրացաւէն տառապող իր մօր հառաչները, միանալով ծովու փոթորկի աղմուկներուն, ձմեռ գիշերներ, լալու աստիճան կը յուզէին զինք՝ անբացատրելի միակութեան զգացում մը արթնցնելով իր մէջ:

Մելինէին համար աշխարհի ամենաերջանիկ աղջիկը օր. Չապէլն էր, որ բախտն ունեցած էր Պետիկեանի պէս համակրելի եւ զարգացած մէկու մը ուշադրութեան արժանանալու եւ անոր հետ մտերմանալու: Պետիկեան նորահաս օրիորդի իր երազներուն համար անհասանելի, անհրականալի պատկեր մըն էր, որուն միայն հեռուէն նայիլ վիճակուած էր իրեն. չէ՞ որ գիւղացի, հասարակ աղջիկ մըն էր ինքը:

Գիտէր, որ չէր կրնար հասնիլ այդ երազին, բայց չէր կրնար իր փոքրիկ, չարածճի սրտին խօսք հասկցնել, երբ սա, խենթի պէս ցատկոտել կը սկսէր ամէն անգամ, երբ հեռուէն տեսուչին ոտնաձայնը կը լսուէր, երբ ան, ի պաշտօնէ, դասարան կը մտնէր երբեմն-երբեմն քննական այցելութեան համար կամ դասին ներկայ գտնուելու եւ ստուգելու թէ՛ ամէն բան կարգի՞ն էր այս շատ երիտասարդ վարժուհիի խնամքին յանձնուած բաժանմունքին մէջ:

Ա՛խ, այդ անհնազանդ, չարածճի սիրտը, որ հիմա ալ, Մելինէին աչքերը կը տանէր սեղանին այն կողմը, ուր պիտի նստէր երիտասարդ տեսուչը, եւ կ'ուզէր, որ այնքա՞ն զոհողութիւններով գնուած ծաղկեփունջը դրուէր ծիշդ անոր պնակին մօտիկ, շատ մօտիկ...

Մելինէ, հակառակ Պետիկեանի հանդէպ իր ունեցած բնական հակումին, բնաւ նախանձի զգացում չուներ օր. Չապէլի նկատմամբ: Կը գնահատէր անոր մտաւոր եւ բարոյական արժանիքները եւ զայն արժանի կը գտնէր իր կուռքին համար: Իր զգացումներուն մէջ որեւէ ակնկալութիւն, որեւէ յոյս կամ սպասում չկար: Իր տասնինը տարիները կը գոհանային, իր երազները կեդրոնացնելու համար՝ մէկը գտած էր վերջապէս:

Երիտասարդ աղջիկը, սեղանը կարգի դնելէ վերջ, քաշուցաւ սենեակին մէկ անկիւնը եւ հեռուէն հիացած աչքերով նայեցաւ սեղանին: Երբեք այսպիսի շքեղ սեղան մը չէր տեսած: Ուրախութեանը մայրն ալ մասնակից ընելու համար՝ վագեց խոհանոց ու գուրգուրանքով համբուրեց կրակին առջեւ կարմրած իր մայրը.

– Ի՞նչ ուրախ եմ, մայրիկ: Փառաւոր կերպով պիտի ընդունինք մեր հիւրերը: Պիտի տեսնես թէ ի՞նչ սքանչելի անձեր են, շա՛տ, շա՛տ պիտի սիրես:

Մայրը, որ խոհանոցին մէջ ընթրիքի պատրաստութեամբ զբաղած, մոռցեր էր յօրացաւերը, թերահաւատ գլուխը շարժեց: Կը կարողար աղջկանը սիրտը եւ գիտէր, թէ անոր ունեցածը այն տեսակ ուրախութիւններէն էր, որոնց շատ դիւրութեամբ կը յաջորդէ լացը:

Խոհանոցին մէջ խոշոր աստակոսը, որ ձկնավաճառ Թորոս մասնաւոր կերպով ընտրած էր Ծովինարի համար, արքայա-

վայել բազմած էր խոշոր պնակի մը մէջ՝ իր շուրջը քաղցրահոտ գոլորշի մը տարածելով: Միւս կողմը՝ տապկուած վառեակը, վարպետօրէն պատրաստուած փիլաւ բլուրի վրայ վայելչօրէն թառած, իր ախորժաբեր հոտով կը մրցէր խեցեղէնին հետ...

Ծովինար մասնաւոր հպարտութեամբ պատրաստած էր խմորեղէնը, «քատախֆը» եւ կը սպասէր, որ աղջիկը գովեստ մը ըսէր այդ մասին:

Երբ Մելինէ մօր կարծիքը հարցուցած էր՝ իր պաշտօնակիցները հրաւիրելու համար, մայրը հաւանութիւն յայտնած էր, բայց իր մտքէն չէր անցած այսպիսի «արքայական ընթրիք» պատրաստելը: Թարմ ձուկ մը խեցեղէնի տեղ, փիլաւ եւ կարգ մը աղանդերներ բաւական էին, իր կարծիքով: Սակայն, յետոյ զիջէր էր իր աղջկան, որ կ'ուզէր փառաւոր կերպով ընդունիլ իր «սիրելի հիւրերը»: անոնց համար, եթէ հարկ ըլլար, պատրաստ էր զրկուիլ իր գնելիք հագուստէն, որուն համար գումար մը մէկ կողմ դրուած էր:

Քիչ առաջ հիացումով իր սեղանը դիտած էր Մելինէն, հիմա մօր պատրաստած կերակուրներուն կը նայէր սքանչացումով: Իր մայրը, իր հիւանդ, սիրելի մայրը յաջողած էր այս հրաշալիքները պատրաստել, ու ահա կրկին փարեցաւ մօրը՝ ըսելով.

– Իմ զարմանալի մայրիկս, «փերի»ի մը նման հմուտ մատներ ունիս դուն:

Ան անգամ մը եւս նայեցաւ կերակուրներուն, որոնք պիտի ուտուէին իր սիրելիներէն, ու ելաւ իր սենեակը՝ հագուելու:

Ընտրութիւնը դժուար չէր: Ան մէկ տօնական շրջագգեստ ուներ, մուր կարմիր թաւշեայ պարզ հագուստ մը, որ զարդարելէ աւելի, կը զարդարուէր աղջկան շքեղ կառուցուածքով:

Քիչ մը շփոթած էր: Եւ շփոթութիւնը կ'աւելնար քանի հիւրերուն գալը կը մօտենար: Երբեք, քանի մը բառէն աւելի չէր խօսած տեսուչին հետ, որ, ո՛վ գիտէ, որքա՛ն յիմար կը գտներ զինք, օր. Չապելի համեմատութեամբ: Օ՛, եթէ առիթը ներկայանայ, ինքն ալ պիտի երթայ ուսանելու: Կ'ուզէ արժանի ըլլալ Պետիկեանի գնահատութեան, միայն այդքան, ուրիշ ոչինչ:

* * *

Վերջապէս, եկան հիւրերը անձրեւէն թրջուած, բայց ուրախ: Պետիկեան կը կրէր օր. Չապելի ջութակը: Ներս մտնելուն պէս յայտարարեց.

– Տրամադրութիւնս շատ տօնական է: Ահա ե՛ւ փառաւոր սեղան մը, ե՛ւ համակրելի հասարակութիւն մը: Ամենայն ինչ կատարեալ է, ինչպէս պիտի ըսէր Սրբագանը...

Ուրախ էր նաեւ օր. Չապելը: Անոր գունատ դէմքը ցուրտէն կարմրէր էր, եւ աչքերուն մէջ երջանիկ փայլ մը կար:

– Օհօ՛,– ըսաւ Պետիկեան չորս կողմը նայելէ վերջ,– միայն ճաշասեղանը չ'է՛ որ փառաւոր է. հոս նոյնքան փառաւոր գրադարան մը կայ:

– Դորս գրքերն են,– ըսաւ Մելինէ ուրախութենէն կարմրելով:

– Ձեր հայրը հասկցող մէկը ըլլալու էր: Շատ լուրջ եւ արժեքաւոր գրքեր կան այստեղ: Ափսոս որ եղբայր մը չունիք...

– Ինչո՞ւ կ'ըսէք այդ,– հարցուց Մելինէ:

– Որպէսզի կարդար այս գրքերը, օգտուէր... Դուք օրիորդ մը եւ... եւ գեղեցիկ օրիորդ մը, անշուշտ չէք հետաքրքրուած ասոնցմով: Դուք...

– Մեծ մասը կարդացած եմ,– ըսաւ Մելինէ, քիչ մը վշտացած եւ յանդիմանական նայելով Պետիկեանին.– Ի՞նչ կ'ուզէք որ ընէի ազատ ժամերուս, այս չորս պատերուն մէջ:

Պետիկեան ուշադրութեամբ նայեցաւ Մելինէին, կարծես նոր կը տեսներ: Նկատած էր անշուշտ, որ ան շատ գեղեցիկ աղջիկ մըն էր, բայց իբրեւ այդպիսին մտաւոր ծարաւէ զուրկ մէկը կը կարծէր: Լսած էր Մելինէին Գալուստեանին հետ ամուսնանալու մերժումը եւ ենթադրած էր, թէ աւելի հարուստի կը սպասէր...

Ընթրիքի ընթացքին ալ Պետիկեան կը շարունակէր կարգ մը հարցեր տալ, որոնց Մելինէն կը պատասխանէր քիչ մը կատակով, քիչ մը լուրջ:

– Աշակերտուիլի մը պէս կը հարցաքննէք զիս,– ըսաւ վերջապէս խնդալով:

– Ընկերուիլի մը պէս պարզապէս,– պատասխանեց Պետիկեան լուրջ:

Ընթրիքն անցաւ շատ ուրախ: Թէ՛ հիւրերը եւ թէ՛ տնեցիք արժանավայել ընդունելութիւն ըրին կերակուրներուն: Կարմրախայտէն եւ վառեակէն աւերակներ միայն մնացին: Փիլաւը անյայտացաւ խոշոր պնակէն: Խմորեղէնին առջեւ սեղանակիցները նահանջի ձեւ մը ունեցան, եւ ահա օր. Չապէլ առաջարկեց նուագել, նախ քան անուշեղէնին յարձակման սկսիլը: Ան նուագեց Պէթհովէնի «Օրօր»-ը, Շումանի «Երագ»-ը եւ հայկական կտորներ: Կը նուագէր զգացումով եւ ճիշդ:

– Որքա՛ն լաւ կը նուագէք,– ըսաւ Մելինէն օր. Չապէլին քով գալով,– եւ որքա՛ն ուրախ եմ որ եկաք. կեանքիս ուրախ օրերէն մին է աս:

– Բաւական չէ ըսել, որ ուրախ ես,– ըսաւ մայրը,– պէտք է երգես հիւրերուն համար: Յետոյ հիւրերուն դառնալով ըսաւ.– գիտե՞ք, բաւական լաւ ձայն մը ունի:

– Այո՛, ժողովրդական երգերը բաւական լաւ կ’երգես: Ի՞նչ կ’ուզէ որ երգես:

Բայց պատասխանի չսպասելով՝ սկսաւ երգել սիրային երգ մը մեղմ, հաճելի ձայնով: Զիչ-քիչ անոր ձայնը տաքցաւ, բարձրացաւ, երբեմն հառաչի մը պէս շեշտուեցաւ, մերթ անձկութեամբ ու կարօտով լեցուն դողաց ու... լռեց:

Մելինէ կաս-կարմիր էր եւ շփոթած իր յանդգնութենէն:

– Տեսա՞ր, Չապէլ, ի՞նչ պահուած գոհար մը ունեիք մեր մէջ առանց գիտակցելու,– ըսաւ Պետիկեան՝ իր ընկերուհիին դառնալով:

Օր. Չապէլ հաւանութեան նշան ըրաւ: Ան տխուր էր: Մելինէին երգին տաք շեշտը, Պետիկեանին յուզուած մտիկ ընելը, իր կամքէն անկախ կսկծացուցած էին իր սիրտը: Չէր ներեր ինքն իրեն այդ տխրութիւնը. ի՞նչ իրաւունք ունէր: Երիտասարդուհի մը, գրեթէ դեռ երեխայ, իրաւունք չունէ՞ր կեանքի սեմին առջեւ յուզումով, սպասումով նայելու գալիքին, իրաւունք չունէ՞ր իր սպասումները երգով արտայայտելու: Ինքն ալ հիացումով մտիկ ըրեր էր Մելինէին երգը, ինքն ալ սքանչացած նայած անոր անկեղծ գեղեցկութեան: Ինչո՞ւ Պետիկեան, որ երիտասարդ էր, պիտի չտպաւորուէր, մանաւանդ երբ նկատէր էր, որ աղջկան գեղեցկութիւնը լոկ շրջանակ մըն է անոր միւս հոգեկան արժանիքներուն:

Երբ հիւրերը մեկնելու մասին կը խօսէին, Ծովիկար առաջարկեց, որ շուտ-շուտ գան իրենց, քանի որ մինակ են, ընտանիք չունին:

– Մինակ չեմ,– ըսաւ Պետիկեան՝ Չապէլի ձեռքը բռնելով.– ասոր պէս թանկագին քոյր մը ունիմ ես:

Ան «քոյր» բառին վրայ մասնաւոր կերպով շեշտեց, թէ Չապէլին այնպէս թուեցաւ, բայց իր աչքէն չվրիպեցաւ, որ Մելինէին դէմքը իր հագած հագուստին գոյնն առաւ «քոյր» բառը լսելով, եւ որ անոր զարմանալի աչքերը հարցական դարձան դէպի հեռաւոր կէտ մը, որ միայն իրեն կ’երեւէր...

Պետիկեանին եւ Չապէլին յարաբերութիւնները, հակառակ գեղացիներուն ենթադրութեան, զուտ ընկերական էին: Պետիկեան որեւէ ժամանակ, որեւէ խօսք կամ ակնարկ թոյլ չէր տուած իրեն, որ ընկերական սահմաններէն դուրս եղած ըլլար: Չապէլ պատճառ չունէր Պետիկեանէն ակնկալութիւններ ունենալու սիրային հարցի շուրջ: Բայց հինգ-վեց ամիսներու մտերմական կեանքը, իրենց գրեթէ անբաժան ըլլալը Չապէլին կեանքի ճամբուն վրայ, ապագայի վերաբերմամբ որոշ շողեր էին նետեր: Պետիկեան իրեն շատ անգամ «բաջի ջան» կ’ըսէր փոխանակ անունը տալու, թերեւս նկատած ըլլալով որ օրիորդ անտարբեր չէր իր նկատմամբ եւ չուզելով յոյսեր ներշնչել անոր:

Պետիկեանի ծրագիրները ծանօթ էին Չապէլին՝ վերադառնալ արտասահման, շարունակել ուսումը եւ Երկիր վերադառնալով ամբողջովին նուիրուիլ իր ժողովրդին ազատագրման գործին:

– Ի՞նչ ունի իմ բաջի ջանը,– ըսաւ Պետիկեան՝ օր. Չապէլի մօտենալով մեղմութեամբ.– ինչո՞ւ սեւ ու մութ ամպեր պատեր են ճակատդ Ալագեագի նման...

– Բայց բնա՛ւ տխուր չեմ: Կը մտածեի, ընդհակառակը, ձեզ երեքդ ալ, վաղը գիշեր իմ համեստ սենեակս հրաւիրել՝ այս իրիկուան հաճելի ժամանցը շարունակելու համար: Խթումը հոս տօնեցինք, Ծնունդը ինձ մօտ կը տօնենք:

Մելինէ ուրախութենէն ծափահարեց:

– Երթանք, մայրի՛կ, քեզ լաւ մը կը փաթթեմ տաք շալերու մէջ: Չես մսիր... Երթա՛նք:

Մայրը լսել անգամ չէր ուզեր: Ցերեկը դուրս չէր ելլեր, գիշերը դուրս պիտի ելլեր, ան ալ այս ցուրտ ձմեռը: Աղջիկն ալ չէր կրնար երթալ. մինակ անյարմար էր գիշեր ատեն:

Մելինեն օգնութեան կանչող նայուածքով նայեցաւ Չապելին եւ Պետիկեանին:

– Շատ ուրախ պիտի ըլլայինք, եթէ դուք ալ գայիք, – ըսաւ Պետիկեան. – գալով օր. Մելինէն, ես կ'ընկերանամ իրեն եւ կը բերեմ ձեզ կը յանձնեմ զինք:

Ծովինար կը տատանէր: Ինք բաւական ազատամիտ էր, բայց գիւղացիները «ի՛նչ պիտի ըսեն»-ը կը մտահոգէր զինք:

Չապել ինքն ալ մօտեցաւ Ծովինարին.

– Այնպէս ուրախ պիտի ըլլայի, եթէ Մելինէն գար վաղը իրիկուն մեզի հետ ժամանակ անցընելու: Երիտասարդ աղջիկ է, կեանքով լեցուն, բանտարկեալի կեանք մը վարել կու տաք իրեն: Պիտի թոյլ տաք, չէ՞...

Վերջապէս, Ծովինար տեղի տուաւ:

Չիւրերուն երթալէն վերջ, Մելինէ իր սենեակն ելաւ: Երջանի՛կ էր: Բան մը լոյսի ճառագայթի մը պէս կ'անցներ աչքերուն առջեւէն: «Քոյր»-ը իր քոյրիկն է միա՛յն, իր բաջի ջանք: Ուրեմն, ինքը կրնայ, առանց իր սիրած օր. Չապելին դաւաճանելու վախին, երազե՛լ, երազե՛լ թերեւս եւ յուսալ...

Մելինէ, հակառակ ցուրտին, բացաւ պատուհանը: Ծովը, գեղեցիկ Մարմարան, երկու քայլ հեռուէն իր ալիքները կը նետէր դէպի ափ: Տեսարանը շատ ծանօթ, շատ մտերիմ էր իրեն, բայց այդ գիշեր բան մը փոխուած էր, ալիքները աւելի մեղմ էին ափին վրայ փշրուած ժամանակ ու կը մրմնջէին. «Յուսա՛... յուսա՛»...

Շուտով գիւղացիները զարմանքով տեսան, որ Մելինէն ալ կը մասնակցէր տեսուչի եւ օր. Չապելի պտոյտներուն մասնաւորապէս Կիրակի օրերը:

«Մելինէն չի քալեր, կը թռի» կ'ըսէին անոնք՝ գլուխին տխրութեամբ շարժելով: Մելինէն իրենց գիւղին մէջ ծնած՝ քիչ մը իբր իրենց աղջիկը կը նկատէին: Ան մտերմութեան պատճառով էր արդեօք որ ան յիմարաբար մերժած էր Տիար Գալուստեանի պէս հարուստ մարդու մը ամուսնութեան առաջարկը: Ո՛ր պիտի երթայ այս ճամբան: Մայրը գոնէ ինչո՛ւ խելքի չէր բերեր իր աղջիկը:

Օր. Չապել զանազան պատրուակներով շատ անգամ չէր մասնակցէր պտոյտներուն՝ իր երիտասարդ պաշտօնակիցները մինակ թողելու համար, որոնք իր ներկայութեան ալ, թերեւս առանց գիտակցելու, ամէնէն աննշան նիւթերու մասին խօսած ժամանակ իսկ, իրենց ձայնով, նայուածքով, անչափելի ու անպարտկելի երջանկութիւն մը կ'արտայայտէին:

Աւագ ուսուցչուհին, որ գողտրիկ բանաստեղծութիւններու հեղինակ էր եւ պահ մը գրիչը թողած էր գրածները ապրելու յոյսով, կրկին վերադարձեր էր իր գրիչին եւ տետրերուն, քիչ մը աւելի գունատ, աչքերուն մէջ քիչ մը աւելի մռայլ շեշտով, բայց արտաքնապէս նոյնքան հանդարտ:

Դառնութիւն չէր զգար: Պետիկեանի վերաբերումը դէպի իրեն չէր փոխուած բնաւ: Ան նոյնքան գուրգուրանք եւ մտերմութիւն ցոյց կու տար, որքան առաջ, եւ կարծես ուրախ էր աւելի, երբ Չապել ալ ներկայ էր իրենց հաւաքոյթներուն եւ պտոյտներուն: Չապել սկսէր էր արդէն իր «քրոջական» դերը կատարել երկու սիրահարներու հանդէպ, որոնք, կը խոստովանէր, «ստեղծուած էին իրարու համար»:

Երկու սիրահարներու մէջ չպատահեցան, չարտասանուեցան պայմանադրական խօսքեր: Կը զգային, որ աւելի երջանիկ էին քան ինչ որ կարելի է մարդկային բառերով արտայայտել, եւ թէ փայտէ փոքրիկ տան դրան առջեւ բաժանման ցան իսկ չէր յաջողեր նուազեցնել իրենց երանութիւնը, որ անչափ էր:

Օր մը շրջակայ ծովագերեայ գիւղերէն, Սան Սթեֆանօ գացած ժամանակ, Պետիկեանը ուժով բռներ էր Մելինէի ձեռքը եւ իրենց առջեւ երկարող ճամբան ցոյց տալով հարցուցեր էր.

– Պիտի ուզէի՞ր կեանքի ճամբան այսպէս քալել ինձ հետ, Մելինէ:

Պատասխանի փոխարէն, Մելինէ մօտեցեր էր երիտասարդին, վստահութեան, ինքնանուիրումի անսման ձեւով:

– Բայց քալել, նոյնիսկ եթէ ճամբան դժուար է:

– Դժոխքի մէջէն ալ... միշտ... յաւիտեան:

Մտահոգ էր նաեւ Մելինէի մայրը: Ամէն անգամ, որ բերանը կը բանար յանդիմանելու կամ աղջկան ապագային մասին իր վախը ըսելու, աղջիկը կը լռեցներ զինք ականջին շշնջալով.

– Ա՛խ, մայրիկ, ես այնպէ՛ս երջանիկ եմ, այնպէ՛ս...

* * *

Այդ շրջանին էր, որ Արան եւ ես հանդիպեցանք Մելինէին եւ մօրը, Չառոյի տունը: Ողբերգութեան նախօրեակին էր: Ամուսինս եւ ես հիացեր էինք այդ գեղեցիկ, չարածճի եւ երջանկութենէն թռվոուն աղջկան առջեւ:

Մայր ու աղջիկ եկեր էին Չառոյին յայտնելու, որ Պետիկեանն ու Մելինէն, դպրոցական շրջանէն վերջ, պաշտօնապէս պիտի նշանուէին ու ամուսնանային՝ միասին արտասահման անցնելու եւ ուսանելու համար: Մելինէն ուզած էր, որ այդ երջանիկ լուրը առաջին իմացողը ըլլար իր Չառօ մօրաքոյրը, իր հոգեկան մայրը:

– Կարելի՞ է իր արձանը քանդակել եւ վարը գրել «երջանկութիւն»,– ըսաւ Արան:

Իրաւունք ուներ: Ան շատ լաւ կարծիք ուներ Պետիկեանի մասին եւ Մելինէի համար աւելի լաւ կեանքի ընկեր երագել չէր կրնար:

– Եթէ ամուսնանալէդ վերջ պատճառ դառնաս, որ ամուսինդ հեռու կենայ հասարակական գործերէ, վա՛յ քեզի, ինձ հետ հաշիւ պիտի ունենաս,– ըսաւ Չառօն:

– Միասին պիտի աշխատինք, Չառօ մօրաքոյր,– պատասխանեց Մելինէն.– պիտի տեսնես թէ ի՛նչ լաւ պիտի աշխատինք: Ես քու հրամանիդ տակ, իսկ Պետիկեանը՝ պարոն Արային:

– Օր. Չապէ՛լը ինչպէս է,– հարցուց Չառօն, որ շատ կը համակրէր անոր:

– Միշտ սքանչելի, մեծ քրոջ մը պէս է ինձ հետ: Կ'ըսէ, որ շատ ուրախ է մեր երջանկութեամբ:

Չառօն թերահաւատ գլուխը շարժեց: Բայց երջանկութիւնը լոյսէ քօղ մը դրած էր Մելինէին աչքերուն, ան չնկատեց Չառոյին շարժումը ու շարունակեց պատմել թէ՛ ի՛նչպէս Չապէլ կը հոգայ զինք, կ'օգնէ իրեն իր խորհուրդներով եւ առհասարակ որքա՛ն բարի է:

Մելինէի մօտալուտ նշանուիլը Պետիկեանին հետ, նպարավաճառ Գալուստեանին հոգիին մէջ չորնալու դատապարտուած չար հունտ մը ծլեցուց: Ինքնասիրութիւնը ֆիզիքական ցաւ պատճառելու աստիճան վիրաւորուած էր իր մէջ: Կը կսկծար նաեւ մինչեւ այն ժամանակ լուռ մնացած իր սիրտը: Ան այնքան վստահ էր, որ իր առաջարկը, ոչ միայն ուրախութեամբ, այլ եւ երախտագիտութեամբ պիտի ընդունուէր, որ ապագայի համար «սպանական դղեակներ» կառուցանելէ զատ, գործնական ծրագիրներ ալ մշակած էր: Գրած էր իր վարձակալներէն մէկուն, որ իր յարկաբաժինը ազատէ, թէ ինք պիտի բնակէր հոն իր ընտանիքով: Հագուստներ ապսպրած էր, մինչեւ անգամ իր նշանածին տրուելիք սուէրը գնած:

Գիտէր, որ գիւղին մէջ բոլորը գիտէին տիրացուի մը աղջկան կողմէ մերժուած ըլլալը: Տիրացուի մը աղջիկը մերժէ՛ զինք՝ միայն իր թոշակը ունեցող վարժապետի կտոր մը ընտրելու համար: Աններելի էր, պէտք էր այդպիսի հրէշային ընթացք մը իր արժանի պատիժը ունենար...

Երբ երկու նշանածները խնդալով, երջանիկ, իր խանութին առջեւէն կ'անցնէին, իրեն կը թուէր, որ զինք կը ծաղրէին: Բաւական էր, որ մէկը իր երեսին քիչ մը ուշադրութեամբ նայէր կամ որեւէ խօսք ըսէր, որ անուղղակի կերպով յիշեցներ իրեն

եղած վիրաւորանքը, ան կը տառապէր ու իր տառապանքը նոր ծիլեր արծակել կու տար իր հոգիին մէջ ծլած չար հունտին:

Գալուստեան նիհարցեր էր, առաջուան նման «մեծաքանակ» չէր: Գիշերները կը լուսցնէր վրէժխնդրութեան մասին մտածելով: Իրեն համար շատ դիւրին էր տեսուչը հրաժարեցնել տալ իր պաշտօնէն: Լա՛ւ, բայց ասկէ ի՞նչ կ'ելլէ: Չարգացած մարդ էր տնօրէնը, ուրիշ տեղ մը կը վարձուէր: Ծիշդ է, կ'ազատէր զինք տեսնելու անախորժութենէն, բայց չէր կրնար արգիլել, որ ան երջանիկ ըլլար իր գեղեցիկ եւ զինք հարուստ ամուսին մը մերժելու չափ սիրող կնոջը հետ: Ո՛չ, պէտք էր այնպիսի ձեռով վրէժ լուծել, որ երկուքն ալ տառապէին, տանջուէին, որ Մելինէն միակ մնացած, անզօր ու լքուած, գոջար զինք մերժած ըլլալուն համար, գար թերեւս իր սխալած ըլլալը յայտնէր, ուզէր դարմանել զայն: Օ՛հ, օ՛հ, այն ատեն, ա՛յն ատեն:

Այն միտքը, թէ Պետիկեանին պատճառով է միայն, որ աղջիկը զինք մերժեց, այնքան տրամաբանական կ'երեւէր իրեն, որ չէր կասկածեր իսկ թէ, որեւէ ձեռով զայն «շրջագայութենէն դուրս» հանելով Մելինէն իրը պիտի ըլլար:

Իրենց տան կեանքն ալ անտանելի եղած էր: Մայրը գրեթէ չէր խօսեր իրեն հետ, ի՛ր պատճառով ստացած վիրաւորանքին համար: Ինք, Տիար Մարտիրոս Գալուստեանի մայրը, երթայ իջնէ «սա մարդկանց» թաղը, աղջիկ մը իրեն հարս ընելու համար, եւ ահա, փոխանակ գրկաբաց ընդունուելու, մերժումի նամակ մը կը ստանայ երկու օր վերջ: Տիկին Ծովինար՝ «աղջրկանս հարցնեմ» ըսած էր եւ շատ ուրախ կ'երեւէր այս անըսպասելի առաջարկին համար:

«Երկուքն ալ տե՛ֆ ընել տուր այս տեղէն, թէ չէ՛ փողոց ոտք չեմ կոխեր», – ըսած էր տղուն:

Մայրը կ'ուզէր մանաւանդ, որ տղան անմիջապէս նշանուի եւ ամուսնանայ դիրք ունեցող ընտանիքի մը աղջկան հետ, այսպիսով ցոյց տալու համար որ մերժումը որեւէ նշանակութիւն չէր ունեցած, թէ իրենք կրցած էին իրենց արժանի խնամութիւն մը ընել: Այս հարցին շուրջն էր, որ մայր ու տղայ չէին համաձայնէր: Տղուն ամբողջ էութեամբ փափաքածը վրէժ լուծելն էր, այդ ներկայութենէն իր հասկցած ձեռով ազատիլն էր: Ամուսնանալու մասին յետոյ պիտի մտածէր:

Այդ օրերուն Պոլսոյ մէջ կատարուած բանտարկութիւնները, գաւառներէն հասած տեղահանութեան եւ սարսափի լուրերը միտք մը տուէր էին իրեն: Ցած, վատ միտք մը, որմէ սուկացած էր եւ գարշանքով գլուխը անդին դարձուցած, իբր թէ ուրիշ մէկն էր, որ իրեն այդպիսի անկարելի ոճրային միտք մը կ'առաջարկէր:

Ո՛չ, ո՛չ, մատնիչ մը, Յուդա մը չէր կրնար ըլլալ ինք: Չի կրնար ընել այդպիսի բան մը: Դաւաճանել հայրենակիցի մը: Ո՛չ, ո՛չ'...

«Իսկ ինչո՞ւ ո՛չ, – կ'ըսէր իր ներսէն ձայն մը, – կը տառապեցնեն, կը խայտառակեն քեզ. թո՛ղ իրենք ալ տանջուին. քեզի՞ մնաց գթալ»:

Մայրն ալ իր կողմէն անշնչելի դարձուցած էր տունը: Եթէ ճաշերու ընթացքին խօսէր, միշտ այդ նիւթին շուրջ էր. պէտք էր որ տղան, նախ՝ հեռացնել տար երկուքը դպրոցէն, իր ուժը ցոյց տալու համար եւ յետոյ ամուսնանար: Ուրախացած թշնամիները կը լռէին այն ժամանակ միայն:

– Սգաւորի տուն դարձուցիր տունը, – կ'ըսէր լալկան ձայնով, – հարսնիքի տեղ թաղում ըրիւք, մեր պատիւը թաղեցիւք, ճարը չես խորհիր... կարծես քար է կտրեր սիրտդ:

– Յամբերէ, քիչ մըն ալ համբերէ, ուզածդ աւելին ալ պիտի ընեմ, – կ'ըսէր Գալուստեան՝ յուզումէն գունատած:

Քանի մը անգամ, անքուն գիշերէ մը վերջ, առաւօտուն, փոխանակ իր գործի հազուստները հագնելու, ան հագեր էր տօնական հազուստներէն մին, եւ դէպի իր խանութը ուղղուելու տեղ, ոստիկանութեան ճամբան բռներ էր, բայց միշտ կէս ճամբայէն ետ էր դարձեր, ինքն իրմէ զգուած... Ո՛չ, չէր կրնար, պիտի չկրնար երբե՛ք, երբե՛ք...

Օր մը դիպուածը իր խանութը բերաւ նոյն ինքն՝ ոստիկանապետը:

Ուրիշ անգամ Գալուստեան դժկամութեան ձեւ մը կ'առնէր հեռունէն թուրք ոստիկանապետին գալը տեսնելով, որովհետեւ ան մեծ թիւով ապսպրանքներ կ'ընէր միշտ սուղ ուտեստերէնէն ընտրելով, կը վճարէր քանի մը սիրալիւր խօսքերով ու մեկնած ժամանակ անտարբեր ձեռով մը կ'ըսէր.

– Յաշիւս անցուցէք աս գնածներս...

Գալուստեան տետրակն իսկ չէր բանար նոր գնուածները

նշանակելու համար: Տարիներ է վեր հին հաշիւները, սպասել է յոգնած, դեղնած էին դարակներուն մէջ:

«Սառոյցի կտորին վրայ պիտի գրեմ,— կ'ըսէր միտքէն, թէեւ կը շարունակէր շրթներուն վրայ պահել սիրալիր ու շողոքորթ ժպիտ մը, ու կ'ըսէր ոստիկանապետին.

— Զաւ լիցի, պէյիմ,— ի՞նչ կ'ըսէք, ինձ համար մեծ պատիւ է այս աննշան ապրանքներով օգտակար ըլլալը»:

Այդ օրը սակայն, Գալուստեան ոստիկանապետին գալը տեսնելով, զգաց որ սրտին մէջ ծլած չարութեան ծիլերը նոր բողբոջ մըն ալ արձակած էին. զգաց որ իրմէ անկախ ուրախութիւն կը զգայ: «Ճակատագիրը ոտքս կը դրկէ վրէժ լուծելու առիթը», մտածեց ու որոշ թեթելութիւն զգաց: Թերեւս Նախախնամութեան մատը կար այս գործին մէջ. թերեւս երկինքն ալ վրդովուած էր իրեն եղած վիրաւորանքէն եւ դարմանելու պատեհութիւնը կը ստեղծէր:

Այս մտքերը արագ-արագ իրարու կը յաջորդէին, երբ Գալուստեան դէպի դուռ կը յառաջանար ոստիկանապետը դիմաւորելու համար, թէեւ շատ լաւ կը զգար, որ բոլոր մտածածներն ալ անհիմն էին, իր խիղճը ընդարմացնելու համար իր կողմէ հնարուած:

— Հրամանեցէք, պէյ էֆէնտի, շատոնց է խանութս գալու պատիւը չէք ըրած: Ի՞նչ կ'ուզէիք որ դրկեմ ձեր տունը:

— Օ՛, շատ բանի պէտք չունիմ, սա ցուցակին վրայ նշանակուածները միայն դրկեցէք, մութը չկոխած:

Գալուստեան ցուցակին վրայ ակնարկ մը նետեց: Ան կը սկսէր տուի մը սեւ խաւեարով, ափսէ մը փաքլաւայով, կտոր մը Կեսարիոյ ապուխտով, եւ կը շարունակուէր ուտելիքներու տեսակներով, որոնք թուղթին վրայ երկար պոչ մը կը ձեւացընէին:

Թուրք ոստիկանապետը թերեւս կռահելով, որ ուզածներուն թիւը սահմանները կ'անցնէր, անմիջապէս խօսակցութիւնը տարաւ այն ուղղութեամբ, որ Գալուստեան զգար, թէ ինչ մեծ բախտ է իրեն համար, քաղաքական այնքան խառնակ ժամանակ մը, նոյնիսկ անվճար մնալիք ապսպրանքներ ընդունիլը իրեն պէս հեղինակաւոր մէկէ մը...

— Տեսա՞ք ձեր հայերուն ըրածները,— ըսաւ խորոխտ եւ յանդի-

մանական շեշտով՝ ակնարկելով իրենց իսկ կատարած ձերբակալութիւններուն եւ աքսորին:

— Իրաւ որ, ամօթ կը զգամ եղածներուն համար, պէյս. թուրք կառավարութեան բարձր հոգատարութիւնը չգնահատող մարդիկ են բոլորն ալ: Իրա՛ւ որ, ամօթ է...

— Աֆերիմ: Ահա այսպէս պէտք է խօսիլ: Ուղղամիտ մարդու խօսք է աս... Տեսէք ձեր գիւղին ձեռք տուող եղա՛ւ: Ծիշդ է, կարգ մը ձերբակալութիւններ եղան, ոմանք աքսորուեցան, բայց գիտես ա՛, բոլորն ալ խռովարարներ էին, Հայաստան երազող մարդիկ. մնացեալները, առայժմ գոնէ, կրնան հանգիստ մնալ: Իսկ դուն վախնալու պատճառ մը չունիս, Մարտիկ աղա, ըսաւ ոստիկանապետը անոր ուսին գարնելով.— Չեմ թողուր որ քեզի դպին:

Ոստիկանապետը լռեց ու կարծես մտքին մէջ բան մը հաշուեց: Իրեն թուաց, որ իր ըսած այս վերջին խօսքերը ոչ միայն վճարեցին ցուցակին վրայ նշանակուած ուտեստեղէնը, այլ եւ բան մըն ալ աւելի մնաց, ու ան ըսաւ.

— Հա՛, մոռցայ, տասնեակ մը միած ձուկ եւ մէկ «լաքերտա» ալ դրկեցէք տուն:

— Գլխուս վրայ: Կ'ուզէի սա ըսել Պէյիս, որ հոս կամ ուրիշ տեղ խառնակութիւն ընողները միշտ դուրսէն եկածներն են: Դրսեցիներ, որոնք ծանօթ ալ չեն մեր երկրին: Հոս, օրինակ, դուրսէն եկող երիտասարդներուն վրայ բնաւ վստահութիւն չունիմ. գէշ օրինակներ կու տան տեղւոյս երիտասարդներուն, ազատութեան մասին կը խօսին: Ինձ չի մնար ըսել, պէյս, բայց...

Ոստիկանապետը, փորձուած մարդ, անմիջապէս կռահեց, որ Գալուստեան մէկու մը դէմ քէն ունի եւ կ'ուզէ իր ներկայութենէն օգտուիլ նպատակի մը հասնելու համար, բայց չհասկնալ ձեւացուց,— իբր թէ կը հաւատար, որ Գալուստեանի մտահոգութիւնը լոկ թրքական կառավարութեան դէմ օրինազանց չգտնուիլն էր:

— Եթէ հոս կան դուրսէն եկած անցանկալիներ, պէտք է ըսէք. դուք պարտաւոր էք ըսելու: Գիտե՞ք, լռելով ձեզ ալ վնաս կու գայ, գիւղացիներուն ալ:

— Ըսելս այն է, որ մեր դպրոցին գլուխը գտնուող երիտասար-

դը, ինչպէ՞ս ըսեմ, ինձ շատ ազատամիտ մէկը կ'երեւի: Մօտեն չեմ ճանչնար զինք, բայց ինձի կու գայ որ...

– Հասկցա՛յ, հասկցա՛յ: Սա Պետիկեանը չէ՞ք ըսեր: Գիտեմ որ կուսակցական է եւ ժողովներու կ'երթայ. առայժմ ցանկէն դուրս է, որովհետեւ ռուսահայատակ է: Բայց եթէ վտանգաւոր մարդ է, սատանան տանի հպատակութիւնը... Պետք եղածը կ'ընեմ... Անհոգ եղիր:

Գալուստեան սարսափած, քունէն արթնցածի պէս նայեցաւ ոստիկանապետին: Ի՞նքն էր, որ այդ խօսքերը ըսել տուած էր թուրք ոստիկանապետի մը, հայրենակցի մը հասցէին: Ի՞նքն էր, որ թշնամիի մը ուշադրութեան կը յանձնէր, զարգացած հայրենակից մը, իր ժողովուրդին նուիրուած մը, միայն անոր համար, որ...

Սկսաւ դողալ: Եթէ կարելի ըլլար մոռցնել տալ ըսածները, եթէ կարելի ըլլար դարմանել, պատրաստ էր նոյնիսկ գումար մը զոհելու...

– Ախ, պէյս,– կակազելով ըսաւ ան,– սխալ արտայայտուեցայ: Ես չըսի, թէ մեր տեսուչը վտանգաւոր է, չեմ ճանչնար անգամ զինք... Լեզուս սխալ դարձաւ:

– Հասկցայ, հասկցայ, Մարտիկ աղա, կոմիտաճիներուն վրէժի գնդակէ՞ն կը վախնաս: Անհոգ եղիր, անունդ բերնէս չեմ հաներ: Արդէն ուշ կամ կանուխ անոր ալ կարգը պիտի գար: Հայտէ՛, Ալլահա ըսմարլատըք...

* * *

Գալուստեան անքուն գիշեր մը անցուց: Զանի աչքերը կը փակէր, Պետիկեանը կը տեսներ, որ կախաղանէն, իր խոշոր բացուած աչքերով իրեն կը նայէր: «Դաւաճա՛ն, դաւաճա՛ն», կ'ըսէին աչքերը:

Ոտքի ելաւ ու սկսաւ սենեակին մէջ վեր-վար քալել: Պետիկեանը այդ վտանգէն փրկելու, աւելի ճիշդ՝ ինքզինք այս բարոյական տանջանքներէն ազատելու համար՝ ի՞նչ ընելիքին մասին մտածեց: Նամակ մը գրէ՞ր անստորագիր ու խորհուրդ տար, որ հեռանայ գիւղէն: Պաշտօնեաներէ՞ն մէկը դրկէր, որ երթար խօսէր: Ո՛չ, այդպէս ընելով ամբողջ աշխարհը պիտի իմանար, որ ինքը մատնիչ մըն է, դաւաճան մը:

Առաւօտուն առատ դրամ տուաւ մօրը եւ խնդրեց, որ եկեղեցի երթայ, այդ դրամը գանձանակը ձգէ ու աղօթէ իր մեղքերուն համար: Յետոյ փողոց ելաւ ու խանութ գնաց ժամանակէն շատ առաջ:

Ամբողջ օրը խանութին մէջ արգելափակուած գազանի մը պէս մռնչեց.– իր պաշտօնեաները զարմացած իրարու կը նայէին, ձեռքերնին ճակատնին տանելով, ձեւով մը, որ ըսել կ'ուզէին՝ «թոցուցե՛ր է մէկը եղածը»...

Պետք էր, որ մէկը դրկէր Պետիկեանին. բայց աւելի լաւ կ'ըլլար որ ինքը անձամբ երթար ու խօսէր: Եթէ հարկ ըլլար, ամէն բան պիտի խոստովանէր: Ինչ փոյթ թէ՛ ինչ մտածեր ան, բաւական էր որ այս ծանր, անտանելի բեռը վերցուէր իր խղճին վրայէն:

Ան ձեռքը տարաւ սրտին. կարծես երկաթ ձեռք մը կը սեղմէր զայն, շնչառութիւնը արգիլելու աստիճան: Ան ուզեց ինքզինք մխիթարել յիշելով ոստիկանապետին խօսքերը. «Անոր կարգը պիտի գար». կը նշանակէ՛ առանց իրեն ալ... Այս միտքն ալ չմխիթարեց զինք: Ուզեց միտքը զբաղեցնել կալուածներուն մասին մտածելով: Երկու խանութ, երեք տուն եւ պահեստի դրամ: Կալուածներուն հետ կապուած հոգեր ալ կային: Վարձուած տուններուն մէջ դեռ նորոգուելիք բաներ կային, ջուրին խողովակը պայթած էր երէկ: Պարսկաստանէն դրկուած բրինձն ալ փճացած տեղ հասած էր, պէտք էր գանգատէր: Պետք չէր որ վճարէր քսան պարկ բորբոսած բրինձը: Պզտիկ գումար մը չէ, խնդրեմ, չէ՛, պիտի չվճարէ:

Այս բոլոր հոգերը հիմա իրեն ծիծաղելի, աննշան կ'երեւէին: Այլեւս ատելութիւն ալ չէր զգար Պետիկեանի հանդէպ: Անոր յանցա՞նքն էր, որ սիրած էր Մելինէն: Ո՛վ պիտի չսիրէր այդ շքեղ գեղեցկութեամբ աղջիկը: Անոր յանցա՞նքն էր, որ Մելինէն ալ զինք սիրած էր: Եւ ինչո՞ւ Մելինէն չսիրէր Պետիկեանը, այնքա՞ն համակրելի, այնքա՞ն զարգացած եւ այնպէս լաւ ճառախօս... Ի՞նչ, Մելինէն պիտի գար ու արջի նմանող Գալուստեանի կի՞նը ըլլար: Արջ մը ինքը... արջ մը պարզապէս...

Իրիկունը խանութը կանուխ փակել տուաւ եւ, փոխանակ դէպի տուն երթալու, բռնեց Պետիկեանի տան ճամբան: Գիտէր, որ դպրոցին կից տան մը մէջ կ'ապրէր ան:

Շտապով կը քալէր, շատ անգամ կանգ առնելով եւ դէպի ետ նայելով: Դառնա՞ր արդեօք: Ամօթ չէ՞ր իր այս աստիճան ստոր- նանալը: «Ամօթը», կ'ըսէր իրեն, «ամօթը դաւաճանութիւնն է եւ ոչ թէ դարմանել ուզելը», եւ կը շարունակէր ճամբան: Երանի՛ ուշացած չըլլար, երանի ժամանակին հասներ... Յաջորդ կիրա- կի երեք ոչխար մատաղ ընել պիտի տար ու եկեղեցիին բակը բաժնել պիտի տար: Այսքանը քիչ էր, ամէն մէկուն տասնոց մըն ալ պէտք է տար: Ազգային հիւանդանոցին մէկ տարուան միսը ինք պիտի հոգար, միա՛յն ինքը...

Արդէն հասած էր Պետիկեանի փողոցը: Քանի մը տղաք իրա- րու քով եկած անձկութեամբ դէպի մէկ կողմ կը նայէին: Ինք ալ նայեցաւ այդ ուղղութեամբ: Ո՛չ, չէր սխալած, ոստիկաններ կանգնած էին տան մը դրան առաջ, յետոյ երկուքը ներս մտան եւ միւսը պահակ դրին...

Ուշացա՛ծ էր...

Տղոց տխուր եւ յուզումէն գունատած դէմքերը իրենց սիրելի տնօրէնին հաւանական ձերբակալութեան համար աւելի որոշ կերպով զգալ տուին Գալուստեանի իր արարքին ամբողջ գար- շանքը: Երեսը անդին դարձուց, կարծես տղաքը պիտի հաս- կնային, թէ ինք էր, որ իրենց ձեռքէն կը խլէր իրենց սիրելի «միւսիւն»:

Չզաց որ ծնկերը կը կքէին: Պատրաստ էր մօտենալու եւ զին- տրներուն ըսելու, թէ ինք սուտ խօսած էր, թէ Պետիկեան վտանգաւոր մէկը չէր, թէ ինքն էր խռովարարը, յեղափոխակա- նը: Սօտեցաւ դրան վճռականութեամբ:

Պետիկեանի պառաւ տանտիրուհին դողացող ձայնով մը կը բացատրէր, թէ «միւսիւն» տունը չէր, թէ պտոյտի ելած էր, թէ դեռ չէր վերադարձած եւ թէ կրնային խուզարկել տունը, եթէ կ'ուզեն:

Ուրեմն, դեռ կրնար ազատիլ: Պէտք էր միայն շուտ շարժիլ:

Պէտք էր մէկը դնել փողոցի անկիւնը Պետիկեանը զգուշաց- նելու համար, ուրիշ մը երթալու էր Մելինէի տունը, որ տեսու- չին հոն գտնուելու պարագային լուր տար, իսկ ինքը պիտի եր- թար կայարան. եթէ ան քաղաք իջած էր, վերադարձին պիտի սպասէր: Ալ ոչ նախանձ, ոչ ալ ամօթ կը զգար: Եթէ մարդ չգտներ, ինք պիտի երթար Մելինէին տունը, յետոյ ալ կայարան:

Ճիշդ դիմացէն կու գար տիրացու Աւագեանը՝ իր խորհրդա- տր պայուսակը ձեռքը բռնած: Մուրթ սկսէր էր իջնել. ան ժա- մացոյցի մը կանոնաւորութեամբ կը կատարէր իր սիրական գնումները:

Գացէք օր. Մելինէին տունը,– ըսաւ Գալուստեան՝ անոր մօ- տենալով եւ յուզումէն բարեւելը մոռնալով.– Եթէ տեսուչը հոն է, ըսէք, որ տուն չվերադառնայ եւ անմիջապէս ապահով տեղ մը պահուի. ոստիկանները իրեն կը սպասեն ձերբակալելու համար: Այստեղ, այս փողոցին անկիւնն ալ այս տղաներէն մե- ծը դրէք, որ սպասէ զինք: Եթէ երբեք ուրիշ ճամբով մը ան տուն վերադառնայ, թող ըսէ որ հեռանայ:

Աւագեան զարմանքէն քիչ էր մնացեր ձեռքի թանկագին պայուսակը վար ձգէր: Տիար Գալուստեանը, գիւղին ջոջերէն մին, որուն Պետիկեանին դէմ ունեցած հակակրօթիւնը գաղտ- նիք չէր ոչ մէկուն համար, փողոցները ինկած՝ զայն ազատելու կ'աշխատէր: Այդ գիշերն իսկ, շիշերուն առջեւ, պիտի աշխա- տեր լուծել այս հանելուկը...

Փոքրիկ կայարանը հասնելէն վերջ, Գալուստեան սկսաւ մանրակրկիտ կերպով նայիլ գնացքէն իջնողներուն: Ընտանի- քի հայրեր քաղաքի իրենց աշխատանքէն տուն կը դառնային ձեռքերնին ուտելիքի կամ հագնելիքի ծրարներով: Գալուստ- եան նկատեց, որ բոլոր դէմքերու վրայ, մտահոգութեան, եր- կիւղի շեշտ մը կար: Զաղաքը, այդ օրը, մեծ թուով ձերբակալու- թիւններ կատարուած էին: Եկողներէն ամէն մէկը կ'աշխատէր ժամ առաջ տուն, իրեններուն քովը երթալու. կարծես սիրելի- ներուն քով հասնելէն վերջ, որեւէ վտանգ չէր սպառնար իրենց այլեւս:

Ահա վերջապէս Պետիկեանը: Պէտք է մօտենալ իրեն, պէտք է խօսիլ:

Ոտքերը քարացա՞ծ են ինչ է, որ չեն ուզեր շարժիլ: Մինչեւ հիմա Պետիկեանին խօսիլը իրեն դիւրին երեւցած էր, եւ ահա վարանումին պատճառաւ պիտի փախցնէր առիթը ու թողուր որ անցնի երիտասարդը: Ինքն է որ դրկեց թուրք ոստիկաննե- րը անոր տունը եւ ինքն էր որ պիտի թողու որ տուն երթայ ու զազաններուն ճա՛նկը իյնայ...

Կը մօտենայ ու «տուն մի՛ երթաք, միւսիւն», կ'ըսէ ցած ձայ-

նով, — «ոստիկաններ կան հոն. նստեցէք, առաջին գնացքը ու քաղաք վերադարձէք... Հոն պահուիլ անելի դիրքին է»...

— Զաղաքը սարսափելի լուրեր իմացայ,— ըսաւ Պետիկեան, առանց Գալուստեանի ընթացքին համար որեւէ զարմանք յայտնելու,— նոր խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ: Չեմ զարմանար որ ինձ ալ...

Զաղաք գացող գնացքին մօտաւորապէս ժամ մը կար: Վտանգաւոր էր հոն սպասելը: Պետիկեան որոշեց ծովափ իջնել եւ հոն ձկնորսի մը տունը պահուըտիլ: Ան շնորհակալութիւն յայտնեց ու սկսաւ իջնել նեղ ու մութ փողոցներէն: Բաւական հեռացեր էր, երբ ետեւէն լսեց Գալուստեանի դողացող ձայնը, որ շշնջալով կ'ըսէր.

— Պարոն Պետիկեան, նե-րե-ցէ՛ք ինձի...

Պետիկեան, առանց հասկնալու եւ մեքենաբար, հեռանալով հանդերձ՝ պատասխանեց.

— Այո՛... այո՛...

Զանի մը երկվայրկեան վերջ, կարծես մտածել է ինդիրը գուշակելէ վերջ, այս անգամ որոշ եւ նշանակալից, կրկնեց.

— Այո՛...

Գալուստեանի կը թուէր, որ կեանքին մէջ այդ բառէն անելի քաղցր բառ մը չէր լսած — «Այո՛»...

«Այո՛, այո՛», — կը կրկնէր ան քրտինքի կաթիլներուն հետ արցունքներն ալ սրբելով: Վերջին «այո՛»ն գիտակցութեամբ ըսուած էր, ա՛յ Յուդա չէր, ա՛յ դաւաճան չէր:

Պետիկեան շատոնց անյայտացած էր մութին մէջ, բայց Գալուստեան կը շարունակէր նայիլ անոր ետեւէն: Երանի՛ ոստիկաններու ձեռք չիյնար: Երանի՛ պահուիլ կարենար:

Տուն վերադառնալու համար Գալուստեան բռնեց այն ճամբան որ կ'անցնէր իր երեք քարուկիր տուներուն առջեւէն: Անոնք միշտ խրոխտ, լուսնի շողերուն տակ իրենց կուրծքը ցցեր էին դէպի ծով: Ամէն յարկի մէջ բարեկեցիկ ընտանիք մը կ'ապրէր: Խօսակցութեան, երգի կամ երեխաներու լացի ձայներ կու գային յարկաբաժիններէն: Բաց պատուհանէ մը կու գար իր դաշնակի դասը սորվող փոքրիկի մը նուագի ձայնը:

Իր տուներէն կու գային բոլոր այս ձայները: Գալուստեան շատ անգամ կ'անցնէր իր տուներուն առջեւէն, գիշերը, եւ սիր-

տը հպարտութեամբ կը լեցուէր անոնց նայելով: Հիմա չէր հասկնար թէ՛ ի՞նչպէս կրցած էր այնքան պարծենալ անոնցմով: Միավանկ բառ մը, այո՛-ն, քիչ առաջ, բաւական եղած էր իրեն վերադարձնելու իր հոգեկան խաղաղութիւնը: Երբ իր հոգին կը գալարուէր, ահա քսանչորս ժամէ ի վեր, ինչի՞ ծառայած էին իր տուները, խանութները, դրամը...

Առաջին անգամ ըլլալով՝ կը զգար թէ դրամէն անելի արժեքաւոր բան մը կար կեանքի մէջ, բան մը, որ աշխարհի բոլոր դրամներով չէր կարելի գնել եւ որուն ինչ ըլլալը դեռ պարզ չէր իրեն համար, բայց կը զգար որ ան գոյութիւն ունէր: Հիմա կը հասկնար, թէ Պետիկեան մը, կամ անոր պէս եղողները, ինչո՞ւ համար, փոխանակ իրենց գիտութիւնը դրամ վաստկելու մասին գործածելու, «ազգի գործերով» կը զբաղին: Հաւանաբար անոնք կը զգային այդ անբացատրելի քաղցրութիւնը, հոգեկան գոհունակութիւնը, որուն առջեւ դրամը անզօր է, անարժէք:

Շուտով քառասուն տարեկան պիտի ըլլար: Իր կեանքը անցուցած էր՝ այս շքեղ տուները քով քովի դնելու համար: Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար... «Հաւանաբար, օր մը ամուսնանամ», կը մտածէր Գալուստեան տուներուն նայելով, «թերեւս զաւակներ ունենամ: Անոնք կամ պիտի ուտեն դիզածներս կամ նորերը պիտի շարեն եղածներուն քով... Բայց ինչո՞ւ համար... Ինչո՞ւ համար... Անելի լա՛ւ չէ, որ անոնց սորվեցնեմ, որ դրամէն անելի բարձր, անելի արժեքաւոր բան մը կայ. թո՛ղ փնտռեն, թո՛ղ գտնեն թէ ի՞նչ է ան»...

Գալուստեան նկատեց, որ տուներէն մէկուն պարտեզին երկաթ դռնակը չէր գոցուէր. կոտրուած բան մը կար: Յիշեց որ այդ մասին զանգատեր էին վարձակալները: Ուսերը թօթուեց ու հեռացաւ:

Մայրը, որ անձկութեամբ կը սպասէր տղուն վերադարձին, դրան բացուելուն ձայնը առնելուն պէս անձկութիւնը մոռցաւ ու միայն տղուն ուշանալուն պատճառաւ իր զգացած դժգոհութիւնը յիշեց: Պատահած չէր, որ տղան ուշանար, մանաւանդ առանց մօրը լուր տալու: Նայեցաւ անոր այլալայած գունատ դէմքին, տակնուվրայ մազերուն ու մտածեց, «խմէ՛ր է»...

Մօրը բարկութիւնը զարմանքի փոխուեցաւ: Տղան ընկ-

ճուաժ չէր երեւար իր ընթացքին համար. իր շարժումներուն, դէմքի արտայայտութեան մէջ նոր ու տարօրինակ բան մը կար:

– Խմե՞ր ես,– ըսաւ չոր ձայնով,– աս տարիքիդ նոր յիմարութիւններ պիտի սկսիս:

– Խմեր եմ, մայրիկ, բայց խմածիս անունը չեմ գիտեր. միայն կը զգամ անոր ջերմութիւնը ամբողջ էութեանս մէջ,– պատասխանեց Քալուստեան կէս կատակ, կէս լուրջ մօրը նայելով:

– Տիրացուի աղջկան սերը ունեցած քիչ մը խելքդ ալ տարաւ, խեղճ տղաս: Դարմանը ցոյց կու տամ, լսող չկայ:

– Ընդհակառակը, մայրիկ, այսօրուան պէս ճիշդ երբեք չեմ մտածած: Ինչո՞ւ այդ գեղեցիկ աղջիկը, ուսեալ, համակրելի եւ երիտասարդ մէկը թողած, ինձ պիտի ընտրէր իբր ամուսին: Մէյ մը նայե՞ր ես թէ՛ ինչի նման եմ ես, նայե՞ր ես... Ականջներովս զոյգ մը կօշիկ կարելի է շինել, իսկ քիթս, տարի՞քս... Իսկ զարգացո՞ւմս: Սխա՛լ, սխա՛լ ճամբայ բռնեցինք, մայրիկ: Դրա՞մ ունիմ, այո, յետո՞յ ինչ... Դրամով կրնամ մարմինսին ծախող գեղեցիկ կիներ գնել, բայց ոչ սեր, այն ալ Մելինէի պէս գեղեցիկ, դեռ քսանը չբոլորած աղջկան սերը: Դեռ ատելիս կայ, բայց ուրիշ անգամ...

Ու Քալուստեան, չնայելով իսկ ընթրիքի սեղանին, մտաւ իր սենեակը: Կ'ուզէր մինակ ըլլալ. սիրտը բոլորովին հանգիստ չէր: Ծիշո՞ւ է, ներման արժանացած էր այդ «այո»-ն միշտ իր հոգիին մէջ կ'երգէր, բայց զգուշացնելով չի վերջանար գործը, պէտք է վստահ ըլլար, որ երիտասարդը ձեռք չէր անցած, պէտք է որ իր միջոցներով օգնէր անոր փախուստին: Պիտի իջնէր ծովեզերք, ձկնորսներու թաղը: Եթէ ձերբակալութիւն պատահած ըլլար, կրնար իմանալ: Պէտք էր դուրս ելլէր, պէտք էր տեղեկանար:

Մարտիկ տունէն դուրս ելաւ՝ առանց մօրը զարմացական կամ յանդիմանական ճիչերուն ուշադրութիւն դարձնելու: Պիտի չկրնար մինչեւ առաւօտ սպասել լուր մը առնելու համար:

Ծովափի փայտէ տնակները լուռ էին, լոյսերը մարած: Փողոցները մարդ չկար: Կարպիսի օղետունը միայն լուսաւորուած էր: Սակայն, ներսը չէր կրնար տեսնել, շոգին թանձրացուցած էր ապակիները, իսկ ներս մտնելը կրնար զանազան ենթադրութիւններու տեղի տալ:

«Անցնիմ տեսուչին տան առջեւէն», մտածեց, «թերեւս բան մը իմանամ տանտիրուհիէն»:

Տեսուչին ապրած տունը լուսաւորուած էր տօնական օրուան մը պէս: Փողոցին դուռը բաց էր եւ պահակը ներսը նստած էր: «Ուտիկանները դեռ կը սպասեն», ըսաւ ուրախութեամբ: «Ուրեմն, ձեռք չէ անցած եւ ա՛լ անցնելիք ալ չունի. ազգի մարդիկը սնդիկի պէս են, չեն բռնուիր»: Ու ան արագ քայլերով սկսաւ դէպի տուն ուղղուիլ:

Իր տգեղ արարքին առթած ամօթի զգացումը դեռ չէր անհետացած, բայց թեթեւութիւն մը կը զգար. թերեւս մասամբ դարմանած էր իր վատութիւնը: Կեցաւ փողոցին մէջտեղը եւ ինքնագոհութեան թէ փառաբանութեան ձեւով մը երկինք նայեցաւ: Ոչ մէկ ամալի կտոր: Երկնակամարին վրայ կարելի էր նշմարել ամենափոքրիկ աստղերն անգամ: Գրեթէ լրացած լուսին մը, չէր յաջողէր անհամար աստղերուն փայլը նսեմացնելու:

Ի՞նչ լաւ էր, որ կրնար երկինք նայիլ: Այդ սեւ ժամէն ի վեր ան գլխիկոր՝ չէր համարձակած աչքերը վեր բարձրացնել: Քալուստեան չէր կրնար աչքերը հեռացնել այդ հոյակապ տեսարանէն: Կարծես ձայնի մը, պատասխանի մը կը սպասէր: Երկինքն ալ տեսաւ իր տառապանքը: Ներե՞ց, ան ալ ներե՞ց...

Բայց ի՞նչ է, աստղերը չարածճի աչքերու պէս, ժպտուն ու հեզնական իրեն կը նային: «Միայն այդքա՞ն... միայն այդքա՞ն», կ'ըսեն իրեն: Ու Քալուստեան, միշտ նայուածքը երկինք, գրեթէ բարձր ձայնով ըսաւ.

– Դազար ոսկի... երկու հազար ոսկի Պետիկեանի կուսակցութեան, որպէսզի ազգի ազատման համար գործածեն...

Յետոյ թեթեւ սրտով վերադարձաւ տուն եւ նստաւ ընթրիքի...

Պետիկեան նեղ եւ ոլորապտոյտ փողոցներով կ'իջնէր ծովափ ամեն ոտնաձայնի կանգ առնելով եւ ձեռքը գրպանի ատրճանակին տանելով: Յանկարծ շուք մը տեսաւ փողոցի մը անկիւնը: Մարդ մը, որուն ով ըլլալը չէր կրնար հասկնալ, մութին պատճառով, կը սպասէր իրեն:

Եթէ ետ վերադառնար, կրնային ետեւէն կրակել: Աւելի անվտանգ էր դէպի շուքը քալել, ձեռքը ատրճանակին:

Յանկարծ մէկը սուլեց հայկական քայլերգի առաջին մասը, մեղմ, հազիւ լսելի ձայնով: Ծանօթ մըն էր...

Շուքը շարժեցաւ ու մէկը սկսաւ դէպի իրեն գալ:

– Ես եմ, – ըսաւ եկողը շուքով, – կը սպասէի քեզ: Շարունակէ ճամբադ ու մեր տունը գնայ: Ծովու կողմէն ու պատուհանէն մտիր: Մայրս գիտէ: Պիտի հետեւիմ քեզի: Եթէ ոստիկաններու հանդիպիս, նորէն քալէ, ես զանոնք կը զբաղեցնեմ, մինչեւ որ անյայտանաս... Զովի փողոցը Տիրանն ալ կը սպասէ: Պիտի սուլեմ, եթէ պէտք ըլլայ կամ եթէ զենքի ձայն լսեմ, պիտի գամ օգնութեան...

Ձկնորս Միսաքն էր, Պետիկեանի կուսակցական ընկերը, կտրիճ երիտասարդ մը, որմէ կ'ակնածէին, եթէ չըսենք կը վախնային, նաեւ գիւղին ջոջերը, որոնց կարգ մը անխոստովանելի արարքները դատուած ու պատժուած էին այս երիտասարդին կողմէ:

Բարձրահասակ ու բարեձեւ մէկն էր Միսաքը, հազիւ երեսուն տարեկան: Եթէ չըլլար քունքի վրայի սպին, որ կը խաթարէր անոր դիմագծերուն ներդաշնակութիւնը, ան գեղեցիկ պիտի ըլլար: Չկար յանդուզն գործ մը, վտանգաւոր յանձնարարութիւն մը, որ ան մերժէր կատարել, եթէ համոզուած ըլլար, որ ազգին օգտին համար էր:

Գիւղը, ուրիշներու կարգին, ինքն ալ իմացեր էր, որ տեսուչը

ձերբակալելու համար ոստիկաններ եկած էին, անոր բացակայութեան: Անմիջապէս իր ընկերներէն պահակներ դրեր էր զանազան տեղեր, իսկ ինք եկեր էր կայարան: Տեսել էր Պետիկեանի եւ Գալուստեանի խօսիլը, կռահէր էր, որ կը զգուշացնէին զինք, քանի որ Պետիկեան, փոխանակ տան ճամբան առնելու, ընտրէր էր բոլորովին հակառակ ուղղութիւն մը: Հասկնալով անոր բռնելիք ուղղութիւնը, յառաջացեր ու պահուրտեր էր փողոցին անկիւնը՝ Պետիկեանին յայտնելու համար, որ մինակ չէ վտանգի վայրկեանին:

– Ես ալ զինուած եմ, – ըսաւ Պետիկեան նոյնպէս շուքով, – ջահիլ հարսի մը պէս պիտի թողնել, որ ուրիշները կռուին ինձ համար, ա՛յ տղայ:

– Զալէ՛, քալէ՛, վիճելու ժամանակ չէ, քու կեանքդ իմիստ աւելի օգտակար է, – քեզ համար չէ, որ կ'ընեմ, գիտե՛ս, ազգը ողջ մնայ:

Պետիկեան, որուն հեռուէն կը հետեւէր Միսաք, անվտանգ հասաւ ծովափ, գտաւ Միսաքէնց տունը, որուն պատուհանը բաց էր, նայեցաւ չորս կողմը ու ցատքեց տունէն ներս:

– Լոյսը մի՛ վառեր, – ըսաւ Միսաքին մօրը, որ անձկութեամբ իրեն կը սպասէր. յետոյ աւելցուց խնդալով, պառաւը հանգստացնելու համար. – Կը տեսնե՞ս, մայրիկ, պատուհանէն մտայ ներս: Ա՛յ այս վայրկեանէն մարդավարի ճամբաները գոցուեցան ինձ համար...

Քիչ վերջը, Միսաք տան դուռը զարկաւ, ինչպէս կ'ընէր ամեն իրիկուն ու ներս մտնելով, սկսաւ բարձրաձայն խօսիլ մօրը հետ, որպէսզի դրացիները լսեն:

Երկու երիտասարդները սկսան խորհրդակցիլ թէ՛ ինչ ձեւով կարելի պիտի ըլլար գիւղէն փախուստը յաջողցնել:

Ամենէն յարմարը ձկնորսի մը պէս հագուելով Միսաքին ընկերանալն էր, բայց միւս ձկնորսներէն ճանչցուելու վտանգը կար: Անշուշտ անոնցմէ ոեւէ մէկը մատնութիւն պիտի չընէր: Սակայն, բանտարկութեան մը պարագային, եթէ չարչարէին, մարդիկ կրնային իրենց կամքէն անկախ խօսիլ: Պէտք է զգոյշ ըլլալ:

Որոշեցին, որ Միսաք, կէս գիշերէն վերջ, բոլոր ձկնորսներուն պէս ծովափ երթայ ու սկսի պատրաստուիլ. յետոյ, իբր թէ կարելոր բան մը մոռցած ըլլալուն համար, տուն վերադառնայ,

Պետիկեանն առնէ ու նաւամատոյցին մօտիկ տեղ մը սպասեց-
նել տայ, մինչեւ որ միւսներու նաւակները բաւական հեռացած
ըլլան: Այն ժամանակ միայն Պետիկեանը առնէ նաւակ ու ելլէ
ծովուն բացը: Մուրփին մէջ, հեռուէն ձկնորսները չէին կրնար
նշմարել, թէ երկու հոգի կայ նաւակին մէջ, կամ գոնէ չէին
ճանչնար, թէ ո՛վ է ան:

Պետիկեան իրմէ աւելի Մելինէի մասին կը մտահոգուէր: Որ-
քա՛ն պիտի տխրէր, որքա՛ն անձկութեան օրեր պիտի անցը-
նէր, իր պատճառով:

Ան մօտեցաւ Միսաքի մօրը:

– Մայրիկ,– ըսաւ,– վաղը առտու շա՛տ կանուխ գնա՛ Մելի-
նէն տես. ըսէ՛, որ ապահով տեղ եմ, որ իրեն լուր պիտի տամ իմ
մասիս: Նամակ չեմ տար, կրնայ զինք վտանգել: Ըսէ՛, որ կը
խնդրեմ իրմէ, վաղը առաւօտ իսկ ոտքով Գում Գաբու երթայ եւ
անկէ գնացք նստի քաղաք երթալու համար: Երթայ Չարոյին
քով: Ան պետք եղածը կ'ընէ: Չմնայ տունը, թերեւս խուզար-
կեն.– իսկ երիտասարդ ու գեղեցիկ աղջիկ մը, թուրքին կողմէ
խուզարկուած տան մը մէջ...

Քիչ քիչ դրացի ձկնորսներուն տնակներուն մէջ շարժումի
խօսակցութեան ձայներ լսուեցան: Փողոցէն ալ ոտնաձայներ
կը լսուէին: Ոմանք, աւելի շուտ ելած, արդէն նաւամատոյց
կ'երթային:

Երբ Միսաք ինքն ալ ծովափ հասաւ, բոլորը քնաթաթախ
ամէն օրուան պէս, իրենց պատրաստութիւններով կը գրա-
դէին: Երբեմն-երբեմն, ասկէ անկէ խոշոր հայիոյանք մը կը
լսուէր դժուար ծալուող ուռկանի մը կամ շարժիլ չուզող նաւա-
կի մը հասցէին:

Ամէն մէկը իր հոգով զբաղած, չնկատեցին անգամ, որ Մի-
սաք, կը դանդաղէր, որ վերջին պահուն բան մը մոռցած ըլլա-
լուն տուն վերադարձաւ: Երբ ան կրկին նաւամատոյց եկաւ,
նաւակներէն ոմանք բաւական հեռացեր էին, ոմանք նոր ճամ-
բայ կ'ելլէին.

– Օ՛, օ՛, շո՛ւտ, շո՛ւտ ըրէ,– պոռացին անոր,– քունդ թօթուէ,
շարժէ:

– Հիմա՛, հիմա՛,– պոռաց ինքն ալ, ու քիչ մըն ալ սպասելէ
վերջ, սուլեց:

Անմիջապէս Պետիկեան դէպի նաւակ յառաջացաւ ու կռա-
ցած մտաւ ներս ու նստաւ յատակին վրայ:

Երբ նաւակը կ'անցնէր Ծովինարի տան առջեւէն, Պետիկ-
եան կարօտով եւ յուզումով նայեցաւ Մելինէի սենեակին բաց
պատուհաններուն: Ահա հոն, ան հիմա հանգիստ կը քնանայ
դէմքը եզերուած իր հարուստ խոպոպներով եւ թերեւս երջա-
նիկ ժպիտ մը իր հրաշալի ակռաները ցոյց կու տայ իր այնքա՛ն
սիրուն կարմիր շրթներու մէջէն: Կը քնանայ, չի գիտեր, որ ահա
իր սիրելին կ'անցնի իր պատուհանին առջեւէն, ծպտուած,
փախստական, սիրտը ճմլուած այլեւս զինք բնաւ չտեսնելու
հաւանականութենէն...

Պետիկեան, աչքերը յառած պատուհանին, կը սպասէր, թե-
րեւս երեւէր, թերեւս կարենար, նոյնիսկ հեռուէն, անգամ մը եւս
տեսնել այդ չքնաղ աղջիկը...

Ձկնորս Միսաք ամէն օրուան պէս ձուկ որսաց: Մաս մը լե-
ցուց սակառի մը մէջ ու տուաւ Պետիկեանին:

– Ձկնորսի պէս հագուած ես, սակառ մըն ալ ձուկ ձեռքդ,
կրնաս ոստիկանատուն իսկ երթալ ու ձուկ ծախել: Միայն սա
գլխարկդ քիչ մը աւելի վար քաշէ եւ սա նուրբ ձեռքերդ նաւա-
կի յատակի սա ցեխերով աղտոտէ, երեսդ ալ, հա՛ այսպէս: Հի-
մա սատանան ալ չի ճանչնար քեզ...

Լուսաբացին նաւակը կանգ առաւ Իւսկիւտար: Սակառ մը
ձուկ ձեռքը ձկնորս մը դուրս ելաւ նաւակէն ու վճռական քայլե-
րով սկաւ քայել, մէկու մը պէս, որ ապսպրուած ձուկ ունի շտա-
պով տեղ հասցնելիք...

2 առոյին տունէն վերադառնալէս ի վեր կը գործադրէի որոշումներս.— հոգ տանիլ նախ տղուս, յետոյ իմ առողջութեանս: Կեանքը, ըստ երեւոյթին, իր բնական ճամբայէն կը քալէր...

Կ'ուզէի գործ մը գտնել մեր ապրուստը ճարելու համար: Փոքրիկը մինակ չթողելու համար՝ կը փնտռէի տունը կատարուելիք աշխատանք մը: Կարել չէի գիտեր, բայց բաւական լաւ կ'ասեղնագործէի:

Ամէն օր, մեր սովորական պտոյտին երթալու ժամանակ կամ վերադարձիս կը մտնէի կանացի սպիտակեղէններ ծախող խանութները եւ կը հարցնէի թէ՛ ասեղնագործող մէկու մը համար գործ չունէի՞ն:

Միշտ մերժում կը ստանայի: Ունէին պէտք եղածը:

Օր մը, վերջապէս, խանութպանուհի մը առաջարկեց ինձ թաշկինակներու վրայ սկզբնատառեր ասեղնագործել: Ուրախութեամբ ընդունեցի, բայց թաշկինակները տուն կարենալ տանելու համար, անոնց փոխարժէքը պէտք է վճարէի, յետոյ ետ ստանալու պայմանով:

Կինը չէր ճանչնար զիս, հետեւաբար չէր կրնար ինձ վստահիլ եւ ապրանք տալ:

Հաւանութեան շարժում մը ըրի եւ պայուսակս բացի: Բոլոր ունեցածս քով քովի բերի եւ յուսահատութեամբ տեսայ, որ չունիմ կնկան ուզածը, կրկին ու կրկին փնտռեցի. չունի՛մ, չունի՛մ... Մեծ գումար մը չէր խանութպանուհիին ուզած դրամը եւ ես կը կարծէի ունենալ այդքանը (ես միշտ չեմ գիտցած թէ որքան դրամ ունիմ), բայց պէտք է խոստովանէի, որ չունէի այդ չնչին գումարն իսկ:

Կինը քովս կանգնած՝ ուշադրութեամբ կը հետեւէր փնտրող-տուրքներու: Նկատելով ոսկեպատ ինքնահոս գրիչս՝ ըսաւ անտարբեր ձայնով մը.

— Հոգ չէ՛, եթէ ձեր վրայ հիմա այդ գումարը չկայ, ձեր ինքնահոս գրիչը պահ տուէք ինձ, մինչեւ որ գումարը տաք:

Երախտագիտութեամբ նայեցայ իրեն եւ գրիչս տուի:

Ինձ տրուած թաշկինակները նուրբ, գրեթէ թափանցիկ կերպասէ շինուած մանրանկար եւ ձեռագործով եզերուած քառակուսի կտորներ էին, որոնց վրայ, անկիւնը սկզբնատառեր պիտի ասեղնագործէի: Երբեք չէի ըրած այդ տեսակ գործ մը: Ամբողջ օրը անցուցի իմ ունեցած գանազան կտորներուս վրայ վարժութիւններ ընելով, մինչեւ որ յաջողեցայ քիչ շատ ներկայանալի գիր մը կարել: Գործը շատ շտապ էր: Ամբողջ գիշերը աշխատեցայ եւ յաջորդ օրը, որոշուած ժամէն առաջ, տարի թաշկինակները յանձնեցի:

Վարձատրուած առաջին աշխատութիւնս էր այդ:

Խանութպանուհին գոհ մնացած ըլլալու երեւոյթ չունէր բնաւ: Յօնքերը կիտած՝ կարած գիրերս կը քննէր ու գլուխը կը շարժէր, կարծես հարցում մը գրուած ըլլար այդ փոքրիկ կտորներուն վրայ, որոնց «ո՛չ» կը պատասխանէր:

«Ա՛յ ինձի գործ պիտի չտայ», կը մտածէի անձկութեամբ, կնկան թթուած դէմքին նայելով:

Միալած էի: Տասներկու թաշկինակի տեղ կրկինը տուաւ յաջորդ իրիկունը յանձնելու պայմանով:

Յետոյ իմացայ, որ որոշուած գինէն շատ պակաս կը վճարէր ինձ եւ հաւանական է, որ այդ դժգոհ արտայայտութիւնը կ'առնէր պարզապէս անելի վճարում ուզելու համարձակութիւն չտալու համար ինձ:

Ես չէի մտածեր իսկ այդ մասին: Առաջին անգամս էր, որ ես իմ աշխատանքովս պիտի ապրէի ու ապրեցնէի իմ տղաս: Այդ նոր եւ հաճելի զգացում մըն էր ինձ համար:

Անգամ մը համարձակեցայ խանութպանուհիին յիշեցնել պահ տուած ինքնահոս գրիչիս մասին՝ խնդրելով, որ ինձ վճարուածէն մաս մը վար դնէ եւ վերադարձնէ գրիչս:

— Հոս չէ՛,- ըսաւ,- կարծեմ տուն տարի, լաւ չեմ յիշեր ո՛ր դրի... Գործ կու տամ, կ'ապրիք, բաւակա՞ն չէ, ա՛յ ի՞նչ կ'ուզէք:

Ան այնպիսի անախորժ տպաւորութիւն թողուց այս խօսքերը ըսած ժամանակ, որ ես այլեւս երբեք չհամարձակեցայ խօսիլ գրիչիս մասին:

Իրաւունք ունէր: Գրեթէ տեւական գործ մը ունէի, իսկ գրի՞չք... Է՛հ, այո՛, գրիչը ի՞նչ պիտի ընէի: Այդ տեսակ առարկաներ, կեանքի այլ հաճելի իրերուն հետ, ա՛լ միմիայն ուրիշներու համար էին:

Ինձ հետեւող գաղտնի ոստիկանները յաճախ կը փոխուէին: Այս վերջինը տարիքոտ մարդ մըն էր, որ, ձանձրացած, մինչեւ անգամ վիրաւորուած երեւոյթ մը ունէր, ինձ նման աննշան մէկու մը վրայ հսկելու պաշտօն ստանալու համար: Թերեւս կը սխալէի, բայց ինձ կը թուէր, որ այդ ծերունին ոչ միայն դաժան երեւոյթ չուներ, այլեւ մինչեւ անգամ կարեկցութեամբ կը նայէր մեզի:

Անոր դէմքը ուրախ արտայայտութիւն կ'առնէր միայն, երբ մենք կ'ուղղուէինք դէպի Նշան Թաշի քարերը, ուրկէ ծովը կ'երեւէր: Ծերունին կը նստէր ծովահայեաց սրճարանը ու աչքերը կիսախուփ՝ երազելով, նիրհելով՝ կը ծխէր իր նարկիլէն: Ան այդ վայրկեաններուն հաւանաբար կը մոռնար ոչ միայն մեր ներկայութիւնը, այլեւ իր գոյութիւնը, աշխարհը: Դէմքը կ'առնէր բութ եւ գոհունակ երեւոյթ մը:

Ամէն օր այդ ուրախ առիթը կու տայի իրեն: Ամառնային գեղեցիկ օրերը իրարու կը յաջորդէին՝ զիս եւ տղաս երկար ժամերով դուրսը, բաց օդին պահելով:

Օր մը, երբ տղուս քով նստած կ'ասեղնագործէի, նայուածքս ինկաւ երեք-չորս տարեկան աղջնակի մը վրայ, որ խաղացող փոքրիկներէն քիչ մը հեռու կեցած՝ անոնց խաղերը կը դիտէր: Երբեմն կը մօտենար եւ կը փորձէր մասնակցիլ խաղերուն, բայց ամէն անգամ տղաքը զինք կը հեռացնէին մեղմիկ, երբ թրքուհիներէն մին, նստած տեղէն ելաւ եւ մօտեցաւ փոքրիկներուն:

Ան գուրգուրանքով շոյեց աղջնակը եւ խաղացող տղաքը յանդիմանեց, որ իրենց խաղին մասնակից չէին ընէր փոքրիկ աղջիկը:

– Մեր ըսածները չի հասկնար,– արդարացան տղաքը միաբերան.– Զե՛նք կրնար լաւ խաղալ, երբ մեզի հետ է...

– Պէտք է հետը խաղաք, որ ձեզի պէս խօսիլ սորվի,– ըսաւ թրքուհին. յետոյ ծռելով դէպի աղջնակը, հարցուց սիրալիր.– Այնպէս չէ՞, Արի՛Ֆէ, դուն կ'ուզես անոնց պէս խօսիլ, որպէսզի անոնց պէս լա՛ւ խաղաս:

Փոքրիկ Արի՛Ֆէն կնկան ըսածն ալ չէր հասկնար, յայտնի էր, բայց ժպտեցաւ ու պաշտպանութիւն փնտռողի մը պէս սեղմուեցաւ կնոջ:

Ուշադրութեամբ նայեցայ փոքրիկին: Զանի օրէ արդէն հարեւանցի տեսեր էի զինք, բայց լսած խօսակցութիւնս հետաքրքրութիւնս շարժեց: Աղջնակը չուներ հայկական դիմագծեր, ոչ ալ այն խոշոր սեւ աչքերը, որ այնքա՛ն յատկանշական են հայերու: Ան խարտեաշ մազեր ունէր եւ խոշոր, խաժ, գրեթէ կապոյտ աչքեր: Ծարժումները շնորհալի էին, եւ ինք կիրթ եւ բարեկեցիկ ընտանիքի մը մէջ մեծցած փոքրիկի մը երեւոյթն ունէր:

Ծիշո՞ք է, որ Հայաստանի մէջ կան գաւառներ, ուր ժողովուրդին մէկ մասը դեղին մազեր ունի եւ կապուտաչուի է, բայց անոնք ալ, որեւէ ձեւով, կը կրեն հայկական դրոշմը, որ հայ մը անմիջապէս կը նկատէ:

Այս փոքրիկը զուրկ էր անոնցմէ:

«Հայ ըլլալու չէ», մտածեցի եւ շարունակեցի աշխատիլ: «Իսկ եթէ փոքրիկը հայուհի՞ մըն է: Ինչպէ՞ս ընել հաստատ ըլլալու համար»:

Կ'ուզէի խօսիլ աղջնակին հետ, բայց բոլորի ներկայութեան անհնար էր:

Որոշեցի հետեւիլ եւ իմանալ իր բնակած տեղը: Թերեւս կարենայի տեղեկութիւններ ունենալ: Կարելով մէկտեղ, աչքիս ծայրով կը դիտէի քիչ առաջ փոքրիկին մօտեցող թրքուհին եւ, երբ տեսայ, որ ան աղջնակին ձեռքէն բռնած, մեկնելու կը պատրաստուէր, ես ալ ձեռագործս ծրարեցի եւ սկսայ հետեւիլ իրենց, փոքրիկիս հետ:

Ծիծաղելի դրութիւն մըն էր: Ես կը հետեւէի թրքուհիին, իսկ ետեւէս կը լսէի ինձ հետեւող ծեր ոստիկանին ծանր քայլերուն ձայնը:

Թրքուհին կանգ առաւ Նշան Թաշի ծովահայեաց փողոցներէն մէկուն վրայ գտնուող բաւական ճոխ բնակարանի մը առջեւ:

Ես ակնարկ մը նետելով տան թիւին վրայ՝ շարունակեցի ճամբաս ու կանգ առի երկու տուն վեր գտնուող հացագործի մը կրպակին առջեւ եւ սկսայ հոն ցուցադրուած հացիկները դիտել մէկու մը ձեւով, որ կը դժուարանայ ընտրութիւն ընելու:

Մակեդոնացիի տարագ հագած կին մը, հաւանաբար տիրուհին, մօտեցաւ ինձ եւ հարցուց, թէ ի՞նչ կ'ուզէի գնել:

Յոյց տալով ընտրած խմորեղեններս՝ հարցուցի կնոջ, թէ արդեօք իրենց թաղին մէջ վարձու սենեակ տուող ընտանիք մը չէի՞ն ճանչնար: Օղաւտ եւ ծովահայեաց սենեակի մը պէտք ունեի:

– Օրինակ, այս տան մէջ,– ցոյց թուի թրքուհիին մտած տուներ,– սենեակ մը վարձու չէ՞ն տար: Ծիշդ իմ ուզած դիրքս ունի:

Արեւելքի մէջ, խանութպաններու հետ, մանաւանդ հացագործներու հետ խօսակցութեան մտնելը շատ սովորական բան մըն է:

– Օ՛ր,– պատասխանեց ինքը՝ հացագործը, որ ճիշդ այդ պահուն դուռը ելած եւ իմ խօսքերս լսած էր,– այդ տան մէջ բնակողները սենեակ վարձու չեն տար: Մեծ է տունը, ճիշդ է եւ իրենք անգաւակ, բայց հարուստ մարդիկ են: Աւելի վարը, սա ճերմակ ու դեղին տունը կը տեսնէ՞ք, հոն հարցուցէք, հաւանաբար ձեր ուզածը գտնէք:

– Անգաւա՞կ ընտանիք ըսիք,– ըսի ես, անքաղաքավար ըլլալու աստիճան հետաքրքիր,– սակայն, քիչ առաջ կին մը մտաւ հոն, փոքրիկ աղջկան մը հետ: Շա՛տ սիրուն փոքրիկ մըն էր եւ ատոր համար միտքս մնաց:

– Ան իրենց գաւակը չէ,– պատասխանեց մարդը, նո՛ր բերին իրենց...

Կինը յանդիմանական նայեցաւ ամուսնուն եւ ինձ դառնալով կտրուկ ձայնով ըսաւ.

– Հոգեգաւակ մըն է, բարեկամի մը տղայ... Մեր գործը չէ՛ այդ...

Կինը կը վախնար եւ իրաւունք ուներ: Քիչ խօսելու ժամանակներ էին, մանաւանդ անծանօթի մը հետ:

Կ'ուզէի վստահութիւն ներշնչել իրենց՝ ինձմէ խօսելով քիչ մը: Կ'ուզէի մանաւանդ հայ ըլլալս յայտնել: Մակեդոնացիները գրեթէ նոյն ճակատագիրն ունին, ինչ որ հայերը, եւ երկու ժո-

ղովուրդները իրարու հանդէպ մեծ համակրանք ունին:

– Հայուհի եմ,– ըսի,– հետեւաբար ինձ համար դժուար չէ գուշակել թէ՛ փոքրիկ աղջիկը ուրկէ կու գայ... մանաւանդ այս օրերու...

Մարդը կնոջմէն գաղտնի աչքը կը քթթեր՝ ինձ հասկնելու համար, որ գուշակութիւնս ճիշդ է: Կինն ալ համակրութեամբ կը ժպտար ինձ:

– Այս պզտիկը ձե՞րն է,– հարցուց մեղմիկ:

– Այո՛, իսկ հայրը գազաններու ձեռքն է,– պատասխանեցի այս անգամ իրենց լեզուով:

Պիտի ուզէի երկար խօսիլ իրենց հետ: Տարագը, լեզուն մանկութիւնս կը յիշեցնէին ինձ: Չէ՞ որ բաւական երկար ապրած էի իրենց միջավայրին մէջ եւ խաղացած իրենց ազգին պատկանող փոքրիկներու հետ: Բայց չէի ուզէր գնումի համար պէտք եղած ժամանակէն անելի մնալ՝ իրենց վրայ կասկած չհրաւիրելու համար:

– Վաղը պիտի եթամ ձեր ըսած տունը սենեակ հարցնելու,– կ'ըսեմ, շնորհակալութիւն կը յայտնեմ եւ կը հեռանամ:

– Զաջութի՛ւն... քաջութի՛ւն,– կը շնջայ ինձ կնոջական ձայն մը ետեւէս:

Տուն վերադարձիս ես ինձ կը հարցնէի.

«Եթէ փոքրիկ աղջիկը հայ է, բան մը, որուն մասին կասկած չունիմ այլեւս, պէ՛տք է գայն ալ փախցնել միւսներուն հետ, թէ թողուլ իր նոր ճամբան: Իրեն ընկերացող թրքուհին բարի կին մը կ'երեւեր եւ շատ բարեկեցիկ երեւոյթ ուներ: Արդէն մակեդոնացիներն ալ ըսին, որ այս ապարանքի պէս տունը իրենցն է: Փոքրիկը խլելով իր նոր միջավայրէն, որուն արդէն վարժուած կ'երեւեր, պիտի դնէինք զինք անորոշ եւ թերեւս վտանգաւոր ճամբու մը մէջ»...

Իրաւունք ունեի՞նք այդպիսի քայլ մը առնելու: Ո՞րն էր լաւը, մարդկայինը թողո՞ւլը թէ տանիլը...

Այդ մասին պէտք է հարցնէի Չառոյին: Բայց պէ՛տք էր միթէ, որ յայտնէի Չառոյին ըրած գիտիս մասին: Ան ոչ մէկ գնով պիտի ուզէր հայ մանուկ մը թողուլ թուրքի տունը, նոյնիսկ եթէ այդ տունը դրախտի նման շքեղ ըլլար ու գրաւիչ:

Ուրեմն, ե՛ս ինքս միայն պէտք է վճռէի այդ հարցը՝ իմ խղճիս ապաւինելով: Պիտի ուզէի՞, օրինակ, որ իմ տղաս իր փոքրիկ

թելերով գրկեր ու համբուրեր մեկը, որ եթէ նոյնիսկ չէ արհիւնտած իր ձեռքերը, գոնէ անտարբերութեամբ դիտած է իր ազգակիցներուն կատարած բարբարոսութիւնները: Պիտի ուզէ՞, որ ան «հայրիկ» ըսէր մէկու մը, որ թերեւս...

Այս միտքն անգամ սարսափեցուց զիս, եւ ես ինձ պատասխանեցի.

– Պէտք է այս աղջնակն ալ առեւանգուի, նոյնիսկ եթէ ծայրը վտանգ կայ կամ մահ...

Ամբողջ գիշերը մտածեցի թէ՛ ի՞նչ ձեռով կրնայի լուր մը տալ Չառոյին: Չէի կրնար նամակ գրել, ոչ ալ երթալ:

Սիրարփին, հակառակ իր խոստումին, չեկաւ զիս տեսնելու Նշան Թաշի քարերուն վրայ: Եթէ այդ օրերը պիտի փախցնէին փոքրիկները, պէտք էր, որ միջոցներ ձեռք առնուէին այս պզտիկն ալ ազատելու համար:

Արդեօք Չառոյին տուած հասցէին կրնա՞յի երթալ: Արդեօք այս հարցը Չառոյին ըսած կարելոր դէպքերէն մին կարելի՞ էր համարել:

Երթա՞մ Միս Ռիչարտսընին ու խնդրեմ, որ Չառոյին յայտնէ փոքրիկ աղջկան մասին: Իսկ եթէ Չառօն բարկանա՞յ, եթէ առած քայլս վնաս մը տայ ոեւէ մէկուն...

«Օ՛, ինչպէ՛ս կը մոռնամ,– յիշեցի յանկարծ,– բաղնիք կ'երթամ իբր թէ լուացուելու եւ Յոռոփին կը յայտնեմ: Ան կը խօսի Չառոյին հետ եւ միասին պէտք եղածը կը կարգադրեն»:

Առաւօտ կանուխ, լոյսը նոր բացուած, ծրարս պատրաստեցի այնպիսի ձեռով մը, որ ամէն հետաքրքրուող հասկնար թէ ո՞ր կ'երթայի: Փոքրիկս կապեցի իր օրօրոցին, որպէսզի արթննալէն վերջ, զիս տեսնելու համար նստիլ փորձելով վար չ'իյնար, եւ փողոց ելայ:

Մարդ չկար անկիւնը: Ծերուկը դեռ չէր եկած: Եթէ եկած ալ ըլլար եւ հետեւէր ինձ, բաղնիք երթալս կասկածելի պիտի չէրէլէր անոր:

Երբ բաղնիք հասայ, Յոռոփ դեռ չէր հանուած: Առաւօտ կանուխ բաղնիք եկողները չքաւոր դասակարգի կիներ են, սպա-

սուիկներ, խանութները աշխատող կիներ, որոնք միւսակնին կը լուացուին եւ «թելաքի» պէտք չունին:

Ես տաճկերէն բարեւեցի բաղնեպանուիին, անցայ Յոռոփին առջեւէն, գլխի շարժում մը ընելով անծանօթի մը պէս եւ ուղղուեցայ հանուելու յատկացուած բաժինները:

Երբ լուացուելու բաժանմունքը կը մտնէի, լսեցի որ Յոռոփ ետեւէս կը պոռար տաճկերէն.

– Յանը՛մ... հանը՛մ, եթէ թելաքի պէտք ունիք, ըսէք որ պատրաստուիմ:

– Այո՛, եկէ՛ք,– ըսի ու մտայ ներս:

Քիչ թիւով լուացողներ կային: Խափշիկուիի մը իր ճչացող ու տապալտկող փոքրիկը կը լուար: Օճառին փրփուրները այս երկու սեւութիւններուն քով ճերմակէն աւելի ճերմակ կ'երեւային:

Ծորակի մը առջեւ, երկու կիներ յունարէն կը խօսէին ոգեւորութեամբ եւ միաժամանակ:

Քիչ յետոյ Յոռոփ ներս մտաւ, փայտէ աթոռակը գետեղեց քովս եւ սկսաւ մազերս լուալ:

– Ի՞նչ լուր, Սոնա:

Պատմեցի փոքրիկ աղջկան մասին: «Հաւանաբար հայ է, ըսի, թէւ արտաքնապէս շատ հայու չի նմանիր»: Նկարագրեցի փոքրիկի արտաքինը:

Յոռոփ յուզումէն մազերս ուժով մը քաշեց:

– Դեղին մազերով, կապոյտ աչքերով, երեք-չորս տարեկան աղջի՞կ է, կ'ըսես:

– Այո՛,– ըսի՝ ձեռքերս մազերուս տանելով ազատելու համար,– ի՞նչ կայ որ...

– Սվազէն նամակ մը եկած է ամերիկացի միսիոնարի մը: Յոռոփ տոքթ. Ատիլեանը սպաննուած է թուրքերուն կողմէ: Կիւնը, որ շուէտուիի մըն է, ծանր վիրաւորուէր է ամուսինը պաշտպանած ժամանակ եւ հիմա կը գտնուի Սվազի ամերիկեան հիւանդանոցին մէջ: Իրենց փոքրիկ աղջիկը առեւանգուած է եւ Պոլիս բերուած Սապահետտին անունով սպայի մը կողմէ: Չառօն, ես, ուրիշներ շատ փնտռեցինք, աղջկան հետքը չգտանք: Բաղնիքը թէ՛ դուրսը շատ թրքուիկներ խօսեցուցի, ապարդիւն: Յուսահատեր էինք: Մազերուս թելերուն չափ Սապահետտին անունով սպայ կայ: Երանի ըսածդ ըլլայ: Կ'ըսեն թէ աղջնակին

մայրը կիսախելագար վիճակ մը ունի, բայց կը յուսան, որ գալակին տեսքը փրկէ զինք: Վիճակը քիչ մը բարուրելուն պէս Պոլիս պիտի բերեն տիկին Ատիլեանը:

– Պետք է նախ լաւ տեղեկանալ,– ըսի եւ պատմեցի մակեդոնացի հացագործներու մասին:

– Հարկա՛ւ, նախ պետք է հասկնալ, թէ փոքրիկը իրապէս հա՞յ է եւ ո՞ր կէտէ բերուած: Մակեդոնացիներուն հետ խօսելու եւ վստահութիւն ներշնչելու ճամբան գտնելը դիւրին է: Գիտես անոնց կուսակցական պետերուն եւ մեր յարաբերութիւնները: Երբ հացագործները մեր կողմն ունենանք, մնացածը դիւրին է:

Հոռոպէն իմացայ, որ տղաքը փախցնելու գործը քանի մը ժամանակուան համար յետաձգուած է: Սամաթիան առայժմ անապահով կը համարուէր Պետիկեանի ձերբակալութեան փորձով: Հաւանաբար խուզարկութիւններ կատարուէին, թէս թուրք ոստիկանները շատ չէին սիրեր ձկնորսներու կամ «թուլումպածի»ներու թաղը իջնել. ասոնք ծանօթ էին իրենց անվախ նկարագրով եւ կեանքերնին սուղ ծախելու իրենց սովորութեամբ: Անգամ մը, որ խուզարկութիւնները կատարուէին, Սամաթիան առաջուրնէ աւելի ապահով պիտի ըլլար փոքրիկները պահելու համար: Բայց հիմա Մելինէն անգամ քաղաքն էր: Չառօն զայն շատ ապահով տեղ մը տեղաւորած էր:

Հոռոպի իր խօսքերը շնչալով կ'ըսէր: Բայց վախնալով թերեւս, որ իր մեղմ ձայնով ըսած խօսքերուն պէտք եղած կարելորութիւնը չէմ տար (ան կարելոր դէպքերը շատ բարձր ձայնով պատմելու սովորութիւն ունէր), իր խօսքերուն իրական արժէքը զգացնելու համար՝ գլուխս իր երկաթէ ափերուն մէջ այնպէս կը տրորէր, մազերս այնպէս ասդին անդին կը քաշքշէր, որ շրթներս կը սեղմէի չպոռալու համար:

– Աս ալ իմ հայրենասիրութեանս տուրքն է,– կ'ըսէի ներքնապէս ինդալով:

– Հայկոն վաղը պիտի փախցնենք,– ըսաւ Հոռոպի օճառոտ ձեռքերով աչքերս շփելով.– յետաձգել անկարելի է, չոր ոսկոր է մնացած խեղճ փոքրիկը: Անոր առեւանգումը աղմուկ չի հաներ, աննշան մարդիկ են: Փախցնելն ալ խաղալիք է: Հայկոն այնքան կապուած է իրմով զբաղուող օրհորդին հետ, որ եթէ «եկուր հետս» ըսէ, պիտի երթայ, առանց ետին դառնալու: Զիչ

հեռուն պիտի սպասէ կառք մը, որ փոքրիկը պիտի փոխադրէ Վոսփորի վրայ փոքրիկ գիւղ մը, իմ հեռաւոր մէկ ազգական ընտանիքին քով: Տղան սնունդի, օդի, մանաւանդ գուրգուրանքի պէտք ունի: Կատարեալ կմախք մըն է: Զիչ ալ սպասենք, ա՛յ փողոց պիտի չկրնայ ելլել:

Բաղնիքը հետզհետէ կը լեցուէր: Հոռոպի երբեմն երբեմն բարձրաձայն թրքերէն խօսքեր կ'ըսէր ինձ.

– Գլուխդ շիտակ բռնէ եւ մի՛ շարժիր, հանըմ, թեւս փրթաւ:

– Օճառո՞ լաւ տեսակ չէ, չի փրփրիր...

Բաղնիք եկող կիները պիտի կարծէին, որ ես Հոռոպին համար շատ անցանկալի յաճախորդ մըն էի...

Վերջապէս, Հոռոպի խոշոր ա՛խ մը քաշեց, տաժանակիր աշխատանքէ ազատողի մը պէս, աթոռակը վերցուց եւ գնաց զինք կանչող ուրիշ կին մը լուալու:

Ծերուկ ոստիկանը զարմացած ձեւ մը առաւ իմ գալստեւելով: Ես, իր հետաքրքրութիւնը յագեցնելու եւ իր պարտականութեանը մէջ թերացած չըլլալը հասկցնելու համար, բաղնիքի ծրարս շատ ցուցական ձեւով մը բռնեցի: Արդէն դէմքս ճակնդեղի նման կարմրած ըլլալու էր Հոռոպի խնամքներէն վերջ:

Երբ տուն հասայ, գլուխս կապարի մը պէս ծանր էր, կարծես Հոռոպին երկաթէ մատները գանկիս մէջ մխուած ըլլային : Հոգիս թեթեւ էր սակայն, փոքրիկի մը ազատման օճանդակած ըլլալու գիտակցութիւնը կը հովացնէր խանձուած հոգիս:

Իրիկուն մը, պտոյտէ վերադարձիս, նայուածքս սովորութեանս համեմատ ինկաւ նամակատուփին վրայ: Այս շարժումը կ'ընէի մեքենայաբար, որովհետեւ երկար ատենէ ի վեր որեւէ նամակ չէի ստացած:

Աչքի՛ս կ'երեւայ թէ իրապէս նամակ մը կայ: Ծերմակ փոքրիկ նամակ մը, որ այնքան ուշացած ըլլալուն համար ամօթխած՝ չի համարձակիր ամբողջութեամբ երեւելու:

Շտապով կը մօտենամ: Իր գիրն է...

Կ'ուզեմ անմիջապես բանալ: Բայց ո՛չ, այստեղ, փողոցին դրան ճիշդ քովը, այս օտար, անհաճոյ տեղը չեմ կրնար բանալ այսպիսի գանձ մը...

Գա՞նձ... Ո՛չ, աւելին, շա՛տ աւելին, անփոխարինելի՛, անհաւասարելի՛... Ի՛ր նամակը:

Պէտք է ելլեմ մեր բոյնը: Դոն միայն կարելի է կարդալ այդ նամակը:

Տղաս գրկած արագ արագ կը բարձրանամ ու շնչասպառ եմ: Փոքրիկս, կարծելով թերեւս որ վեր ելլալու օրէնքը արագ շնչելն է, թելերուս մէջ հանգիստ բազմած, արագ եւ աղմուկով կը շնչէ ու ինձ կը նայի ձեռով մը թէ՛ «Ահա՛, ես ալ քեզի պէս կրնամ ընել, ի՞նչ կարծեցիր»...

Նամակը հայերէն է:

Առաջին անգամս է, երթալէն ի վեր, որ Արան իր մայրենի լեզուով կը գրէ: Լա՛ւ նշան է, լա՛ւ...

Նախքան կարդալը հայերէն գրուած նամակին առթած երանութիւնը կը վայելեմ:

Թոյլ տուած էին, ուրեմն, որ իր լեզուով գրէ: Կը նշանակէր, թէ բարելաւում կար..

– Սքանչելի՛... սքանչելի՛, – կ'ըսեմ նամակին նայելով:

Ո՛վ գիտէ, որքան ուրախ եր, որ իր Սոնան առանց ուրիշին դիմելու, պիտի կարդար իր նամակը...

«Իմ սիրելի, իմ աննման Սոնա, ինձ համար մտահոգուելու պատճառ մը չունիս: Լաւ եմ եւ կ'ուզեմ, որ դուն եւ փոքրիկն ալ լաւ ըլլաք: Շատ պիտի տխրեի, եթէ այդպէս չըլլար: Գիտեմ իմ զգացումներս: Զեզ չխնայելով՝ ինձ ալ խնայած չես ըլլար: Դուն այդ չես ուզեր, ես գիտեմ:

«Դաւանաբար երկար, շա՛տ երկար ժամանակ ինձմէ լուր չունենաս: Մի՛ մտահոգուիր բնաւ: Պիտի տեղափոխուիսք աւելի հեռու տեղ մը: Շատ պիտի խնդրեի քեզմէ, որ փոքրիկին հետ երթայիր կնքահօրդ քով: Այս պէտք է ընես ինձ համար: Այս տողերը կարդացած ժամանակ ըսէ. «Այո՛, Արա»...

Նամակը ձեռքիս մէջ կը դողայ, չեմ կրնար շարունակել: Ինչո՞ւ չեմ ուրախանար, չե՞ որ հայերէն գրուած նամակ է, լաւ նշան է, իսկ ես ինչո՞ւ լալու փափաք ունիմ... Ինչո՞ւ կը դողամ այսպէս:

– Ո՛չ, Արա՛, – կ'ըսեմ բարձրաձայն, – չե՛մ երթար, չե՛մ խոտանար, չե՛մ հնազանդիր քեզ: Ինչո՞ւ կ'ուզես, որ այնքա՛ն հեռու երթամ միս միսակ, փոքրիկիս հետ... այնքա՛ն հեռու:

Իմ կնքահայրս Կովկաս է: Արան կ'ուզէ, որ ես Կովկաս երթամ: Կնքահօրս մասին կը խօսի՝ միայն այդ հասկցնելու համար...

Ա՛խ, Արա՛, ինչո՞ւ կ'ուզես այսքան անկարելի, անհաւատալի բան մը...

Փոքրիկը քնացնելու վերջ, կը ստիպմ Արային պատասխանելու թէ՛ ինչո՞ւ չեմ ուզեր, չեմ կրնար երթալ:

Այդ նամակ չէր, հոգիս ամբողջ ճիչն էր: Սարսափներուս սարսուռը, կուտակուած կարօտիս հեղեղը, միսակութեանս անչափելի, անբացատրելի ապրումը կար հոն:

Թերթերը իրարու կը յաջորդեն, ես դեռ կը շարունակեմ գրել: Ես միշտ պահած եմ զգացումներս, նոյնիսկ շատ խօսած ժամանակս: Պէտք է ըսէի, մանաւանդ շատ խօսած ժամանակս: Խօսիլը, զգացումներս ծածկելու ամենայարմար միջոցը եղած էր ինձ համար: Արան միակն էր, որմէ գաղտնի մտածում չէի ունեցած: Չէի ալ կրնար ունենալ. ան կը հասկնար բոլոր ջրածներս ալ:

Դիմա ա՛յսպէս հոգիս կը փռեմ նամակին էջերուն մէջ: Գիտեմ, որ ան այս բոլորը գիտէ, բայց նորէն կը գրեմ:

Կը յիշեմ խօսակցութիւն մը, որ նոյն ժամանակ այնքան խորը չէի ըմբռնած, որքան հիմա այս տողերը գրած վայրկեանիս:

Ծնողացս ներկայութեան, խօսակցութեան մը ընթացքին, որուն նիւթը շատ լաւ չեմ յիշեր, ես յանկարծ լսեցի Արային հանդարտ ձայնը, որ կ'ըսէր.

– Ես պիտի ուզէի, որ Սոնան ինձմէ առաջ մեռնէր...

Չեմ մոռնար երբեք ծնողացս զարմացած, զայրացած նայուածքը: Այս երիտասարդը, որ իրենց սիրելի աղջկան մէկ մատն իսկ չէր արժեր, կը համարձակէր խօսիլ այսպէս իրենց ներկայութեան իսկ...

– Այո՛, – ըսաւ Արան միշտ հանդարտ, – Սոնան շատ միսակ պիտի ըլլայ ու տառապի, շա՛տ միսակ...

Արան շատ տխուր էր այս խօսքերը ըսած ժամանակ:

Որքա՛ն լաւ կը հասկնայի հիմա այդ բառերուն իմաստը: Որ-

քան լաւ ճանչցած էր զիս այդ եզակի մարդը, որ համարձակած էր ծնողացս ներկայութեան այդ անողոք, բայց ճշմարիտ խօսքերը ըսելու:

Կը յիշեմ այս դէպքը, բայց եւ կը շարունակեմ գրել: Միշտ անելի ըսելիք ունիմ: Ես հնարեցի ածականներ, ես յաջողեցայ գտնել չգործածուած արտայայտութիւններ — ձեւեր, բայց, միշտ անելին կ'ուզէի, ըսածս քիչ էր, պէտք էր անելի՛ն, անելին:

Ամենէն վերջը ես գրեցի ամենապարզը, ամենալաւը.

«Ի՛մ Արա, դուն այս բոլորը գիտես արդէն»...

Հեռուէն լսուեցաւ թմբուկին ձայնը: Լուսաբացը մօտ էր: Շուտով թմբկահարները պիտի գային մեր փողոցը, մեր տան առջեւը. լաւ կ'ըլլար՝ լոյսը մարտի:

Մութին մէջ հանուեցայ ու մտայ անկողին, սիրտս բաւական թեթեւացած: Նամակը առաւօտն իսկ պիտի դրկէի...

Նամակը պիտի դրկէին... Բայց ո՞ր... Չէ՞ որ իր տեղը չէր յայտնած. չէ՞ որ կ'ուզէր, որ Կովկաս երթայի. չէ՞ որ պիտի տեղափոխուէր հեռո՛ւ, անյայտ տեղ մը...

Ուրեմն, այլեւս ոչ մէկ բառ, ոչ մէկ ճիշ պիտի չհասներ ինձմէ անոր: Ոչ մէկ բա՛ռ, ոչինչ, ոչի՛նչ...

Թմբուկի ձայնը արդէն մեր փողոցն էր, ահա մեր տան առջեւ: Վայրենի, ուժգին թմբկահարութիւն մը: Կարծես իմ հարցումիս էր որ պատասխան կու տային անոնք, որ խլեցին ինձմէ իմ սիրելիս.

— Պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ...

«Ա՛լ միայն այս ձայնը, միայն այս վայրենի ձայնը քեզ պատասխան»...

Ախ, եթէ կարենայի՛ լալ... կարենայի՛ լալ...

Օգոստոսի ամենատաք օրերէն մէկը, տղաս եւ ես ժամանակէն առաջ գացինք մեր սովորական տեղը: Վոսփոր շատ ժլատութեամբ իր զով քամիներէն կը դրկէր դէպի մեր կողմը, բայց եւ այնպէս շատ անելի հաճելի էր շնչել քան տուներ:

Տղաս շուքին՝ կը քնանար, իսկ ես ձեռագործիս վրայ ծռած՝ եռանդով կ'աշխատէի:

Հիմա միայն սկզբնատառեր չէի ասեղնագործեր, այլ ամբողջ անուններ: Պէտք էր այնքան նուրբ կարել, որ ստորագրութեան մը տպաւորութիւնը թողուէր գործուածքը: Այդ բարակ կտորին վրայ յաջողցնելը ամբողջ արուեստ մըն էր:

Խանութպանուհին շատ անելի գործ կու տար քան ինչ որ կրնայի ընել: Ան ամէն անգամ ինձ կը հարցնէր թէ՛ ծանօթերուս մէջ ուրիշ կիներ չկայի՞ն, որ իրեն համար աշխատիլ ուզէին նոյն պայմաններով:

Ես կնոջ բարի սրտին կը վերագրէի այսպէս առատ գործ տալը եւ տեսակ մը երախտագիտութեամբ կը նայէի իրեն, առանց անդրադառնալու, որ գիշեր ցերեկ աշխատանքիս փոխարէն միայն մեր համեստ ուտելիքի դրամը կը վաստկէի, առանց ոեւէ այլ գնումի:

Անուան մը վերջին տառը անարտելու վրայ էի, պէտք էր շատ նուրբ եւ աստիճանաբար բարակցնել: Կ'աշխատէի՝ գրեթէ շունչս բռնած: Այնպէս որ, գոհունակութեան հառաչ մը արձակեցի վերջին ասեղին հետ միասին: Յանկարծ զգացի, որ մէկը նստաւ քովս:

Թրքուհի մըն էր:

Սիրարփի՞ն էր արդեօք: Դէմքը քողարկուած էր: Աչքերէն պիտի կրնայի ճանչնալ: Բայց թրքուհին իմ կողմս չէր ալ նայեր: Ան իր ձեռքին խոշոր ծրարը գետինը դրաւ, հառաչեց ու գրպա-

և են ծխախոտի տուփը հանելով՝ սկսաւ գլանիկ մը փաթթել: Յետոյ վառեց եւ սկսաւ ծխելով դէպի Վոսփոր նայիլ ճիշդ թրքուհիներու ձեռով:

«Իսկական թրքուհի մը ըլլալու է», - ըսի ես ինձ եւ ա՛լ չգրադուեցայ իրմով:

- Վաղը ժամը 4-ին Միս Ռիչարտսընի տունը, - 22նշաց թրքուհին, առանց իմ կողմս դառնալու:

Սիրարփին էր թերեւս, բայց վստահ չըլլալով՝ չպատասխանեցի: Վերջապէս, ան գուշակելով կասկածս, դէպի ինձ դարձաւ եւ արագ մը նայեցաւ ինձ ու կրկին երեսը անդին դարձուց: Սիրարփին էր: Տեսայ իր սիրուն, իր խոհեմ աչքերը:

- Շատ լա՛ւ, վաղը 4-ին, - պատասխանեցի ես ալ կիսաձայն:

Սիրարփին ա՛լ չխօսեցաւ, շարունակեց ծխել ու շուրջը դիտել: Երբ կը պատրաստուէի իրեն ըսել, թէ Արայէն նամակ ստացայ, հայերէն նամակ, ան գետինը դրած խոշոր ծրարը վերցուց, հառաչեց, տքաց ու հեռացաւ թերեւ մը կաղալով:

Տուն վերադարձայ յուզուած: Զիչ մը վշտացած էի Սիրարփին իր խօսքերուն ժլատութեան համար: Ինչո՞ւ պիտի երթայի Միս Ռիչարտսընին: Ի՞նչ էր պատահած:

Չա՛ր, չա՛ր Սիրարփի, կը մտածէի, չթողուց որ գոնէ Արայի մասին խօսէի, հարցնէի թէ՛ ինձ բախտակից կիներ ալ ստացե՞ր էին այդ տեսակ նամակներ: Չա՛ր, չա՛ր...

«Չէ՛, ե՛ս եմ երես առածը: Սիրարփին չէր կրնար երկար խօսիլ՝ իմ հետաքրքրութիւնս յագեցնելու համար: Կրնային կասկածիլ, կրնային հետեւիլ իրեն, իմանալ իր եւ ուրիշներուն տեղը: Չէ՞ որ հետապնդումներուն նպատակը այդ էր միայն: Միշտ կը մոռնամ պայմանները, միշտ ինձ համար բացառութիւն սպասող մէկը մնացի. մարդ ըլլալիք չունիմ», կը յանդիմանէի ինքզինքս...

Միս Ռիչարտսընի մասին շատ լսած էի թէ՛ Արայէն եւ թէ՛ իր ընկերներէն: Բոլորն ալ մեծ գուրգուրանքով կը խօսէին իր մասին:

Միս Ռիչարտսընի բժշկուհի Վան կը դրկուի իր ազգակից երկու

հիւանդապահուհիներուն հետ, հոն փոքրիկ հիւանդանոց մը կազմակերպելու համար: Տեղացի օրհորդներէ հիւանդապահուհիներ պատրաստելէ վերջ՝ ան հիւանդանոցը պիտի յանձնէր զինք փոխարինելու համար դրկուած բժիշկին ու պիտի վերադառնար իր երկիրը:

Երիտասարդ օրհորդը, մեծ, բայց նոր երկրի մը գաւակը, այնքան կը հաւնի Վանը եւ իր շրջանները, ուր հին վանքերը, եկեղեցիները, անբաւ պերդերն ու պալատները ամէն քայլափոխին հեռաւոր անցեալը կը վերակենդանացնէին իր առջեւ, որ ան կը խնդրէ զինք դրկող ընկերակցութենէն տարի մը եւս երկարածգել իր պայմանագրութիւնը:

Միս Ռիչարտսընի աշխատանքի ժամերէն դուրս կը շրջագայի ամբողջ Վասպուրականը, կ'այցելէ Նարեկայ, Վարագայ, Աղթամարի եւ այլ վանքերը, ներկայ կ'ըլլայ ժողովրդական ուխտագնացութիւններու եւ այդ առթիւ տեղի ունեցած տօնակատարութիւններուն: Ան կը նաւարկէ Վանայ անսման լճին վրայ կամ ձի նստած կը բարձրանայ շրջակայ լեռներ:

Երբ ամէն ինչ տեսած, վայելած, պայմանագրութեան վերջաւորութեան կը պատրաստուի մեկնելու, դէպք մը, ըստ երեւոյթին աննշան՝ պատճառ կը դառնայ, որ Միս Ռիչարտսընի պայմանագրութեան նոր երկարածգում մը ուզէ: Ան կը ծանօթանայ Վանայ մէջ ազատագրման գործին համար գաղտնի աշխատողներէն մէկուն՝ Աւոյին հետ:

Աւոյն Անգլիոյ մէջ բարձրագոյն ուսում ստացած, իշխանավայել արտաքինով երիտասարդ մըն էր, որ իր վարած վտանգաւոր բայց եւ հեքիաթային կեանքով չէր կրնար տպաւորութիւն չթողուլ երիտասարդ հոգիի մը վրայ: Միս Ռիչարտսընի եւ Աւոյի հանդիպումը Վանայ մէջ կը կատարուի շատ տարօրինակ պայմաններու մէջ:

Չմեռ երեկոյ մը, Վանայ ձմեռնային այն երեկոներէն, երբ ձիւնը մարդաչափ բարձրութեամբ դիզուած, դեռ կը շարունակէ իջնել, Աւոյն իր զինակից երկու ընկերներով լեռնէն քաղաք կ'իջնէ՝ հոն գտնուող ընկերներուն հետ խորհրդակցելու համար կարելոր հարցի մը շուրջ:

Երեքն ալ զինուած եւ ամէն վայրկեան ինքնապաշտպանութեան պատրաստ վիճակի մէջ, կը հետեւէին տեղացի առաջ-

նորդին, որ որեւէ վտանգի պարագային պիտի սուլէր զիրենց զգուշացնելու համար: Իրենց կը մնար թաղուիլ ձիւնին մէջ, կամ, եթէ արդէն փողոցի մը մէջ կը գտնուէին, ցատքել ցանկապատէ մը: Անգամ մը քաղաք մտնելէ վերջ, տեղափոխուիլը կը դիւրանար: Հոն ամէն տուն իր պարտէզը, եւ ամէն պարտէզ քովինին հետ հաղորդակցութեան փոքրիկ բացուածք մը կամ դռնակ մը ունէր: Այնպէս որ քաղաքին մէկ ծայրէն միւսը երթալ կարելի էր, առանց փողոցէ մը անցնելու:

Այդ գիշեր Աւօն եւ իր ընկերները, հազիւ քաղաք հասած, կը լսեն իրենց առաջնորդին զգուշացնող սուլիչը: Իբր շէնք, պահուելու համար, միայն նոր կառուցուած Ամերիկեան հիւանդանոցը կը գտնուէր իրենց մօտիկ: Այդ շէնքին մէջ ունէին իրենց գործին փարած հաւատարիմ մարդիկ: Եւ ահա, երեք երիտասարդները, առանց տատանելու, մէկ ոստումով կը ցատքեն ցանկապատը եւ կը յառաջանան դէպի շէնքը, հոն աշխատող իրենց ընկերներէն ապաստարան ուզելու համար:

Միս Յելլէն, որ այդ միջոցին ապակեպատ պատշգամբէն դուրս կը նայէր, կը տեսնէ զիրենց եւ, կարծելով որ աւազակներ են, կը սկսի պոռալ իր պաշտօնեաններուն.

– Աւազակներ... աւազակներ մտան, շո՛ւտ զէնքերը առէք.– յետոյ դէպի երեք երիտասարդները դառնալով՝ կը պոռայ.– մի՛ յառաջանաք, պիտի կրակեմ...

Այն ժամանակ Աւոն, վարէն, կը պատասխանէ մաքուր անգլերէնով մը.

– Մի՛ վախնաք, օրիորդ, աւազակներ չենք, կը բացատրենք թէ ո՛վ ենք...

Քիչ վերջը ամբողջ պաշտօնեութիւնը կը հաւաքուի եւ թիւրիմացութիւնը կը պարզուի:

Միս Յելլէն եւ իր ամերիկացի պաշտօնեանները, որոնք շատ լսած էին քաղաքին մէջ եւ շրջակաները գաղտնի գործող մարդկանց մասին եւ զանոնք քիչ մը վայրենի կ'երեւակայէին, չէ՛ որ լեռներն ու ձորերը ամէն քաղաքակրթութենէ կտրուած կ'ապրէին, զարմացած էին այս բարեճեւ եւ կիրթ երիտասարդները տեսնելով:

Երբ անթոյլատու ճամբաներով ներս մտնողները վար էին դրեր իրենց հրացանները, փամփշտակալները եւ իրենց ահա-

գին փափախները՝ պահելով միայն ատրճանակ մը իրենց գրպաններուն մէջ եւ նստեր էին թէյի, անոնք նման էին թէյասեղանի հրաւիրուած երեք վայելուչ երիտասարդներու:

Միս Յելլէն զարմանքով տեսեր էր, թէ Աւօն որքա՞ն հմտութեամբ կը խօսէր գրական կամ երաժշտական նիւթերու մասին եւ որքա՞ն մեծ էր անոր հետաքրքրութիւնը, դուրսը, քաղաքակիրթ երկիրներուն մէջ անցած դարձածի համար: Ան նկատէր էր, թէ ինչպէս երիտասարդին աչքերը կը տխրէին գրադարաններու, թատրոններու, երաժշտութեան մասին խօսած ժամանակ: Յայտնի էր, որ այդ կարգի վայելքներէն զրկուիլը ծանր էր իրեն համար:

– Ինչո՞ւ այս բոլորը թողած՝ այս կեանքը կը վարէք,– հարցուցեր էր Միս Յելլէն Աւոյին:

– Կ'աշխատիսք հոս, մեր երկրին մէջ ստեղծել այդ կեանքը, օրիորդ: Մեր ժողովուրդը ընդունակ է: Երբ ան ազատի այս խեղդիչ լուծէն, պիտի ունենայ այն բոլորը, որուն կարօտը կը քաշենք...

Միս Յելլէն զարմացեր էր: Որքա՞ն մեծ պէտք է ըլլար հայրենիքի սերը այս երիտասարդին մէջ, որ ան, ամէն բան թողած, ապրէր այս զրկանքներով եւ վտանգներով լի կեանքը:

Թէ՛ երիտասարդ օրիորդը եւ թէ՛ զինքը փոխարիներու համար եկած բժիշկը խնդրէր էին Աւոյէն, որ իրենց մօտ գայ ամէն անգամ, որ գրադարանէն օգտուելու կամ իրենց հետ գաւաթ մը թէյ խմելու հնարաւորութիւն ունենայ. կրնար գալ նոյնիսկ ցանկապատէն ցատքելով...

Այսպէս, Միս Յելլէն, որ իբր ժամանց ունէր միայն իր աշխատանքը եւ պտոյտները, շուտով նկատէր էր, որ մեծ անհամբերութեամբ կը սպասէ «աւազակ»-ին քաղաք իջնելուն, որ, այս վերջինս ալ, ամէն առիթէն կ'օգտուի, նոյնիսկ առիթներ կը ստեղծէ գաւաթ մը թէյ խմելու եւ քիչ մը «քաղաքակրթութիւն» շնչելու համար:

Շատ չանցած, երկու երիտասարդները կը դառնան նշանածներ: Եւ ահա թէ ինչո՞ւ Միս Յելլէն տարի մը եւս դիմում ըրեր էր իր Ընկերակցութեան:

Միս Յելլէն, որ շարունակ կը վախնար Աւոյի կեանքին համար, շատ ուրախացեր էր՝ իմանալով, որ երիտասարդը ար-

տասահման կը դրկուի՝ ժողովի մը ներկայ գտնուելու եւ բերա-
նացի գեկուցելու Երկրի դրութեան մասին:

Երկուքը միաժամանակ պիտի հեռանային: Միս Դելլէն լոյս
ցերեկով եւ ազատ, իսկ Աւոն՝ գիշերները եւ գաղտնի ճանա-
պարհներով: Իրարու պիտի հանդիպէին անմիջապէս սահմա-
նը: Տարի մը ամբողջ հազար դողով, վախով իրարու հանդիպե-
լէ վերջ, վերջապէս, իրենց սերը պիտի երեւեր լոյս արեւին
տակ, ազա՛տ, համարձա՛կ, անկաշկանդ...

Իրենց մեկնումէն երկու օր առաջ, Աւոն, որ ընկերոջ մը հետ
քաղաք կ'իջներ՝ վերջին կարգադրութիւնները ընելու համար,
ընդհարում մը ունեցեր էր մեծ թիւով թուրքերու հետ: Դակա-
ռակ անոնց թիւին, թէեւ յաջողէր էր ցրուել զանոնք, սակայն,
ինքն ալ ծանր վիրաւորուած՝ փոխադրուէր էր Ամերիկեան
հիւանդանոցը, ուր հակառակ բոլոր խնամքներուն, մեռեր էր՝
անդարմանելի վիշտ մը պատճառելով երիտասարդ ամերի-
կուիին:

Այն օրէն սկսեալ, Միս Դելլէն ապրած եւ աշխատած էր իր սի-
րած երիտասարդին ժողովուրդին համար:

Այս բոլորը կը վերյիշէի Միս Ռիչարտսընի տունը գացած ժա-
մանակս: Ան գաւառէն նոր եկած էր Պոլիս, Ամերիկա անցնելու
եւ հանգստանալու համար. բայց հայկական ողբերգութիւննե-
րը սկսած ըլլալուն, որոշած էր մնալ Պոլիս՝ ձեռքէն եկածին
չափ օգնելու համար իրեն պէտք ունեցողներուն: Ան փորձած
էր կրկին գաւառ վերադառնալ, ուր կը կատարուէր բուն ողբեր-
գութիւնը: Սակայն, պատերազմի այդ շրջանին անհատներու
համար հաղորդակցութեան միջոցներ գրեթէ գոյութիւն չու-
նէին...

Շքեղ տուն մըն էր Միս Դելլէնի բնակած տունը: Յարկաբա-
ժիւնները տանող լայն սանդուխներուն վրայ գեղեցիկ գորգեր
փռուած էին: Դէմ դիմաց գտնուող բնակարանները զատող
լայն պատերը ամբողջովին ծածկուած էին շքեղ հայելիներով:

Կանգնած եմ առաջին յարկի հսկայ հայելիին առջեւ ու կը
զարմանամ:

«Այս ե՞ս եմ... Ե՞ս եմ այս կինը, որ գրկած է այս սիրուն երե-
խան... Ի՞նչ եմ այս խորը մտած կարմրած աչքերը, փոսացած
այտերը»:

Քանի՛ ժամանակ է հայելիի չեմ նայած, եւ ահա ինքզինքս
այսպէս ամբողջ տեսնելով չեմ ճանչնար... Այլանդակուած եմ,
անճանաչելի եմ... Կը նմանիմ մօրս, երբ ան ծանր հիւանդ
պառկած էր հիւանդանոցը...

Դէմքիս վրայ սառած սարսափ մը կայ, անսահման, ան-
պատմելի վիատութիւն: Դագուստներս անխնամ, մազերս ան-
ճաշակ յարդարուած: Ո՞ր եմ խոպոպներս, — հա՛, մազերս ու-
ժով քաշած եմ ու ծոծրակիս վրայ հապճեպով բոլորած: Բերան
չունիմ կարծես, շրթներս դէմքիս դալկութիւնն ունին... Կը նմա-
նիմ մուրացկանի... մուրացկան մօր մը, որ անօթութեան զոհ
տուեր է իր գաւակները եւ այս վերջինը գրկած՝ կ'ուզէ ամէն
գնով փախցնել իր ճակատագրէն...

Ո՛չ, ես նման եմ միայն հայուիի. որոշ շրջանի մը համար
այդ բառը բաւական է՝ բնորոշելու համար կնոջ մը, մօր մը տա-
ռապանքը...

Ես հայուիի եմ...

«Չէ՛, նոր յոյգերու չես կրնար դիմանալ, — կ'ըսեմ հայելիիս
մէջէն վիատութեամբ ինձ նայող պատկերիս. — չե՛ս կրնար, ետ
դարձիր: Չե՛ս տեսներ, ալ չես կրնար... Ի՞նչ կը սպասէ քեզ այս
շքեղ պատերուն ետին»...

Վար իջնելու, փախչելու ձեւ մը կ'ընեմ, բայց վայրկեան մը
կը տեւէ տատանումս: Կը բարձրանամ յարկ մը եւս եւ կը կե-
նամ դրան առջեւ:

Ինչպէս միշտ, ինձ սպասածը կ'երեւակայեմ մերթ շատ լաւ,
մերթ շատ գէշ:

«Արան եկած է ու այս դրան ետին զիս կը սպասէ», — կ'ըսեմ
ինձ եւ ստիպուած եմ, բեմին վրայ խաղացող դերասաններու
նման, ձեռքս սրտիս տանիլ, այնքան որ խեղճ սիրտս չի դիմա-
նար այդ հաւանականութեան:

«Արան... վտանգուած է, — եւ ստիպուած եմ ձեռքս կրկին
սրտիս տանիլ...»

Վերջապէս, կը կոխեմ ելեկտրական գանգի կոճակը:

Սպասուիին կ'առաջնորդէ զիս Միս Դելլէնի աշխատասեն-

եակը, ուր ան գրասեղանին առջեւ նստած՝ կը գրէ: Իմ մտնելու լսելուն պէս ոտքի կ'ելլէ, կը մօտենայ ինձ ու կը նայի բարի, բայց թափանցող աչքերով:

Պահ մը անխօս եւ քննական կը նայինք իրարու եւ կը զգանք, որ կրնանք իրարու վստահիլ, բարեկամներ կրնանք ըլլալ:

Միս Յելլեն բարձրահասակ, կապոյտ աչքերով, նուրբ մորթով եւ շատ հաճելի արտաքինով, մօտաւորապէս երեսուն հինգ տարեկան կին մըն էր: Գրեթէ տասը տարի անցած է Աւոն կորսնցնելէն ի վեր: Կը խօսի հայերէն, օտար շեշտով, բայց անսխալ:

– Նստեցէ՛ք,– կ'ըսէ ինձ հայերէն,– եւ ձեր փոքրիկը ինձ տուէք:

– Գիտէի՞ք, որ պիտի գայի,– կը հարցնեմ անհամբեր, գալուս պատճառը իմանալու յոյսով...

– Անշո՛ւշտ, անշուշտ: Ո՛չ տխուր, ո՛չ ալ ուրախ: Աշտոը կ'ուզէ քեզ տեսնել կարելոր պատճառով մը: Կարծեմ դուք ալ Սիրարփիին ըսած էիք, որ կ'ուզէք իրեն հետ խօսիլ: Փոքրիկը հոս պիտի թողուք, եւ դուք ետեւի դռնով պիտի երթաք, ահա այս հասցէին: Գիտէ՞ք ուր է: Պարոն Յեքիմեան պիտի հարցնէք:

Կը նայիմ հասցէին: Պիտի գտնեմ:

Ոտքի կ'ելլեմ անհամբեր:

– Զիչ մը հանգստացէք, յոգնած կ'երեւիք:

Սպասուհին կը կանչէ ու կ'ըսէ.

– Չովացուցիչ բերք խմորեղէններով եւ օրհորդին ըսէք, որ գայ:

Մելինէն է, որ ներս կը մտնէ: Միշտ գեղեցիկ է ան, բայց աչքերն ա՛լ ուրախ կայծեր չեն արձակեր: Դեմքը գունատ է: Յայտնի է, որ խորշակի թեթեւ շունչ մը անցեր է երիտասարդութեան վրայէն: Ա՛լ երջանկութեան արձանը չէ ան:

– Եղուարդէն լուր ունի՞ս,– կը հարցնեմ:

– Երեք օր առաջ տեսայ զինք: Շուտով այս անգուգական կնոջ շնորհիւ պիտի կարենայ հեռանալ ասկէ:

Մելինէ երախտագիտութեամբ կը նայի Միս Յելլենին ու կը պատմէ թէ՛ ինչպէս Պետիկեան բարձրաստիճան Ամերիկացիի մը հետ պիտի մեկնի Պոլիսէն, իբր անոր անձնական քարտուղարը:

– Տեսնես, չե՛ս ճանչնար,– կ'ըսէ Մելինէ ոգելորութեամբ.– Բոլորովին շէկ է, մազերը, յօնքերը, մինչեւ անգամ թարթիչնե-

րը: Ամերիկեան խոշոր ակնոցներ ալ դրած է: Ես անգամ չճանչցայ զինք:

– Դժուար պիտի ըլլայ բաժանումը,– կ'ըսեմ Մելինէին:

– Օ՛, թո՛ղ եղուարդը ազատուի, թո՛ղ ան անվտանգ ըլլայ, թո՛ղ ես կեանքիս մէջ երբեք զինք չտեսնեմ...

Մելինէն յափշտակուած կը խօսի ու թեթեւ մը կը կարմրի այս խօսքերը ըսած ժամանակ: Սիրով կը նայիմ իր փոփոխուող դեմքին: Կը հասկնամ զինք: Ես ալ պատրաստ եմ ոչ միայն չտեսնելու Արան, այլեւ եւ կեանքես մաս մը տալու, միայն թէ՛ ան ազատ ըլլայ:

Տղադ ե՛ս պիտի խնամեմ,– կ'ըսէ Մելինէն ուրախ.– Կը տեսնես ինչպէս լաւ պիտի նայիմ պզտիկ Արային:

– Մելինէն ալ շուտով ինձ հետ պիտի հեռանայ,– կ'ըսէ Միս Յելլեն, այնպէս որ բաժանումը երկար պիտի չտեսնէ:

– Զէ՛, Միս Յելլեն, հիւանդ մայրս չեմ թողուր... Պետք է անոր քովը մնամ:

Բայց Մելինէին աչքերը կը յառին կետի մը: Հարցական նշան կայ հոն: Հիւանդ մա՛յրը թէ առողջ երիտասարդը: Ո՞րը երկու սիրելիներէն...

Զիչ վերջը փողոցն եմ: Մեծ փողոցին վրայ բացուող նեղ փողոցներէն մին կ'երթամ, Աշտոը տեսնելու:

– Պարոն Յեքիմեանը հո՞ս է,– կը հարցնեմ դուռը բացող կնոջ:

– Հո՛ս է, մտէ՛ք, խնդրեմ: Ըսին, որ երիտասարդ կին մը պիտի գայ: Գիտէ՞ք, մեր տունը շատ ապահով է: Հոս ոչ ոքի վտանգ չի սպառնար: Խօսքի տէր եւ պատուաւոր մարդիկ ենք ես ալ, ամուսինս ալ... Ըսէ՛ք պարոնին, որ հանգիստ ըլլայ, շատ ապահով է հոս:

Շատ անախորժ տպաւորութիւն կը կրեմ այս անդադար խօսող եւ ինզինքը գովող կնոջմէն, որ թուրքերէն կը խօսի, բայց օտար շեշտ մը ունի: Լեվանթէն մը հաւանաբար: Կը զարմանամ, թէ ինչպէ՛ս այսպիսի անվստահելի մեկու մը տունը բերած են Աշտոը, որուն գլխուն հազար ոսկիի գին դրած է թուրք կառավարութիւնը:

– Այս սենեակին դուռը զարկէք,– կ'ըսէ տանտիրուհին՝ քիչ մը նեղացած, որ ինքն իրեն տուած գովասանքները չեմ հաստատեր:

Որքա՞ն փոխուեր է Աշոտն ալ: Իր վարած անապահո՞վ կեանքը, թէ ընկերներուն ու հայրենակիցներուն տառապանքը, տասը տարի աւելի դրեր են ճակտին, մազերուն: Ան մինչեւ անգամ կքած է անտեսանելի բռնան մը տակ:

Կը նայինք իրարու լուռ: Ան ալ իմ մասիս նոյնը կը մտածէ:

– Սոնա,– կ'ըսէ Աշոտ,– ուզած էիր զիս տեսնել, բայց այն ժամանակ կարելոր չէր: Հիմա ուզեցի քեզ տեսնել խորհուրդ տալու համար, որ փոքրիկիդ հետ հեռանաս ասկէ...

Անհամբերութեան շարժում մը կ'ընեմ:

– Սպասէ՛, Սոնա, վերջացնե՛մ, յետոյ բարկացիր: Այստեղ մնալով Արային մտահոգութիւն կու տաս միայն: Հեռացած ըլլալդ իմանալով՝ պիտի հանգստանայ: Յետոյ հոն, արտասահման մեզի շատ օգտակար կրնաս ըլլալ: Զեզի կարգ մը կարելոր տեղեկութիւններ պիտի տամ, որ հոն հաղորդես:

– Անկարելի՛ է,– կ'ըսեմ կտրուկ,– անկարելի՛ է: Արան ալ գրեց, թերեւս քեզի ալ գրած է այս մասին: Չե՛մ երթար, մինչեւ որ որոշ բան մը չգիտնամ Արայի դրութեան մասին:

Ու քիչ մը լռելէ վերջ՝ կ'ըսեմ դողացող ու լալու պատրաստ ձայնով.

– Բան մը չըրիք, փորձ մը չըրիք մարդ հասցնելու... Թողուցիք, մինակ, անօգնական...

– Կը սխալիս, Սոնա՛, անկարելին փորձեցինք: Մեր դրկած մարդիկը չկրցան տեղ հասնիլ: Առանձնացած գօրանոց մըն է բանտը, մեծ թիւով զինուորներով պաշարուած: Չորս կողմն ալ թուրք բնակչութիւն: Եթէ մեր երկրին մէջ ըլլայինք, կարելի էր յարձակիլ, զէնքի ուժով դուրս հանել բանտարկեալները եւ լեռ մը քաշուիլ: Բայց հոս ի՞նչ կարելի է ընել: Սօտենալու փորձն իսկ ստոյգ մահուան ենթարկել ըսել է բանտարկեալները: Կաշառեցինք բանտապահներէն մէկ քանին, բայց Արան մերժեց իր փախուստով ընկերներուն կեանքը ա՛լ աւելի դժուարացնել:

Զարացած կը լսեմ:

– Պայմանները, Սոնա, մի՛ մոռնար պայմանները: Հոն բանտարկուածներէն ամէն մէկը կռիւ է դեկավարեր, ճակատագիրներ է դարբներ: Բայց հիմա միայն սպասել կրնան, սպասել... Չինադադարը, ո՛վ գիտէ...

Աշոտ կը խօսի, բայց շուտ շուտ ականջ կը դնէ տան երթելե-

կին: Յայտնի է, որ ինքն ալ վստահութիւն չունի իր գտնուած տեղին վրայ:

– Ինչո՞ւ այսպէս կասկածելի տեղ բերին քեզ,– կ'ըսեմ Աշոտին:

– Հետզհետէ տեղ գտնելը կը դժուարանայ: Ապահով տեղերը երկար մնալու համար կը պահենք: Հոս, այսօր միայն պիտի մնամ, գիշերն իսկ պիտի տեղափոխուիմ: Ամիս մը պիտի մնամ ըսի եւ տասնըհինգ օրուանը կանխիկ վճարեցի, որ եթէ կասկածի իսկ, մատնելու համար չաճապարէ: Այսօր կարելոր օտար անձնաւորութիւն մը տեսայ հոս, ուզեցի առիթէն օգտուիլ՝ քեզ ալ տեսնելու համար: Այս տան առաւելութիւն այն է, որ բակի դուռ ունի եւ քովի տունը հաւատարիմ մարդիկ կը բնակին, քանի մը տուն վար ալ կօշկակարի մը խանութը կայ նոյնպէս ծանօթ:

Այդ վայրկեանին փողոցին դուռը աղմուկով զարկին:

– Ոստիկաններ են,– ըսաւ Աշոտ՝ ականջ դնելով:

Ան պատուհանը բացաւ ու ձեռքերէս բռնելով՝ պատուհանէն վար, բակին մէջ, դրաւ զիս:

– Բակին դուռը բաց, փողոց ելիր եւ շուտ քովի տունը մտիր,– ըսաւ.– Դուռը բաց է, սովորական բաներ են... մի՛ վախնար:

– Իսկ դո՞ւն...

– Ես ա՛լ, անմիջապէ՛ս...

Երբ ես քովի դուռը կը բանայի, Աշոտ քովէս անցաւ ու արագ քայլերով ուղղուեցաւ դէպի կօշկակարի աշխատանոցը, որուն խանութը կը գտնուէր միւս փողոցին վրայ:

Քովի տան փոքրիկ բակը անցնելուս պէս ինքզինքս գտայ խոհանոցի մը մէջ, ուր պառաւ կին մը կանանչ լուրիա կը մաքրէր: Հազիւ քիչ մը զարմացաւ զիս տեսնելով:

– Ի՞նչ կ'ուզեք,– ըսաւ:

– Աշոտին կողմէն կու գամ,– ըսի:

Գալուս պատճառները պիտի բացատրէի, երբ երիտասարդ կին մը վազելով ներս մտաւ.

– Մայրիկ, քովի տունը ոստիկաններ եկան,– ըսաւ:

Յետոյ զիս տեսնելուն պէս.

– Աշոտը ի՞նչ եղաւ,– հարցուց անձկութեամբ:

– Ան կօշկակարին աշխատանոցին ուղղութեամբ գնաց,– ըսի:

– Ա՛խ, լա՛ւ, ուրեմն, ազատած է,– ըսաւ երիտասարդ կինը

հանգստացած.— Հիմա ձեզ ազատելու մասին մտածե՛ք:

Երիտասարդ կինը դուրս ելաւ եւ անմիջապէս վերադարձաւ ձեռքը քանի մը հագուստեղէններով:

— Հագէ՛ք այս սեւ վերարկուն եւ մազերնիդ ծածկեցէք այս սեւ քօղով: Այս գնումներու պայուսակն ալ ձեռքերնիդ առէք: Լա՛ւ, հիմա դուրս ելէք գլխաւոր դռնէն: Չեմ կարծեր, որ ձեզ նկատեն: Քովի տունը կը խուզարկեն, հիմա ամենափոքրիկ տուփերուն մէջ անգամ Աշոտ պիտի փնտռեն... Երթամ բակին դուռը կղպեմ... Երթա՛ք բարով:

Բոլոր այս գործողութիւնները քանի մը վայրկեան հազիւ տեսեր էին:

Փողոց ելած ժամանակս աչքիս ծայրով նայեցայ դէպի քովի տունը: Ոստիկան մը կանգնած՝ կը սպասեր, որ վերջանային տան խուզարկութիւնները: Ան նայեցաւ իմ ուղղութեամբ, բայց եկեր էին վտանգաւոր «քոմիթածի» մը բռնելու, գլուխը հազար դեղին օսմանեան ոսկի արծող մէկը. սեւ հագուած, գլուխի այրիի պէս սեւ քօղով ծածկած կին մը, որ գնումներուն կ'երթայ, չհետաքրքրեց զինք:

Գնումի պայուսակը ձեռքս՝ ես անհոգ ու դանդաղ շարժելով սկսայ հեռանալ հակառակ ուղղութեամբ: Հագիւ հասած քովի փողոցը՝ արագացուցի քայլերս: Յետոյ նստայ առաջին պատահած հանրակառքը: Նստելէս վերջ միայն նկատեցի, որ հանրակառքը Միս Դելլէնի տան հակառակ ուղղութեամբ կ'երթար: «Աւելի լաւ» մտածեցի, «բոլորովին ապահով կ'ըլլամ, որ հետեւող չկայ»:

Հանրակառքը կանգ առաւ Ղալաթիա: Վար իջայ ու սկսայ զանազան բանջարեղէններ եւ պտուղներ գնել՝ շուրջս դիտելու համար, թէ հետեւող ունի՞մ: Ինձմով զբաղող չկար:

Պտուղներս եւ բանջարեղէններս պայուսակիս մէջ՝ կրկին նստայ հանրակառք, աս անգամ պէտք եղած ուղղութեամբ:

Սկիզբը միակ ճամբորդն էի: Զիչ-քիչ ուրիշներ ալ սկսան բարձրանալ, այսպէս աւելի աննշմար կրնայի մնալ: Զանի մը թրքուհիներ ելան ու իրենց յատկացուած տեղը նստան ու վարագոյրը քաշեցին:

Թրքուհիները այն ժամանակ չէին նստեր ամենուն հետ: Շոգեկառքերու, հանրակառքերու, ինչպէս նաեւ շոգենաւերու մէջ

անոնք իրենց մասնաւոր տեղն ունէին, ուր ոչ մէկ տղամարդ կրնար նստիլ: Ոչ-թուրք կիներ ալ, եթէ նստէին այդ տեղերը, պարտաւոր էին ելլել եւ իրենց տեղը տալ, այն պարագային երբ թրքուհիները տեղ չունենային նստելու:

Միս Դելլէնի տունը հասայ բաւական ուշ: Երկու կիներն ալ սկսեր էին անհանգստանալ: Պատմեցի ուշանալուս եւ ծպտուած ըլլալուս պատճառները:

Միս Դելլէն համբուրեց զիս՝ «իմ քաջ փոքրիկ քոյրիկս» ըսելով:

— Ստահոգ եմ Աշոտին համար,— ըսի:
— Եթէ ետեւի դուռն փողոց ելաւ, ա՛լ չի բռնուիր: Կ'ուզէի տեսնել ոստիկաններուն երեսը, մանաւանդ այդ զգուելի կնոջ երեսը, երբ տունը պարապ գտան... Մինչեւ մտածեն, որ պատուհանէն ցատքեցինք ու բակի դռնէն ելաք, Աշոտին փոշին իսկ չի մնար այդ փողոցին մէջ...

— Աշոտը կ'ուզէ, որ հեռանամ ասկէ,— ըսի ցած ձայնով:
— Սքանչելի՛ միտք, պռաւօ՛, Աշոտ,— ըսաւ Միս Դելլէն ոգեւորուած բայց ինձ թուեցաւ, որ ան գիտեր՝ թէ՛ ի՞նչ պիտի առաջարկեր ինձ Աշոտը.— Այստեղ դուք լուրջ կը հիւանդանաք:

Ես յամառօրէն գլուխս շարժեցի բացասական:
Միս Դելլէն եւ Մելինէ տխուր նայուածք մը փոխանակեցին եւ գրեթէ միաժամանակ խօսքին նիւթը փոխեցին:

— Ձեր տղան հիմակուրնէ կնամե՞ծար է, ըսաւ Միս Դելլէն,— արդէն կը զանազանէ գեղեցիկ կիները: Իր բոլոր բացանգանչութիւնները, իր ժպիտները ու միավանկ բառերը, բոլորը Մելինէին ուղղեց:

— Պիտի ուզէի օր մը Մելինէին պէս հարս մը ունենալ,— ըսի ես ալ խնդալով:

— Այո՞: Բայց ձեր տղուն հարսը տեսնելու համար ձեզ պէտք է խնամէք: Եթէ այս կեանքը շարունակէք, կը հիւանդանաք: Արան անշուշտ այդ պատճառաւ գրած է թէ՛ ձեզ, թէ՛ Աշոտին:

— Հոս եթէ մնամ, Արային ճակատագիրը գոնէ մասամբ բաժնած կ'ըլլամ եւ... զինք աւելի շուտ կը տեսնեմ... քան եթէ աշխարհին ծայրը, Կովկաս երթամ...

Չարմանալի՛... Չարմանալի՛: Պատասխան չեն տար: Մելինէն կը ծռի եւ ուշադրութեամբ ձեռքերուն կը նայի: Ան շատ կը ծռի: Նո՞ր կը տեսնէ իր ձեռքերը... Միս Դելլէն պատուհանէ

դուրս կը նայի: Մուտք սկսած է կոխել, բայց ան յամառօրէն նայուածքը սեւեռած է կէտի մը: Այտերը կորսնցուցեր են իրենց բնական վարդագոյնը: Ի՞նչ կը տեսնէ արդեօք:

Կ'ելլեմ ու ես ալ կը նայիմ պատուհանէն դուրս: Բան չ'երեւիր: Ոչի՛նչ: Մութ անասող գիշեր մը իջեր է քաղաքին վրայ: Թերեւս իր Առն կը տեսնէ, իր սիրելին վիրաւոր, հոգեվարք:

Խեղճ, խեղճ Միս Յելլէն, բարի՛ Միս Յելլէն, որքա՛ն է տառապեր, սիրեր ու չարչարուեր: Սիրտս լեցուն է անոր վշտով: Կը մօտենամ, թելերս կ'անցընեմ իր վզին շուրջ ու կը ծռիմ իր գեղեցիկ խարտեաշ մազերուն վրայ ու կը շնջամ:

– Սիրելի՛, սիրելի՛ Միս Յելլէն, որքա՛ն տառապեր էք, եւ որքա՛ն քաջ էք դուք:

– Կը սիրեմ այն ժողովուրդը, որուն ծոցէն ելած էր իմ Առն: Երբ կ'աշխատիմ այդ ժողովուրդին համար, ինձ կը թուի, որ ան ինձ հետ է, գոհ է ինձմէ: Ըրածս՝ ինքնասիրութենէ դրդուած բան է: Դուն, Մելինէն այն փոքրիկները, որ պիտի ազատենք, բոլորդ, քիչ մը Առն էք ինձ համար... Կը հասկնա՞ք...

Որքա՛ն բախտաւոր եմ Միս Յելլէնի հետ բաղդատմամբ: Այո՛, մինակ եմ, բայց Արան ողջ է... Գրեթէ կ'ամչնամ բախտաւորութենէս:

Նոր կը տեսնեմ, որ դեռ հազած եմ սեւ վերարկուն եւ գլխուս ունիմ այրիներու սեւ քօղը: Հապճեպով կը հանեմ եւ գրեթէ բարկութեամբ կը նետեմ աթոռի մը վրայ:

Չե՛մ ուզեր ասոնք...

Յետոյ կ'աւելցնեմ բարկութենէ դողացող ձայնով, կարծես մէկը հակառակը ըսած ըլլար այդ վայրկեանին.

– Կովկաս չե՛մ երթար, տունս չեմ թողո՛ւր... Ան պիտի գայ:

Միս Յելլէն արդէն գտած է իր հանդարտ արտայատութիւնը, իր վարդ գոյները:

– Այո՛, այո՛, – կ'ըսէ գլուխը հաստատապէս շարժելով. – Պէտք է յուսալ, պէտք է սպասել: Աս է կեանքը, յուսալ ամէն գնով, յուսալ մահուընէ վերջ ալ...

Կ'ընթրենք երեքս միասին: Մելինէն կ'իմանամ, որ Սամաթիա նոր ձերբակալութիւններ եղած են, բայց ընդհանուր խուզարկութիւն չէ կատարուած: Գացած են ձկնորս Միսաքը ձերբակալելու, բայց զինք տունը չեն գտած:

– Իսկ մայրի՞կդ:

– Մեր տունը որեւէ ոստիկան չէ եկած: Օր մը նպարավաճառ Գալուստեան կու գայ մայրս տեսնելու՝ «Ազգի մարդոց» հասցէն ուզելու կարելոր գործի մը համար: Մայրս կը պատասխանէ թէ՛ չի գիտեր: Այն ժամանակ Գալուստեան, թերեւս վստահութիւն ներշնչելու համար, կ'ըսէ թէ՛ երկու հազար օսմանեան ոսկի պիտի նուիրէ կուսակցութեան, ազգին ազատման գործածելու համար: Մայրս չի հաւատար, բայց եւ այնպէս կը յայտնէ Չառոյին այդ մասին: Չեմ գիտեր՝ ի՞նչ եղաւ այդ խնդիրը: Չառօն անգամ մը միայն տեսայ քաղաք գալէս ի վեր: Չարմանալին այն է, որ Գալուստեան մայրիկէս ներում է խնդրեր, որ համարձակեր է ինձ պէս քնքուշ էակ մը իրեն կնութեան ուզելու: Չարմանալի մարդ մը եղեր է հիմա Գալուստեանը, թունդ հայրենասէր, ինքզինք վտանգելու աստիճան:

Միս Յելլէն խնդալով ցուցամատը կը շարժէ սպառնական.

– Ա՛խ, Մելինէ՛, դո՛ւն ըրիր բոլոր այս կերպարանափոխութիւնները: Սէ՛ր, սէ՛ր ամենազօր:

Երեքս ալ կը խնդանք: Պատուհանէն նայող մը պիտի կարծէ, որ երեք կիներն ալ, բոլորուած ճոխ սեղանին շուրջ, ուրախ են եւ երջանիկ:

Միս Յելլէն եւ ես կը բաժնուինք հին բարեկամներու պէս:

Դժգոհ էի, սակայն, տուն վերադարձիս: Աշոտին հետ խօսակցութիւնս կիսատ մնաց, որեւէ խնդիր չպարզուեցաւ ինձ համար: Այդ հանդիպումը թեթեւութիւն մը չբերաւ հոգեկան վիճակիս:

Ինչո՞ւ կ'ուզէին, որ հեռանայի: Ինչո՞ւ հանգիստ չէին ձգեր զիս: Եթէ իրենց խօսքը թեթեւութիւն մը պիտի չբերեր, այլ խռովք, կասկած ու կսկիծ, թո՛ղ լռէին... թո՛ղ լռէին:

Դժգոհ եմ, դժգոհ: Դժգոհ ամէնէն աւելի ինձմէ, ժամ առաջ կ'ուզեմ տուն հասնիլ, տանս մէջ գտնելու համար հոգեկան հաւասարակշռութիւնս:

Այնքան արագ կը քալեմ, որ ծերուկ ոստիկանը կը դժուարաւայ ինձ հասնելու: Կը հազայ, կը տքայ, կը հառաչէ...

Կռուելու սաստիկ փափաք մը ունիմ: Կ'ուզեմ դառնալ ու գաղտնի ոստիկանին ըսել, որ թուրքերը վատեր են, արդար մարդիկը կը բանտարկեն ու անտէր կանանց կեանքը անտանելի կը դարձնեն: Կ'ուզեմ, որ հանդիպիմ տանտիրուհիներէս

մէկին, որպէսզի ըսեմ, թէ իրենց ըրածը անխղճութիւն է: Դրամը առնելու եւ ստիպել, որ ելլեմ տունէն... Խանութպանուհիին ալ պիտի ըսեմ, որ ինքնահոս գրիչս պահելու իրաւունք չունեմ, թէ գողութեան պէս բան է այդ...

Բայց տուն կը մտնեմ անձայն, խորտակուած: Փոքրիկս արդէն քնացած է գիրկս: Կը հանուեցնեմ ու կը պառկեցնեմ, յետոյ փոքրիկ սեղանին քով նստած՝ կը ծռիմ ասեղնագործուելիք թաշկինակներուն վրայ ու կը սկսիմ աշխատիլ:

Ապսպրանքը վաղուան համար է: Պէտք է վերջացնեմ: Այսօր աւելորդ ծախսեր շատ ըրի, իսկ վաղուան համար կաթի դրամ չկայ...

Յաջորդ առաւօտ, ձեռագործները յանձնելու համար փողոց կ'ելլեմ ու, ինչպէս միշտ, փողոցին անկիւնը կը նայիմ, ուր ընդհանրապէս գաղտնի ոստիկանը կը կենայ: Մարդ չկայ:

Տեղ գացած է թերեւս, կը մտածեմ, բայց դրամը ստանալէ եւ գնումները ընելէ վերջ, վերադարձիս, նորէն մարդ չկայ: Որեւէ մէկը չկայ նաեւ երեկոյեան, մեր սովորական պտոյտի ժամանակ:

Ճամբան շուտ-շուտ ետ կը դառնամ՝ վստահ ըլլալու համար: Ո՛չ, մինակ եմ: Ազա՛տ...

Այնպէ՛ս ուրախ եմ: Հազար ծրագիր մէկ անգամէն կը ծագին մտքիս մէջ: Չառոյին երթամ եւ ուրախ լուրը տամ: Արաքսիին երթամ ու ինձ բախտակից կանանց մասին լուրեր առնեմ... Միս Հելլենին ալ երթամ, ըսեմ, որ ալ մտահոգ չըլլայ իմ մասիս:

Հետեւո՛ղ չունիմ, ամէնուն պէս եմ: Պէտք է երթամ նաեւ Չուիցերիացի բժիշկը եւ իր կինը տեսնելու:

Չէ՛, պէտք է զգոյշ ըլլալ, շատ չոգելորուիլ: Թերեւս զիս հետապնդելու ուրիշ ձեւ մը հնարած են: Հասկցան, որ նկատեցի իրենց ներկայութիւնը եւ կ'ուզեմ ազատ ձգած ըլլալու տպաւորութիւն թողուլ՝ զիս թակարդի մէջ առնելու համար: Թերեւս սա տան պատուհանէն հիմա ինձ կը նային: Թերեւս սա եկող կինը անոնց կողմէն է... Սպասե՛նք... Սպասե՛նք:

Հետեւեալ օրը նորէն հետեւորդ չունիմ: Փողոցին մէջ մինակ եմ: Հրաշալի է՝ այսպէս քալելը եւ ուզած կողմը կարենալ երթալը:

– Լա՛ւ նշան է այս, շա՛տ, շա՛տ լաւ նշան: Հայերէն նամակ եւ գրեթէ միաժամանակ այսպէս ազատութի՛ւն: Լաւ նշան:

Տղաս համաձայն է: Աչքերը բացած՝ ինձ կը նայի գարմանքը ցոյց տալու համար:

– Ի՞նչ կ'ըսես, այս ուրախութիւնը չտօնե՛լ քաղցր հացիկներ գնելով: Այո՞, հացի՞կ...

– Ացի՛... ացի՛,– կ'ըսէ տղաս, որ Միս Հելլենի տունը կերածը կը յիշէ:

Ուրեմն, այս անգամ ալ համաձայն ենք:

Հացիկ ուտող մեծ տղայ ունիմ, հայերէն նամակ ստացայ եւ հետեւող չունիմ: Հպարտութեամբ կը նայիմ չորս կողմս եւ անցնող կանանց:

– Կը կարծե՛ն, որ ուզած տեղս չե՛մ կրնար երթալ, ի՞նչ է: Կրնամ սա փողոցը դառնալ, շարունակել ու երթալ Չառոյին, կրնամ երթալ, օրինակ... Այո՛, ամէն տեղ կրնամ երթալ, միա՛յն... Արան տեսնելու չեմ կրնար երթալ:

Երթելեկելու այս ազատութիւնը յանկարծ ինձ անիմաստ, աւելորդ կ'երեւի...

«Գոհանալ չես գիտեր,– կը յանդիմանեմ ինքզինքս.– Այս դէպքը ապահովաբար վիճակի մը փոփոխութեան արդիւնք է, լաւ փոփոխութեան մը ապացոյց: Լա՛ւ նշան, շա՛տ, շա՛տ լաւ նշան է... Եթէ այսօր ամբողջ օրը այսպէս անցնի, վաղը կ'երթամ Չառոյին»:

Կ'ուզեմ անպատճառ իմանալ թէ՛ միւս բանտարկեալները ի՞նչ գրեցին իրենց կանանց:

Նոյն իրիկունը, տղաս բազմած իր բարձրուն մէջ, իսկ ես սեղանիս առջեւ ասեղնագործելով, իրարու հետ կը խօսիմք:

Շուտով խօսիլը մոռցած՝ տղուս պէս միավանկերով պիտի արտայայտուիմ: Խօսակցութեան նիւթն է՝ «մեր ազատութիւնը», երբ կը լսեմ մեր յարկաբաժնիս դրան զանգակին ձայնը:

Կը ցնցուիմ: Այս ձայնը չեմ լսած այդ ողբերգական երեկոյէն ի վեր: Ի՞ր զանգակին ձայնն է: Այսպէս կը յայտնէր ան իր գալը ամէն երեկոյ:

Կ'ուզեմ վազել, բանալ, բաց քարացած կը կենամ, սիրտս է որ...
Չանգակը նորեն կը հնչէ:

Մոռցած եմ բանալ, թէ ձեռքերս այն աստիճան կը դողան, որ չեմ կրնար դուռը բանալ: Զիչ կը մնայ, որ ըսեմ. «Արա՛, սիրելի՛ս, համբերե՛, հիմա՛ կը բանամ»...

Վերջապէս, դուռը կը բացուի:

Չառօն է կանգնած սեմին, փոքրիկ Սուրենին հետ: Ամենէն առաջ կը տեսնեմ Սուրիկին ուրախութենէն փայլող աչքերը: Այնպէ՛ս ուրախ է, որ վերջապէս մեր տունը գալու իր երազին հասաւ:

Ես լուռ կը նայիմ իրենց՝ առանց շարժելու: Սիրտս պիտի պայթի:

Այնքա՛ն կ'ուզեի, որ Չառօն մեր տունը գար, եւ ահա, կանգնած, բառ չեմ գտներ ըսելու:

– Ի՞նչ ունիս, Սոնա,– կ'ըսէ,– Չառօն,– հիւանդ պառկած տեղէ՞դ հանեցի քեզ, վախնամ:

– Ո՛չ, կ'աշխատեի,– ցոյց կու տամ թաշկինակները,– այս զանգակին ձայնն է որ յանկարծ... Զանի՛ ժամանակ է որ չեի լսած այդ ձայնը:

– Ա՛խ, կը հասկնամ, կարծեցիր որ...

Կը սպասեմ, որ ըսէ. «Այդ օրն ալ պիտի գայ»: Բայց Չառօն չ'ըսեր այդ խօսքերը:

– Ա՛լ ինձի չեմ հետելիր,– կ'ըսեմ ժպտելով:

– Գիտե՛մ, անոր համար եկայ,– կ'ըսէ Չառօն:

Այս կինը ամէն բան գիտէ:

Կ'ուզեմ, որ Չառօն ըսէ. «Շատ լաւ նշան է աս», բայց ան այդ խօսքերն ալ չ'ըսեր:

Ես եմ, որ կ'ըսեմ, հաստա՛տ, համոզուած ձայնով:

– Շա՛տ լաւ նշան է այս,– ու քիչ մը լռելէ վերջ, կ'աւելցնեմ շեշտելով,– շա՛տ լաւ...

Չառօնին աչքերուն մէջ կը նայիմ ձեւով մը, որ կ'ըսէ. «Չամարձակէ տեսնեմ, հակառակը պնդելու»...

Չառօն զարմացած ինձ կը նայի: Իր ներկայութեան միշտ վախկոտ, անհամարձակ աղջնակ մը եղած եմ. այս «հասունացած եւ իր կարծիքն ունեցող կին»ը ան չի ճանչնար: Չառօն ալ փոխուած է: Այտերը աւելի խոր ինկած են, դէմքը աւելի գունատ է ու աչքերը սեւով եզերուած են:

«Կարծես ակնոց դրեր է», կը մտածեմ: Մեծ վիշտ մը ապրածի երեւոյթ ունի: Կը մեղքնամ իրեն: Ան տառապեր է, երբ ես երկու օր է գրեթէ ուրախ եմ,– եւ ուզելով Չառօն ալ մասնակից ընել ուրախութեանս՝ կ'ըսեմ.

– Այս ազատութիւնը տօնելու համար, պիտի մնաք ընթրիքի մեզ մօտ:

Չառօն տարօրինակ կերպով մը կը նայի ինձ: Կը կարծեմ, որ յանդիմանական է իր նայուածքը: Ազատութեան մասին կը խօսիմ, երբ ժողովուրդը կը հեծէ: Կ'ուզեմ դարմանել սխալս:

– Օ՛, պզտիկ ազատութիւն մը անշուշտ, բարելաւում մը, լաւ յոյսեր տուող երեւոյթ մը միայն: Յիմա երթամ ընթրիքի համար պետք եղածը գնեմ: Երկնքի թռչունին պէս ազատ եմ: Կրնամ երթալ, գալ:

– Ամէն բան բերած եմ,– կ'ըսէ Չառօն՝ Սուրենին այնքան հպարտութեամբ բռնած սակառը ցոյց տալով.– Դուն պիտի նստիս, եւ ես ամէն բան պիտի պատրաստեմ:

Չառօն արագ, արագ կը շարժի սենեակին մէջ ու նոյնքան արագ կը խօսի: Չարմանալի է, որքա՛ն շատախօս մէկը եղաւ ան յանկարծ:

– Ահա քու սիրած ապուխտդ,– կ'ըսէ՝ պնակը սեղանին վրայ դնելով,– ահա եւ խաղողի տերեւով տոլման, որ նոյնպէս կը սիրես. ահա եւ փիլաւը...

Չառօն անդադար կը խօսի: Երբեմն երբեմն կը խնդայ իր ըսածներուն վրայ: Կը պատմէ թէ՛ ինչպէս իր դրացի իտալուհին, ան որ գարեջրատունը կ'աշխատի, իրիկունները գլտորելով տուն կու գայ, այնքա՛ն խմած կ'ըլլայ... Կը պատմէ թէ...

«Բայց ինձի ի՞նչ, Չառօ, ինձի ի՞նչ այս բոլորը», կը մտածեմ տխուր իրեն նայելով:

Սարսափելին այն է, որ Չառօն իբր թէ խնդալիք այս բաները պատմած ժամանակ դէմքին վրայ թառած այնպիսի տխուր արտայայտութիւն մը ունի, իր ամբողջ արտաքինը այնքան «սգաւոր է», որ մէկը, եթէ չլսէ անոր խօսքերը եւ տեսնէ միայն դէմքին արտայայտութիւնը, յուսահատ շարժող իր յոգնած շրթները, պիտի ըսէ. «Ի՞նչ տխուր լուր մը կու տայ արդեօք այս կինը»...

Սրտիս մէջ ցաւ մը կը զգամ: Միայն Սուրիկն է, որ անչափ ուրախ է մեծ մայրը այսպէս ճարտասան եւ ուրախ տեսնելով:

Ոտքի կ'ելլեմ եւ կ'աշխատիմ խօսքին նիւթը փոխել: Կը խօսիմ Միս Զելլենին վրաս թողած սքանչելի տպաւորութեան մասին, կը խօսիմ Մելիսեի մասին...

Այս վերջին անունը տալս եւ նպարավաճառ Գալուստեանը յիշելը մէկ կ'ըլլայ: Կը խնդայ բարձրաձայն:

– Գիտե՞ս,– կ'ըսէ,– եկաւ ինձի գտաւ: Դուն կիներուն պատրիարքն ես, ըսաւ, կրնամ քեզի ամեն բան խոստովանիլ: Ծանր մեղք մը գործեցի, անոր քաւութեան համար ուխտ ըրի երկու հազար նուիրել ազգի գործերուն, որո՞ն տամ դրամը... Դրամն առի եւ երէկ Միս Զելլենին յանձնեցի: Անոր միջոցաւ կրնանք գաւառները դրկել եւ որոշ օգնութիւն հասցնել:

Այս խօսակցութիւնը քիչ մը կը մօտենար մեր իրականութեան: Բայց Չառօն որոշէր էր, ինչպէս կ'երեւէր, ամեն նիւթի մասին խօսիլ, բացի մեզ այրող նիւթերէն: Նոր պատմութիւն մը կը սկսի:

– Արայէն նամակ ստացայ,– ըսի վերջապէս համբերութենէս ելած.– Դայերէն նամակ է, եւ ասոր համար ալ չես կրնար ըսել, թէ լաւ փոփոխութեան մը նշան չէ:

Չառօն երկու ձեռքերով յենեցաւ սեղանին՝ անոնց դողը ծածկելու համար: Շրթները ւաւելի սեղմուեցան եւ նայուածքը նմանը չտեսնուած վշտի արտայայտութիւն մը առաւ:

– Ո՞ր է նամակը,– ըսաւ վերջապէս:

Տղուս բարձիկին տակէն հանեցի նամակը եւ իրեն տուի:

Նամակը աչ ու ձախ կ'երթայ Չառօնին ձեռքին մէջ: Կը ջղայնանամ, մոռնալով որ ինձ հետ ալ այդպէս պատահեցաւ: Կը վշտանամ իսկ: «Յուզուելու պատճառ չկայ», կ'ըսեմ մտքովս, «Դայերէն նամակ է, առաջին հայերէն նամակը, շատ լաւ երեւոյթ է այս»:

Չի խօսի՞ր... Չի խօսի՞ր...

– Յետո՞յ,– կ'ըսեմ անհամբեր,– ինչո՞ն լուռ ես հիմա...

– Որքան շատ կը սիրէ քեզ Արան, եւ որքա՞ն հոյակապ, որքա՞ն հազուագիւտ մարդ է ան,– կ'ըսէ Չառօն հազիւ լսելի ձայնով:

– Ինչո՞ն այդպէս կ'ըսես... ինչո՞ն այդ խօսքերը ըսիր,– կը պոռամ Չառօնին մօտենալով:

Յետոյ ցած, գրեթէ լալով կ'ըսեմ.

– Չառօ՛, Չառօ մայրիկ, ինչո՞ն ըսիր այդ խօսքերը:

– Այսօր ըսածս չեմ գիտեր, Սոնա՛, սաստիկ գլխացաւ ունիմ: Ուշադրութիւն մի՛ դարձներ... Տե՛ս, ի՞նչ փառաւոր սեղան

պատրաստեցի քեզ համար: Վո՛ւյ, կերակուրը կրակին վրայ այրեցաւ:

Ու Չառօն դուրս կ'ելլէ սենեակէն:

Վերադարձին կը սկսի մէկ նիւթէն միւսն անցնիլ: Ամենէն աննշան դէպքը շատախօսութեան նիւթ կը դառնայ: Վերջին օրերու իրարու յաջորդող հակասական յոյզերը քայքայել են արդէն յոգնած ջղերս, այնպէս որ այս լռակեաց կնոջ անվերջ խօսիլը զիս տակնուվրայ կ'ընէ: Գոնէ դէմքին արտայայտութիւնը փոխել յաջողէր:

Կ'ուզեմ մօտենալ, կ'ուզեմ խնդրել, ծունկի գալով խնդրել.

– Լռե՛ Չառօ, լռե՛, առաջուան պէս եղիր: Ըստ թէ ի՞նչ կը ծածկեն այդ անհիմաստ խօսքերու հեղեղները:

Յանկարծ Չառօն, սովորական բան մը ըսելու պէս, ուրախ պատմութեան մը վերջաւորութեան կ'աւելցնէ.

– Սոնա՛, պէտք է հնազանդիս Արային, պէտք է որ մեկնիս փոքրիկիդ հետ:

– Դասկցայ, անոր համար եկար,– կ'ըսեմ չոր ձայնով,– իսկ Արան թողում այս դժոխքին մէջ, այո՞:

– Արան , սիրելիս...

– Արան, ի՞նչ...

– Արան... կու գայ... քեզ... կը գտնէ: Լա՛ւ, ատոր մասին վաղը կը խօսինք:

Չառօն կը սկսի նոր զուարճալի բան մը պատմել:

– Չառօ մայրիկ, լռե՛...

Ոտքի ելայ իրեն մօտենալու համար եւ զգացի, որ ծնկներս կը կքին: Ո՛չ, յենուիլը օգուտ չունի... Պիտի իյնամ, պիտի տարածուիմ տախտակամածին վրայ...

Անկողնիս մէջ էի, երբ ինքզինքս գտայ: Չառօն, ւաւելի գունատ քան մահամերձ մը, նստած է քովս, բազկերակս ձեռքին մէջ ու անձկութեամբ կը սպասէ, որ աչքերս բանամ:

– Սոնա՛, սիրելի՛ աղջիկս,– կ'ըսէ Չառօն ծռելով,– շա՛տ յոգնած ես...

– Ձեր ընթրիքը հարամ ըրի,– կ'ըսեմ ժպտալով:

– Դեռ շուտ է, քիչ վերջը սեղանը այս սենեակը կը բերեմ ճիշդ անկողնիդ քով, դուն ալ թեթեւ բաներ կ'ուտես:

– Չառօ՛, ինձի գործ մը պէտք է տաս, օգտակար, նոյնիսկ

վտանգաւոր գործ մը: Միս Յելլէնը կ'ըսէ, որ միսիթարուեր է սիրած մարդուն ժողովուրդին համար աշխատելով:

Չառօն կը լռէ, յուսատու խօսքեր կը փնտռէ:

– Անպատճառ գործ մը,– կը կրկնեմ յամառօրէն:

– Լա՛ւ, փոքրիկ Ազնիւին ազատման գործին պիտի օգնես ինծի...

– Կը խոստանա՞ս:

– Այո՛...

Աչքերս կը գոցեմ արգիլելու համար հոգիս խորքերէն քամուած կաթիլ մը արցունքը, որ հասեր է վերջապէս աչքերուս:

– Չառօ, քիչ առաջ ըսիր. «Ռոքա՛ն շատ կը սիրէ քեզ Արան»: Զիչ են, չէ՞, այդպիսի սերերը, Չառօ՛:

– Շա՛տ, շա՛տ քիչ, Սոնա, հազուադի՛ւտ...

– Եւ ամբողջ կեանք մը լուսաւորելու չափ մեծ, Չառօ, նոյնիսկ հեռուէն, շա՛տ հեռուէն...

– Այո՛, նոյնիսկ շա՛տ հեռուէն, Սոնա: Դուն բախտաւոր աղջիկ ես, Արային լոյսը քու վրա՛դ...

Թէեւ մինակ ենք, բայց շատ ցած ձայնով, գրեթէ շշուկով կը խօսինք:

– Տեղափոխուած ժամանակ կրնան փախչիլ,– կ'ըսեմ գրեթէ աղաչական, Չառօյին նայելով:

– Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, Սոնա: Երբ Կովկաս երթաս, Արան Էրզրումի, Կարսի ճամբով կու գայ քեզ կը գտնէ:

Աշխարհագրական այս տեղեկութիւնները, ամէն գնով հաւատալու ձգտող հոգիս կ'օրօրեն:

Էրզրումի, Կարսի գիծը: Ինչպէ՞ս չէի մտածած այդ մասին:

– Չառօ, լաւանալուս պէս, փոքրիկը առած պիտի երթամ Կովկաս, Արայի ծնողացը քով... Արային ուզածը այդ է, հիմա կը հասկնամ: Դիտի երթա՛մ...

Կ'ամչնամ այսպէս տկար վիճակի մէջ ինկած ըլլալուս համար: Անկարող եմ նոյնիսկ նստելու եւ գաւաթ մը կաթը մինակս խմելու, առանց ուրիշին ձանձրութիւն տալու:

Չառօն իր հազար ու մի զբաղումներուն մէջ, ստիպուած է մուրջը կոխելուն պէս գալ, փոքրիկովս եւ ինձմով զբաղիլ: Հիմա նորէն սակաւախօս է ան, նոյնիսկ աւելի քան առաջ: Գուցէ այդ գիշերուան շատ խօսիլը հաւասարակշռելու համար:

Դէմքը այնքան գունատ է եւ խիստ, որ առանց ընդդիմանալ համարձակելու, կ'ուտեմ իր տուած արիւնտտ միսերը, կուլ կու տամ թարմ հաւկիթները ու հին գինին, որ Միս Յելլէն կը դրկէ ինձ ամէն օր:

– Դեռ քանի մը օր առաջ տղուս օրրակառքը չորրորդ յարկը բարձրացուցի, իսկ հիմա ան իսկ ծանր կու գայ ձեռքերուս,– կ'ըսեմ Չուիցերիացի ծեր բժիշկին եւ իր կնոջ, որոնք Չառօյէն իմանալով հիւանդութեանս մասին՝ եկած են զիս տեսնելու, աչքերնին բարութեամբ եւ ձեռքերնին զանազան ծրարներով լեցուն:

– Ուժերուդ մինչեւ վերջին կաթիլը գացեր ես, աղջիկս,– կ'ըսէ բարի բժիշկը զիս քննելէ վերջ.– Կատարեալ սնանկ մըն ես...

Ծիշդ է, որ անկողնուս ծածկոցը շատ բարակ մարմին մը կը կաղապարէ:

– Օր մը փողոցը պիտի իյնար ու ա՛լ պիտի չելլէր,– կ'ըսէ Չառօն՝ յուզում ծածկելու համար իր ամենէն խիստ ձայնը առնելով,– եւ առիթն կ'օգտուի թարմ հաւկիթով ծեծուած տաք կաթը ինձ խմցնելու:

Ատկէ աւելի զգուելի խմիչք չեմ գիտեր ես: Բայց Չառօն այնքան դժգոհ երեւոյթ մը ունի (արդեօք դիտմա՞մբ այդպէս կ'ընէ, որ խմեմ), այնքան բարկացած կ'երելի ինձ դեմ, որ նողկանքս զսպելով անշշուկ կը խմեմ տուածը:

– Տասը օր այսպես պառկիս եւ ամիս մը գիւղը մնաս, առաջ-
ուան Սոնան կ'ըլլաս,– կ'ըսէ բժիշկը,– եթէ միայն խելօք ըլլաս
ու հնազանդիս:

Ան ուժի դեղեր կը բերէ իր հետը ամէն օր: Չիս առողջացնելու
իր անհամբերութեանը մէջ, դեղերու շիշեր կը շարէ սեղանիս
վրայ: Թիւ 1, թիւ 2, կարծեմ մինչեւ տասը կը հասնի անոնց թիւը:

– Շաբաթ մը կ'ելլես,– կ'ըսէ ժպտուն՝ ինձ նայելով:

– Անցեալ շաբաթ ալ այդպէս ըսիք,– կ'ըսեմ.– Երբ որ լաւա-
նամ, ի՞նչ պիտի ընեմ այս ձեր ըրածները փոխարինելու հա-
մար:

Այս խօսքերը ըսած ժամանակս Չառոյին ալ կը նայիմ
վախվիսելով:

– Ա՛յ քեզ տրամաբանութիւն,– կ'ըսէ բարի ծերունին.– Մե-
ծայարգ տիկինը կը խնամենք, որ լաւանայ, իսկ ան լաւանալ
չ'ուզեր, որովհետեւ երախտագիտութիւնը ծանր կու գայ
իրեն... Բայց առողջանալով է որ...

Տերեկները Մելինէն է քովս: Զաղցր Մելինէն: Անոր հետ դիւ-
րին է գործս: Կրնամ խարդախութիւն ընել եւ մաս մը միս պնա-
կիս տակը դնել իբրեւ թէ կերուած:

Յիմա Մելինէն հանդարտ տխրութիւն մը ունի: Իր սիրելին
ապահով կերպով հեռացած է հրդեհուած ճամբաներէն: Ան
ամէն օր կու գայ ծրարներով: Միս Յելլէն առողջութեանս վերա-
բերեալ խորհուրդներու եւ ուտելիքներու ահագին պաշար մը
կը դրկէ հետը:

Միս Յելլէն ինքն ալ եկաւ գիշեր մը: Ծպտուած էր: Տեսնողը
պիտի կարծեր, որ արեւելքցի կին մըն է: Սեւ կեղծամ դրած ու
սեւ մաշած վերարկու մը հագած էր: Ան չէր ուզեր, որ իմացուեր
թէ ինք հայերու հետ յարաբերութեան մէջ է:

Չառօն երկու բժիշկներու խորհուրդներուն միջին ճամբուն
կը հետեւեր՝ իր կողմէն ալ լրացնելով իր հասկցած ձեւով: Ան
արգիլած էր ինձ շատ խօսիլ: Արգիլած էր, որ այցելեն ինձի:

Այս վերջին արգելքը ծանր կու գայ: Դեռ չեմ գիտեր, թէ ինձ
բախտակից կանայք ի՞նչ լուրեր ստացան իրենց ամուսիննե-
րէն: Երբեմն դուռը կը գարնեն: Մելինէն կը բանայ ու փսփսու-
քով խօսակցութիւն մը կը սկսի: Երբ կը հարցնեմ, թէ ո՛վ էր,
միշտ անորոշ պատասխան մը կը ստանամ:

– Մխալեր էին, վարի յարկին համար էր:

– Ժանեակ ծախող կին մըն էր...

Աչքերս փակած կիսաքուն վիճակ մը ունիմ ամբողջ օրը: Կը
զգամ, սակայն, որ Մելինէն անհամբերութեամբ կը սպասէ, որ
աչքերս բանամ, որպէսզի իր սիրելիի մասին խօսի ինձ: Ամէնէն
աննշան դէպքերն իսկ, իրմէ պատմուած, գոյն եւ երանգ կը
ստանան:

Իր ամէնէն երջանիկ օրերէն մին է, կ'ըսէ, Ծննդեան այն
կրթման իրիկունը, երբ ինքը, Չապէլն ու Պետիկեանը իրենց
տունը ընթրիքի հրաւիրած էր:

– Կը կարծեի, որ նշանուած էին: Ռեւէ սպասում կամ յոյս չու-
նէի, բայց գոհ էի որ վերջապէս գտեր էի մէկը, որուն մասին
կրնայի երագել, մէկով ոգեւորուիլ: Այսչափը կը բաւեր ինձ այն
ատեն: Ի՞նչ էր կեանքս, գիտես արդէն: Երբ մեկնեցան, զգացի
որ Եդուարդ տեսած էր զիս, վերջապէս: Չեմ գիտեր, ի՞նչպէս
բացատրել: Չիս տեսած էր անշուշտ առաջ ալ, ամէն օր, նոյ-
նիսկ քանի մը անգամներ օրուան ընթացքին, բայց այդ գիշեր,
ան զիս տեսաւ եղածիս պէս, զիս նկատեց, պետք էր ըսել: Այդ
զգացումը ինձ համար երջանկութեան հաւասար էր: Յուսալ
կարենալու բախտաւորութիւնը այնքա՞ն մեծ կը թուեր ինձ, որ
ծովը, պատուհանէս միշտ անծայրածիր երեւող ծովը, ան-
նշան պզտիկ բան մը երեւցաւ այդ երեկոյ: Երբեք չկրցայ բա-
ցատրել, թէ ինչի՞ արդիւնք էր այդ: Յոյսիս մեծութի՞ւնն էր
պատճառը... Կը նայեի, ա՛յս է ամէն օրուան տեսած ծովս,
կ'ըսեի ես ինձ...

– Իսկ Չապէլէն լուր ունի՞ս,– կը հարցնեմ:

– Երբ որ ձերբակալութիւնները եւ խստութիւնները սկսան ու
դպրոցը փակուեցաւ, Չապէլ Ատաբազար իր ծնողաց քով
գնաց: Կ'ըսեն թէ՛ Ատաբազարի ժողովուրդն ալ տեղահան-
ւած է ու քշուած դէպի անապատները: Խե՛ղճ, խե՛ղճ Չապէլ...
Ի՞նչ եղաւ արդեօք այդ սքանչելի աղջիկը իր վիրաւոր սրտով...

Այս վերջին խօսքերը շատ ցած ձայնով ըսաւ Մելինէ:

– Կը կարծե՞ս:

– Յիմա, ա՛լ բոլորովին համոզուած եմ,– կ'ըսէ Մելինէ յուզ-
ւած ձայնով.– միևնակ մնալու ի վեր, կը մտածեմ անցածի մա-
սին եւ վստահ եմ, որ ան սիրած էր Եդուարդը: Գիտնայիր՝ ի՞նչ

վեհանձն եղաւ ինձ հետ: Որեւէ դառնութիւն, որեւէ սառնութիւն ցոյց չտուաւ: Ընդհակառակը, կ'ուզէր, որ զգայի, գնահատէ երջանկութիւնս: Չնկատեցի իր տառապիլը, շա՛տ երջանիկ էի: Աս է արդարացումս: Լուսաստղի մը պէս եկաւ անցաւ ամէն բան: Մայրս կ'ըսէ, որ հիմա Սամաթիան մեռելատունի կը նմանի: Միայն ծերունիներ ու պառաւներ կ'երեւան փողոցը: Գիշերը մութը չկոխած, դռները կը փակուին եւ տուները կը լռեն:

– Մայրիկդ կը տեսնե՞ս:

– Այո՛, հիմա մայրիկս շատ փոխուած է, ա՛լ չի տքար, չի գանգատիր: Կորով մը եկած է վրան: Ասեղնագործութիւններ կ'ընէ ֆրանսական տան մը համար, ուր աշխատած էր անցեալին մէջ ալ եւ ինքը անձամբ քաղաք կը բերէ իր աշխատանքը: Այդ օրերուն ես ալ այդ խանութը կ'երթամ ու կը տեսնուիմք: Երբեմն միասին սուրճ խմելու կ'երթանք: Անկէ իմացայ, որ ձերբակալեր են նպարավաճառ Գալուստեանը, որ վերջերս սկսեր էր կասկածելի երեւիլ թուրքերուն՝ ձկնորսական թաղը իր ըրած յաճախակի այցելութիւններով: Մայրս պատմեց, որ Գալուստեան բնաւ ընկճուած չէ եղեր... «Ասիկա մեծ պատիւ է ինձ համար», ըսեր է մայրիկին: Ձերբակալեր են մինչեւ անգամ մեր անվնաս տիրացու Աւագեանը, ճիշդ օդի շիշերով տուն մտած ժամանակը... «Առ աս եւ լաւ պահէ», ըսեր է դուռը ելած տանտիրուհիին,– «անմիջապէս պիտի վերադառնամ, յանցանք մը չունիմ»... Բայց ա՛լ չեն տեսեր զինք:

– Իր ետեւէն սպասող օդի շիշեր միայն կան,– կ'ըսեմ,– շատ ողբերգական, չէ՞:

– Բռնագրաւեր են Գալուստեանին երկու խանութներուն ապրանքները իբր թէ բանակին պետքերուն համար: Կ'ըսեն թէ՛ պիտի գրաւեն նաեւ տուները:

Զգանգատինք, Մելինէ, ինչ որ Պոլսոյ մէջ կը կատարուի, բուն երկրին մէջ կատարուածին հետ համեմատել անգամ չենք կրնար:

Մելինէն անմիջապէս կը դառնայ իր սիրական նիւթին:

– Կը կարծե՞ս, որ ես ու Եղուարդը կրկին հանդիպինք,– կը հարցնէ:

Ամէն խօսակցութիւն այս հարցումով կը վերջանայ:

– Կը կարծե՞ս, որ Արան եւ ես կրկին իրարու կը հանդի-

պինք,– կը հարցնեմ ես ալ իր ձայնը եւ շեշտը կեղծելով:
Եւ իրարու կը նայինք հարցական:

Չառօն տարաւ հիւանդութենէս առաջ ասեղնագործած թաշկինակներս եւ վերադարձաւ պատկառելի գումարով մը: Յանդիմաներ էր խանութպանուհին, եւ ան ինքնաբերաբար, աւելին վճարած եւ մասամբ լրացուցած էր անցեալին մէջ իր պակաս վճարածները:

– Դրամին համար չէ՛, մարդ պէ՛տք է իր իրաւունքը պաշտպանէ: Ահա եւ ինքնահոս գրիչդ,– կ'ըսէ Չառօն սուր նայուածքով մը:

Այդ ուժասպառ վիճակիս մէջ ինձ թոյլ չտուին փոքրիկս իմ կաթովս կերակրելու: Այս առաջին վիշտն էր, որ կը պատճառէի զաւակիս: Ան թէեւ հիւսեղէններ կ'ուտէր, բայց իր սիրական սնունդը մամային կաթը ծծելն էր: Դէմքը երանութեամբ կը փայլէր եւ որկրամոլի մը պէս կը ծծէր՝ կանգ առնելով, ժպտալով, ճռուողելով, զիս զգուելով կրկին ծծել սկսելու համար:

Սրտաճմլիկ կու լար, երբ կը ծարաւնար եւ իր սպասածը չէի տար իրեն: Սկսան իմ սենեակս չբերել զինք, մոռցնելու համար, բայց կեղծ ծծակով իրեն կաթ տալու բոլոր փորձերը անցան ապարդիւն: Ան զգուանքով գլուխը անդին կը դարձներ եւ փիլիսոփայի մը պէս լռութեամբ կ'արտայայտէր իր տխրութիւնը:

Ես ալ տխուր էի: Տղուս եւ իմ առջեւ անմիջական, հիմնական ու անբացատրելի կապը չկար այլեւս: Ես կը դադրէի իմ կեանքիս մասնիկէն, իմ արիւնէս տալէն: Կը դադրէի իրեն համար կենսական եւ անհրաժեշտ մէկը ըլլալէ:

Անկարագրելի է երանութեան այն զգացումը, որ մայր մը կը զգայ իր փոքրիկը իր կաթով սնուցած ժամանակ: Ամենատգետ կինն անգամ երանութեան, գոհունակութեան, ինքնագնահատութեան արտայայտութիւն մը ունի այդ վայրկեաններուն իր փոքրիկին վրայ ծռած ժամանակ: Այդ զգացումը միայն երանութիւն չէ,– հպարտութեան եւ մանաւանդ ստեղծագործութեան խառն զգացում մը կը համակէ հոգիդ:

Տղուս լուռ բողբոջ, իր բացարձակ արհամարհանքը կեղծ

ծծակին դեմ ազդեցին նոյնիսկ ծերունի բժիշկիս եւ Չառոյին վրայ, եւ անոնք թոյլ տուին, որ օրը անգամ մը ե՛ս կերակրեմ գաւակս, այն պայմանաւ որ ուտեմ ինձ տրուածները:

Տղաս վերոյիշեց իր ճիչերը, ժպիտները, իր ուրախութիւնը եւ սերը արտայայտելու իր ձեւերը:

Արդէն ինձ տրուած խնամքները զուր չէին անցած: Ես շուտով ոտքի ելայ՝ առանց սպառելու բժիշկին բերած դեղի բոլոր սրուակները: Ոտքի ելլելու յաջորդ իրիկունը Չառօս եկաւ երեսը կարմիր ու աչքերը փայլուն:

Մելինէն եւ ես իրարու նայեցանք նշանակալից: Կարելորբան մը պատահած ըլլալու էր:

Չառօս հանեց վերարկուն, գլխի քօղը եւ դարձաւ մեզ.

– Աղջիկներ, Վանը ազատած է...

Չարմացած կը նայինք իրեն: Անցուդարձին ծանօթ չէնք եւ մեր գլխին մէջ ծագած հարցերէն ո՞ր մէկը տալ իրեն, չէնք գիտեր: Սուրիկն է որ կը մօտենայ՝ աչքերը խոշոր բացած: «Ազատած» բառը, որ այնքան կը լսէ եւ որուն իմաստը չ'ըմբռնենք, կը վառէ իր երեւակայութիւնը:

– Թագաւո՞ր պիտի տան, մեծ մայրիկ:

– Չէ՛, այդքան չէ, տղաս: Արդէն թագաւոր չէնք ալ ուզեր: Բայց զօրավար կ'ուզենք,– կ'աւելցնէ Չառօն՝ Սուրիկի տխրութիւնը տեսնելով.– Ահա եղածը: Վանայ ժողովուրդը Ապրիլէն ի վեր հայկական թաղամասը իր ձեռքը կը պահէր Արամի հրամանատարութեամբ եւ կտրիճ դեկավարներու շնորհիւ: Անոնք գերադասեր էին դիմադրել մինչեւ վերջին շունչներին քան տեղահանութեան կամ զինաթափութեան պատրուակին տակ շարդուիլ... Անշուշտ չէին կրնար երկար դիմանալ զինուած կանոնաւոր զօրքերու դեմ, եւ շատ մտահոգուած էինք անոնց համար...

– Իսկ ինչպե՞ս ազատեր են,– կ'ըսենք Մելինէն եւ ես միաժամանակ:

– Գիտեք, որ Ռուսաստան պատերազմի մէջ է թուրքերուն դեմ: Կովկասի մէջ հայերը կամաւորական խմբեր կազմեր են մեծ մասամբ հայ զինուորականներու դեկավարութեամբ, որոնք ռուսական բանակի օժանդակութեամբ, նախ Վան, յետոյ Շատախ կը հասնին եւ ահա թուրքերը կը նահանջեն...

Չառոյի ձայնը ուրախութենէն կը դողայ այս վերջին խօսքերը ըսած ատեն: Կը ցնցուի այդ վայրկեանին.– Թուրքի՛ նահանջ հայ հողին վրայէն, թող ըլլայ անոր մէկ փոքրիկ անկիւնէն, թող ըլլայ կարծ ժամանակուան մը համար... Նոր օրերու աւետիս է աս:

– Ուրեմն ժողովուրդը իր տեղը կը մնայ անվտանգ, ապահո՞վ:

– Մանրամասնութիւններ չկան եւ ստացուած լուրը բաւական հին է: Ամէն պարագայի, եթէ նահանջել ալ պետք ըլլայ, ժողովուրդը իր պատիւին, կեանքին եւ իր շարժուն ստացուածքին տերը պիտի ըլլայ ու պիտի նահանջէ, ինչպէս ուրիշ երկիրներու մէջ կը նահանջեն պատերազմի ժամանակ: Այդ պարագային, անգամ մը որ գաղթող ժողովուրդը Կովկաս հասնի, փրկուած է: Կովկասի հայութիւնը բարեկեցիկ է, հիւրընկալ եւ առատածէռն: Չքաւորները պետք եղած օժանդակութիւնը կը ստանան: Վանայ ժողովուրդը եւ շրջակաները ցնծութեան մէջ են: Այդպէս պետք է ըլլանք եւ մենք...

– Արան որքա՞ն պիտի ուրախանայ,– կ'ըսեմ:

– Մե՛նք ալ պետք է ուրախանանք: Անշուշտ, աս չէ մեր ուզածը: Հայութեան կեսը կոտորուեցաւ: Ուրախանալը տարբեր իմաստ ունի հոս: Այս խաւարին մէջ այս կազդուրիչ լուրը կայծ մըն է, աւելի՛ն, ան բոց մըն է, որմէ կրնայ ժողովուրդին ճակատագիրը որոշ չափով լուսաւորուիլ... Բարոյալքուածները կրնան ոգեւորուիլ, կրկին հաւատալ...

Չառօն կը նստի, յոգնած, կարծես կ'ամչնայ այնքան շատ խօսած ըլլալուն համար:

Կը նայիմ իրեն եւ կը յիշեմ Սամաթիացի նպարավաճառին ըսածը՝ «Կին Պատրիարք»: Չառօն աւելի է քան կին պատրիարք: Ան հայութեան զգայաչափն է: Անոր սրտին մէջ կ'արձագանգեն բոլոր յոյզերը, բոլոր յոյսերը, բոլոր հառաչները, բոլոր հաւատքները:

– Պիտի տօնե՛նք այս օրը,– կ'ըսեմ Մելինէին,– մեզ հետ պիտի ընթերես այս գիշեր:

– Ուրախութեամբ կը մնայի, բայց Միս Հելլէն կը սպասէ զիս:

– Չէ՛, ան ալ հոս պիտի գայ մութը կոխելուն պէս,– կ'ըսէ Չառօն.– Գիտեք, որ Հելլէն իբրեւ իր քաղաքը կը նկատէ Վանը:

Առաջ իրեն գացի լուրը տալու: Ուզեց մեզ ընթրիքի հրաւիրել այս առթիւ, բայց Սոնան դեռ չի կրնար դուրս ելլել: Ինք պիտի գայ երեկոն մեզ հետ անցընելու: Երթամ ընթրիք պատրաստեմ:

Չառօն իր ձեռքի ծրարով անցաւ խոհանոց: Մելինեն եւ ես սեղանի պատրաստութեամբ զբաղեցանք:

Սուրիկն անգամ, որ բնաւ չի սիրեր զատուիլ տղուս քովէն, ոգելորուած՝ կ'օգնէ մեզի: Իր գեղեցիկ խոշոր աչքերը կը փայլին եւ բարձր ձայնով կ'երագէ.

– Ես զօրավար պիտի ըլլամ եւ դուն իմ հարսս պիտի ըլլաս,– կ'ըսէ Մելինէին:

Լաւ ճաշակ ունի Սուրիկը, բայց շատ ալ դիւրագագ է, կը վշտանայ, որ իր հարսնցուն կը խնդայ: Ահա պիտի լայ...

– Շատ լաւ,– կ'ըսէ Մելինեն լուրջ ձեւ մը առնելով,– քու հարսդ պիտի ըլլամ:

– Զեզի ոսկի խնձոր մը պիտի տամ, երբ որ գետինը ձգես, հուրի մը պիտի երեւայ եւ քեզի բոլոր ուզածներդ պիտի տայ:

Յեքիաթը եւ իրականութիւնը կը խառնուին փոքրիկ ուղեղին մէջ: Այնքան տխուր կեանք մը ունեցած է, որ այս պատրաստութիւնները, մեծ մօրը ոգելորութիւնը, անոր պատմածները զինք տարած են լսած հեքիաթներուն աշխարհին մէջ: Երբեմն երբեմն կը վագէ տղուս քով, անոր ալ բաներ մը կը պատմէ, գայն ալ ընդհանուր ուրախութեան մասնակից ընելու համար:

Քիչ վերջը եկաւ Միս Յելլեն, ձեռքերը թանկագին ծաղիկներով եւ ուտելիքի կապոցներով լեցուն: Անոր ալ աչքերուն մէջ ուրախ եւ անսովոր փայլ մը կայ:

– Այս օրը քիչ մը իմ օրս է,– կ'ըսէ մեզ համբուրելով.– Աւօն ալ իր բաժինն ունեցաւ այս ապստամբութեան մէջ: Ան ալ մէկն է անոնցմէ, որ աշխատեցաւ, տքնեցաւ եւ իր կեանքը տուաւ ժողովուրդը զինելու, անոր ոգին բարձրացնելու եւ միտքը այս օրուան պատրաստելու համար:

Միս Յելլեն հասնեց սեւ մագերու կեղծամը, իր սեւ վերարկուն եւ երեւցաւ տօնական զարդարանքով: Ան հագեր էր վարդագոյն բարակ մետաքսէ երեկոյեան շքեղ հագուստ մը ու դրեր էր իր թանկագին զարդեղէնները, այնպէս որ իմ համեստ բնակարանիս մէջ հեքիաթի գիրքերէն դուրս ելած դիցուհիի մը կը նմաներ:

Սուրիկը զարմացած կանգ էր առեր ու անյագօրէն կը նայէր Միս Յելլենին: Անոր նայուածքին մէջ ե՛լ զարմանաք կար, ե՛լ տանջանք: Հասկնալու համար ըրած ճիզը, տանջալից արտայայտութիւն մը կու տար իր մանկական դէմքին:

Ա՛ս էր արդեօք թագուհին, որ նշանակուած էր մեծ մօրը ըսած քաղաքին համար եւ որուն առջեւ կը դողար ինք՝ զօրավարը: Եթէ աս էր թագուհին, հապա մեծ մայրը ի՞նչ պիտի ըլլար...

– Պէտք է, որ դո՛ւք ալ հագուիք,– ըսաւ Միս Յելլեն ինձ եւ Մելինէին.– Սոնա՛, պէտք է քեզ զարդարես, գեղեցկացնես... Մեր յարգանքը արտայայտելու ենք այս օրը պատրաստողներուն:

Մելինէին հագցուցի իմ անցեալէս մնացած երեկոյեան հագուստներէս մին, ես ալ անցուցի մէկ ուրիշը: Մեր մագերը որոշ խնամքով յարդարեցինք եւ վերադարձանք ճաշասենեակ: Եթէ նորածեւութեան համար խստապահանջ չըլլայինք, մենք երկուսս ալ լաւ հագուած էինք:

Սուրիկի մտքին մէջ յարուցուած խնդիրը հետզհետէ աւելի անլուծելի կը դառնար: Ի՞նչ կրնար ընել ինքը, խեղճ զօրավարը, այս երեք թեկնածու թագուհիներու հետ: Կար նաեւ թեկնածու առաջինը, մեծ մայրիկը...

Շքեղ էր մեր սեղանը: Միս Յելլեն ծաղիկները ճաշակաւոր կերպով տարածած էր սեղանի սփռոցին վրայ, մէկ մասն ալ ծաղկամանին մէջ դրած: Առաջնակարգ անուշապաճառէ առնուած խմորեղէնները եւ այլ համադամ ուտելիքները, ինչպէս նաեւ Չառոյի պատրաստած խորովածն ու փիլաւը, իսկական տօնի երելոյթ մը կու տային մեր սեղանին:

– Այս կերակուրները ուտելու համար ինձի խոժոռ նայելու պէտք չունիս,– կ'ըսեմ Չառոյին, որ կը խնդայ:

– Աւոյի՛ն յիշատակին,– կ'ըսէ Չառօն՝ գաւաթը բարձրացնելով:

– Արայի յիշա...– կը սկսի Միս Յելլեն, բայց իմ սարսափած նայուածքիս եւ Չառոյի գլխի թեթեւ շարժման առջեւ կը սրբագրէ.– Արայի՛ն կենացը...

– Եղուարդի կենացը,– կ'ըսեմ Մելինէին՝ նայելով ժպտուն:

– Այս կենացներուն մէջ չմոռնանք գլխաւորը,– կ'ըսէ Չառօն,– հայ ժողովուրդին ապագային կենացը: Տոկուն եւ զոհողութեան ընդունակ ժողովուրդին կենացը...

– Հայ ժողովուրդին կենա՛ցը,– կը կրկնենք մենք ալ:
Յանկարծ միտք մը կ'ունենամ:

– Արան ալ շատ աշխատած է Վանայ մէջ,– կ'ըսեմ յուզ-
ւած.– Ան ալ իր տարիներուն լաւագոյնը անցուցած է Վասպու-
րականի մէջ: Աւոյին պէս, այս օրը դարբնողներէն մին եղած է:
Ահա ինչ կ'առաջարկեմ: Տղաս դեռ անուն չունի: Արան եւ ես
շատ մտածեցինք շատ փնտռեցինք, բայց բոլոր անուններն ալ
բաւական սիրուն կամ բովանդակալից չէին: Հիմա գտայ յարմար
անունը: Նոր կեանք մը բնորոշող անունը: Նորվա՛ն:

Կը վերցնեմ փոքրիկս, կը բարձրացնեմ գլխու վեր ու կ'ըսեմ
հանդիսաւոր.–

– Նորվա՛ն, Նորվա՛ն, իմ տղաս...

Յետոյ համբուրել կու տամ բոլորին:

– Համբուրեցէ՛ք Նորվանը:

– Նորվա՛ն, նո՛ր օրերու, երջանիկ օրերու նոր հայը ըլլաս,–
կ'ըսէ Չառօն՝ տղաս համբուրելով յուզուած.– Հայրդ դարբնեց,
դուն քեզ պէս նորերը վայելէք:

– Նորվանը գինուոր կ'ընեմ,– կ'ըսէ Սուրիկ գիջում ընելու ձե-
ւով, ու յետոյ դառնալով Միս Յելլէնին, որուն դեռ պաշտօն չէ
տուած, կ'ըսէ.– Զեզ Հայաստանի սիւն պիտի ընեմ:

Կը բացատրենք Միս Յելլէնին այս պաշտօնին իմաստը: Ան
բարձր կը խնդայ:

– Աւօն սեմ եղաւ, ես սիւն ըլլամ,– կ'ըսէ Սուրիկին.– աւելի
համեստ պաշտօն մը տո՛ւր ինձի:

Սուրիկ, որ բոլորովին հակառակ իմաստով կը բացատրէ
այս առարկութիւնը, կը տատանի ու վերջապէս կ'ըսէ.

– Լա՛ւ, քեզ թագուհիին աղջիկը կ'ընեմ, թագուհին ա՛ս է:

Ու մեծ մայրիկը ցոյց կու տայ: Աս պաշտօնը ան երբե՛ք ուրի-
շին գիջելու ձեւ չունի:

Սեղանին շուրջ հաւաքուած կիներս, որոնցմէ ամէն մէկը իր
կրծող վիշտն ունի պահած, այդ իրիկուն հովերու թելերով
եկած կազդուրիչ լուրով մը կ'աշխատինք հովացնել մեր
խանձուած սրտերը:

– Հիմա՛, Սուրի՛կ, գնա՛ պառկէ,– կ'ըսէ Չառօն,– մեծ տղայ
ես, լուացուէ ու պառկէ: Պետք է քնանաս, որ մեծնաս եւ զօրա-
վար ըլլաս:

Սուրիկ մեզի կը նայի շփոթած: Կարծես ներողութիւն կը
խնդրէ, որ ինք, զօրավար, դեռ հրամաններու տակ է եւ ստիպ-
ուած է թողուլ... արքունական սեղանը: Բայց հրամայողը մեծ
մայրիկն է, ճար չկայ, պետք է հնազանդի:

– Գիշե՛ր բարի, մեծ մայրիկ:

– Հապա այս տիկիներուն գիշեր բարի չե՛ս ըսեր:

– Գիշեր բարի այս տիկիներուն,– կը կրկնէ Սուրիկ չարած-
ծի ժպտալով:

Սուրիկին դուրս ելլելէն վերջ, Չառօն մեզ կը դառնայ.

– Հիմա քիչ մը խօսինք մեր ընելիքի մասին: Սոնային խոս-
տացած էի, որ ինձ պիտի օգնէ փոքրիկները փախցնելու գոր-
ծին: Իր այս վիճակին մէջ անհնար է այդ, իսկ աւելի երկարա-
ձգել չենք կրնար: Փոքրիկները կը սկսին մոռնալ իրենց անցեա-
լը, իրենց լեզուն: Դուն Սոնա, արդէն քու բաժինդ բերիր այս
գործին, փոքրիկ Ալիսը գտնելով:

– Ե՛ս փոքրիկ Ալիսը գտայ...

– Հապա, քու տեսած աղջնակը, Արիֆէն, մեր այնքա՛ն
փնտռած Ալիսն է, տղքթ. Ատիլեանի աղջիկը: Մակեդոնացիներու
միջոցաւ սպասուհիին քիչ մը դրամ տալով, խօսեցայ փոք-
րիկին հետ: Ան կը յիշէ իր եւ ծնողացը անունը, կը խօսի հայե-
րէն ու շուէտերէն: Գիտեք, որ մայրը շուէտացի է: Ալիսը փախց-
նելու միակ միջոցը սպասուհիին կաշառելն է, ուրիշ ձեւ անհնար
է: Յելլէն լայն բացաւ քսակը Ալիսին համար,– կ'ըսէ Չառօն
ամերիկուհիին դառնալով ժպտուն:

– Ալիսին եւ Ազնիւին համար յարկաբաժնիս ամէնէն մեծ եւ
օղաւետ սենեակը պատրաստել տուի,– կ'ըսէ Միս Յելլէն: –
Դուրս պիտի չելլեն, բայց օդէ զրկուած պիտի չըլլան: Անոնց
խնամքը մեր սիրուն օրիորդը պիտի ստանձնէ,– կ'աւելցնէ
Միս Յելլէն՝ Մելիսէն ցոյց տալով:

– Սքանչելի՛ միտք,– վարժուհի մը եւ մայր մը պիտի ըլլամ
իրենց համար:

– Հայկօն արդէն շաբաթ մըն է ազատուած է եւ կը գտնուի
ծովեզերեայ գիւղ մը: Այսքան քիչ ժամանակուան մէջ իսկ բա-
ւական կազդուրուեցաւ: Արտակարգ կամքի ուժի տեր տղայ
մըն է այս փոքրիկը: Գիտեք, որ մեռցնելու չափ կը ծեծէին, բայց
միշտ կը պնդէր, որ իր անունը Հայկօ է, որ ինք թուրք չէ, հայ է:

Հիմա գիտեք խնամող կնկան հետ շատ կապուած է, բայց ոչ մայրիկ կ'ըսէ, ոչ մօրաքոյր: «Ես մայրիկ ունիմ, մօրաքոյր ալ ունիմ», կ'ըսէ «դուն տիկին ես»: Ուսուցչի մը տղան ըլլալու է: Երբ հարցուցի՝ «հայրիկդ ի՞նչ կ'ընէր», «դպրոց կ'երթար»,— ըսաւ, բայց չկրցաւ ըսել, թէ ինչո՞ւ դպրոց կ'երթար: Բարեբախտաբար, ծնողացը անունները կը յիշէ: Ըսի, որ բոլոր ըսածները գրեն: Օր մը, ո՞վ գիտէ, թերեւս իր ընտանիքէն մէկն ու մէկը գտնենք: Ամենէն դժուարը Ազնիւին գործն է: Ծաբաթ մըն է ներկայացման մը նման փորձեր կը կատարենք...

— Այո՛— բան մը գիտեմ,— կ'ըսէ Միս Դելլէն ժպտալով,— փորձերէն վերջ ներկայացման օրը պիտի ըլլար երէկ. կառքովս երկար սպասեցի, մէկը չեկաւ կառքս նստելու:

— Փոքրիկը դուրս չհանեցին երէկ: Զեզի լուր դրկեցի, որ չսպասես: Վաղը ամէն բան սկիզբէն պիտի սկսինք:

Ազնիւը փախցնելու համար կատարեալ բեմադրութիւն մը հնարուած էր, քանի մը դերակատարներով, որոնցմէ մին ես պիտի ըլլայի, եթէ հիւանդացած չըլլայի:

Չառօն եւ Մարիամ, անձնուէր կին մը նմանապէս, պիտի հետեւէին Ազնիւին եւ անոր ընկերացող սպասուհիին: Երբ այս վերջինը խանութ մը մտներ գնումի, Մարիամ ինքն ալ անոր ետեւէն պիտի երթար ու պիտի աշխատէր իր գնումի պայուսակին մէջ գտնուած սուր իրոյ մը սպասուհիին հագուստը պատռել՝ անոր շատ քովէն անցնելով, կռիւի մը առիթ տալու համար:

Իրիկունները գնում ընողները շատ են խանութներու մէջ, շատ մօտէն անցնիլը դժուար պիտի չըլլար: Եթէ չյաջողէր պատռել, հրելով, առաջ անցնիլ ուզելով կռիւ պիտի ստեղծէր սպասուհիին հետ, այս միջոցին, Չառօն պիտի մօտենար Ազնիւին ու «ինձ հետ եկուր» պիտի ըսէր: Աղջնակը պիտի չդժուարանար հետեւելու Չառօնին, քանի որ անոր «մեծ մայրիկ, ա՛լ տուն երթանք», կ'ըսէր ամէն անգամ զայն տեսնելուն:

Մայրերուն վրայ գտնուող խիտ բազմութեան մէջէն Չառօնին համար դիւրին պիտի ըլլար անյայտանալը ու Միս Դելլէնին կառքին մօտենալը, որ Չառօնին եւ Մարիամին հետեւելէ, անոնց խանութին մէջ մտնելը տեսնելէ վերջ, հարիւր քայլ մը անդին կանգ առած՝ պիտի սպասէր:

Չառօնին եւ աղջնակին կառք նստելուն պէս, Միս Դելլէն պիտի քշէր, նախ կամաց, կասկածի տեղի չտալու համար, յետոյ մեծ արագութեամբ: Կառքին մէջ նստած պիտի ըլլար վայելչօրէն հագուած տիկին մը, զոր Չառօն պիտի նշանակէր: Կառքին մէջ Չառօն փոքրիկին հագուստները պիտի հանէր, ուրիշ հագուստներ պիտի հագցներ եւ մագերը ծածկող գլխարկ մը պիտի դնէր, յետոյ հանած հագուստները պիտի ծրարէր ու քանի մը փողոց անդին վար պիտի իջնար ծրարը հետը:

Միս Դելլէն, կառքով երկար շրջան մը ընելէ յետոյ, կանգ պիտի առնէր իր տան առջեւ, պիտի իջնէր եւ ինքնաշարժին դռնակը բանալով պիտի օգնէր վայելչօրէն հագուած տիկնոջ, որ վար իջնէ փոքրիկին հետ:

Հաւանաբար իր ընկերուհիներէն մին, որ Միս Դելլէնի հետ պտոյտ մը ընելէ վերջ, վեր կ'ելլէ գաւաթ մը թէյ խմելու իր փոքրիկին հետ: Ոչ ոքի մտքէն պիտի անցնէր, որ այդ հոյակապ տան բնակիչիչներէն մին, Միս Դ. Ռիչարտսըն, փոքրիկի մը առեւանգման գործով զբաղած էր:

Նոյն օրը փոքրիկը Ալիս-Արիֆէին սպասուհին ալ պիտի բերէր եւ որոշեալ ժամերուն, խոշոր գումարի մը փոխարէն աղջնակը պիտի յանձնէր Սիրարփիին:

— Իմ գործս ի՞նչ պիտի ըլլար,— կը հարցնէմ:

— Եթէ տեսնէիր, որ սպասուհին աւելի շուտ նկատեց փոքրիկին անյայտանալը քան իմ կառքի մէջ նստիլս եւ աղմուկ հանել սկսաւ, պիտի մօտենայիր սպասուհիին եւ պիտի ըսէր թէ՛ տեսար մարդ մը, որ այդպէս հագուած (պիտի նկարագրէիր Ազնիւի հագածը) աղջկան մը ձեռքէն բռնած, ա՛ն կողմը գնաց եւ իմ գացածիս հակառակ ուղղութիւնը ցոյց պիտի տայիր... Այդ վայրկեաններուն ամենուն ըսածին կը հաւատան:

— Հիմա ո՞վ պիտի ընէ այս գործը,— կը հարցնէմ:

— Ուրիշ լաւ աղջիկ մը: Գործել ուզող կի՞ն պակաս է մեր մէջ, ի՞նչ է... Մեր ղեկավար տղամարդիկը տարին, մնացած մէկ երկուքը ստիպուած են պահուիլ ստոյգ մահէ ազատելու եւ գործը բոլորովին անտէր չթողելու համար: Հիմա կանայք հնարաւորութիւն ունին բան մը ընելու, պէտք է, որ ընեն,— կ'ըսէ Չառօն գուսպ, բայց կանացի բանակներ շարժման մէջ դնելու կարող ձայնով մը:

– Շուտով թուրքի մը հարեմը գտնուող երիտասարդ հայուհի մը եւս պիտի առեւանգենք: Կիրասնցի է: Ինքն է, որ ձեւ մը գտած է մեզի լուր տալու եւ խնդրելու, որ օգնենք իր փախուստին: Մինչեւ հիմա չէին ձգեր, որ դուրս ելլէ, բայց իր վարած կեանքով վստահութիւն ներշնչեր է եւ վերջերս թուրքը թոյլ կու տայ, որ աղախնի ընկերակցութեամբ պտոյտի ելլէ:

– Գիտե՞ք ուր պիտի պահեմ այս երիտասարդ կինը,– կ'աւելցնէ Չառօն:

– Ո՞ւր,– կը հարցնենք բոլորս միասին:

– Սամաթիա, ձկնորս թորոսին քով: Օր մը, որեւէ ձեւով իր աղախնին ձեռքէն ազատելէ վերջ, հայուհին պիտի գայ տունս: Երեկոյեան պիտի իջնենք Ղալաթիա, ձուկերու շուկան: Ձուկ գնելու պատրուակով պիտի ըսեմ թորոսին, որ վարը ծովափ զինք կը սպասենք մութը կոխելուն պէս: Խօսած եմ արդէն իրեն հետ. իր նաւակով աղջիկը ուղղակի իր տունը պիտի տանի: Սամաթիան հիմա ամենաապահով տեղն է: Թուրքերը տարին ինչ որ կենսունակ տարր կար, հիմա ա՛լ այդ թաղով զբաղող չկայ:

– Ես ինչո՞ւ չեմ երթար մօրս քով, եթէ այնքան ապահով է մեր գիւղը,– կ'ըսէ Մելինէն:

– Զու պարագադ տարբեր է, Գալուստեանը նոյնիսկ ձերբակալուած՝ վատութեան նոր նոպայ մը կրնայ ունենալ ու քեզ վնասել: Նշանածդ չմեկնած՝ մասնաւոր կերպով խնդրեց ինձմէ, որ քեզ գիւղ չդրկեմ: Յետոյ, դուն հոս գործ ունիս հիմա, երկու փոքրիկները քու խնամքիդ պիտի յանձնուին:

– Միշտ հիացած եմ հայու անձնագրի հոգիին վրայ, բայց չեմ հասկնար, թէ ինչպէ՞ս մէկը չ'ելլեր, տղամարդ կամ կին մը, այս հրէշային քարդերը կազմակերպող Թալէաթին եւ իր նմաններուն պէտք եղած դասը տալու... Հարիւր հազարաւորներ ինկան այդ մարդկանց պատճառաւ,– կ'ըսէ Միս Յելլէն Չառոյին:

– Կան այդպիսիները: Հազիւ կը գսպենք: Այդ տեսակ քայլ մը հիմա կրնայ Պոլսոյ ժողովուրդն ալ վտանգել: Օր մը, բնակասօրէն վրիժառու ձեռքեր պիտի բարձրանան: Սիրելիներու կսկիծէն՝ կեանքին համը կորսնցուցած մէկը, կամ զուտ հայրենիքին վրէժը լուծել ուզող մը արժանի դասը պիտի տայ անոնց:

Այնպէս ալ եղաւ: Չինադադարին, հայ ուսանող մը, կեանքը

վտանգելով, Պերլինի փողոցներուն մէջ, օրը ցերեկով սպաննեց Թալէաթը: Գերմանական դատարանը զինք անպարտ արձակեց, որովհետեւ փաստերով ցոյց տրուեցաւ, որ երիտասարդին ամբողջ ընտանիքը կոտորուած էր Թալէաթի մարդկանց կողմէ:

– Այս գիշեր բոլորս ալ շատախօս եղանք,– ըսաւ Չառօն յոգնած ժպիտով.– Խրախուսիչ լուրը, այս տօնական սեղանը մեզ քիչ մը իրականութենէն դուրս տարին: Հիմա, Հելլէն, եւ դուն, Մելինէ, պէտք է մեկնիք: Հելլէն, վաղը որոշեալ ժամուն կառքովդ կը սպասես նոյն տեղը:

Միս Հելլէն դրաւ կեղծամը, հագաւ սեւ վերարկուն եւ Մելինէին հետ, որ նմանապէս սեւ վերարկու մը անցուցած էր, ելաւ դուրս:

Տօնը վերջացած էր...

Յետելեալ առաւօտ Չառօ կանուխ ելաւ տունէն: Պետք էր իր տունը գտնուէր շատ կարելոր գործի մը համար:

– Դաւանաբար այս երեկոյ հոս չգամ: Եթէ ձեռնարկներս յաջողին, կ'ուզեմ Ազնիւին քովը մնալ: Դելլէնին եւ Մելինէին վարժեցնելու համար: Դոգ տար Սուրիկին:

Ամբողջ օրը անհանգիստ վիճակ մը ունէի: Պիտի յաջողի՞ն: Յաջողեցա՞ն:

Սուրը կոխեց, Չառօն չկար: Յաջողած ըլլալու են: Իսկ եթէ ձերբակալուա՞ծ ըլլալուն համար չեկաւ:

Պետք չէր Չառօն ինքզինքը վտանգէր առեւանգման գործերուն ալ մասնակցելով: Ծիշո՞ւ է, որ Ազնիւ պիտի մերժէր ուրիշին հետեւիլ, ճիշո՞ւ է նաեւ, որ Չառոյին համար ամէն կեանք թանկագին էր:

Վերջապէս, գիշերը ուշ ատեն դուռս զարկին: Սիրարփին էր:

– Ինչպէ՞ս անցաւ,– կը հարցնեմ անհամբեր:

– Դրաշալի՞... Ալիսը Միս Դելլէնին տունը տարի, այսպէս մուրացիկի մը պէս հագուած: Դոն էր արդէն Ազնիւը, որ շուարած՝ մեր հարցումներուն չէր պատասխանէր: Լոտց ու մեզի նայեցաւ մինչեւ Չառոյին գալը: Չե՞ս կրնար երեւակայել ի՞նչ քննող նայուածք մը ունի այդ տարիքին: Չառօն տեսնալուն պէս, վազեց ու «մեծ մայրիկ» ըսելով փաթթուեցաւ:

– «Մամաս ո՞ր է, մեծ մայրիկ»,– հարցուց անմիջապէս:

– «Դեռ չեկաւ, պէտք է համբերես, ան շատ հեռու է: Ահա քեզի մօրաքոյր մը,– ըսաւ Չառօն, ահա նաեւ փոքրիկ քոյրիկ մը, Ալիսը: Պաչեցէ՛ք իրար տեսնամ»:

Փոքրիկները տատանելէ, իրարու քննական նայելէ վերջ, ժպտացին եւ իրար համբուրեցին: Յետոյ բոլորս միասին սեղան նստանք ընթրիքի: Երկու փոքրիկները քով քովի: Ազնիւ շուտ շուտ կը ծռէր եւ Չառոյին կը նայէր չարածճի ժպիտով,

կարծես ըսել կ'ուզէր. «Խաղը լաւ խաղացինք»: Ընթրիքի ընթացքին յանկարծ Ալիս, Միս Դելլէնը ցոյց տալով ըսաւ.

– «Իմ մամաս ասանկ է»:

Ըսել կ'ուզէր, թէ մայրիկը այսպէս շէկ է, թէ մօրը պատկերը արդէն աղօտած ըլլալուն շփոթութիւն մը կար իր մանուկ ուղեղին մէջ: Չհարցուցինք՝ չխորացնելու համար խնդիրը: Ընթրիքէն անմիջապէս վերջը, Ալիս գնաց ու Միս Դելլէնին փաթթուեցաւ գուրգուրանքով, բայց «մամա» չըսաւ: Միս Դելլէն սաստիկ յուզուած էր: Իր ջիղերուն տէրը եղող այդ կինը, հազիւ իր լացը կը զսպէր:

Սիրարփին ինքն ալ յուզուած էր պատմած ժամանակը:

– Իսկ Ալիսը դիւրութեա՞մբ եկաւ քեզի հետ:

– Շատ դիւրութեամբ: Մեղմ աղջնակ մըն է: Ես բաւական դողալով սպասեցի թուրք սպասուհիին եւ Ալիսին գալուն: Նշանակուած ժամը անցեր էր, մարդ չկար: Արդեօք թակա՞րդն ինկայ, կը մտածէի: Տրուելիք գումարը մեծ էր, բայց սպասուհին կրնար մատնել: Մակեդոնացիները ըսած էին, որ սպասուհին դժգոհ է իր հանրմէն եւ մտադիր էր իր գիւղը վերադառնալու մեր դրամը ստանալուն պէս, բայց ո՞վ գիտէ, կրնային սխալած ըլլալ: Վերջապէս եկան: Կառապան Միսակը քայլ մը անդին կը սպասէր: Մինչեւ փոքրիկին հետ կառքի չնստայ, դրամը չտուի: Միսակ թոցուց մեզ քամիի պէս: Կառքին մէջ հին հագուստներ հագցուցի Ալիսին ու իջանք խուլ փողոց մը: Զալելով եկանք Միս Դելլէնի տունը: Դոն ամէն յարկաբաժնի դուռը զարկի մուրալով, մինչեւ որ հասայ Միս Դելլէնի յարկաբաժինը: Եթէ ուղղակի Միս Դելլէնին երթայի, կրնային կասկածիլ: Այս առաւօտ երկու մանչուկներ ալ պիտի փախցնէին Իւսկիւտարի շրջանէն եւ տղաքը պիտի տանէին Սամաթիա:

Ուրախ է Սիրարփի իր յաջողած գործին համար, բայց այդ ուրախութիւնը չի յաջողիր անոր դէմքին տալու առաջուան թարմ, աշխոյժ արտայայտութիւնը: Յոգնած են դիմագծերը: Երկու ամիս է միայն չեմ տեսած զինք, բայց դէմքը փոխուած է ամիսները կրկնակի տարիներ հաշուելով:

– Լեւոնէն ի՞նչ լուր,– կ'ըսեմ մեղմ ձայնով:

– Մնաս բարեա՛ւ, յաւիտեա՛ն մնաս բարեաւ եւ հիմա լուրթիւն:

Կը քաջալերեմ զինք: Արան բնաւ յուսահատած չէ, կ'ըսեմ

իրեն: Ընդհակառակը, կը կարծե, որ պիտի յաջողին փախչիլ: (Ես է որ կը հնարեմ այս, բայց այնքա՞ն մտածած եմ այս ուղղութեամբ, որ չեմ զգար թէ յաւելումը ես կ'ընեմ), անշուշտ մի-նակը պիտի չփախչի, միւսներն ալ հետը պիտի տանի:

Կ'առաջարկեմ Սիրարփիին ինձ հետ գալ Կովկաս ու հոն սպասել նշանածին վերադարձին, որ կրնայ Էրզրումի, Կարսի ճամբով հոն գալ:

Սիրարփի հետզհետէ կը գունատի: Կ'ուզէ բան մը ըսել, բայց ձեռքի շարժում մը կ'ընէ «լռենք» ըսելու ձեւով մը ու կը հարցնէ.

– Տղադ ինչպէ՞ս է:

– Տղաս հիմա Նորվան է, մեծ մարդ է եւ մեծ անուն ունի:

Չէ՛, Սիրարփիին, այդ շատ խնդացող Սիրարփիին երեսը ժպիտ բերելը դժուար է այլեւս...

– Իսկ միւս կիները ի՞նչ նամակներ ստացան իրենց ամուսիններէն:

– Նամակ չէ՛, սիրելիս, կտակներ ստացան,– կ'ըսէ Սիրարփի ջղայնացած.– Մէկը, որուն կինը զաւակ կը սպասէ, գրեր էր թէ ինչ անուն դնէ, եթէ մանչ ծնի, ինչպէս կրթէ: Գրեր էր, թէ իրեն համար վերադարձ չկայ: Միւսը թէ՛ «երիտասարդ կին ես, հաւանաբար ամուսնանաս, բայց զաւակներս թող չմոռնան իրենց հօր անունը եւ»...

Սիրարփի կը լռէ: Յայտնի է, որ կը զոջայ ըսածներուն համար: Վախով կը նայի երեսս, պոռթկում մը կամ յուսահատ ճիչեր սպասելով:

Կը բռնուիմ սեղանին, որը կարծեմ ինձ հետ կ'օրօրուի:

– Կը սխալին անոնք, դո՛ւն ալ կը սխալիս: Անկարելի՛ է, կը հասկնա՞ս, անկարելի՛ այդ... քու կարծածդ:

Կը դողամ, բայց ձայնս հաստատ է, երբ, ոչ թէ կը խօսիմ, այլ կը պոռամ Սիրարփիին:

– Ան-կա-րե-լի՛ է,– կը կրկնեմ հաւատացեալի մը ջերմեռանդութեամբ:

– Հաւատա՛, Սիրարփի,– կ'աւելցնեմ շատ ցած ձայնով,– ինձ պէս հաւատա՛: Սպաննուող մարդիկ չեն անոնք: Գիտեմ, չէ՞, գերմարդկային էակներ են: Ո՞ր ձեռքը կրնայ համարձակիլ վնասելու համար բարձրանալ անոնց վրայ: Ըսէ՛, կարելի՞ է այդպիսի բան...

Իմ խօսքերս կ'ազդեն Սիրարփիին, եւ ան պիտի կը գրկէ զիս: – Սոնա, սիրելիս, հաւատք քո կեցուցին քեզ: Դուն իրաւունք ունիս: Հաւատա՛, յուսա՛, հրա՛շք սպասել:

– Ե՞րբ պիտի մեկնիս,– կ'ըսէ խօսքը փոխելու համար:

– Անցագիր չունիմ,– կ'ըսեմ.– Ամուսնանալով կորսնցուցի ընտանիքիս անցագրի իրաւունքը, իսկ Արա երբեք չխօսեցաւ ինձ այդ մասին: Չառօն պիտի սորվեցնէ, թէ ինչ ձեւով կրնամ անցագիր ստանալ:

– Ես ալ գիտեմ: Աս տեսա՞ր,– Սիրարփի դրամ հաշուելու ձեւ կ'ընէ.– Դեսպանատուն մը կայ ու հոն պաշտօնեայ մը, որ իր խոշորակազմ տետրակին մէջ անունդ կը գտնէ, անմիջապէս որ դեղին ոսկիները շարեւ սեղանին վրայ... Բայց Չառօնին թողունք քեզ դաստիարակելը այս գործին մէջ ալ:

– Գիտե՞ս,– երեկ ա՛լ աւելի հիացայ Չառօնին վրայ,– կ'ըսէ Սիրարփի յափշտակուած.– Երեք տեղ, երեք փոքրիկներուն ազատումը ղեկավարեց, իրիկունը երեսը նայէիր, կ'ըսէիր բան չէ ըրեր: Երեկ, ո՛վ գիտէ, դեռ ինչե՛ր ըրաւ: Ի՞նչ ուժի տեր կին է:

– Հին օրերէն մնացած ոգի մըն է,– կ'ըսեմ ես.– Շատ անգամ կը զարմանամ, որ կ'ուտէ, կը քնանայ: Աննիւթեղէն էակ մը ըլլալու էր, ժամանակաւոր կերպով երկիր իջած՝ իր ժողովուրդին ազատագրման օգնելու համար:

– Մարիամն ալ, ան, որ թուրք սպասուհիին հետ կռիւի առիթ պիտի ստեղծէր, շատ լաւ կատարեր է իրեն ինկած դերը: Ընտրիքով ծակ է բացեր սպասուհիին «Ֆերածէ»-ին վրայ: Երբ սպասուհին սկսեր է պոռալ, թէ «պիտի վճարես, այլապէս աչքերդ կը հանեմ», «չէ՛», ըսեր է Մարիամը,– «բազմութիւնը շատ էր, զիս հրեցին, ես ի՞նչ յանցանք ունիմ»: Վերջապէս, մսավաճառը ինք մօտեցեր է, «հանըմ» ըսեր է սպասուհիին,– «Ֆերածէդ հին է, դպին պիտի պատռի, թող աս կինը երկու մեծիտիէ տայ, խնդիրը վերջանայ»: «Հինգ փարա չեմ տար, ես աղքատ կին եմ, երկու մեծիտիէն ո՛ւր կը գտնեմ»,– պնդեր է Մարիամ: Կռիւը այնքան երկար տեւեր է, որ մէկ աղջիկ չէ, տասը հատը կարելի պիտի ըլլար փախցնել: Երբ Մարիամ համոզուեր է, որ փոքրիկը հեռացուած է, մեծիտ մը տուեր եւ անվրդով դուրս է ելեր խանութէն: Դրամը ստանալէն վերջ միայն սպասուհին նկատեր է, որ աղջնակը չկայ: Սկսեր է պոռալ, կանչել, թէ «հա-

նըմիս ի՞նչ պատասխան պիտի տամ»:

«Կեաւուրին լակոտին համար սիրտդ մի՛ հատցնէր, — ըսեր է ուրիշ թրքուհի մը: Թող հանըմիդ պէյը ուրիշ մը բերէ: Փառք Ալ-լահին եւ թուրքին սուրին, այս ապրանքէն շատ կայ Անատոլուի մէջ»:

* * *

Գաղտնի ոստիկանին անյայտնալու՞ն համար էր թէ տունս եկող գացողներուն համար, տանտիրուհիներուս դէպի ինձ տարած քաղաքականութեան մէջ փոփոխութիւն մը կատարուեցաւ: Նախ ժպիտ մը երեւաց իրենց դէմքերուն վրայ, յետոյ ալ իրենք երեւցան տանս մէջ: Տղաս եւ ես յանկարծ իրենց մտահոգութիւններուն եւ գուրգուրանքին առարկան դարձանք:

Ուրախ էին, որ սկսեր էի ուտել, որ ա՛լ մինակ չէի:

— Օրերով, շաբաթներով կերակուր չէփեցիք, — կ'ըսեն ինձ, — հոգի չէր մնացեր վրանիդ:

Այս կիները բաց գրքի մը պէս կը կարդան բոլոր գոց դռները:

Զալիոբի, տանտիրուհիիս աղջիկը, սկսաւ նորէն վեր գալ, դրացի յոյն կինը լրտեսելու եւ վերջին նորութիւնները ինձ հաղորդելու համար:

— Թուրք սպան ա՛լ չի գար Էլիսային: Հաւանաբար զօրաբաժինը տեղափոխեցին ուրիշ տեղ: Հիմա դեղին մագերով օտարական մը կու գայ: Շատ հարուստ մէկը կ'երեւայ: Ձեռքերը միշտ լեցուն են եկած ժամանակը: Բախտաւոր կին է այս Էլիսան: Դեռ չեմ գիտեր թէ՛ ո՞վ է այս նոր սիրականը, բայց շուտով Էլիսայի լուացարարուհին լուացքի պիտի կանչեմ ու պիտի խօսեցնեմ: Ձեզի ալ կ'ըսեմ իմացածս:

Հիմա, որ ա՛լ պիտի մեկնիմ եւ հաւանաբար անդարձ, այս աղջիկը ազատօրէն սիրտը կը բանայ ինձ: Երեսուն տարեկանը անցած է եւ ա՛լ ամուսնանալու մեծ յոյս չունի: Արեւելքի մէջ այդ տարիքին շատոնց ամուսնացած կ'ըլլան կիները,

— Շատ լաւ կ'ընէ Էլիսան, — կ'ըսէ ոգեւորութեամբ. — Ինչի՞ ծառայեց իմ պարկէշտութիւնս, իմ պատուասիրութիւնս: Ով որ դուռս զարկաւ զիս ամուսնութեան ուզելու համար, «Որքա՞ն դրամ պիտի բերէ հետը», հարցուց: Մէկը չհետաքրքրուեցաւ այս տաք սրտով. — ուժով կը զարնէ սրտին: Մէկը չհասկցաւ, որ

ես սիրելի կ'ուզեմ, սիրուիլ կ'ուզեմ. — ձայնը tremolo ունի: Չոր ու ցամաք կեանք մը կ'ապրիմ: Ոչ ամուսին, ոչ ալ սիրական, — իսկ Էլիսան ե՛ւ մէկը ունի ե՛ւ միւսը: Շատ լաւ կ'ընէ. այս անսիրտ աշխարհին մէջ այդպէս պետք է ապրիլ: Երբ որ մայրիկս ա՛լ պիտի չըլլայ, ես գիտեմ ընելիքս...

Ձայնը վճռական է եւ աչքերը փայլուն: Օդէ զրկուած ապրողի իր գունատ դէմքը կարմրած է: Այազայ ծրագիրները, զորս պիտի իրագործէ մօրը մահուընէ վերջ, հիմակուընէ կ'ալեկոծեն իր ամբողջ էութիւնը:

— Դուք ալ, — կ'ըսէ հրամայողական, — ամուսնացեք կամ մէկը գտեք: Կեա՛նք է ձերինս ալ, այսպէս միս մինակ...

Չեմ պատասխաներ իսկ: Լաւ կ'ըլլայ, որ մայրը դարմանէ իր լեարդի հիւանդութիւնը, եթէ կ'ուզէ, որ իր աղջիկը գոնէ արտաքինապէս առաքինի մնայ որոշ ժամանակ մը եւս, որովհետեւ միտքը, ճեպընթացային արագութեամբ դէպի անկում կը սուրայ:

Դուռը զարնուելուն պէս Զալիոբի կը փախի: Չ'ուզեր Չառոյին հանդիպիլ, անոր դէմքին խիստ, բայց այնքան վճիտ արտայայտութիւնը վախ կ'ազդէ իրեն:

Մօրը մտահոգութիւնը կարասիներս են: Խեղճ, բայց վերջապէս կարասի:

— Պիտի ծախէ՞ք ձեր կարասիները, — կը հարցնէ ինձ:

Ծախել բառն անգամ կ'աստղնտտէ սիրտս: Իմ սիրելի կարասիներս: Ի՞նչ պիտի ընեմ իրապէս:

— Ո՛չ, — կ'ըսեմ կտրուկ, — պիտի չծախեմ:

Հանգստանալու հառաչ մը կ'արձակէ: Կ'ենթադրէ թերեւս, որ իրենց պիտի թողում ունեցածս:

— Շատ լաւ կ'ընէք: Զանի՞ փարա կու տան, եթէ ծախեք: Ծախելը եւ գնելը տարբեր գործողութիւններ են:

Խելացի գիտ մը:

Այս կնկան շնորհիւ կարասիներես բաժնուելու վիշտս աւելի սաստկացաւ: Այս քանի մը անշուք իրերը քով-քովի գալով բոյնս կազմեր էին: Որքա՞ն օտար պիտի զգայի ինձ նոյնիսկ ամենաշքեղ կարասիներու մէջ: Ո՛ւր պիտի գտնէի խօսող, ինձ հետ խօսող կարասիներ:

Կարասիներս Չառոյին պիտի տամ: Միայն անոր տան մէջ անոնք պիտի շարունակեն խօսիլ...

Յոյն հիւպատոսարանը, ուրկէ շեղեալ ճանապարհներով անցագիր մը պիտի ստանայի, կը գտնուէր Պոլսոյ թրքական թաղամասերուն մօտիկ, որոնք առանձնայատուկ են թէ՛ իրենց արտաքինով եւ թէ՛ իրենց ներքին կեանքով: Ընքերն իսկ տարբեր են:

Պատուհանները ծածկուած են շատ փոքրիկ, քառակուսի բացուածքներ ունեցող փայտէ փեղկերով, որոնց մէջէն թրքուհին կրնայ, առանց տեսնուելու, դիտել անցնող դարձողները: Ըստ անգամ, սակայն, դիտմամբ կոտորուած ճեղք մը կը բացուի եւ կը բոցոտ բոցավառ նայուածք մը կ'երեւայ ակնթարթ մը միայն, եթէ փողոցէն անցնողը գեղեցիկ տղամարդ մըն է:

Հիմա նոր ռեժիմով շատ փոփոխութիւններ եղած են թրքուհիներու դաստիարակութեան, հետեւաբար եւ բարքերուն մէջ: Սակայն, երկար տարիներ պէտք են, որպէսզի թրքուհին ըլլայ հասարակութեան մէկ կարեւոր անդամը, իր ձգտումներով, իր ներքին արժէքով եւ իր գործունեութեամբ: Մատի վրայ համրուող քանի մը մտաւորական կիներ չեն կրնար տակաւին թուրք կիներու խոշոր գանգուածին ներկայացուցիչները համարուիլ:

Իմ մատնանշած շրջանիս թրքուհին ազատագրելու շարժումները գոյութիւն չունէին: Ան կ'ապրէր միմիայն իր անձնական հաճոյքին համար, չունէր մինչեւ անգամ բառին իսկական առումով ընտանեկան հոգեր կամ կապեր, միշտ հիւր էր իր ամուսնուն տունը, ուրկէ բառով մը միայն կրնար դուրս հանուիլ: Եթէ հարուստի կին էր, կ'ապրէր այլ շէնքի մը մէջ. իսկ եթէ ամուսնոյն նիւթական վիճակը թոյլ չէր տար այդ, նոյն տան մէջ առանձին բաժանմունք մը կար, որուն «հարեմլիք» անունը կու տային: Հոն կ'ապրէր ամուսնացած կինը. կիները պէտք էր ըսէի, որովհետեւ նոյնիսկ միջակ դասակարգի պատկանող այր մը, յաճախ մէկէ աւելի կիներ կ'ունենար:

Կը ճանչնամ թուրքեր, որոնք իրենց պաշտօնի բերումով ճամբորդելու ստիպուած՝ զանազան քաղաքներու մէջ պաշտօնական կիներ կ'ունենային ու խօսակցութեան ընթացքին շատ բնական կերպով կ'ըսէին՝ «Իզմիրի կինս», «Տրապիզոնի» կամ «Պոլսոյ կինս»:

Թրքուհին արգիւում էր տղամարդու հետ տեսնուիլ, խօսիլ: Ան, ամուսինը անգամ շատ քիչ կը տեսնէր, երբեմն, անգամ մը տեսնուելէ եւ սերը վայելելէ վերջ, ալ երբե՛ք չէր հանդիպէր, քանի որ իր ամուսինը իր ունեցած բազմաթիւ կիներուն մէջէն, իր նախընտրածները կ'ունենար եւ մնացեալները կը մոռնար:

Հարեմի կանայք, ապրելով շքեղ ապարանքներու կամ տուներու մէջ, իրենց ժամանակը կ'անցընէին կերուխումով, մեղկ երաժշտութիւն լսելով եւ գրգռիչ պարեր դիտելով, զրկուած ամենայնտիւն տղամարդու ներկայութենէն իսկ, քանի որ շրջապատուած էին ներքինիներով կամ աղախիներով: Այս անբնական պայմանները հիւանդագին վիճակ մը ստեղծէր էին, որ շատ անգամ կ'արտայայտուէր շատ տարօրինակ եւ նոյնքան անձնական ձեւերով:

Երբ Սուլթանին հարեմը կամ իշխանագուններու բազմաթիւ կիները պտոյտի կ'ելլէին ապակիները վար առնուած կառքերով, ասոնք հակառակ իսլամական օրէնքին, իրենց երեսները ծածկած չէին ըլլար, որովհետեւ իրենց կառքին, իրենց տանը մէջ կը գտնուէին, իսկ փողոցներուն վրայ գտնուող մարդկանց խստիւ արգիւում էր նայիլ այդ կանանց: Բաց կառքերու քովերէն կ'երթային բազմաթիւ ձիաւոր պահակներ՝ սուրերը ձեռքերին ու անդադար աչ ու ձախ նայելով: Անոնք տեղն ու տեղը կը պատժէին այն մարդը, որ յանդակութիւն ունեցած էր նայելու կառքերու մէջ գտնուող կանանց:

Մենք՝ հայ կիներս ազատօրէն կրնայինք նայիլ, հիանալ... եւ զարմանալ միանգամայն՝ դիտելով այս կիները, որոնք, իրենց ապրած կեանքին շնորհիւ, շեղեր էին բնութենէն իրենց սահմանուած առաքելութենէն:

Գեղեցիկ, չքնաղ էին հարեմի կիները ու աննկարագրելի ճոխութեամբ պճնուած: Ոմանք իրենց առատ մազերը քանի մը հիւսկէներով կամ բոլորովին արձակ տարած էին իրենց ուսե-

րուն վրայ, մինչ ադամանդակուռ պսակի մը մէջէն, խօլ խոպոպներ կ'իյնային գեղեցիկ ճակատներու վրայ: Իրենց արծա-
նավայել վիզերը, թելերը ծածկուած էին անգին, հագուագիւտ
գոհարներով ու զարդերով, այնպէս որ, անոնց անցնելէն վերջ,
լոյսի հետք մը կը մնար ճամբուն վրայ ու մեր աչքերուն մէջ:

Ամենէն տարօրինակը, անպատմելին, այդ կանանց նայ-
ուածքներն էին, երբ անոնք իրենց գլուխները կառքէն դուրս կը
հանէին եւ անյագօրէն կը նայէին դէպի եռուզեռ կեանքը, որ
գոյութիւն ուներ իրենցմէ դուրս: Ես երբե՛ք, ոչ մէկ տեղ, այդպի-
սի կանացի նայուածքներ չեմ տեսած: Անոնք այլեւս նայուածք
չէին, այլ տեսակ մը ներքին բռնկման դրսեւորում, զսպուած
ապրումներու պոռթկում, խելագար խոյանք մը, մանաւանդ
երբ այդ նայուածքները կանգ կ'առնէին անցնող տղամարդ-
կանց վրայ:

Թերեւս անապատի մէջ ծարաւէն տապկուող ճամբորդը
կ'ունենայ այդ նայուածքը, քրքչալով հոսող վտակի մը առջեւ,
որմէ չի կրնար խմել ինք...

– Այն թաղերը, ուրկէ ես կ'անցնէի, չկային փարթամ ապա-
րանքներ: Միջին դասակարգի պատկանող թուրքեր կ'ապրէին
հոն նոյն կեանքը, բայց անելի փոքրիկ սահմաններու մէջ: Հոն
կային յատուկ շուկաներ: Խմորեղէնի, չոր ու թարմ պտուղնե-
րու, արեւելեան գունազեղ կօշիկներու ու գորգերու խանութ-
ներ, քով քովի, իրար սեղմուած, ոտքի վրայ քնացողի երեւոյթ
ունէին, ճիշդ իրենց տերերուն պէս, որ կիսախուփ աչքերով,
ձեռքերնին համրիչ մը դանդաղօրէն շարժելով յաճախորդի կը
սպասէին: Կեանքի անիւը այդ թաղերուն մէջ աննկատելի կեր-
պով կը դառնար:

Ամէն քայլափոխի կը հանդիպէիր շուներու խմբերու: Շուներ-
ը առատ էին նաեւ քաղաքի միւս մասերուն մէջ (կ'ըսեն թէ այլ
եւս չկան), բայց այս թաղերուն մէջ անոնք թիւ ու համար այլեւս
չունէին:

Ահա շուն մը բազմաթիւ ծագերով, քիչ մը հեռուն՝ ուրիշներ,
եւ այսպէս անվերջ: Թուրքերը մասնաւոր ինքնաբեր կը տանէին
դէպի շուները՝ անոնց հաց, միս, կաթ եւ այլն բերելով:

Այս գուրգուրանքը դէպի շուները դառնութեամբ կը լեցներ
հոգիս: Կ'ուզէի կանգ առնել եւ ըսել ինքնամոռ թուրքերուն:

– Դուք, որ այսպէս հոգալ գիտէք մայր շուները, ըսէ՛ք, ի՞նչ
ըրիք մարդկային էակ մայրերու հետ: Ինչպէ՛ս քայքայեցիք
անոնց բոյները, խլեցիք ծագերը ու սպաննեցիք հայրերը:

Հաւանաբար, երբ եւրոպացիներ կամ ամերիկացիներ Պոլիս
կու գան եւ կը տեսնեն այդ գուրգուրանքը դէպի շուները, կը
մտածեն. «Ի՞նչ քնքուշ ժողովուրդ է աս, որ այսպէս ինքնամեղ գի-
տէ կենդանիներն անգամ»: Անոնց մտքէն թերեւս չ'անցնիր, որ
շունին ծագը ինքնամոռը, անդին, կրնայ ժպտալով, ուրախ կան-
չերով անմեղ մանուկներ խողխողել ծնողացը աչքին առջեւ
նախ քան այս վերջինները սպաննելը, միայն չարչարելու հա-
մար:

Շուներուն տրուած ինքնաբեր բարեսրտութեան հետ կապ չու-
նի բնաւ: Նախապաշարեալ թուրքին համար շունը օրհնեալ
կենդանի մըն է եւ անոր հոգալը չարը խափանող:

– Հանը՛մ, պզտի՛կ հանը՛մ,– քաղցր փաքլաւա՛ մը, որ բերնիդ
մէջ հալի, կը պոռայ ինձ խմորեղէն ծախող մը:

– Շերպէ՛թ, պա՛ղ պա՛ղ շերպէթ, սրտին կրակը մարող շեր-
պէթ,– կ'ըսէ դրացիին կանչէն կէս արթնցած՝ խմիչքներ ծախ-
ող:

– Տասը՛ փարա, տասը՛ փարա հանը՛մ,– կ'ըսէ հաշմանդամ
մուրացկան մը,– Ալլահի սիրոյն տասը՛ փարա:

Կը լսեմ նաեւ անվայել բացազանչութիւններ, որոնք որեւէ
կապ չունին ծախուած ապրանքներուն հետ:

Վերջապէս, կը մտնեմ հիւպատոսարան:

Ընդարձակ շէնք մըն է ան, անհամար սենեակներով: Մէկ
գրասենեակէն միւսը կը դրկեն գիս, մինչեւ որ կը կանգնիմ խո-
շոր տետրակի մ'առջեւ նստած մարդու մը դէմ:

– Ի՞նչ կ'ուզես,– կ'ըսէ մարդը, առանց ինձի նայելու յոգնու-
թիւնը կրելու:

– Անցագիր մը: Պիտի հեռանամ Պոլսէն:

– Է՛, աղէ՛կ: Անունդ գրուա՞ծ է հոս,– կը հարցնէ մարդը՝ այս
անգամ մէկ աչքը վրաս յառելով:

– Այո՛,– կը պատասխանեմ՝ Չառոյին տուած դասը յիշելով:

– Անունդ ի՞նչ է:

Կ'ըսեմ անունս, մականունս, եւ մարդը կը սկսի փնտռել խո-
շոր տետրակին մէջ ու կանգ կ'առնէ:

– Անունդ չկայ հոս, կ'ըսէ կտրուկ:

Ա՛, դասս լաւ չեմ տորված ու դրամը ժամանակին չեմ տուած: Կամացուկ մը 5 տաճկական ոսկի կը դնեմ սեղանին վրայ, մեծ տետրակին քով: Պաշտօնեան կը վերսկսի տետրակը թղթատել:

– Գտա՛յ,– կ'ըսէ,– անունդ ի՞նչ էր...

Հագիւ կը բռնեմ խնդուքս ու կը կրկնեմ անունս, որը իբր թէ գտած էր, եւ կը տեսնեմ, որ կը նշանակուիմ տետրակին մէջ: Յետոյ թուղթ մը կու տայ՝ ըսելով.

– Վաղը եկո՛ւր անցագիրդ առ՝ այս թուղթը ցոյց տալով:

Այստեղ անունը չեմ ըսեր այն երկրին, որուն կը պատկանէր այդ հիւպատոսարանը: Այդ արեւելեան պետութիւնը շատ բարեացակամ եղաւ դէպի մեր ժողովուրդը՝ դիւրացնելով փախուստը, այսինքն՝ ստոյգ մահէ ազատելով մեծ թուով մարդիկ:

Չորս անգամ երթալ գալէ վերջ, ստացայ անցագիրը:

Այդ դեսպանատան մէջ ես հանդիպեցայ շատ մը ինձ ծանօթ եւ վիճակակից կանանց, որոնք նմանապէս կ'անցնէին մէկ գրասեակէն միւսը, նո՛յն ձեւերով, նո՛յն նպատակներուն հասնելու համար: Մենք խոհեմութեան համար կ'անցնէինք իրարու քովէն առանց խօսելու, առանց նոյնիսկ բարեւելու, բայց մեր փոխանակած նայուածքը շան բան կ'ըսէր:

Վաւերական անցագիրը գրպանս էր, ես աւելի թերթեւ քալեցի թրքական հողին վրայէն: Սիրով անցայ փողոցի շներուն քովէն, ներողամտութեամբ նայեցայ թրքուհիներուն վաւաշոտ աչքերուն եւ համբերութեամբ լսեցի ինձ ուղղուած անբարոյ խօսքերը վաճառորդներու կողմէ:

Այդ բոլորը քիչ ժամանակուայ համար էին: Ես պատկառելի մէկն էի, օտարահպատակ եւ կանոնաւոր անցագրի տէր: Կը մնար ինձ թուրքիայէն մեկնելու թոյլտուութիւն ստանալ նախ թաղային ոստիկանատունէն եւ յետոյ միայն կեդրոնական իշխանութենէն:

Կը տեսնէի, որ ոստիկանատուն երթալս շատ կը մտահոգէր Ձառօն: Բայց ուրիշ ճար չկար, պէտք է փորձէի:

– Հանդարտ եղիր եւ վախճալու ձեւ մի առներ: Կրնամ հետդ մէկը դրկել, բայց ատոով ցոյց տուած կ'ըլլանք, որ օտարահպատակութեան ուժին վրայ մեծ վստահութիւն չունինք: Չնա՛, եթէ

նեղեն քեզ եւ ուշանաս, ինքս անձամբ կու գամ: Մի՛ վախճար, Ռամազանի ժամանակ, թուրք պաշտօնեան վտանգաւոր չէ՛ գերեկը: Գիշերները հոգին կ'ելլէ քէֆ ընելէ...

Ես կրցածիս չափ տգեղցուցի ինքզինքս: Հիմա այդ բանը այնքան ալ դժուար չէր: Ես այնքա՛ն գունատ էի ու մաշած:

Ոստիկանատունը միայնակ համեստ շէնք մըն էր, քիչ մը առանձնացած միւս շէնքերէն: Մտայ, ըստ երեւոյթին, անխռով:

Մենեկապանը, որ կը նիրհէր գլուխը ուսին, աչքերը բացաւ կէս մը ու անխօս՝ դուռ մը ցուցուց ինձ ցուցամատով: Բացի ու ներս մտայ:

Գրասեղանին առջեւ նստած էր մէկը, որ դրան ձայնը առնելուն պէս շտկուեցաւ քունէն ընդոստ արթնցողի մը պէս: Չիս տեսնելուն պէս եռանդով գրել սկսաւ, կարծես ինծի կը սպասէր աշխատելու համար:

Քիչ մը սպասելէ վերջ, առանց հրաւեր ստացած ըլլալու, նստեցայ աթոռի մը վրայ ճիշդ դիմացը:

Ոչ մէկ ուշադրութիւն:

Սկսայ քննել զինք: Չար մարդու մը չէր նմաներ: Յոգնած երեւոյթ եւ ուռած կոպեր ուներ, մէկու մը պէս, որ քիչ քնացած է, բայց շատ խմած:

Դուռը բացուեցաւ ու ներս մտաւ բարձրահասակ ու գեղեցկադեմ մէկը, որ բարեկիրթ մարդու մը շարժումներ ուներ ու դէմքին արտայայտութիւնը դաժան ըլլալէ հեռու էր: Տաճկական ձեւով բարեւելէ վերջ, մօտեցաւ գրասեղանին:

– Չարմանալի մարդ էք, պէ՛յ էֆէնտի, ամբողջ գիշեր անքուն մնալէ վերջ, այսպէս նորէն գործի վրայ... Գիշերը ինչպէ՛ս անցուցիք Իպրահիմ պէյին տունը: Կերած խմածդ քեզի, տեսածներդ պատմէ ինծի:

– Ա՛լ մի հարցներ, պէյիմ, ընտիր օդի, ընտիր աղանդերներ ու պէս պէս ուտելիքներ: «Քէօչէք» մը ո՞ր... Կանանց փորերը՝ բացուած վարդերու պէս հա՛ վեր, հա՛ վար: Ի՛նչ հասակներ, ի՛նչ աչքեր... Իրենք կը մարմրին՝ քեզ կը խենթացնեն: Չերկարեմ: Արթնցայ, որ գլուխս ճերմակ ու կլոր փորի մը վրայ է բարձի տեղ: Ա՛լ հալ չկայ վրաս...

– Ես ըսես նէ,– կը սկսի ներս մտնողը, բայց իմ կողմս կը նայի, կը տատանի:

Յայտնի է, որ անպատշաճ կը նկատէ իմ ներկայութեամբ պատմելու իր անցուցած գիշերը:

– Ի՞նչ կ'ուզէ այս երիտասարդ հանըմը,– կը հարցնէ զիս ցոյց տալով:

– Դեռ չհարցուցի ուզածը: – Է՛հ, ի՞նչ կ'ուզէք տեսնեմ, պզտիկ հանըմ:

– Եկայ անցագրիս թաղային վիզան առնելու, կը պատասխանեմ:

– Չարմանալի է, կ'ըսէ նոր եկողը.– Չէ՛ք հաւնիր մեր սքանչելի Պոլիսը, Մարմարայի մարգագետինը:

– Ան չէ, պէյ էֆէնտի, այս հանըմին ամուսինը օդափոխութեան դրկեցինք, կը նեղանայ միակը: Բայց ատոր ճարը կար,– կ'ըսէ ոստիկանապետը ինձ դառնալով, հոս մարդ չի պակսիր սիրուն կնոջ մը համար: Ուրիշ տեղ ասկէ լաւը չէք գտներ:

Չեռքիս անցագիրը կը դնեմ սեղանին վրայ: Օտարահպատակ ըլլալս կ'ազդէ, բայց ուշադրութեամբ կը նայի եւ գլուխը կարծես տարակուսանքով աջ ու ձախ կը տանի:

Կը սկսիմ դողալ: Հասկցա՞ւ արդեօք. «անվաւեր» է պիտի ըսէ:

Նոր եկողը նորէն կ'օգնէ ինձ.

– Թո՛ղ տուր երթայ,– կ'ըսէ: Յանցաւորը այս ջահիլ կիներ չէ, այլ ամուսինը: Հայրենիք կ'ուզեն, անկախութիւն կ'ուզեն եւ իրենց գլուխը փորձանքի մէջ կը դնեն: Բայց այս կիներ ի՞նչ ընէ: Կնիքդ զարկ՝ վերջանայ...

– Ինչո՞ւ կ'ուզես Պուլկարիա երթալ,– կը հարցնէ ոստիկանապետը:

– Հոն ծնողներ ունիմ, անոնց քով պիտի երթամ: Հոս միակ եմ:

– Ծիշդ է,– կ'ըսէ ոստիկանապետը,– այս կիներ միակ մնալէն ի վեր որեւէ կասկածելի արարքի մէջ չգտնուեցաւ: Արդէն օտար անցագիր ալ ունի, ինձի չ'իյնար որ... Չորս հատ լուսանկար պետք է,– կ'ըսէ ինձ դառնալով:

Երբ լուսանկարները կու տամ, ոստիկանապետը զանգը կը շարժէ ու ներս մտնող պաշտօնեային կ'ըսէ.

– Ահմէ՛տ, լաւ նայէ՛, այս լուսանկարները նմա՞ն են այս հանըմին:

Պաշտօնեան խաղը կը հասկնայ: Պէտք է պետը զուարճացնել: Ան կը մօտենայ ինձի եւ չափազանցուած լրջութեամբ կը քննէ, իբր թէ մսացու կենդանի մը ըլլայի..

– Ինձ կը թուի, որ հանըմը ատելի նիհար է: Միայն նայելով դժուար է հասկնալ, պետք է շօշափել:

Ան ըսելով պաշտօնեան ձեռքերը երկարած ատելի կը մօտենայ ինձ: Բարկութենէս դողալով ոտքի կ'ելլամ: Հոգս չէ վտանգը, հոգս չէ մահն ալ:

– Եթէ իրաւունք չունիմ հեռանալու, ըսէ՛ք, կ'երթամ կը յայտնեմ դեսպանատունս եւ անոնք կը զբաղին այս գործով:

Կարծեմ պետք եղածը ըսեր էի: Ոստիկանապետը շփոթութիւնը ծածկելու համար կը խնդայ:

– Չըսինք, որ իրաւունք չունիք հեռանալու: Բայց կարգ մը ձեւականութիւններ կան, որ պետք է կատարուին: Մէկը պետք է հաստատէ, որ այս լուսանկարները ձեզ կը նմանին: Ասոնք պիտի մնան մեր քով:

– Նմա՞ն է, նմա՞ն է,– Ե՛ս կը հաստատեմ, կ'ըսէ նորեկը՝ նշանացի հասկցնելով թէ «բաւական է այսքանը»:

– Կը տեսնեմ, պէ՛յ, որ այս հանըմը ձեր սրտին մէջ պառկեցաւ: Լա՛ւ, ձեր խաթեր համար վիզան կու տամ: Բայց լաւ կ'ըլլայ հանըմ, որ մարդ մը ճարելու մասին մտածեք,– որովհետեւ եթէ սպասեք որ...

Դուրս կ'ելլեմ առանց շարունակութիւնը լսելու: Հագուստներս կը թօթուեմ ուժգին, այդ սենեակէն վրաս մնացած ամենափոքր փոշին իսկ նետելու համար:

– Եթէ սկսիլ հարկ ըլլար, պիտի նախընտրէի որջ այրիլ քան վերադառնալ: Դուրսէն եկած թուրք մը օգնեց, այլապէս ինձ վիզա տուող չկար այսօր,– կ'ըսեմ Չառոյին:

Կեդրոնական վարչութենէն շատ դիրութեամբ ստացայ արտօնութիւնը: Երեք պաշտօնեաներ մեքենայաբար կնիք կը զարնէին եւ դարձեալ սպասողներուն երկար շարքը կ'աւելնար վայրկեանէ վայրկեան: Պոլսէն կը հեռանային ամէն ազգի մարդիկ: Թուրքիան վտանգաւոր էր յաղթական եղած ժամանակ, բայց կրնար ատելի վտանգաւոր դառնալ պարտութեան օրերուն:

Չառօն չի կրնար իր փոքրիկ սենեակին մէջ պահել կարասիներս, բայց պիտի տեղաւորե տեղ մը, ուր անոնք շատ որբ պիտի չըլլան: Կը խնդրեմ իրմէ առնել Արայի կաղամարը, գրասեղանի այլ պիտոյքներ, ծաղկամանը եւ կերակուրի սան մը, որուն մէջ եփեցի մեր առաջին կերակուրը, որ միեւնոյն ժամանակ իմ եփած առաջին կերակուրս էր:

Երբ փափաք կը յայտնեմ մնաս բարով ըսելու ինձ բախտակից կիներուն, Չառօն կը կտրէ խօսքս:

– Անոնք բոլորը հոն պիտի տեսնես: Ամէնքն ալ պիտի հեռանան այս կամ այն ձեւով, մանաւանդ զաւակ ունեցողները: Կորսնցնելու ժամանակ չկայ, կ'ըսեն, թէ կառավարութիւնը նկատած է, որ մեծ թուով հայեր կը հեռանան, եւ մտադիր է արգիլել անոնց փախուստը:

Չառօնին ըսածը կատարուեցաւ: Զանի մը օր վերջ հայերուն բացարձակապէս արգիլուեցաւ Պոլսէն հեռանալ:

– Հապա Աշոտը, որ ինձ հրահանգներ պիտի տար արտասահմանի ընկերներուն համար:

– Վերջերս մեկնողներու հետ պէտք եղածը ըրաւ ան: Աշոտը կ'ուզէ միայն, որ այստեղ գրուածը միտքդ պահես.– ու Չառօ քիմիական ֆորմիլ մը տուաւ, որ հիմա մոռցած եմ,– գաղտնի նամակները բանալու նոր ձեւ մըն է: Նախկինը պիտի չգործածուի այլեւս: Չըլլայ, որ տեղ մը գրես: Միտքդ պահէ:

Իրիկունն իսկ ճամբայ պիտի ելլէի: Գացի Չուիցերիացի բժշկին եւ իր կնոջ մնաս բարով ըսելու: Ուրախ էին, որ կը հեռանայի: Տիկինը իր քրոջ հասցէն տուաւ, ուր կրնայի երկար մնալ հանգստանալու համար, անզաւակ էին եւ շատ ուրախ պիտի ըլլային մեզ իրենց հետ ունենալով:

Միս Հելլենը եւ Մելինէն գտայ երկու աղջնակներով զբաղած: Ալիսը իմ գտած աղջնակս էր, սիրուն, շնորհալի, բայց Ազնիւը բացառիկ գեղեցկութեան տեր փոքրիկ մըն էր, խելացի, խոհուն աչքերով: Իրեն ըսուածներուն կը պատասխանէր մտածելէ եւ դիմացինին միտքը լաւ մը ըմբռնելէ վերջ: Թերեւս թրքուիիին տունը, բնագոյաբար ըմբռնէր էր, որ դեր մը կը կատարէ եւ որ ամէն մտքէն անցածը պէտք չէ ըսեր: Իրենց ձեռքե-

րուն մէջ գտնուած գեղեցիկ պուպրիկները, ասդին անդին գտնուող ուրիշ խաղալիքներ ցոյց կու տային, որ այս փոքրիկներն ալ դուրս էին ելեր կրակէ շրջանակէն:

– Գիւղի մը մէջ առանձնացած վիլլա մը կը փնտռեմ,– ըսաւ Միս Հելլէն: Հոս վերջերս շատ եկող գացող եղաւ, պէտք է տեղս փոխեմ: Թրքական շէք մը, բարձր ցանկապատերով, ուր բոլորովին ազատ ըլլանք, մինչեւ որ կարենանք հեռանալ:

– Յտեսութիւն Հայաստանի մէջ,– ըսի երկու կանանց հաւատացեալի ձայնով:

– Այո՛, Հայաստանի մէջ,– կրկնեցին անոնք ալ ջերմեռանդութեամբ:

Ծանր եղաւ մեր բաժանումը Չառօնին հետ: Սուրիկը կու լար, ինքն ալ յոգնած՝ ալ ուժ չունէր իր յուզումը ծածկելու: Կայարան եկաւ հակառակ ամէն զգուշութեան:

– Չըլլայ, որ գնացքէն վար իջնես, աղջիկս,– կրկնեց ան՝ տասներորդ անգամ ըլլալով:

Իմացուած էր, որ մայր մը եւ իր երիտասարդ աղջիկը, որ Պոլսէն ճամբայ ելած էին Ռումանիա երթալու համար, երբեք տեղ չէին հասած: Տեղ չէին հասած նաեւ երկու քոյրեր, որոնք իրենց ծնողացը քով կ'երթային:

Չառօն զիս տեղաւորեց բաժանմունք մը, ուր արդէն երեք հոգի կային ու կրկնեց վար իջած ժամանակ.

– Որքան ատեն որ գնացքին մէջն ես, որեւէ վտանգ չի սպառնար ձեզի: Զեզ տեսնեմ, քաջ աղջիկս, Նորվանը քեզ յենարան, դու անոր նեցուկ: Լուր տուր ինձ անմիջապէս Հելլենին միջոցաւ: Ֆրանսերէն գրէ:

Կառաշարը կը շարժուի՝ Չառօն եւ Սուրիկը մեզմէ անելի եւ անելի հեռու թողելով: Նորվան, ձեռքերը երկարած, ճիգ կ'ընէ թելերէս ազատուելու եւ Սուրիկին հասնելու: Հետզհետէ ամպերու մէջէն կ'երեւին երկուքն ալ: Շատ հեռու չեն տակաւին, բայց խոնաւցած աչքերս չեն թողուր, որ լաւ տեսնեմ:

Սիրելի՛, սիրելի՛ Չառօ մայրիկ, ալ երբե՛ք չտեսայ քեզ: Երբ քու ուզած օրերդ եկան, երբ հայ զինուորներ ռազմական եր-

գեր երգելով անցան Հայաստանի լեռներու կամ դաշտերու մեջէն, երբ գիւղացին իր ցանած ու հնձած ցորենի հասկերը կապեց իր սերը եւ ազատութիւնը երգելով, դո՛ւն, ուրախ օրերու մէջ ապրելու անվարժ, վերջին հանգստարանդ իջար հայրենի հողին մէջ:

Քու ուզածդ աս էր արդէն:

Շոգեկառքը հետզհետէ արագացաւ եւ իր սովորական աղմուկով ամէն վայրկեան աւելի եւ աւելի հեռացուց մեզ այն երկրէն, ուր չէի գիտեր, թէ սիրելի՞ մը կը թողէի... թէ սիրելիի ցաքուցրիւ ոսկորներ, օտար դաշտերու կամ ձորերու մէջ:

Այն փոքր լոյսը, որ երեւակայութեամբս դրեր էի հեռուն եւ որուն հասնելու համար ճամբայ ելած էի, հիմա, բոյնես հեռու, այս անծանօթ ուղիներու վրայ, ինձ կ'երեւէր մարմրուն ու այնքա՛ն աղօտ: Կիսատ ըսուած խօսքեր, փոխանակուած նայուածքներ, ընկերուհիներու ստացած կտակ-նամակները, նաեւ Արայի նամակն ու Չառոյի յուզումը, որոնց վրայէն սիրոյս մեծութեամբ եւ Արային գերբնական մարդ մը ըլլալուն հաւատքով անցած ըլլալ կը կարծէի, մտքիս մէջ, յանկարծ, միաժամանակ կ'արթննային ահաւոր նշանակութիւն մը ստանալով:

Ես շատ յստակ կերպով կը զգայի, որ այդ վերքերը ես առաջ ալ ունէի, որ ամէն մէկ խօսք, լուր կամ ակնարկ իր հետքը, իր վերքը դրած ու ցնցած էր զիս, որ ես մագնիսացած՝ արգիլած էի ինձ խոստովանիլ, որ վերքերը կային ու կը կսկծային...

Կ'արթննայի մագնիսացած քունէն նոր կեանքիս ցնցումներուն առջեւ: Ես պատրաստ էի իջնելու, վերադառնալու կրակին՝ այրուելու համար ամբողջովի՛ն, մինչեւ վերջին հիւլէս, քան կիսավառ՝ շարունակել ճամբայ մը:

Առաջին անգամ ըլլալով ամիսներէ ի վեր, լացի, երեխաս գիրկս ու իմ անկիւնս կծկուած: Լացի թոյլ, անպաշտպան անյոյս որբի մը պէս:

Ո՞րբ, ես ո՞րբ, իսկ տղա՞ս, կրկնակի՞ որբ, ուրեմն:

– Դուն տղուդ յենարան, տղադ քեզ նեցուկ,– ըսաւ քիչ առաջ Չառօն, որ, թափանցող, գիտէր անշուշտ, թէ ի՛նչ պիտի զգայի ես, մինակ մնալուս պէս մութին մէջ սկսող կեանքի մը սեմին:

Կը ծռիմ տղուս ամբողջ հոգիս դրած աչքերուս մէջ: Տղաս չի խնդար, չի ճռուողեր, յօնքերը իրարու մօտ բերած կ'ուզէ հասկնալ թէ ինչո՞ւ մաման այսպէս եղաւ: Յայտնի է թէ կը զգայ, որ կու լամ ու ինքզինք անզօր կը զգայ:

– Ինձ համար թափած վերջին արցունքներս են,– կ'ըսեմ բալիկիս, ա՛յ քեզ համար միա՛յն ժպիտ, միա՛յն սեր ու գուրգուրանք:

– Ացի՛կ... ացի՛կ,– կ'ըսէ տղաս քաջալերուած:

– Ահա՛ հացիկ, ահա՛ եւ իմ կաթս քեզ: Մայրիկդ ամբողջ քեզ, իմ տղաս...

Բալիկս ինձ ալ կ'երկարէ իր հացիկը: «Կեր մամա», ըսել կ'ուզէ, «Ի՛նչ պիտի ըլլամ ես, առանց քեզ»:

– Նորվա՛ն, պաչիկ ըրէ՛ մամադ:

Աղմուկով եւ կաչուն համբոյր մը այտիս վրան, ուրիշ մըն ալ, հատ մըն ալ: Ես ալ կրծքիս կը սեղմեմ տղաս ու կը համբուրեմ:

Դաշինքը կնքուած է:

Քնացքի մեր բաժանմունքին մէջ կան մարդ մը եւ կին մը: Նոր ամուսնացած են հաւանաբար: Յունարէն կը խօսին, բայց խօսելէն աւելի իրարու կը նային: Չյագեցող կարօտ մը կայ աչքերնուն մէջ: Պինդ սեղմուած են իրարու, թէւ իրենց կողմի նստարանը ամբողջովին պարապ է:

Իրենց դիմացը եւ իմ նստարանիս վրայ նստած է պառաւ կին մը, ինքն իր մէջ ծալուած թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ հոգեպէս:

Չի նայիր իր շուրջը, այլ միայն ինքն իր մէջ:

Շոգեկառքը լեցուն է թուրք սպաներով: Պատերազմի ժամանակ է եւ տեղափոխուողները շատ են:

Գիշերը յառաջացաւ: Նորահարսը դրաւ իր գլուխը ամուսնոյն ուսին ու քնացաւ քունին մէջն ալ ժպտալով: Նոյնը ըրաւ ամուսինն ալ՝ գլուխը պատուհանին քովը ամրացուած բարձիկին վրայ դնելով:

Քիչ վերջը լսուեցաւ պառաւ կնոջ խոկալու ձայնը:

Տղուս համար հանգիստ տեղ մը պատրաստած եմ քովս, եւ ան կը քնանայ գնացքին աղմուկէն օրօրուելով:

Սպաները կ'անցնին նրբանցքին մէջէն: Անոնք բան մը փնտռելու ձեւ ունին.– ուշադրութեամբ կը նային բաժանմունքներու մէջ: Կրկին ու կրկին կ'անցնին: Չեմ գիտեր՝ ինչո՞ւ անոնք անօթի կը նմանին, կարծես յափշտակելու, յօշոտելու բան մը կը փնտռեն:

Աչքերս կը փակեմ, բայց կը շարունակեմ լսել անցուդարձը: Ահա սպայ մը, կամացուկ կը բանայ դուռը ու կը նստի դիմացի պարապ անկիւնը:

– Քիչ մը դուրս չէ՞ք ելլեր օդ առնելու,– կ'ըսէ սպան շշուկով: Կը շարունակեմ քնանալ կեղծել:

– Հանը՛մ, քիչ մը դուրս ելէք, ձեզի ըսելիք ունիմ,– կ'ըսէ սպան աւելի բարձր ձայնով:– Շատ կարելոր ըսելիք մը:

Ձայնին մէջ անհամբերութիւն կայ, անոր ձայնը ունի նաեւ ծարաւ մարդու մը շեշտը:

Երիտասարդ կնկան ամուսինը, որ լսած է այս խօսքերը, աչքեր կը բանայ, կը հազար իր ներկայութիւնը ցոյց տալու համար եւ կ'ըսէ սպային:

– Ի՛նչ ճնշիչ օդ է պէ՛յ, մարդ չի կրնար քնանալ, սիկարէթ մը կ'ուզէ՞ք:

Տուփը կ'երկնցնէ սպային, կը ծխեն, կը խօսին ու սպան կ'ելլէ: Սակայն, աչքիս արանքէն կը տեսնեմ, որ ան միջանցքին մէջ մեր դրան առաջ կանգնած է ու դուրս կը նայի:

Մեր շոգեկառքը կանգ կ'առնէ զանազան կայարաններ՝ զինուոր փոխադրող պատերազմական գնացքներուն ճամբայ տալու համար, այնպէս, որ մենք Էտիրնէի կայարանը կը հասնինք ոչ թէ հետեւեալ առաւօտ, այլ միայն յաջորդ օրուան լուսաբացին:

– Էտիրնէ՛, Էտիրնէ՛... Պոլսէն եկողները եւ արտասահման գացողները պէտք է գնացք փոխեն,– կը պոռան պաշտօնեաները տաճկերէն:

Երիտասարդ ամուսինները եւ պառաւ կինը իրենց իրերը կը պատրաստեն իջնելու համար: Ես Չառոյին պատուերը կը յիշեմ եւ չեմ ուզեր իջնել:

– Պէտք է իջնէք ու յաջորդ գնացքը առնէ՞ք,– կ'ըսէ ամուսինը, եկէք մեզի հետ: Այս գնացքը չէ՛ որ պիտի շարունակէ ճամբան:

Կ'երեւի ե՛ւ սպան, որ ամբողջ ճամբու ընթացքին իր ներկայութիւնը զգացնել տուաւ որեւէ ձեւով:

– Բոլոր ճամբորդները վար,– կ'ըսէ ինձ նայելով,– կարծես ե՛ս ըլլայի «բոլոր ճամբորդները»:

Պառաւ կինը իջած էր արդէն, ես ալ տղաս գրկած ու միւս ձեռքովս իրերս բռնած կը հետեւիմ յոյն ամուսիններուն, կ'իջ-

նեմ ու ճիշդ անոնց քովը կը կենամ՝ միւս կառաշարին սպասելու համար: Սպան կ'անցնի ու հեզնական կը նայի ինձ: Ես անվրդով եմ: Էտիրնէ հասանք, երեք կայարան վերջ պուլկարական սահմանն է: Ի՞նչ կրնայ ընել:

Ահա մեր կառաշարը եկաւ եւ մեր առջեւի գծին վրայ կանգ առաւ աղմուկով: Բոլորս կը վազենք նստելու համար: Ես կը հետեւիմ նորապսակներուն:

– Զիչ մը սպասեցէ՛ք,– կ'ըսէ ոստիկան մը ինձ մօտենալով,– ձեր իրերը պիտի խուզարկենք:

– Պոլիս քննեցին,– կ'ըսեմ յուզումէս դողալով:

– Երկու ժամ հոս կեցաք, այդ ժամանակուան մէջ կրնայիք քսան անգամ վտանգաւոր իրեր դնել ձեր իրերուն մէջ,– կ'ըսէ ոստիկանը շատ համոզուած ձեւով մը:

Հեռուէն սպան մեզի կը նայի ուշադրութեամբ: Կասկած չկայ, որ ոստիկանը դրկուած է անոր կողմէ:

Եթէ հայուհի մը եւ իր տղան պակաս ըլլան հասնող ճամբորդներուն մէջ, որո՞ւ հոգ: Ո՞վ պիտի գանգատի, մանաւանդ որո՞ւ պիտի գանգատի, թո՞ւրք իշխանութիւններուն:

Երիտասարդ ամուսինները կը դառնան ու կարեկցութեամբ կը նային ինձ ու կը հեռանան:

Պաշտօնեայ մը կը սուլէ եւ մեկնումի նշանը կու տայ: Շոգեկառքը ճամբայ պիտի ելլէ: Կը զգամ, որ կորած ենք ու յուսահատ ճիգով մը, տղաս գրկած իրերս թողնելով ոստիկանին, որ քննելու ձեւ կ'ընէ, կը նետուիմ արդէն շարժուող կառաշարին սանդխակներէն մեկուն վրայ, նախ՝ տղաս կը դնեմ առաջին աստիճանին վրայ ու զինքը բռնելով՝ մեկտեղ կը կառչիմ վարի աստիճանին: Պատուհաններէն նայող ճամբորդներ կը վազեն, դռնակը կը բանան, կ'առնեն տղաս եւ յետոյ զիս կը քաշեն ներս:

Թուրքերէն բարձրաձայն ըսուող հրամաններ կը լսեմ ետեւէս ու յետոյ ինքզինքս կը գտնեմ բաժանմունքի մը նստարանին վրայ:

– Տղա՛ս, տղա՛ս,– կը կրկնեմ շնչասպառ ձայնով մը:

– Տիկի՛ն, ձեր տղան ահա հո՛ս է, անվտանգ,– կ'ըսէ անգլօ-սաքսոն դիմագծերով պարոն մը՝ տղաս ցոյց տալով, որ նստած է, ճամբորդ տիկնոջ մը գիրկը:

– Տղա՛ս,– կ'ըսեմ նորէն:

Կը տեսնեմ, տղաս, գիտեմ, որ ըսածս անհեթեթ է, անիմաստ: Կ'ուզեմ ուրիշ բան ըսել, բայց չեմ կրնար: Չեմ կրնար այդ բառը անձկութեամբ եւ սարսափով արտասանելէ կանգ առնել:

– Տղա՛ս,– բոլոր միւս բառերը մոռցեր եմ:

Տղաս գրկող տիկինը, կը նստեցնէ զայն եւ, պայուսակը բանալով, շիշով մը եւ գաւաթով մը կը մօտենայ ինձ:

– Խմեցէ՛ք,– պիտի լաւ զգաք ձեզ:

Զիչ քիչ կը հանդարտիմ: Կ'ուզեմ ժպտալ, գոնէ նայուածքով շնորհակալութիւն յայտնել իմ ազատարարներու: Ա՛յ չեմ վախնար, անցուցած սարսափս կը ցնցէ զիս դեռ, բայց հոգիս հանդարտ է: Չնայքը կը սուրայ դէպի ազատ երկիրներ:

– Ինչո՞ւ մինակ կը ճամբորդէք,– կ'ըսէ ինձ ճամբորդ տիկինը ֆրանսերէն եւ գրեթէ յանդիմանական:– Գիտէ՞ք հայերու դրութիւնը ներկայիս:

Այդ հարցումը կայ նաեւ անգլօ-սաքսոն արտաքինով մարդուն նայուածքին մէջ:

– Ամուսինս ձերբակալեցին եւ գաւառները քշեցին,– կը հասկնա՞ք, կ'ըսեմ դեռ դողացող ձայնով:

Կը հասկնան: Խուլերն անգամ լսած են գաւառներու մէջ կատարուածներու մասին: Անոնք իրարու կը նային՝ գլուխնին շարժելով:

– Գոցեցէ՛ք ձեր աչքերը եւ փորձեցէք հանգստանալ,– կ'ըսէ անգլիացին:– Վախնալու որեւէ պատճառ չունիք այլեւս:

Պիտի հնազանդիմ, երբ դուռը կը բացուի աղմուկով:

Նո՛յն սպան է տոմսակներու քննիչին հետ:

Ես ճիչ մը կ'արձակեմ եւ կ'երթամ նստիլ տղուս եւ անգլիացի պարոնին մէջ գտնուած պարապ տեղը:

Սպան անթերի քաղաքավարութեամբ կը բարեւէ ներկաները եւ կ'ըսէ քննիչին:

– Ահա այն տիկինը, որ երրորդ կարգի տոմսակով կը ճամբորդէ, առաջին կարգի բաժանմունք նստած:

– Տիկին, պիտի վճարէք տարբերութիւնը եւ տուգանքը,– կ'ըսէ քննիչը:– Պոլսէն ի վեր:

Տիկինը Էտիրնէն ի վեր այս բաժանմունքը եկաւ,– կ'ըսէ անգլիացին:

– Պէյ էֆէնտին կ'ըսէ, որ միշտ հոս նստած է,– կ'ըսէ պաշտօնեան, վախկոտ նայուածք մը նետելով դէպի սպան.– Չեմ կրնար չհաւատալ իր խօսքին:

Կը սկսիմ փնտռել ձեռքի պայուսակիս մէջ, գիտեմ, որ չունիմ այդ գումարը, բայց կը փնտռեմ երկարացնելու համար պահը: «Յիմա ի՞նչ պիտի ընեմ, հիմա ի՞նչ պիտի ընեմ», կը հարցնեմ ես ինձ: Չառօն քիչ դրամ տուաւ ինձ.– «Արայի ընտանիքը քեզ համար դրամ դրկած է Սոֆիա, ըսաւ, անհրաժեշտը կու տայ միայն: Դրամը հոս աւելի անհրաժեշտ է»:

Երբ, վերջապէս, աչքերս վեր կը բարձրացնեմ՝ յայտնելու համար որ չունիմ այդ գումարը, կը նկատեմ, որ պաշտօնեան հեռացած է եւ անզիւսին դրամապանակը կը գոցէ ու գրպանը կը դնէ: Վճարե՞ր է ինձ համար...

Տոմսերու քննիչը հեռացեր է, բայց սպան դեռ կանգնած է դրան առջեւ ուր սուր, գիշակերի նայուածքով կը նայի ինձ: Ա՛լ տենչ չկայ իր աչքերուն մէջ, այլ դաժան, կատաղի բան մը: Կրկին կը բարեւէ նոյնքան անթերի եւ կ'ըսէ.

– Յանըմ, հիմա, որ այս խնդիրը կարգադրուեցաւ, կը յայտնեմ ձեզ, որ շուտով գնացքը կանգ պիտի առնէ: Բարեհաճեցէք պատրաստուիլ վար իջնելու համար:

– Իսկ ինչո՞ւ վար պիտի իջնէ այս տիկինը,– կը հարցնէ անզիւսին շատ հանդարտ ձայնով մը:

– Պի...տի խուզարկենք իր իրերը:

– Այս տիկինը իր բոլոր իրերը Էտիրնէի կայարանը թողուց, ոչ միայն կրնաք խուզարկել, այլեւ բռնագրաւել,– կ'ըսէ անզիւսին նոյնքան հանդարտ:

– Պէ՛յ, կ'ըսէ սպան,– այս կինը պէտք է, որ իջնէ յաջորդ կայարանը: Մեզ հրամայուած է մեր կասկածելի նկատածները վար առնել: Պատերազմի ժամանակ է: Ուրեմն, տիկին, բարեհաճեցէք պատրաստուիլ: Ձեր ճամբան կը շարունակէք հետեւեալ գնացքով:

– Շատ լա՛ւ,– կ'ըսէ անզիւսին միշտ իր հանդարտ ձայնով: Յաջորդ կայարանը ե՛ս ալ այս տիկնոջ հետ վար պիտի իջնեմ:

– Իրե՞ն պիտի ընկերանաք,– կ'ըսէ սպան զարմացած:

– Այո՛, այո՛, այս դէպքը զիս շատ կը հետաքրքրէ,– կը պատասխանէ անզիւսին ժպտալով.– Վտանգաւոր կիները զիս

միշտ շատ հետաքրքրուած են: Մանաւանդ վտանգաւոր մանուկները,– կ'ըսէ անզիւսին՝ քնացող տղաս ցոյց տալով, գրեթէ խնդալով: Ահա՛ անցագիրս, եթէ կ'ուզէք իմանալ թէ ո՛վ պիտի ընկերանայ այս տիկնոջ:

Սպան ակնարկ մը կը նետէ անցագրին վրան, կը գունատի, բայց կը պահէ իր պաղարիւնը: Կը բարեւէ ու մեկնած ժամանակ կը կրկնէ ինձ.

– Յաջորդ կայարանը, տիկին:

Սպային հեռանալէն վերջ, անզիւսին զիս հանգստացուց.

– Մի՛ վախնաք, յաջորդ կայարանը ոչ ոք պիտի մօտենայ ձեզ վար առնելու եւ պիտի չհամարձակի ստիպել ձեզ մեր ներկայութեան: Այս բաժանմունքին մէջ բոլորս ալ օտարական ենք:

Ո՛չ յաջորդ կայարանը, ո՛չ ալ միւս երկուքին ինձ մօտեցող չեղաւ վար իջեցնելու համար, եւ ես թմրութենէս ելայ պուլկարերէն բառերու աղմուկով.

– Ջո՛ւր, ջո՛ւր, պա՛ղ ջուր: Պոզա՞*, պոզա՛, սքանչելի՛ պոզա:

Անցեր էինք սահմանը: Յեռացեր էինք հրկիզուած ճամբաներէն խանձուած, բայց ազա՛տ:

Մօտեցայ անզիւսին, երկու ձեռքերովս բռնեցի իր ձեռքերը ու անխօս, բայց անսահման երախտագիտութեամբ նայեցայ իր արտայայտիչ աչքերուն: Ան իր այցետոմսը տուաւ ինձ եւ ըսաւ, որ կրնամ գրել իրեն, եթէ իր աջակցութեան պէտք ունենամ:

Քսան տարիէն աւելի անցած է այն օրէն, մոռցած եմ իր անունը, իր արտաքինը, բայց կը յիշեմ իր շիտակ եւ քիչ մը խիստ նայուածքը: Կը յիշեմ եւ պիտի յիշեմ միշտ, որ զաւակս եւ ես մեր կեանքը իրեն կը պարտինք:

Որքա՞ն երջանիկ պիտի ըլլայի, եթէ այս տողերը օր մը իյնային իր ձեռքը եւ ան իմանար, որ կեանքիս բոլոր օրերուն մէջ, տխուր կամ ուրախ, այդ մեր հանդիպումը, դէպի կեանքը հաւատք ներշնչող դէպքերէն մին եղած է ինձ համար...

Կայարանը ամուսնոյս ընկերներէն մին եկած է զիս դիմաւորելու: Չորս տարի է չէ՛ տեսած զիս, քովէս կ'անցնի ու կը շարունակէ զիս փնտռել:

Ես անճանաչելի եղած էի...

*) Պուլկարական զովացուցիչ ըմպելի:

ԱՐԱՐԱՄԸ.—

Առաջին անգամն է, որ կը տեսնեի Արարատը: Իր վեհափառ կեցուածքին հմայքը այնքան անելի մեծ եղաւ, որքան անելի փշրուած էի ես...

Արարատ... Ինչպէ՞ս նկարագրեմ քեզ, ինչպէ՞ս տամ անպատմելի գեղեցկութեանդ պատկերը, որ քեզ տեսնողներ չըսեն թէ նսեմացուցի, իսկ անոնք, որ դեռ քեզ տեսնելու բախտը չեն ունեցած, իրենց աչքերուն առջեւ կանգնած տեսնեն քեզ, ճի՛շդ, ինչպէս որ կաս:

Ինչպէս որ կաս: Միթէ կարելի՞ է այդ:

Ըսեմ, որ հսկայ հասակովդ հրաշքի մը նման կանգնած ես Արարատեան դաշտին վրայ, փէշերդ ծաղկի ծով, լանջերդ վտակ ու կարկաչ, անդունդ, վիհ ու հեղեղ, իսկ ձիւնապատ գլուխդ՝ յարափոփոխ, անիրական գոյներու յաւիտենական շարժապատկեր, որ դեռ ոչ մէկ նկարիչ չկարողացաւ անշարժացնել պաստառի վրայ:

Դուն մի՛շտ նոյնը, բայց երբե՛ք քեզ նման: Դուն անկարելին կարելիացած...

Կ'ըսեն՝ Ալեւոր Մասիս... Դո՛ւն ալեւոր: Յաւիտենական երիտասարդութիւնն ես դուն, յաւիտենական գեղեցկութիւնն ես դուն եւ իմաստութիւնը: Մերթ նազելի յաւերժահարսի մը նման, ինայելով քեզ նայողներուն, ադամանդակուռ գլուխդ կը ծածկես նուրբ ճերմակ քօղերով, մերթ գեղեցիկ, բայց սգաւոր հայուհիի մը նման, սեւ ամպերով պատած՝ կը նայիս դէպի սահմանին այն կողմը, ուր ժողովուրդդ, որուն ծնունդը եւ փառքը տեսար, արմատախիլ եղած վիթխարի ծառի մը նման կը հեւայ... Մեր իմաստունն ես խոհուն, որ գլուխը երկնքին մէջ խլած՝ աշխարհի «ինչու»ներուն պատասխանը կը փնտռէ:

Ըսե՛մ, որ դուն բնական յուշարձանն ես, դուն անփոխարինե-

լի կոթողն ես քու ժողովուրդիդ անցեալին ու գալիքին: Եթէ հայր կարողացաւ մնալ, հազա՛ր հազա՛ր անգամ մեռնելով, նորէն ապրիլ, քեզմէ բխող կամքի, տոկունութեան եւ ապագայի հանդէպ հաւատքի շնորհիւ էր:

Դուն հաւատքի վառարան, դուն գեղեցկութեան ներշնչիչ, դուն վշտի օրօր մե՛ր Արարատ...

Որքա՛ն աւանդութիւններ, որքա՛ն հեքիաթներ կան հիւսուած քու անուանդ հետ: Աւանդութիւններ ամբողջ մարդկութեան հետ ալ կապուած:

Կա՛յ աշխարհի վրայ մանուկ մը, որ նախ քան իր երկրի պատմութիւնը սորվիլը չթոթովէ քու անունդ, Արարատ, ուր Նոյի տապանը կանգ առաւ: Արարիչն ալ, բոլոր երկնամերձ լեռներու մէջ, քեզ ընտրեց իր ընտրեալները ջրհեղեղէն ազատելու համար: Ո՞րն է այն փոքրիկը, որ չէ լսած փէշերուդ տարածուող այգիներուդ եւ աննման, ոչ մէկ տեղ գտնուող, խաղողիդ մասին, որուն գինիին գրաւչութեան չկարողացաւ դիմանալ Նոյ նահապետն իսկ...

Ո՞ր մէկը ըսել հայ աւանդութիւններէն: Կ'ըսեն թէ՛ քու ծոցիդ մէջ շղթայակապ կը պահես Արտաւազդը, Արտաշէս Մեծի տղան, որ հօր մահէն վերջ տեսնելով արքունիքին եւ ժողովուրդին ինքնասպանութիւն գործելը իրենց սիրելի թագաւորին գերեզմանին վրայ, ըսաւ մեռած հօրը.

— Բոլորը հետդ կը տանիս. ես մեռելներո՞ւ վրայ պիտի թագաւորեմ:

Օր մը, երբ այս անսիրտ եւ փառասեր արքայորդին որսի ելած էր, ոգիները զայն քեզ յանձնեցին շղթայակապ: Կը պատմեն թէ՛ ամբողջ տարին Արտաւազդի հաւատարիմ շները կը լիզեն իրենց տիրոջ հաստ շղթաները, եւ ահա անոնք, հագիւ բարակցած՝ կը փշրուին, հայ երկաթագործներ ու դարբիններ, Ծնունդի Խթման իրիկունը, իրենց մուրճը անելորդ անգամ մըն ալ կը զարնեն եւ շղթաները կ'ամրանան կրկին:

Աւանդութիւնը կ'ըսէ, որ Արտաւազդի ազատումով երկինք, երկիր իրար պիտի անցնին ու աշխարհի վերջը պիտի գայ...

Ինչպէ՞ս չպատմել ուրիշ աւանդութիւն մը եւս, այնքա՛ն գեղեցիկ եւ պատկերալից:

Աստուած արգիլած էր բարձրանալ Արարատի գագաթը,

հոն ուր կանգ առած էր Նոյի տապանը: Բոլոր անոնք, որ վերելքը կը փորձէին, դեռ տեղ չհասած, կ'անյայտանային Արարատի բիրաւոր ծալքերուն մէջ:

Յակոբ հայրապետը, օրեր շարունակ աղօթելէ վերջ, փորձեց բարձրանալ՝ Նոյի տապանը տեսնելու համար, բայց ամէն անգամուն, երբ յոգնած՝ քնացաւ կէս ճամբան, արթննալուն ինքզինքը գտաւ Արարատի ստորոտը, անվնաս՝ բայց յաղթուած: Քանի մը փորձերէ վերջ, երբ ծերունի հայրապետը ինքզինքը կրկին գտաւ հոն, ուրկէ ճամբայ ելած էր, սկսաւ լալ: Այն ժամանակ երեւցաւ հրեշտակ մը, որ իրեն տուաւ Նոյի տապանէն կտոր մը ըսելով.

– Աստուած գթաց քու վրայ, որովհետեւ արդար ես եւ առաքինի: Ահա քեզ տապանէն կտոր մը:

Այդ կտորը պահուած է Էջմիածնի վանքը: Երաշտ օրերուն վարդապետներ ու քահանաներ մեծ հանդիսաւորութեամբ եւ աղօթքներով դուրս կը հանեն տապանի կտորը եւ թափօրով, որուն կը հետեւի ժողովուրդը, կ'անցնին դաշտերէն, արտերէն, երգելով, աղօթելով,– երկնքին գուրջ շարժելու եւ անձրեւ բերելու համար:

Աւանդութիւնը կ'ըսէ, որ հոն, ուր Յակոբ հայրապետը լացաւ, աղբիւր մը գոյացած է, ուրկէ խմելու կ'երթան անգաւակ կիները մայրութեան արժանանալու համար:

Արարատ... Ե՛ս ալ քու շողերուդ տակ սպիացուցի այրուցքներս, քեզմէ եկող մեղմ սիւքերով հովացուցի ընդարմացած հոգիս: Դուն իմ փրկարա՛ր, բարերա՛ր Արարատ:

Չինադադարը կնքուած էր: Յաղթող եւ յաղթուող ժողովուրդները արիւնաքամ եղած՝ կը տքային: Խելագար սպանդին՝ տեսակ մը ապշութիւն՝ յաջողած էր ամօթախառն յոգնութիւն մը: Երկիրները կը բանային սահմանները, երթելէկը կը սկսէր:

Յաղթուած Թուրքիան ալ բացաւ երկրին դռները, բացաւ Նոյնիսկ բանտերը: Բայց հեռաւոր ճամբաներէն եկած ոեւէ ճամբորդ, մեր տնակին դուռը չզարկաւ կարօտով: Որովհետեւ բանտի մը դռները բացուեր էին ահաւոր օր մը դէպի մահ տանելու

համար ընտրագոյնները մարդկանց...

Հինգ տարի էր անցած այն օրէն, երբ բալիկս եւ ես հեռացանք կրակէ շրջանակէն: Հի՛նգ տարի...

Հինգ տարի օտար քաղաքներու մէջ, վերքերուս վերջ աւելցնելով, բալիկս եւ ես եկանք Երեւան, նորածին ազատ Հայաստանի մայրաքաղաքը:

Փոքրիկ էր Հայաստանը, բայց Արարատի արքայավայել կեցածքը եւ անոր յուսատու շողերը կը մեծցնէին, կը լայնցնէին սահմանը մեր աջքերուն եւ մեր հոգիներուն մէջ, եւ մենք արդէն մերը կը նկատէինք սահմանին այն կողմը գտնուող մեր մեծ Հայաստանը, որ գրեթէ ամայացած էր հարազատ բնակչութենէն:

Ամէն առաւօտ պատուհանս կը բանայի եւ նայուածքովս կ'ողջունէի Արարատը, եւ ան ամէն անգամ, իմ ողջոյնիս նոր խօսքով մը կը պատասխանէր: Ես ալ ամէն օր, նոր ժպիտով մը կը նայէի կեանքին, իմ վերածնած փոքրիկ, բայց ազատ հայրենիքիս մէջ:

Փոքրիկ էր Հայաստանը, փոքրիկ ու աղքատ: Անցեալին մէջ Ռուսաստանէն խլուած հողին մէկ մասն էր միայն, որ ստեղծուած քաղաքական կացութեան հետեւանքով եւ զանազան դէպքերու բերումով, անկախ էր յայտարարուած:

Երբ Թուրքիոյ դէմ կռուող ռուսական բանակին մէջ ալ համայնավար մտքերը սկսէր էին տարածուիլ եւ ռուս զինուորները խմբերով լքէր էին ռազմաճակատը «դէպի տուն» վազելու համար, Կովկաս ապրող հայերն ալ, որոնց միացած էին Հայաստանէն գաղթած բազմաթիւ գաղթականներ՝ վտանգի տակ կը գտնուէին: Ահա այն ժամանակ հայ դեկավար շրջանները, Վանայ Արամին բարոյական հեղինակութեամբ եւ ռուսական բանակին մէջ անուն հանած հայ զօրավարներու գլխաւորութեամբ, կազմակերպեցին հայկական բանակ մը, որ գրաւեց նահանջող ռուս զինուորներու տեղը:

Նորակազմ բանակը, կազմուած գլխաւորապէս կամաւորներէ, աննկարագրելի քաջութեամբ կռուեցաւ իրմէ շատ աւելի մեծ թիւ ունեցող թուրք բանակին դէմ: Ինքնապաշտպանութեան գործին մասնակցեցաւ ամբողջ ժողովուրդը, ծեր, երիտասարդ, կին թէ պատանի: Չինուորներուն պարենաւորման գործը ստանձնեցին կիներն ու օրիորդները: Ասոնք կը խնա-

մէին նաեւ վիրաւորներն ու հիւանդները:

Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Կարաքիլիսի եւ Պագուի հոյակապ ճակատամարտները, որոնք հատորներու նիւթ կրնան տալ քաջութեան դրուագներով, ճակատագրական դեր կատարեցին Հայաստանի անկախութեան գործին մէջ:

Հայաստանի անկախութեան հռչակումէն վերջ, ձեռնարկուած էր նոր պետութեան կազմակերպման գործին: Շուտով կազմուեցան համապատասխան նախարարութիւնները եւ հայկական դրամը եւ դրոշմը շրջաբերութեան մէջ դրուեցան:

Գործ շատ կար: Թրքական լուծին տակ մնացած Հայաստանէն նորածին փոքրիկ Հայաստան կու գային անհամար գաղթականներ, չես գիտեր ի՞նչ հրաշքով եւ որ ճամբաներով: Կու գային յոգնած, այլակերպ, կիսամերկ: Շատեր տեղ կը հասնէին թէ չէ՝ կ'իյնային անշունչ: Կարծես իրենց ամբողջ բարոյական եւ ֆիզիքական ուժը պահած էին տեղ հասնելու համար միայն: Պղտոր աչքերով կը տեսնէին անհասանելի երազը իրականացած ու կ'իյնային...

Բոլոր նախկին զօրանոցները վերածուած էին որբանոցներու եւ հիւանդանոցներու: Պէտք էր շատ աշխատիլ, բայց քիչ ուտել... Գրեթէ սով կը տիրէր երկրին մէջ: Դասալիք ռուս զինւորներ քանդէր, թալանէր, աւերէր էին ամէն ինչ: Առանց անոր ալ, երկար տեւած պատերազմը, ինչպէս ուրիշ երկիրներ, հոս ալ քայքայէր էր տնտեսութիւնը, այնպէս որ նորածին Հայաստանը իր առաջին քայլերը շատ դժուարին պայմաններու մէջ կը սկսէր: Բայց հակառակ ծանր տնտեսական պայմաններուն, խանդավառութիւնը մեծ էր թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ վարիչ մարմիններուն մէջ:

Այդ դժուարին օրերուն մէջ էր, որ նոր կառավարութեան դիմումին վրայ ստացուեցաւ ամերիկեան ալիւրը, ուրիշ շատ մը մթերքներու կարգին – բրինձ, ալիւր, շաքար, խտացած կաթ, սերմնացու ցորեն եւ այլն: Բայց այդ շրջանը, պարենաւորման սահմաններուն մէջ, բնորոշուեցաւ «ամերիկեան ալիւր» անունով: Միացեալ Նահանգներու պարենաւորման վարիչ-լիազօր Յուվըր, որու շնորհիւ ստացուած էին ալիւրն ու պարէնը, հայ ժողովուրդին ճշմարտ ազատարարը եղաւ:

Ամերիկեան Նպաստամատոյցն ալ (Near East Relief) շատ

մեծ դեր կատարեց որբերը հաւաքելու եւ պատսպարելու գործին մէջ: Այդ հաստատութեան որբանոցներուն մէջ – թէ՛ Հայաստանի եւ թէ՛ ուրիշ երկիրներու մէջ գտնուող որբերը հաշուելով – խնամուեցան անելի քան հարիւր հազար որբեր, արդիւնք ջարդերուն:

Որբերու եւ այրիներու Հայաստան:

Միս Յելլէն, որ ճամբաները բացուելուն պէս Հայաստան եկաւ, վարիչ էր երեք հիւանդանոցներու, որոնցմէ մէկը մանուկներու յատկացուած էր: Ծանօթ՝ հայ ժողովրդի հոգեբանութեան, ան անգնահատելի օգտակարութիւն ունեցաւ այդ շրջանին ալ: Իր սիրած վանեցի ժողովուրդը, որուն ապստամբական շարժումը տօներ էինք Պոլիս, ռուսական բանակին նահանջին պատճառաւ, գաղթած էր նմանապէս նորածին Հայաստան: Այս պատճառաւ Միս Յելլէն շատ անգամ Նորվանը բարկացել կ'ուզէր ըսելով.

– Ա՛յ Նորվան չես, Հինվան ես դուն: Հիմա թուրքն է որ կը տիրէ Վանայ մէջ:

Նորվան կը բարկանար:

– Չէ՛, – կ'ըսէր, նոր եմ, պզտիկ տղայ եմ, – պառա՞ւ եմ, որ հին ըլլամ:

Այն ժամանակ Միս Յելլէն գիրկը կը նստեցնէր Նորվանը եւ կը մխիթարէր.

– Նորվան ես, – կատակ ըրի. – Նոր շունչը անցաւ Վանէն, ա՛յ չի կրնար հին ըլլալ: Շուտով կառքովս քեզի Վան պիտի տանիմ:

Շատ հետաքրքրական կեանք մըն էր փոքրիկ Հայաստանի կեանքը: Մեր հոգը չէր, որ շաքար չկայ, որ թէյը չամիչով կը խմէինք: Չամիչը կը դնէինք բերաննիս եւ ումպ ումպ կը խմէինք թէյը մեծ զգուշութեամբ, որպէսզի չամիչը ստամոքսի պահանջին անսալով խաղ մը չխաղար: Բերանը քաղցր էր, վար իջնող հեղուկին անհամ ըլլալը չէինք զգար, կամ այնպէս կը ձեւացնէինք... Մեր հոգը չէր, որ հացը քիչ էր, թէ միսը բացառիկ երեւոյթ մըն էր, որու մասին պատկառանքով պէտք էր խօսիլ:

Երեւան հասնելէս քիչ ժամանակ վերջ, մեր ընտանիքը մեծցաւ անդամով մը: Սուրիկ իմ տղաս եղաւ:

Իմ գալէս քանի մը շաբաթ առաջ Չարոն վերջնականապէս

փակեր էր աչքերը «իւղը հատած ճրագի մը նման», ինչպէս կ'ըսէր Միս Դելլէն:

– Վտանգը կը պակսէր իրեն,– կը պատմէր Միս Դելլէն,– ամբողջ կեանքը պրկուած ջղերով ապրելէ վերջ, չկարողացաւ հանդարտիլ ու բնական կեանք մը ունենալ: Թերեւս Դայաստանի մէկ մեծ մասին լուծի տակ մնալն էր, որ կ'ազդէր իր վրայ: Չէր խօսեր այդ մասին, մեր ուրախութիւնը չթունաւորելու համար: Մէկ գաղթակայանէն միւսը կը վազէր: Մեռաւ գրեթէ ոտքի վրայ... Կը ստիպէի, որ նստի պատուհանին առջեւ ու Արարատին նայի: «Տէ՛ս, ինչէ՛ր պիտի պատմէ քեզ», կ'ըսէի: Չէր նստեր, բայց կը նայէր Արարատին ու կ'ըսէր. «Արարատը մէկ երեսով կը խնդայ, միւսով կու լայ: Չես տեսներ, Դելլէն... Ա՛ն, միւս կողմը մնացողները հա՛պա»:

Ինձ համար երկու տող նամակ մը տուած էր Միս Դելլէնէ՛ն:

«Ուշացար, Սոնա, կ'ուզէի տեսնել քեզ: Բնական մահը քուն մըն է, պէտք չէ լալ քնացողին վրայ: Սուրիկը քեզ: Լաւ տղայ է, կը սիրէ քեզ եւ Նորվանը, միայն ձեր քով կրնայ երջանիկ ըլլալ: Նորվանէն առաջ անոր վրայ պիտի կռթնիս օր մը: Եթէ Դայաստանը ամբողջանայ, տար երկու տղաքը մեր քաղաքը, թո՛ղ Սուրիկը տեսնէ այն տունը, ուր իր նահատակ հայրը ծնաւ: Սոնա, աղջի՛կս, մնաս բարեա՛լ...»

Միս Դելլէն Սուրիկը լեռնային գիւղ մը տարած եւ տեղաւորած էր իր ծանօթներուն մօտ: Նորվանը եւ ես գացինք զինք առնելու դպրոցական տարեշրջանին սկիզբը: Կարօտով գրկեց մեզ: Տեսայ, որ շրթները դողացին եւ գունատեցաւ, բայց ոչ մէկ բառ արտասանեց իր վիշտը յայտնելու համար:

Միասին վերադարձանք տուն, եւ Սուրիկը եղաւ իմ մեծ տղաս:

* * *

– Սուրի՛կ, Նորվա՛ն, Ազնի՛ւ, շտապեցէ՛ք, վիճելու ժամանակ չէ, պիտի ուշանանք զօրահանդեսին:

Նորվան եւ Սուրիկ իրար շատ կը սիրեն, միշտ անբաժան են, բայց վեճը անպակաս է մեջերսին: Սուրիկ, որ տասնմէկ տարեկան է, կ'ուզէ իր հեղինակութեան ենթարկել Նորվանը, որ կ'ապստամբի: Ազնիւ, թէեւ Նորվանէն մեծ է, սիրով կ'ենթար-

կուի Սուրիկին, որուն առջեւ միշտ հիացած ձեւ մը ունի:

Արդեօք օ՛ր մը...

Ազնիւ, Չարոյի քանքերուն շնորհիւ, որ թերթերու մէջ յայտարարութիւններ տուած էր, գտած է իր եղբայրը՝ Սուկուլըն եւ իր մեծ մայրիկը: Այս վերջինը, սրտին կրակէն չորցած՝ մորթ ու կաշի ծեր կին մը, ժպիտի նման բան մը ունի, հազուագիտ դէպքերու մէջ, միայն Սուկուլին եւ Ազնիւին համար: Սուկուլ տասնեւեօթը տարեկան առողջ տղայ մըն է, արտաքինով բնաւ նման չէ Ազնիւին, ունի խոշոր դիմագծեր, խոշոր ոսկորներ եւ խոշոր, բարի սիրտ մը: Ան տան նեցուկն է եւ իր վրայ ինկած պարտակութիւնը շատ լրջութեամբ կ'ընդունի: Պարենաւորման նախարարութեան գրասենեակներէն մէկուն մէջ գրագիր է եւ ստացած դրամը մեծ մօրը կու տայ տան ապրուստին համար:

Անոր յիշողութեան մէջ անջնջելի կերպով քանդակուած է իր ընտանիքին խոշտանգումը եւ յայտնի է, որ անոր ալ երիտասարդական ժպիտները խամրած են, դեռ չծլած:

Երբ Սուրիկը կ'ուզէ բարկացնել Ազնիւը, կ'ըսէ.

– Այիշէ հանըմ, ինչպէ՛ս ես:

Այն ժամանակ միայն Ազնիւի խոշոր աչքերը բարկութեամբ կը փայլին, եւ ան կը յարձակի Սուրէնին վրայ: Բալիկս ալ Ազնիւին օգնութեան կը հասնի, բայց Սուրիկ, ուժով տղայ, երկու շարժումով վար կը նետէ փոքրիկները, խնդալով:

Իրենց խօսակցութեան նիւթերէն մին «հայրիկ»ն է: Տղաս կ'ըսէ տխուր.

– Մամաս դրամ չունի, չի կրնար հայրիկը գնել ինձ համար:

– Դայրիկը դրամով չեն գներ,– կ'ըսէ Սուրէն կտրուկ:

– Դապա ինչպէ՛ս...

– Եկեղեցի կ'երթան ու քահանայէն կ'ուզեն,– կ'ըսէ Ազնիւ շատ վստահ ձայնով:

Ահա, տղաս վազելով կու գայ քովս.

– Մամա՛, դրամ պէտք չէ հայրիկ գնելու համար: Եկեղեցի գնա՛ եւ ուզէ:

– Ինչո՞ւ հայրիկ կ'ուզես,– կը հարցնեմ օր մը վերջապէս:

– Կ'ուզեմ հայրի՛կ ըսեմ, վազեմ ձեռքը բռնեմ, ան ինձի նայի ու խնդայ, Չաւէնին հայրիկին պէս:

Տղուս ընկերներուն մէջ, միայն Չաւէնն է, որ հայրիկ ունի:

– Մենք մամա ունինք,– կ'ըստ Սուրիկ՝ գաւակս մխիթարելու համար:

Սուրիկ հաւատացած է, որ ես իր մայրիկն եմ:

– Ես Մուկուչ ունիմ եւ մեծ մայրիկ,– կ'ըստ Ազնիւ հպարտութեամբ: Յետոյ կ'աւելցնէ,– Ալիսի մաման Միս Յելլենն է:

Ճիշդ է, որ Ալիս Միս Յելլենին քովն է, միշտ: Սօրը մտային խանգարումը անբուժելի է: Երկուքը մայր ու աղջկայ պէս կապուած են իրարու: Միս Յելլեն Ալիսը կը հագուեցնէ պարզ, ինքն ալ շատ համեստ կը հագուի:

– Բոլորս ալ այս պզտիկ երկրին մէջ մէկ ընտանիք կը կազմենք,– կ'ըստ,– պետք չէ, որ ոմանք շատ շքեղ ըլլան, իսկ միւսները՝ ցնցոտիներ հագած:

Կարծեմ իր ունեցածին մէկ մեծ մասը կ'երթայ բարենպատակ հաստատութիւններու պարապ դրամարկղներուն մէջ, կարծատել հանգիստէ մը վերջ գաղթականներու սնունդին յատկացուելու համար:

Կը մօտենամ երեք փոքրիկներուն, որոնք կը շարունակեն վիճիլ: Նիւթը այս անգամ զօրահանդէսն է, ուր երթալու կը պատրաստուինք:

– Աճապարենք, տղա՛ք, այս օրը ամենամեծ օրն է մեզ համար: Մեր ազատ հայրենիքին զօրահանդէսը պիտի տեսնենք:

Կ'ուղղեմ Սուրիկի փողկապը, խոզանակով կը յարդարեմ իր ապստամբ մագերը, յետոյ Նորվանին սանտրուածքին ալ վերջին յարդարանքը կու տամ:

Ազնիւ արդէն հագուած սքուած եկած է մեզի՝ միասին զօրահանդէս երթալու համար: Մուկուչ Յայ Արի է եւ իրենց խմբին հետ պիտի մասնակցի զօրահանդէսի յաջորդող թափօրին: Մեծ մայրիկին հոգին այլեւս թրթռացում չունի այս բաներուն համար: Երկու առողջ կէտեր միայն կան սրտին վրայ, Մուկուչ ու Ազնիւ,– կեանքին ցանկէն ջնջուած մէկն ալ աս խեղճ պառաւր:

Սուրիկ առած է այն լուրջ դէմքը, որ կ'առնէ յուզումը ծածկելու համար: Մեծ մայրը այնքան խօսած է այս օրուան համար, ինք այնքա՛ն յափշտակութեամբ երագած է: Կը քալէ լուռ, մէկ ձեռքը տուած Նորվանին, միւսը՝ Ազնիւին:

Երեքը այսպէս միասին շատ սիրուն պատկեր մը կը կազմեն:

Նորվան շուտ շուտ ետ կը դառնայ տեսնելու համար, թէ կը հետեւի՞մ իրենց: Կը ժպտայ, ուրախ է:

Ուրեմն, ներքեւ է ինձի բալիկս: Երեկ իր առաջին յանդիմանական նայուածքն ունեցայ:

Ամուսնոյս հին զինուորներէն մին, Վանայ Ալիւր գիւղացի, աքլոր մը նուէր բերած էր ինձ, որպէսզի փոքրիկ ընտանիքովս տօնեմ Յայաստանի անկախութեան տարեդարձը: Խոշոր, գեղեցիկ աքաղաղ մըն էր, որ իր սիրուն փետուրները արքայաՎայել կերպով կը կրէր: Սուրիկ եւ տղաս հեռացած էին: Կապեցինք պատշգամին փայտերէն մէկուն, այնպէս որ Նորվան շուտ շուտ կը մօտենար եւ կը շոյէր: Անգամ մը եկաւ քովս ու հարցուց.

– Մամա, աքլորը ճուտիկին հայրի՞կն է:

– Այո՛, բալիկս:

Նորվան մտազբաղ ձեւ մը առած կրկին գնաց ու փայփայեց աքլորը:

Մտածեցի ճաշի հրաւիրել Միս Յելլենը իր Ալիսին եւ Մելինէն իր Եդուարդին հետ: Ծամբաները բացուելուն պէս Մելինէն եւ Եդուարդ իրար գտեր էին եւ Յայաստան գալով՝ պսակուեր: Երկուքն ալ ուսուցչութեան պաշտօն ունէին: Շատ երջանիկ էին: Բոլորը երջանիկ մարդոց պէս, իրենց պատմութիւնը այդ երեք բառերով կ'ամփոփուէր: Աքլորը խոշոր էր, պիտի կրնար մեզ կերակրել: Արդէն վարժուած էինք քիչ ուտելու: Աքլոր մը այդ սով օրերուն հագուագիւտ բարիք մըն էր. անիրաւութիւն կ'ըլլար, որ մինակ մենք վայելէինք:

Երկտող մը գրեցի Միս Յելլենին, երկտող մըն ալ Մելինէն՝ յաջորդ օրուան ճաշին հրաւիրելու համար եւ տղոց տուի նամակները, որ տանին: Իրենց բացակայութենէն օգտուելով՝ խնդրեցի դրացիէս, որ աքլորին վիզը կտրէ եւ ինքս քաջաբար ներս փախայ՝ խեղճ անասունին չարչարանքը չտեսնելու համար: Յետոյ խնդրեցի տան գործերուն ինձ օգնող կնոջմէն, որ տանի խոհանոց, բայց այնպէս տեղ դնէ, որ տղաքը չկարենան տեսնել:

Տղաքը վերադարձան նախընթրիքի ժամանակ: Ես պաշտօնիս բերումով քիչ անգամ տունը կը գտնուէի նախընթրիքին: Երկու փոքրիկներն ալ շատ ուրախ կ'ըլլային, երբ թէյը իրենց հետ կ'առնէի:

Երբ հացիկները, կարագը, թէյն ու չամիչները դրի սեղանին

վրայ եւ տղաքը կանչեցի Սուրիկ մինակը կը կարդար բակին մէջ: Նորվանը չկար ոչ բակին, ոչ սենեակներուն մէջ, ոչ ալ դրան առջեւը: Չէի հասկնար եղածը, երբ մտածեցի խոհանոց ելլել եւ հոն ալ նայիլ: Խոհանոցին մէջ Նորվան ծունկի եկած՝ կ'աշխատէր աքլորին գլուխը փակցնել վզին, ուժով կը սեղմէր ու ոտքի վրայ կը դնէր կենդանին, որ բնականաբար կ'իյնար: Նորվան կը վերսկսէր: Դեմքը առած էր տանջուած արտայայտութիւն մը, երեսը կարմրած ու քրտնած: Մօտեցայ.

– Ի՞նչ կ'ընես, բալիկս...

Երբեք պիտի չմոռնամ իր յանդիմանական նայուածքը: Միայն յանդիմանութիւն չկար հոն, կար նաեւ հիասթափութիւն: Իր պաշտած մայրիկը այսպիսի գազանային գործ մը կատարէր էր:

– Ես չե՛մ ուզեր, որ ճուտիկը հայրիկ չունենայ,– չեմ ուզե՛ր,– ու սկսաւ լալ հեծկլտալով:

Նորվան լացող տղայ չէ: Շատ յուզուած էի ես ալ: Չէի գիտեր ինչ ըսել: Բոլոր ջանքերս զինք գիրկս առնելու ու հանգստացնելու անցան ապարդիւն: Չմօտեցաւ իսկ: Տղաս չէր ուզեր համբոյրներ մէկէ մը, որ ճուտիկը առանց հայրիկի թողած էր:

Հիմա զօրահանդէս գացած ժամանակ, երբ տղաս կը դառնար ու կը ժպտար ինձ, ես իրապէս երջանիկ էի ոչ միայն իբրեւ մայր, այլ եւ իբրեւ մէկը, որ շատ կարեւոր անձի մը ներողութեան արժանացած է:

Այսօր, զօրահանդէսէն վերջ, հրաւիրեալներս պիտի գան: Պէտք է այնպէս ընել, որ աքլորը սեղան ներկայացուած ժամանակ իր ձեւը պահած չըլլայ: Պիտի դողամ ամբողջ ճաշի ընթացքին, բայց հրաւերիս մէջ աքլոր խոստացած եմ. ինչպէ՞ս ընել: Պիտի ապսպրեմ բոլորին չխօսիլ կերուածի մասին: Ամէն պարագային ես բերանս պիտի չդնեմ այդ կենդանիի միտէս...

Չօրահանդէսի սկսելուն դեռ շատ կայ, բայց հրապարակն ու փողոցները անանցանելի են:

Մայիս 28-ն է: Հայաստանի անկախութեան առաջին տարեդարձը:

Հայաստանի ոսկի արեւը անհրական ձեւ մը կու տայ բոլո-

րին: Եկած են գիւղերէն, քաղաքներէն: Հինգ դարերէ ի վեր սպասուած այդ օրը լրիւ տեսնելու, զգալու համար, մարդիկ լարուած արտայայտութիւն մը առած են: Ուրախութեան օր է, բայց հանդիսաւոր, սրբազան ուրախութեան օր: Աղմուկ չկայ, ոչ ալ աւելորդ շարժում: Բոլորը իրար կը բարեւեն նշանակալից: Երեկուան հակառակորդները այսօր կը ժպտան իրարու: Հոգիները թեթեւ պէտք է ըլլան ու սիրտերը ջինջ: Անկախութեան առաջին տարեդարձն է սա:

Փողոցներէն կ'անցնին դպրոցական տղաքը կարգով, երկու երկու, իրենց ուսուցիչ-ուսուցչուհիներով: Ահա՛ Հայ Արիւնքը իրենց սիրուն համազգեստով.– կը քալեն համաչափ, զինուորական քայլերով: Ասոնք իրենց Արիական դրօշին հետ ունին նաեւ Հայկական դրօշակ մը պատկառելի մեծութեամբ, որ Մուկուչ բռնած է երկիւղածութեամբ: Դրօշակակիր Մուկուչ, որ մինակը, արիւնքներուն առջեւէն կը քալէ, չի տեսներ մեզ, չի տեսներ ոչ ոք. ան այսօր ինքն իր մէջ կը թաղէ անցեալը, տխուր յուշերը ու սա համաչափ, հաստատ քայլերով կը կոխէ նոր ճամբու մը վրայ:

Ա՛լ պիտի խնդայ Մուկուչ:

Ահա՛ եւ որբանոցներու որբերն ու որբուհիները, մաքուր եւ միակերպ հագուած: Որքան շա՛տ են, թիւ ու համար չունին: Կ'անցնին երկու երկու, կարծես նեղ հեղեղ մըն է, որուն աղբիւրը անվախճան է: Ի՞նչ պատկերներ, ի՞նչ սարսուռներ պահուած են արդեօք այս գունատ դեմքերուն ետեւ: Որբե՛ր, ամէն մէկը ողբերգութեան մը կենդանի արձան...

Եթէ դժոխք երկրին մէջ մնացած ըլլայի, Նորվանն ալ հաւանաբար ասոնց մէջ պիտի գտնուէր, գլխիկոր ու տխուր: Կամ թերեւս աւելի գէշ դրութեան մէջ պիտի ըլլար... Ասոնցմէ ամէն մէկը Նորվան մը, Սուրիկ մը, Ազնիւ մը...:

Եթէ կարենայի գրկել բոլոր այս մեծ ու փոքր տղաքը, որոնք շատ անգամ, ոչ իրենց, ոչ ալ իրենց ծնողացն անունը կը յիշեն եւ որբանոցին մէջ պատահական անուն մը կը տրուի իրենց... Կարենա՛յի գրկել եւ ըսել.

– Սիրելիներ... սիրելիներ...

Միայն այսքան. ուրիշ ի՞նչ կարելի է ըսել այս խորշակուած բողբոջներուն:

Զիչ մը հեռուէն կը լսուի երգի ձայն մը: Դպրոցականներն են,

որ հայկական քայլերը կ'երգեն.

**Մեր հայրենիք թշուառ անտեր
Մեր թշնամեաց ոտնակոխ
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Այժմ եղաւ ազատուած:**

Եւ յանկարծ, անցնող որբերու բազմութիւնն ալ ձայն կու տայ, կը մասնակցի երգին. «Իր քաջ որդւոց սուրբ արիւնով այժմ եղաւ ազատուած»...

Յուզիչ է անոնց ձայնը, յուզիչ, բայց հաստատ: Անոնք կ'երգեն, ո՛չ, կը պատգամեն, բառերուն նշանակութիւնը ապրողի մը պէս: Բան մը գիտեն թափուած արիւնի մասին: Դեռ երեկ էր որ...

– Սիրելիներ՛, սիրելիներ՛, թո՛ղ այս երգն օրօրէ ձեր վշտերը, թող ազատ հայրենիքի ոսկի արեւը ժպտալ սորվեցնէ ձեզ: Աճապարեցէ՛ք, գացէ՛ք միանալու անկախութեան թափօրին, ձեր տեղը հոն է, ձեր ապագայ ուրախութիւններու ճամբան ան է...

Բայց այսօր տխրութեան օր է. պէտք է նայիլ այս մարդկային հեղեղին, որ ուրախութեամբ կը փութայ զօրահանդէս: Ահա թեւ թեւի երիտասարդ ամուսիններ կամ նշանածներ, իրենց կեանքի նոր սեմին, նոր հայրենիքը ողջունելու կ'երթան, ահա ծերունիներ, ահա՛ բոլոր՛ը... բոլոր՛ը...

Ամբողջ ժողովուրդն է, որ կը տօնէ: Տուներու պատշգամներն ու պատուհանները ծածկուած են դրօշակներով, պսակներով, փնջերով ու թանկագին գորգերով:

Յրապարակը, ուր կը հասնիմ փոքրիկներուն հետ, մարդկային ովկիան մըն է: Լեցուն են նմանապէս բոլոր կողմնակի փողոցները ու քովի հասարակաց պարտեզը:

Մասնաւոր տաղաւար մը պատրաստուած է պաշտօնական անձնաւորութիւններու համար... Հոն են օտար պետութիւններու ներկայացուցիչները: Հոն է Միս Հելլեն, շքեղօրէն հագուած օրուան առթիւ: Իր քովն են Ամերիկեան Նպաստամատոյցի վարիչները: Հոն են նաեւ կառավարութեան անդամները, սպայակոյտի պետերը: Հոն, մօտը հաւաքուած են նաեւ Խորհրդարանի անդամները:

Ուրիշ տաղաւարի մը մէջ կը գտնուի Ամենայն Հայոց Կաթո-

ղիկոսը, շրջապատուած տասնեակ մը եպիսկոպոսներով եւ վարդապետներով:

Փոքրիկները կը տեղաւորեմ տաղաւարին մօտիկ, ուրիշ փոքրիկներու քով, իսկ ես կ'երթամ միանալու քանի մը քայլ հեռու գտնուող Խորհրդարանի անդամ ընկերներուս:

Չառոյի գուշակութիւնները իրականացած էին: Ես Խորհրդարանի անդամ էի:

Կը նայիմ հաւաքուած ժողովուրդին: Ոմանց դէմքին խանդավառութիւն կայ, ուրիշներ երկիւղած ջերմեռանդութեամբ կը սպասեն: Տաճկական սարսափներէն նոր ազատած գաղթականներ՝ խնդալը շատոնց մոռցած՝ կը ջանան վերոյիշել անցեալ ժպիտները եւ յոգնած դէմքերնուն վրայ ծամածռութիւններ կ'ընեն, ինչ որ ժպիտներուն ամենայուզիչն է:

Քիչ-քիչ կը սկսիմ զանազան ծանօթ դէմքեր տեսնել բազմութեան մէջ: Ահա Մելիսէն՝ իր Եղուարդին պիտոյ սեղմուած: Միշտ գեղեցիկ է Մելիսէն, բայց քիչ մը գունատ. երեք ամսական մանչուկի մը մայր է հիմա: Իր մայրը, Ծովիւսարը՝ յօդացաւերը մոռցած՝ երիտասարդ աղջկան մը պէս կը վազվզէ, երբ իր թոռնիկին լացը կը լսէ: Փոքրիկին անունը դրին Ազատ:

Ահա տիկին Արաքսին, ան, որ ամուսնոյն ձերբակալութեան լուրը բերած էր Արային եւ որուն հետ միասին Վարդգէսին գացինք: Ան որբանոցի մը տնօրէնուհին է: Հեռուէն հեռու ժպիտ մը կը փոխանակենք:

Ահա եւ ուրիշ բախտակից կին մը, երկու զաւակներով: Ահա եւ Հայկոն: Այս փոքրիկին ընտանիքին անդամներէն ոեւէ մէկը չգտնուեցաւ: Ան միշտ նոյն հայուհիին քովն է, որուն հետ շատ կապուած է, բայց կը շարունակէ «տիկին» ըսել: Հայկոն դասարանին ամենէն պզտիկն է, բայց միշտ առաջինը, բոլոր դասերուն, մասնաւորապէս շարադրութեան մէջ: Անոր մէկ փոքրիկ պատմուածքը տպուեցաւ մանկական թերթի մը մէջ եւ մրցանակի արժանացաւ:

– Հայկոն Հայաստան «սիւն»-երէն մին պիտի ըլլայ օր մը, – կ'ըսէ միշտ Սուրիկ, որ ակնածանքով կը խօսի Հայկոյի մասին, թէւ այս վերջինը փոքր էր իրմէ:

Ահա կը լսուի վարչապետին ճառը ժողովուրդին եւ մասնաւորապէս զինուորներուն ուղղուած: Յուզուած եմ եւ լաւ չեմ

հասկնար խօսքերը: Անոնք ականջիս կը զարնեն հնչուն աղ-
մուկով ու կը սահին վար, առանց ուղեղիս ճամբան գտնելու:
Կը լսեմ յուզումով ըսուած բառեր: «Քաջ գինուորներ... Հայաս-
տանի անկախութիւն... շուտով կը միանայ... միացեալ եւ ան-
կախ»:

Ո՛չ, երբեք պիտի չկրնամ հասկնալ ճառը: Միտքս ու սիրտս
լի են յուշերով, հազար, հազար յոյզերով: Ինչպէ՞ս ես, որ բե-
մին վրայ իսկ ժողովուրդը ազատ, իր ճակատագրին տէր տես-
նելով յուզուեր եմ, ինչպէ՞ս կարենամ տեսնել, ապրիլ ու զգալ
այս բոլորը...

Ահա գինուորական նուագախումբը հնչեցուց քայլերզը եւ
սկսաւ զօրահանդէսը: Երեւանի պարտերը իր ճերմակ ձիուն
վրայ նստած՝ կ'անցնի ամենէն առաջ: Իր շքեղ համազգեստը,
իր արծանի կիսադէմը, գեղեցիկ ճերմակ ձին խորհրդանշանի
մը տպաւորութիւնը կը թողուն... Իրմէ վերջ կու գան խումբ մը
սպաներ սուսերամերկ, յետոյ զօրամասեր իրենց սպաներով,
նմանապէս սուրերով: Ահա՛ ձիաւորներու խումբը, ահա՛ եւ
թնդանօթածիզները: Սպաներ եւ գինուորներ կը բարեւեն դրօ-
շակին:

Ժողովուրդին կողմէ սրտաբուխ աղաղակներ, խանդավառ
կեցցէներ եւ չվերջացող ծափեր...

Երազ չէ, իրականութիւն է:

Մէկ սրտովս պէտք է զգամ ե՛ւ անոնց համար, որ չկան այ-
լեւս: Պէտք է զգամ, ուրախանամ Արայի համար ալ: Մէկ
սրտովս, որ չի դիմանար...

Ինձ կը թուի, որ ոտքիս տակ հողը կը սարսռայ, կը շարժի:
Ինձ այնպէս կը թուի, որ հեռուն անապատները կամ բուն հայ-
րենիքին մէջ նահատակուածները բոլորն ալ կը զգան, բոլորն
ալ մասնակցիլ կ'ուզեն տօնին: Անոնք կարծես իրենց ներկա-
յութիւնը զգացնել կ'ուզեն, կարծես հողը կը ցնցեն մեզի ըսելու
համար.— «Ձե՛զ հետ ենք, վերջապէս մեր ոսկորները պիտի
հանգստանան, որովհետեւ թափուած արիւնը ծաղկեցուց փոք-
րիկ, բայց ազատ հայրենիք մը... Քանի մեր ոսկորները եւ մեր
չորցած արիւնը կայ հոս, այս հողին վրայ, ան ձեզ հետ է ար-
դէն, ահա՛ թէ ինչո՛ւ հողը կը դողդոջայ այպէս»... Իսկ դո՛ւ, իմ
Արա... Իսկ դու միթէ կը զգա՞ս:

Քովս գրեթէ որոշ կը զգամ Արան: Կը զգամ իր շունչը ծոծրա-
կիս վրայ: Մազերը քնքշութեամբ կը քսուին մազերուս եւ թելը
կարօտով կը սեղմէ իրանս, ինչպէս հին, անցա՛ծ օրերուն: Չեմ
շարժիր, որպէսզի այդ զգացումը, ախ, այնքա՛ն կարօտցած,
չքանայ...

– Գոհ ես, Արա, գոհ ես, որ այս օրով ինձ այցի եկար հոգի-
ովդ, բաժնեցիր ուրախութիւնս: Ինձ հետ ես, իմ լոյս, իմ հոգի
Արա...

Կը ծռիմ քիչ մը հեռուն կանգնած բալիկս տեսնելու համար:
Աչքերը բացած եւ լուրջ՝ կը հետեւի զօրանցքին: Որքա՛ն նման
է հօրը: Եթէ գիտնա՛ր, որ հայրիկը, որուն մասին այնքան կը
խօսի, քովս էր ճի՛շդ հիմա, ճի՛շդ քովս: Երջանիկ եմ ես, Արայի
հոգին ու Արայի տղան ունենալով ազատ հայրենիքիս մէջ...

Եւ ահա՛ անցնող զօրամասերուն վրայէն, ծով ծով բազմու-
թիւններուն վրայէն, նոր կառուցուող դպրոցին, համալսարա-
նին ու թատրոնին վրայէն, նայուածքս կը սահի եւ կանգ կ'առ-
նէ Արարատին վրայ, որ երբեք այսպէս զարմանալիօրէն շքեղ
չէ՛ եղած: Ո՛չ մէկ ամպ: Սառոյցէ գագաթը հսկայ աղամանդի մը
պէս հազար ցուլքով, հազար գոյնով կը փայլի Մայիսեան արե-
ւին տակ:

Հրա՛շք... Ամբողջ հանդեսի արարողութեան ընթացքին Արա-
րատը կը մնայ նո՛յնը, ի՛նքն իրեն նման: Ան հազած է տօնական
հանդիսաւոր ծիրանին, որ հինգ դարերէ ի վեր չէր նետած ու-
սին:

Արարատն ալ տօնի մէջ է...

Գրաշարութիւն՝
ՄԻՍԱ ԱՒԱԳԵԱՆ-ԳԱՐԱՕՂԼԱՆԵԱՆ

Էջադրում՝
ԱՆԻ ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ-ՍԱՐԳԻՍԵԱՆ

Վերստուգող սրբագրիչներ՝
ՍԱԼԻՔԻ ՔԻՒՐՔՆԵԱՆ-ԹԱՇՆԵԱՆ
ՍՐԲՈՒԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ-ՃԵՆԱՆԵԱՆ

Կողքի ձեւաւորում՝
ՄԵՂՐԻ ՇԱՄՍԱՍԵԱՆ



Համազգայինի «Վահե Սեթեան» հրատարակչատուն